ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ

ՈՒ Ղ Ե Ր Ձ

ԵՐԵՎԱՆ 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 6
ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ 8
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 10
ՄԱՍ Ի-Ա. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 11
2023 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները 11
Տնտեսական զարգացում 11
Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում 15
Ճանապարհային տնտեսություն 16
Էներգետիկա 16
Ջրային տնտեսություն 17
Հանրային ծառայությունների կարգավորում 19
Քաղաքացիական ավիացիա 19
Պետական գույքի կառավարման ոլորտ 19
Միգրացիա 20
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերություն 20
Քաղաքաշինություն 21
Արտակարգ իրավիճակների բնագավառ 21
Արտաքին քաղաքականություն 22
Սփյուռք 23
Արդարադատություն 24
Կրթություն 29
Գիտություն 30
Մշակույթ 31
Սպորտ 32
Երիտասարդություն 32
Առողջապահություն 33
Աշխատանքի և սոցիալական պաշտպանություն 34
Շրջակա միջավայր 38

Բյուջեների կազմման բնագավառ 39
Հաշվապահական հաշվառում և աուդիտորական գործունեություն 40
Եկամուտների քաղաքականության ոլորտ 40
Պետական եկամուտների վարչարարություն 41
Անշարժ գույքի կադաստր 43
Հասարակական կարգի պահպանություն 43
ՄԱՍ I - Բ. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 48
1.1 ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ԵՎ ՇՐՋԱՆԱԿ 48
1.2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 51
1.3. ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 56
1.4. ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 67
1.5. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԸ 71
1.5.1. ՀՀ տնտեսական աճի դեպի ներքև ուղղությամբ ռիսկեր 71
1.5.2. Տնտեսական աճի դեպի վերև ուղղությամբ ռիսկեր 72
1.6. ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ՆԱԽՈՐԴ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ 75
ՄԱՍ I-Գ. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ 76
2.1. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ 76
2.2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ 78
2.3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ 83
2.4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ 85
2.5. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ 87
ՄԱՍ II-Ա ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 91
Հարկաբյուջետային սկզբունքները և ցուցանիշները 91
ՄԱՍ II – Բ. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 92
2023 ԹՎԱԿԱՆԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 92

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ԵՎ ՊԱՐՏՔԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ 92
Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները 94
ՄԱՍ III. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ 96
ՄԱՍ III-Ա. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 96
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր..... 97
Այլ եկամուտներ 103
Մ Ա Ս III – Բ. Ծ Ա Խ Ս Ե Ր Ի Կ Ա Ն Խ Ա Տ Ե Ս Ո Ւ Մ 107
ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 108
ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ..... 114
ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ 121
Հանրային իշխանության մարմինների պահպանման ծախսեր..... 121
ՀՀ առողջապահության նախարարություն..... 127
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն..... 131
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն..... 138
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն 145
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն 152
ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն..... 154
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն 156
ՀՀ ֆինանսների նախարարություն 159
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն 160
ՀՀ արդարադատության նախարարություն 162
ՀՀ արտաքին գործերի նախարարություն..... 165
ՀՀ պաշտպանության նախարարություն..... 166
ՀՀ Ոստիկանություն..... 167
ՀՀ ազգային անվտանգության ծառայություն..... 168
ՀՀ վարչապետի աշխատակազմ..... 170
ՀՀ պետական եկամուտների կոմիտե 173
ՀՀ կադաստրի կոմիտե..... 173
ՀՀ վիճակագրական կոմիտե..... 174
ՀՀ քաղաքաշինության կոմիտե..... 174
ՀՀ սահմանադրական դատարան 175

Բարձրագույն դատական խորհուրդ 176
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե 176
ՀՀ դատախազություն 177
ՀՀ քննչական կոմիտե.....178
ՀՀ պետական վերահսկողական ծառայություն 179
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով.....180
Հանրային հեռարձակողի խորհուրդ.....180
ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողով.....180
ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով 181
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ.....182
ՀՀ հաշվեքննիչ պալատ 184
ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով.....185

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ 186

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ 186
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԸ.....186
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎՐԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՑ ՇԵՂՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ194
3. ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ.....201
4. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 202
5. 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ..... 224

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ 238
ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 240

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱՀ	ԱԱՀ
ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱԷԿ	Ատոմային էլեկտրակայան
ԱԻՆ	ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԱՄՆ	Ամերիկայի միացյալ նահանգներ
ՄԶԳ	Միջազգային զարգացման գործակալություն
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԳԱԱ	ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա
ԵԱՀԿ	Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպություն
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԶՄԲ	Զարգացման Միջազգային Բանկ
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԸԿԲՆ	Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ
ԼՂ	ԼեռնայինՆ Ղարաբաղ
ԽՍՀՄ	Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
ԿԲ	ՀՀ Կենտրոնական բանկ
ԿԳՄՍՆ	ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿԿԹԿ	Կոշտ կենցաղային թափոնների կառավարում
ՀԱԷԿ	Հայկական ատոմային էլեկտրակայան
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀԾԿՀ	ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ՀԽՍՀ	Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն
ՁԻԱՀ	Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՄԻԱՎ	Մարդու իմունային անբավարարության վիրուս
ՄԺԾԾ	ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՊԵԿ	ՀՀ Պետական եկամուտների կոմիտե
ՊՄԳ	Պետություն-մասնավոր գործընկերություն
ՊՆ	ՀՀ Պաշտպանության նախարարություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՊՖԿՀ	Պետական ֆինանսների կառավարման համակարգ
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՍԳԻ	Սպառողական գների ինդեքս
ՎԶՄԲ	Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարում
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ

ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ
ՖՆ	ՀՀ ֆինանսների նախարարություն

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Ուրախ եմ արձանագրել, որ 2022 թվականը առանձնահատուկ է նկատելի տնտեսական ձեռքբերումներով: Չնայած տարին դեռ չի ավարտվել, երկնիշ տնտեսական աճն արդեն իսկ կարող ենք համարել կայացած փաստ: Բազմաթիվ օտարերկրացիներ, Հայաստանը համարելով իրենց ստեղծագործական աշխատանքի համար բարենպաստ և անվտանգ վայր, տեղափոխվել են մեզ մոտ: Սա նշանակում է, որ մեզ հաջողվել է ստեղծել ժողովրդավարության և մարդու իրավունքների տեսանկյունից բավարար բարենպաստ, անհատի ապրելու և ստեղծագործելու համար հաճելի ու բարեկամական միջավայր, որի շնորհիվ բազմաթիվ անհատներ ու կազմակերպություններ նախընտրել են իրենց գործունեությունը շարունակել մեր հանրապետությունում: Մենք պետք է ամեն ինչ անենք, որպեսզի ոչ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այլ նաև արժեք ստեղծող շատ մարդկանց համար Հայաստանը լինի ապրելու և ստեղծագործելու լավագույն երկիրը:

2023 թվականի ծախսային բյուջեն 2022-ի նկատմամբ գերազանցում է 363 միլիարդ դրամով: Ինչպե՞ս սա դարձավ հնարավոր. սա մեր ձեռնարկությունների և քաղաքացիների ստեղծագործ և քրտնաջան աշխատանքի արդյունք է, ինչի համար կառավարության անունից ցանկանում եմ շնորհակալություն հայտնել:

Սա ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի թվով 2-րդ բյուջեն է: Այս բյուջեով սահմանվող ծրագրերը շարունակությունն են այն կարևոր աշխատանքների, որոնք սկսել ենք 2022 թվականին: 2023 թվականին մենք ավելացնելու ենք այդ աշխատանքների ծավալը և ապահովելու ենք կառավարության ծրագրով գալիք տարվա համար նախատեսված թիրախների լիակատար իրականացումը:

Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեն հաստատման է ներկայացվում միջազգային և տարածաշրջանային կայունությունը զգալիորեն խաթարող իրադարձությունների պայմաններում: 2022 թվականին սկիզբ առած միջազգային հակամարտությունները և դրանց հետևանքով միջազգային հանրության շրջանում ստեղծված համընդհանուր լարվածությունն ու շարունակ խորացող բևեռացումը մեծ լարվածություն են ստեղծում նաև մեր տարածաշրջանի, մասնավորապես Հայաստանի Հանրապետության շուրջ: Արժեշղթաների խաթարումը և գործընկեր երկրներում տնտեսական անկման սպասումը մեծ անորոշություններ է ստեղծում մեր երկրում առաջիկա զարգացումների համար: Ադրբեջանի ագրեսիվ հռետորաբանությունը և շարունակական ռազմական ագրեսիան ռիսկեր է ստեղծում մեր կայուն զարգացման պլանների համար:

Մեզանից պահանջվում է սառնասրտություն և խոհեմություն՝ Հայաստանի Հանրապետության կայունությունը պահպանելու և անվտանգային միջավայրը բարելավելու

համար, որպեսզի երաշխավորվեն կառավարության ծրագրով նախատեսված նպատակների և դրանց ուղղված աշխատանքների լիակատար իրագործումը:

Շարունակելով իրականացնել մեր ենթակառուցվածքային ծրագրերը, գիտության և կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները՝ 2023 թվականին, ավելի քան երբևէ, կավելանան պաշտպանական ծախսերը: Դա թույլ կտա իրականացնել այս կարևորագույն ոլորտում նախանշված բարեփոխումները, բարձրացնել մեր երկրի պաշտպանվածությունը և երաշխավորել խաղաղության օրակարգի կենսագործումը՝ ի նպաստ մեր երկրի և ժողովրդի կայուն զարգացման: Այս առումով առանձնահատուկ պետք է ընդգծեմ մեր նվիրվածությունը խաղաղության օրակարգին և հույս ունեմ 2023 թվականը կկարողանանք դարձնել մեր բոլոր հարևանների հետ տևական և համապարփակ խաղաղության հաստատման ու ամրապնդման տարի:

Մենք հավատարիմ ենք 7 տոկոս տնտեսական աճ ապահովելու կառավարության ծրագրով սահմանված թիրախին և անելու ենք ամեն ինչ՝ այնպիսի տնտեսական միջավայր ստեղծելու համար, որը լավագույնս կնպաստի մեր տնտեսության ներառական զարգացման և մեր ժողովրդի ստեղծագործ ներուժը մեծացնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի բյուջետավորման քաղաքականությունը իրականացվել է առաջնորդվելով ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի և ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագրի առաջնահերթություններով:

Իրականացվելիք միջոցառումների հիմնական նպատակը լինելու է տնտեսության մրցունակության և արտադրողականության աճը: Չնայած 2022 թվականին ակնկալվող բարձր տնտեսական աճին 2023 թվականին Կառավարությունը շարունակում է թիրախավորել երկարատև բարձր տնտեսական աճի ապահովումը՝ առնվազն տարեկան 7%, իսկ բարենպաստ արտաքին միջավայրի դեպքում՝ 9%:

Կառավարության տնտեսական քաղաքականության նպատակներն են.

- ներդրումների խրախուսումը, գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը,
- զբոսաշրջության, արդյունաբերության և գյուղատնտեսության մրցունակության աճը,
- ապրանքների և ծառայությունների արտահանման էական ավելացումը,
- հանրային ներդրումների արդյունավետության բարձրացումն ու որակի ենթակառուցվածքների բարելավումը:
- մարդու ներքին կարողությունների զարգացման և իրացման միջոցով՝ միջին խավի բարեկեցության աճն ու աղքատության կրճատումը:

Ուղղորդվելով ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի առաջնահերթություններով՝ նախատեսվում է իրականացնել սոցիալական, կրթական, ենթակառուցվածքային բնույթի մի շարք առաջնահերթ միջոցառումներ, որոնցից առավել հատկանշական են՝

- նվազագույն աշխատավարձի բարձրացումը՝ սահմանելով այն 75,000 ՀՀ դրամ,
- կենսաթոշակներին ուղղվող ծախսերի ավելացումը 25,2 մլրդ դրամով,
- առողջապահությանն ու կրթությանն ուղղվող ծախսերի առաջանցիկ աճի ապահովումը ՀՆԱ-ի նկատմամբ՝ համապատասխանաբար 1,60% և 2,24%,
- ժողովրդագրական վիճակի բարելավման գծով լրացուցիչ ծախսերի նախատեսումը 16,9 մլրդ ՀՀ դրամով,
- գիտության գծով նշանակալի ծախսերի ավելացումը 6,2 մլրդ ՀՀ դրամով:

ՄԱՍ Ի–Ա. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2023 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները

Տնտեսական զարգացում

2023 թվականին տնտեսական զարգացման քաղաքականության շրջանակը կառուցվում է ՀՀ կառավարության՝ 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի առաջնահերթությունների շուրջ: Իրականացվելիք միջոցառումների հիմնական նպատակը լինելու է ներդրումներից բխող տնտեսական զարգացման մոդելի անցնելը, տնտեսության մրցունակության և արտադրողականության աճը:

Տնտեսական քաղաքականությունը հիմնված է լինելու ռազմավարական փաստաթղթերով նախատեսված գործողությունների իրականացման վրա այնպիսի կարևորագույն ուղղություններով, ինչպիսիք են ներդրումների խրախուսումը, ձեռներեցության զարգացումը, գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը, զբոսաշրջության, արդյունաբերության և գյուղատնտեսության մրցունակության աճը, ապրանքների և ծառայությունների արտահանման էական ավելացումը: Միաժամանակ թիրախավորվելու են նաև հանրային ներդրումների արդյունավետության բարձրացումն ու որակի ենթակառուցվածքների բարելավումը:

Տնտեսության մրցունակության բարձրացման տեսանկյունից կառավարության կողմից կարևորվելու է արտադրողականության աճը՝ տեխնոլոգիաների և լավագույն միջազգային փորձի կլանման և կարողությունների զարգացման միջոցով, ՀՀ քաղաքացիների նորարարական ներուժի իրացումը՝ գործարար նախաձեռնողականության խրախուսման միջոցով: Հատուկ ուշադրության է արժանանալու ներքին և օտարերկրյա ներդրումների ներգրավումը՝ որպես տնտեսության որակական փոփոխության շարժիչ ուժ:

Արդյունաբերության մրցունակության աճի առաջնային աղբյուր է դիտարկվում արտադրողականության աճը և միջազգային մրցունակության բարձրացումը՝ տեխնոլոգիաների վերազինման, գիտելիքի կլանման, արտահանման կարողությունների զարգացման, լոգիստիկ խնդիրների մեղմման և՛ ներքին, և՛ միջազգային թիրախային շուկաների մուտքի, և՛ տեղեկատվության հասանելիության ապահովման միջոցով:

Ծրագրված գործողությունները միտված են հնարավորություն ընձեռելու Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ապրանքները (ծառայությունները), մտավոր գործունեության արդյունքներն արտահանել օտարերկրյա պետությունների շուկաներ՝ ստեղծելով առավել բարենպաստ պայմաններ արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական ոլորտներում տնտեսական աճի ներառականության համար ապահովել քաղաքացիների մասնագիտական կարողությունների ու հմտությունների զարգացումը և աշխատուժի հմտությունների մակարդակի բարձրացումը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ստեղծարար ներուժի իրացման անկյունաքարն է լինելու՝ աշխատատեղերի ստեղծման ու կայուն զարգացման խթանման նկատառումներով: ՓՄՁ զարգացման համար

հիմնական քայլերն ուղղվելու են ՀՆԱ-ում ՓՄՁ-ների տեսակարար կշռի աճին և համաչափ տարածքային զարգացմանը:

Ձեռներեցության խրախուսման ու զարգացման նպատակով ընդլայնվելու է սկսնակ ձեռներեցների աջակցության գործիքակազմը՝ սկսնակ նորարար ձեռներեցների համար՝ զգալիորեն բարձրացնելով ֆինանսների, ձեռնարկատիրական հմտությունների ու կապերի, ինչպես նաև գիտելիքի հասանելիությունը: Առանձնապես շեշտադրվելու է նաև նորարարական գաղափարների իրականացման, և վերջինիս միջոցով եկամտի այլընտրանքային աղբյուրների ստեղծման և հետճգնաժամային շրջանում Հայաստանի Հանրապետությունում մրցակցային առավելությունների իրացման ներուժ ունեցող ՓՄՁ–երի զարգացումը՝ աջակցության առավել ընդգրկուն գործիքակազմի կիրառմամբ: Մասնավորապես, իրականացվելու են միջոցառումներ միջազգային շուկաներում տեղական ՓՄՁ–երի ներկայացվածության և ճանաչելիության աստիճանի բարձրացման ուղղությամբ:

Տնտեսության տարբեր ոլորտներում ստեղծվելու են կանանց ներգրավման, մասնավորապես՝ աշխատանքը և մայրությունը համատեղելուն, ինչպես նաև տաղանդավոր երիտասարդների նորարարական մտածողության զարգացման և վերջիններիս կողմից ստարտափերի ստեղծմանն ուղղված առավել լայն հնարավորություններ: Ձեռնարկվելու են միջոցներ գյուղերում ոչ-գյուղատնտեսական ձեռնարկատիրության խրախուսման ու ոչ-գյուղատնտեսական հմտությունների ձեռքբերման համար նպաստավոր պայմանների ստեղծման համար:

Զբոսաշրջության ոլորտի զարգացման քաղաքականությունն ուղղված է լինելու Հայաստանի ճանաչելիության և հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացմանը, ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացմանը: Բյուջետային տարվա հիմնական միջոցառումները վերաբերում են ակտիվ մարքեթինգային քաղաքականության իրականացմանը, համայնքային ռեսուրսների հիման վրա զբոսաշրջային արդյունքի բազմազանեցմանը, զբոսաշրջային ենթակառուցվածքների և կարողությունների զարգացման աջակցությանը, միջազգային համագործակցության զարգացմանը, վիճակագրական համակարգի կատարելագործմանը, ծառայությունների որակի բարելավմանը: Կորոնավիրուսի համավարակի հետևանքները մեղմելու նպատակով հատկապես մեծ ուշադրություն է դարձվելու Հայաստանի զբոսաշրջային գրավչության վերականգնման մարքեթինգային միջոցառումների իրականացմանը:

Գյուղատնտեսությունը երկրի կենսագործունեության և տնտեսության կայունացման շարժիչ գործոններից մեկն է: Այն նշանակալի է ոչ միայն որպես ոլորտ, որից ստացվում է որոշակի ավելացված արժեք, այլև առաջին հերթին՝ որպես բնագավառ, որի որակի և զարգացման մակարդակից է կախված բնակչության պարենային անվտանգությունը, գյուղական բնակավայրերի կենսամակարդակն ու զարգացման հնարավորությունները, մարդկանց առող-ջությունն ու անվտանգությունը:

Գյուղատնտեսության ոլորտն ապահովում է ՀՆԱ-ի շուրջ 11%-ը, իսկ ՀՀ-ում զբաղվածների շուրջ 22%-ն ընդգրկված է գյուղատնտեսությում:

Կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունն ուղղված է գյուղատնտեսության ինտենսիվացմանը, արդյունավետության բարձրացմանը, հողային ռեսուրսների նպատակային և ջրային ռեսուրսների խնայողաբար ու արդյունավետ օգտագործմանը, պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը, անասնաբուծության և բուսաբուծության զարգացմանը, արդի տեխնոլոգիաների ներդրմանը, արտադրված արտադրանքի իրացմանն ու արտահանման խթանմանը, գյուղատնտեսական

ամբողջ արժեշղթայում ընդգրկված սուբյեկտների՝ գյուղացիական տնտեսությունների, կոոպերատիվների, գյուղատնտեսական մթերք վերամշակողների եկամուտների ավելացմանը:

2023 թվականի համար բարեփոխումների քաղաքականությունը կուղղվի գյուղատնտեսական նշանակության հողերի չօգտագործման և մասնատվածության մակարդակի նվազեցմանը, դրանց խոշորացմանը, միավորմանը (կոնսոլիդացմանը), տնտեսավարողների համար գործունեության նպաստավոր և մրցունակ պայմանների սեղծմանը, գյուղատնտեսական տեխնիկայով և ագրոպարենային ոլորտի սարքավորումներով հագեցվածության ապահովմանը, գյուղատնտեսական մթերքների իրացմանը, արտադրողների և վերամշակողների պայմանագրային հարաբերությունների կատարելագործմանը, գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ամբողջական ներդրման համար նախադրյալների ստեղծմանը, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը, խոշոր ներդրումային ծրագրերին աջակցությանը:

Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի և Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների շրջանակներում Կառավարության կողմից գյուղատնտեսության ոլորտում իրականացվող քաղաքականությունն նպատակաուղղված է գյուղատնտեսության զարգացմանը և արտադրողականության բարձրացմանը, որն ապահովվելու է ագրոպարենային արտադրանքի իրացման և արտահանման գործընթացների խթանմամբ:

Գործարար և ներդրումային միջավայրի հետճգնաժամային արագ և համապարփակ վերականգնումը պահանջելու է մի շարք շրջանակային բարեփոխումներ՝ ուղղված տնտեսության ներուժի վերականգնմանը, որը հնարավոր կլինի ներդրումային միջավայրի ճկունությունն ապահովելու և ներդրումների ներգրավման միջոցով: Տնտեսական քաղաքականության թիրախներին հասնելու համար անհրաժեշտ է լինելու ներդրում/ՀՆԱ հարաբերակցությունը հասցնել առնվազն 25%-ի: Գործարար և ներդրումային միջավայրի ճկունությունն ապահովելու նպատակով իրականացվելու են կառուցվածքային բարեփոխումներ, որոնք նպատակ են ունենալու ընդլայնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հասանելի տնտեսական հնարավորությունների դաշտը և առավելագույնս խրախուսելու հատկապես գիտելիք ձևավորող ներքին և օտարերկրյա մասնավոր ներդրումները, բարձրացնելու վերջիններիս շահութաբերությունը:

Սահմանափակ ներքին շուկայի պայմաններում ՀՀ ներդրումային գրավչությունը պայմանավորված է լինելու նաև ԵԱՏՄ, ԵՄ, Իրանի շուկաների հասանելիության և միաժամանակ գործարար ու ներդրումային միջավայրի տվյալ շուկաների համադրությամբ առավել բարենպաս լինելու հանգամանքներով: Ներդրումային քաղաքականության նպատակներից է առնվազն ԵԱՏՄ, հարևան և տարածաշրջանի երկրների համեմատ լավագույն, առավել ճկուն ներդրումային դաշտի ձևավորումը՝ ազատ ու հավասար մրցակցության, ինչպես նաև կանխատեսելիության իմաստով և առաջնային դիրքի պահպանման նպատակով դրա շարունակական բարելավումը: Ներդրումային քաղաքականության առաջնահերթ թիրախը հանդիսանում է նորարարական, նոր գիտելիք ստեղծող ծրագրերի իրագործման համար առավել արագ և ճկուն գործընթացների, ինչպես նաև մրցունակության գործոնների առավելագույն հասանելիության ապահովումը: Հիմնականում կարևորվում են կապիտալի և ֆինանսական միջոցների հասանելիության բարձրացումը,

գործարար և աշխատանքային հարաբերությունների ճկունության բարձրացումը, ենթակառուցվածքների ու ռեսուրսների հասանելիության բարձրացումը, տնտեսության թվայնացման և տեղեկատվության հասանելիության մակարդակի բարձրացումը:

Հանրային ներդրումներ

ՀՀ կառավարությունը, կարևորելով հանրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, հանրային ներդրումների արդյունավետության բարձրացումը և հանրային միջոցների նպատակային օգտագործումը, համապատասխան քայլեր է ձեռնարկում հանրային ներդրումային միասնական համակարգի, այդ թվում՝ հանրային ներդրումային ծրագրերի մշտադիտարկման և գնահատման բարելավման ուղղությամբ: ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը նախաձեռնել և իրականացնում է մի շարք գործընթացներ, որոնք ուղղված են հանրային ներդրումների կառավարման միասնական համակարգի զարգացմանն ու կատարելագործմանը, որի հիմնական նպատակն է հանրային ներդրումների արդյունավետության բարձրացումը, պետություն-մասնավոր գործընկերության զարգացումը, հանրային ներդրումների կառավարման շրջանակներում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը, հանրային ներդրումային ծրագրերի իրականացման թափանցիկության, հրապարակայնության և վերջիններիս նկատմամբ մշտադիտարկման մեխանիզմների ապահովումը: Հանրային ներդրումների միասնական համակարգի ներդրմամբ ոլորտային գերատեսչությունների կողմից նախագծերի (գաղափարների) ձևավորումը և մշակումն իրականացվում է ծախս-արդյունավետության հիման վրա, բացի այդ նախագծերի հետագա գնահատումը և ընտրությունն իրականացվում է սահմանված ռազմավարական գերակայությունների հիման վրա:

ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության շրջանակներում կշարունակվեն ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի առևտրի և առևտրին առնչվող հարցերի ուղղությամբ ամրագրված դրույթների և պայմանավորվածությունների արդյունավետ ապահովումն ու իրականացումը:

Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում կշարունակվեն երրորդ երկրների հետ ազատ առևտրի գոտու ստեղծման և առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագրերի և հուշագրերի մշակման աշխատանքները և դրանցից բխող միջոցառումների իրականացումը, ներքին շուկայի գործառնության շրջանակներում Եվրասիական տնտեսական միության խոչընդոտների, սահմանափակումների և արգելքների բացահայտմանը և վերացմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև նավթի և նավթամթերքի միասնական շուկայի և ալկոհոլային միասնական շուկայի ձևավորման աշխատանքների իրականացումը և համակարգումը:

ԱՊՀ համագործակցության շրջանակներում կշարունակվեն «Ազատ առևտրի գոտու մասին» պայմանագրից, ինչպես նաև մինչև 2030 թվականն ընկած ժամանակահատվածում ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարությունից բխող միջոցառումների իրականացման աշխատանքները:

Որակի ենթակառուցվածքի զարգացում

Որակի ենթակառուցվածքի՝ տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտների զարգացումը նպատակուղղված կլինի.

- անվտանգ արտադրանքի շրջանառության ապահովմանը և սպառողների շահերի պաշտպանության մակարդակի բարձրացմանը,

- առևտրում առկա տեխնիկական խոչընդոտների նվազեցմանը, մրցունակ արտադրանքի արտադրության խթանմանը և անբարեխիղճ գործելակերպի կանխարգելմանը,
- տեղական արտադրանքի արտահանման ծավալների ավելացմանը և նոր շուկաների ձեռքբերմանը, «Արտադրված է Հայաստանում» արտադրանքի ճանաչելության բարձրացումը,
- տնտեսության զարգացման գերակա ճյուղերում անհրաժեշտ ստանդարտների մշակմանը և ներդրմանը,
-տարածաշրջանային և միջազգային հավատարմագրման կազմակերպությունների հետ (EA, ILAC,IAF) հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված երկկողմ և բազմակողմ ճանաչման համաձայնագրերի կնքմանը և միջազգային ճանաչում ունեցող հավատարմագրման համակարգի ձեռքբերմանը,
- համապատասխանության գնահատման փաստաթղթերի հասանելիության ապահովմանը հիմնական արտահանման շուկաներում,
- առանց լրացուցիչ համապատասխանության գնահատման, ֆինանսական ռեսուրսների և ժամանակի ծախսի ԵՄ երկրներ արտադրանքի արտահանման ապահովմանը՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ տեղական արտադրողի համար և բացառելով նույն արտադրանքի վերագնահատման (կրկնակի փորձարկման և սերտիֆիկացման) անհրաժեշտությունը:

Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

Տեղական ինքնակառավարման համակարգում նախատեսվում է՝

- ՏԻՄ համակարգի զարգացման և լիազորությունների ապակենտրոնացման քաղաքականության առկա խնդիրների լուծում՝ վարչական (համայնքների միավորման գործընթացի ավարտից հետո՝ համայքների ղեկավարներին նոր լիազորությունների փոխանցում) և ֆիսկալ ապակենտրոնացում, ՏԻՄ հզորացում ու տեղական ժողովրդավարության զարգացում,
- ՏԻՄ-երի կողմից համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և համայնքի տարեկան աշխատանքային պլանը մշակելու, հաստատելու, դրանց կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի հաշվետվություն ներկայացնելու և հրապարակելու վերաբերյալ օրենսդրական պարտադիր պահանջների կատարմանն ուղղված գործընթացների կազմակերպում,
- ՏՏ կիրառության առումով ՏԻՄ-երի կարողությունների զարգացմանը միտված ծրագրերի իրականացում, տեղեկատվական համակարգերի կիրառության ընդլայնման միջոցով ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովում, ՏԻՄ-երում կիրառվող կառավարման տեղեկատվական համակարգերի և պետական մարմինների էլեկտրոնային համակարգերի փոխգործելիության հաստատում և ընդլայնում**:**

Տարածքային զարգացման նպատակով նախատեսվում է՝

- մարզերի տնտեսական զարգացման անհամամասնությունների մեղմում,
- հանրապետական գործադիր մարմինների կողմից ՀՀ մարզերում իրականացվող ծրագրերի մշտադիտարկման համակարգի կատարելագործում:

Տեղական ինքնակառավարման համակարգի, տարածքային, տնտեսական, ֆինասական և քաղաքական դերի բարձրացման նպատակով նախատեսվում է՝

- համայնքային ծառայողների կարողությունների կատարելագործում,
- համայնքների միավորման արդյունքում համայնքային ծառայության ոլորտում առաջացած նոր պահանջների գույքագրում և մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացում:

Ճանապարհային տնտեսություն

ՀՀ տրանսպորտային համակարգի կարևորագույն խնդիրներից է երկրի ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքների գործունեության արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև տնտեսության և ազգաբնակչության պահանջների բավարարման որակի բարձրացման միջոցով՝ անվտանգ և արդյունավետ տրանսպորտային ծառայությունների ապահովումը:

Երթևեկության ինտենսիվության աճի, ուղևորափոխադրումների ու բեռնափոխադրումների անվտանգության և արդյունավետության ապահովման նպատակով 2023թ.-ին նախատեսվում է իրականացնել միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ու տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում, միջին նորոգում, ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում՝ ինչը կապահովի ճանապարհների և կառույցների պահպանվածությունն այնպիսի վիճակում, որը համապատասխանում է անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին:

2023թ.-ին վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին կշարունակվի Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի վերակառուցման, ինչպես նաև կմեկնարկեն Քաջարան-Ագարակ, Սիսիան-Քաջարան և Քաջարանի թունել տանող ճանապարհահատվածների հողերի օտարման և վերակառուցման աշխատանքները:

Էներգետիկա

Էներգետիկայի բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունն ուղղված է լինելու էներգետիկ անկախության ու անվտանգության մակարդակի բարձրացմանը, սպառողներին էլեկտրաէներգիայի և գազի հուսալի ու որակյալ մատակարարման ապահովմանը:

Էներգետիկայի բնագավառի կայուն զարգացման հիմնարար ուղղություններն են լինելու՝ վերականգնվող էներգետիկ ներուժի տնտեսապես հիմնավորված, արդյունավետ և պատասխանատու օգտագործումը, ատոմային էներգետիկայի խաղաղ նպատակներով զարգացումը, արտահանման կողմնորոշում ունեցող կայուն ու հուսալի էներգահամակարգի կառուցումը, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած նոր արտադրող հզորությունների ստեղծումը, էլեկտրաէներգետիկական համակարգի տարածաշրջանային ինտեգրումը, էներգակիրների մատակարարման ուղիների և ձևերի տարատեսակեցումը, էներգաարդյունավետության և էներգախնայողության միջոցառումների ներդնումը, թվային էներգետիկայի վերափոխումը:

2023 թվականին կշարունակվեն աշխատանքները Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի և գազի ընդհանուր շուկայի ձևավորմանն ուղղված աշխատանքները:

Կշարունակվեն ԱՅԳ-1 200 ՄՎտ հզորությամբ և Մասրիկ-1 55 ՄՎտ հզորությամբ արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտային կայանի կառուցման աշխատանքները:

Կավարտվեն Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման արդիականացման աշխատանքները՝ ապահովելու Հայկական ԱԷԿ-ի աշխատանքը մինչև 2026 թվականը, որից հետո լրացուցիչ ներդրումներ կարվեն ատոմային էլեկտրակայանի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետը ևս 10 տարով մինչև 2036թ.

երկարաձգելու նպատակով: Հայաստանում միջուկային նոր էներգաբլոկի կառուցման նպատակով կիրականացվեն տեխնիկատնտեսական հիմնավորման մշակման աշխատանքները:

Կշարունակվեն էներգետիկայի ոլորտում ՀՀ օրենսդրության մոտարկման աշխատանքները ՀՀ-ԵՄ Համապարփակ Ընդլայնված Գործընկերության (ՀԸԳ) համաձայնագրով նախատեսված հրահանգների և կանոնակարգերին:

Կշարունակվի Էներգարդյունավետ վերանորոգման պետական ծրագիրը՝ ուղղված քաղաքացիների բարեկեցության բարձրացմանը, կենսապայմանների բարելավմանը և էներգարդյունավետության ու էներգախնայողության տարածմանը:

Միջուկային օրենսդրության, միջուկային ու ռադիացիոն անվտանգության կարգավորման համակարգի առաջնահերթ ուղղություններն են.

- ՀՀ միջուկային օրենսդրության համապատասխանեցումը Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) անվտանգության ստանդարտներին, Եվրոպական միության անվտանգության դիրեկտիվների՝ այդ թվում Արևմտաեվրոպական երկրների կարգավորող մարմինների ասոցիացիայի (WENRA) անվտանգության պահանջներին: Հաշվի առնելով նաև Ֆուկուշիմայի ԱԷԿ-ի վթարի ուսումնասիրության և «սթրես-թեստի» ինքնագնահատման արդյունքները և զարգացած երկրների փորձը «Ատոմային էներգիայի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի մշակումը, միջուկային և ճառագայթային անվտանգության նոր նորմերի, կանոնների, պահանջների, ուղեցույցների, մեթոդների մշակումը, գործող նորմերի ու կանոնների վերանայումը,
- անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի քննարկումը, վերլուծությունը և գնահատումը: Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության բարձրացման միջոցառումների այդ թվում նաև «սթրես-թեստի» ազգային հաշվետվության հիման վրա մշակված գործողությունների ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների լիցենզավորումը/թույլտվության տրամադրումը, Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման լիցենզավորումը, ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցմամբ պայմանավորված կոմիտեին վերապահված գործառույթների իրականացումը,
- ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի՝ ՀՀ կողմից վավերացրած միջազգային 12 պայմանագրերից՝ ինչպես նաև ԱՊՀ և ԵԱՏՄ բխող պարտավորությունների կատարումը (օրենսդրության համապատասխանեցում պայմանագրերի պահանջներին, տեղեկատվական բազայի ստեղծումը և փոխանակումը պայմանագրերի անդամ-պետությունների միջև, ազգային հաշվետվությունների մշակումը և ներկայացումը), ՀՀ վարչապետին կից Ատոմային էներգիայի անվտանգության խորհրդին կոմիտեի գործունեության և Հայկական ԱԷԿ-ի անվտանգության վերաբերյալ հաշվետվությունների մշակումը,
- ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում լիցենզավորման իրականացումը,

Ջրային տնտեսություն

Ջրային տնտեսության ոլորտում էապես կարևորվում է բարեփոխումների շարունակման գործընթացի ապահովումը, նոր գաղափարների իրացումն ու ոլորտի զարգացման քաղաքականությունից բխող հիմնախնդիրների լուծումը՝ մասնավորապես, ջրամատակարարման որակի բարձրացումը, յուրաքանչյուր սոցիալական խմբի և շահառուի

համար ծառայությունների հասանելության ապահովումը, ոռոգվող հողատարածքների ընդլայնումը:

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեում նախատեսվում է ապահովել խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրերի իրականացումը՝ հիմնականում նպատակ դնելով բարձրացնել համակարգերի շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը: Առաջնահերթ խնդիր է համակարգերի կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացումը՝ ներառելով մասնավոր կառավարման բաղադրիչը, ինչպես նաև կրճատել ջրի կորուստները և բարելավել ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը:

Միաժամանակ, շարունակվելու են կարևորագույն հիդրոտեխնիկական կառուցվածքների, այդ թվում՝ ջրամբարների պատվարների ամրապնդման ու նորոգման աշխատանքները՝ երաշխավորելով դրանց անվտանգ ու անխափան շահագործումը:

Հասանելի և որակյալ ծառայությունների մատուցման ապահովման նպատակով 2023թվականին շարունակվելու է համապատասխան ներդրումների կատարումը ջրային ոլորտում: Ներդրումային քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի համակարգերի պահպանմանը և վերականգնմանը, առկա ենթակառուցվածքների արդիականացման և նորերի կառուցմամբ ծառայությունների մատուցման էներգատար կառուցվածքների փոփոխմանը, համակարգերում հաշվառելիության համակարգի բարելավմանը և արդիականացմանը:

ՀՀ ջրային տնտեսության ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական աշխատանքները՝

- ջրային պաշարների մակերևութային հոսքի կառավարման նպատակով իրականացվելու է թվով 6 ջրամբարների նախագծման աշխատանքները,
- «Արփա-Սևան» թունելի վթարային առանձին հատվածների հիմնանորոգման աշխատանքներ, որոնց շնորհիվ ապահովվելու է թունելի հուսալի և անխափան շահագործումը,
- խթանվելու է նոր տեխնոլոգիաների ներդրմամբ ջրի խնայողական ռեժիմով օգտագործման, այդ թվում՝ կաթիլային և անձրևացման եղանակով ոռոգման համակարգերի ներդրումը, ինչպես նաև ոռոգման ջրի վարձավճարների փոխհատուցման մեխանիզմների կիրառումը,
- շարունակվելու է ոռոգման համակարգերում կառավարման ավտոմատացված ու տվյալների հավաքման (SCADA) համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման և շահագործման միջոցառումների գործընթացը,
- ցերեկային ժամերին առաջացած պոտենցիալ ջրերը, ինչպես նաև գիշերային ժամերին չօգտագործելու հետևանքով առաջացած ջրի ծավալները կուտակելու նպատակով կառուցվելու են օրվա կարգավորիչ ջրավազաններ,
- իրականացվելու է գետերի ափերի ամրացման աշխատանքներ,
- նախատեսվում է ավարտին հասցնել Վեդու ջրամբարի կառուցման, ինչպես նաև Կապսի ջրամբարի 8.0 մ բարձրությամբ պատվարի շինարարական աշխատանքները,
- իրականացվելու են ոռոգման ջրանցքների, ոռոգման ներտնտեսային ցանցի, ջրատարների և պոմպակայանների վերականգնման և նորոգման, ինչպես նաև ինքնահոս համակարգերի կառուցման աշխատանքներ,
- նախատեսվում է բարելավել Երևանի ջրամատակարարումը Հաղթանակ, Սիլիկյան և Մալաթիա թաղամասերում, ինչպես նաև՝ ՀՀ մարզերում մեկնարկած ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքները,

-շարունակվելու են ջրի և էլեկտրաէներգիայի խնայողության խրախուսման, ջրամատակարարման տևողության ավելացման և ջրի որակի բարելավման, ինչպես նաև հաշվառման համակարգի շարունակական կատարելագործման աշխատանքները:

Հանրային ծառայությունների կարգավորում

2023 թվականի փետրվարի 1-ից էլեկտրաէներգետիկական ազատականացված շուկային անցմամբ պայմանավորված՝ նախատեսվում է սակագների որոշման cost based մեխանիզմներից անցում market based մեխանիզմների, երբ մեծածախ շուկայի առանձին սեգմենտներում առևտրի կազմակերպման և պատասխանատվության սահմանման մեխանիզմների կիրառմամբ հնարավորություն կընձեռվի մրցակցային հարաբերությունների պայմաններում որոշելու էլեկտրական էներգիայի գինը: 2023 թվականի ընթացքում կշարունակեն իրականացվել էներգետիկայի բնագավառում էներգետիկ հաշվեկշիռների, կարգավորվող ընկերությունների կողմից ծախսերի ու պարտավորությունների, սակագների վրա ազդող մի շարք այլ գործոնների վերլուծություններ և, ըստ անհրաժեշտության, սակագների վերանայման աշխատանքներ, կճշգրտվեն գնման երաշխիք ունեցող վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները:

2023 թվականին կշարունակվեն աշխատանքները (այդ թվում՝ օպերատորների հետ համագործակցության, ինչպես նաև լիցենզիաների և ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրմամբ) ենթակառուցվածքների զարգացման և ՀՀ բնակավայրերում (առավելապես սահմանամերձ բնակավայրերում) ամրակցված (լարային և անլար տեխնոլոգիաների) լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների զարգացման ուղղությամբ, որոնցով պայմանավորված ակնկալվում է լայնաշերտ տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերի հասանելիության և ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների թվաքանակի աճ 5-10-ական%, ինչպես նաև օգտագործված ընդհանուր լայնաշերտ ինտերնետ կապի հոսքերի աճ՝ 30-50% միջակայքերի սահմաններում:

Բացի այդ, հաշվի առնելով ՀՀ էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի առկա ձեռքբերումները, նախատեսվում է ոլորտի իրավասու և շահագրգիռ պատկան այլ մարմինների հետ քննարկումների արդյունքում իրականացնել հանձնաժողովի տնօրինմանը հանձնված ռադիոհաճախականությունների 700ՄՀց տիրույթի՝ 703-733ՄՀց և 758-788ՄՀց և 800ՄՀց տիրույթի՝ 791-801ՄՀց և 832-842ՄՀց հատվածների տրամադրման մրցույթներ՝ հանրային շարժական կապի 4G տեխնոլոգիայից դեպի 5G տեխնոլոգիայի ցանցերի սահուն անցումն ապահովող նորագույն սերնդի շարժական լայնաշերտ կապի ցանցերի զարգացման (ներդրման) նպատակով:

Քաղաքացիական ավիացիա

Քաղաքացիական ավիացիայի ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով կշարունակվի թռիչքային և ավիացիոն անվտանգության մակարդակների համապատասխանեցումը եվրոպական և միջազգային ստանդարտներին:

Պետական գույքի կառավարման ոլորտ

Պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացման շնորհիվ կբարձրացվեն պետական գույքի մասնավորեցումից, օտարումից և օգտագործումից

եկամուտները, ինչպես նաև՝ տնտեսական շրջանառության մեջ ներկայումս պետական սեփականություն հանդիսացող գույքի ներգրավվածությունը :

Պետական համակարգի մարմինների և պետական կազմակերպությունների կողմից վարձակալված՝ ոչ պետական սեփականություն համարվող տարածքները կփոխարինվեն պետության սեփականությունը համարվող համապատասխան տարածքներով:

Միգրացիա

ՀՀ-ում միգրացիոն ոլորտի զարգացման նպատակով նախատեսվում է՝

- Միգրացիայի կառավարման համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում՝ Ներքին գործերի նախարարության կազմում Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ձևավորում,
- Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացում,
- Օտարերկրյա քաղաքացիներին ՀՀ-ում աշխատանքի թույլտվության և կացության տրամադրման համակարգի թվայնացում և պարզեցում՝ օտարերկրյա աշխատողների գրանցման միասնական էլեկտրոնային հարթակի գործարկում,
- ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորմանը, հարկադիր միգրանտների զանգվածային ներհոսքի ճգնաժամային կառավարմանն ուղղված գործողությունների ապահովում,
- ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված ծրագրերի իրականացում,
- ՀՀ-ԵՄ միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրի շրջանակներում ստացվող հայցերի ընթացքի ապահովում:

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերություն

Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական երկիր դարձնելու նպատակն իրագործելու ուղիներից է բարձր տեխնոլոգիաների, կապի, թվայնացման և ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը՝ զինված ուժերի մարտունակության ու պաշտպանունակության բարձրացումը, տնտեսական աճը, գիտական և տեխնոլոգիական առաջընթացը:

2023 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի, թվայնացման և շուկայի զարգացման ծրագիր, որի նպատակն է բարձր տեխնոլոգիաների ենթակառուցվածքների բարելավումը, մասնավորապես.

- Իրականացնել կադրերի թիրախավորված պատրաստում և վերապատրաստում, հաշվի առնելով շուկայի կտրուկ զարգացումն ու կադրերի նկատմամբ շուկայի պահանջարկի կտրուկ աճը,
- Զարգացնել բարձր տեխնոլոգիական ոլորտի համար անհրաժեշտ էկոհամակարգը՝ ներառյալ թիրախավորված գիտահետազոտական աշխատանքների, ստեղծագործական խմբերի, նորաստեղծ ընկերությունների ֆինանսավորումը,
- Հայկական Սփյուռքի ներգրավվածությունն ապահովելու համար հայկական ընկերությունների, կազմակերպությունների և անհատների հետ ստեղծել շարունակական համագործակցության հարթակ,
- Աջակցել SS ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին:

Պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային հետազոտություններ ծրագիր, որի նպատակն է նպաստել ՀՀ պաշտպանության և անվտանգության համակարգերի զարգացմանը, մասնավորապես իրականացնել գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացում պաշտպանության համակարգի ապահովման համար:

Հեռահաղորդակցության ապահովում ծրագիր, որի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգումն ու բարելավումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ռադիոհաճախականային տիրույթի 92 տոկոս մաքրության ապահովում, հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգում ու բարելավում, ռադիոեթերի մոնիթորինգի և ազդանշանների տեխնիկական պարամետրերի չափումների անցկացում, Հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալում, ՀՀ-ում պետական մարմինների և ուսումնական հաստատությունների տվյալների փոխանակման կապի ապահովում և սպասարկում, ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիտորինգի համակարգի ներդրում:

Ռազմարդյունաբերության համալիրի զարգացում ծրագիր, որի գծով 2023 թվականին նախատեսվել է ֆինանսական աջակցության տրամադրել ռազմարդյունաբերական համալիրի կազմակերպություններին:

Քաղաքաշինություն

Ոլորտում իրագործվող ծախսային ծրագրերն ունեն ռազմավարական նշանակություն, որոնց իրականացման արդյունքում կապահովվի ներկա և գալիք սերունդների կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորումն ու քաղաքաշինական միջոցներով բնակչության կյանքի որակի հետևողական բարելավումը, բնակարանային խնդիրների լուծումը:

Ոլորտի քաղաքականության հիմնական թիրախներն են.

- Հանրապետության ողջ տարածքը համակցված տարածական պլանավորման փաստաթղթերով ապահովում,
- Քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերի միջազգային և եվրոպական նորմերին ու ստանդարտներին համապատասխանեցում,
- Քաղաքաշինության բնագավառում պետական ծրագրերի իրականացման ապահովում,
- Շենքերի և շինությունների մատչելիության ապահովում և անձնագրավորում:

Արտակարգ իրավիճակների բնագավառ

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու բնական և մարդածին աղետների ռիսկի նվազեցմանը, հնարավոր հետևանքների կանխարգելմանը և վերացմանը՝ հանդիսանալով պետության անվտանգության ապահովման բաղկացուցիչ տարր, նպաստելու է երկրի կայուն զարգացմանը:

2023 թվականին ԱԻՆ հիմնական խնդիրներն են.

- Փրկարար ծառայությունում փրկարարական համակարգի կատարելագործում և զարգացում այն աստիճանաբար համապատասխանեցնելով ընդունված ժամանակակից պահանջներին, զուգահեռաբար պետական փրկարարական կառույցի շուրջ ձևավորելով

կամավորական փրկարարական ուժեր, նախարարության փրկարար ծառայողների մասնագիտական, արագ արձագանքման փրկարար ուժերի պատրաստականության բարձրացում և տեխնիկական հագեցվածության ապահովում, քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի քաղաքացիական պաշտպանության ուժերի ու ստորաբաժանումների խնդիրների առավել արդյունավետ դերաբաշխման և կառավարելիության բարձրացում, սահմանամերձ բնակավայրերում փրկարարական և արագ արձագանքման այլ ուժերի ստեղծում և զարգացում:

- Սեյսմիկ պաշտպանության ոլորտում սեյսմիկ վտանգի գնահատման հուսալիությունը բարձրացնելու նպատակով սեյսմիկ պաշտպանության ազգային դիտացանցի արդիականացում և թվայնացում: Շենքերի, շինությունների նախագծման, բնակավայրերի տարաբնակեցման և զարգացման ծրագրերում հաշվի առնելով ինչպես դրանց հնարավոր անվտանգ վայրի ընտրությունը, այնպես էլ սեյսմիկ անվտանգությունը:

- Տեխնիկական անվտանգության ոլորտում՝ արտադրական վտանգավոր օբյեկտների շահագործմամբ պայմանավորված տեխնածին վթարների, դրանց հետևանքով հասարակությանը և տնտեսությանը պատճառվող վնասների ռիսկերի նվազեցում:

- Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի հիմնական խնդիրն է զարգացնել ակադեմիայի հնարավորությունները՝ դարձնելով այն արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մասնագետների պատրաստման ու վերապատրաստման կենտրոն:

- Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում մարդուն հրատապ օգնության համապետական համակարգի «911» դիսպետչերական ծառայության զարգացում՝ ծառայության մատուցումը հնարավորինս մոտեցնելով միջազգային չափանիշներին: Իրավիճակների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության հավաքման, մշակման, վերլուծության և առաջարկությունների նախապատրաստման համակարգի կատարելագործում: - ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական պահուստի համակարգի զարգացման և բարեփոխումների հայեցակարգի դրույթների իրականացում, նյութական արժեքների կուտակում, թարմացում, փոխարինում և պահպանում: Այս ոլորտում նոր քաղաքականության մշակում՝ ընդգրկելով մասնավոր սեկտորի հնարավորություններն ու կարողությունները:-
Աղետների ռիսկի վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծության, համայնքներում աղետների ռիսկի բացահայտման և գնահատման համակարգի փուլային ներդրում, սողանքային աղետի կառավարման միասնական համակարգի ներդրում:

Արտաքին քաղաքականություն

ՀՀ կառավարությունը շարունակում է հետևողականորեն իրագործել իր որդեգրած քաղաքականությունն՝ ամրագրված Ազգային ժողովի կողմից 2021թ.-ին հաստատված ծրագրում, ինչի համաձայն ՀՀ արտաքին քաղաքական առաջնահերթություններից են բարեկամ և գործընկեր երկրների հետ բազմաոլորտ համագործակցության ընդլայնումը, միջազգային հարթակներում ակտիվ ներգրավվածությունն ու Հայաստանի շահերի պաշտպանությունը, տարածաշրջանում խաղաղ ու կայուն զարգացման դարաշրջանի բացումը:

Հարավային Կովկասում երկարատև կայունության և խաղաղության հաստատման նպատակով, 2021 թվականի հունվարի 11-ին և 2021 թվականի նոյեմբերի 26-ին Ռուսաստանի միջնորդությամբ ընդունված եռակողմ հայտարարություններին և Բրյուսելում ձեռքբերված պայմանավորվածություններին համահունչ՝ Հայաստանը կառուցողական երկխոսություն է

վարում Ադրբեջանի հետ՝ հարաբերությունների ընդհանուր կարգավորման, երկու երկրների միջև սահմանազատման և սահմանային անվտանգության, ինչպես նաև տարածաշրջանային տնտեսական կապերի և տրանսպորտային հաղորդակցության ապաշրջափակման ուղղություններով:

Հայ-ադրբեջանական սահմանի կայունության և անվտանգության մակարդակի բարձրացման համատեքստում ենք դիտարկում Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման ու սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի և Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի նիստերի և գործընթացի շարունակականության կարևորությունը:

Շարունակվում են ջանքեր գործադրվել տարածաշրջանի տրանսպորտային և տնտեսական ենթակառուցվածքների ապաշրջափակման ուղղությամբ՝ երկրների ինքնիշխանության և ճանապարհների նկատմամբ իրավազորության պահպանման շուրջ ձեռքբերված պայմանավորվածությունների խստիվ պահպանմամբ:

Հավատարիմ լինելով խաղաղության և ուժի չկիրառման սկզբունքներին և չնայած Ադրբեջանի կողմից հայերի նկատմամբ այլատյացության դրսևորումներին և ռազմատենչ հռետորաբանությանը, Լեռնային Ղարաբաղում հրադադարի ռեժիմի պարբերական խախտումներին՝ պատրաստ ենք աշխատել Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների կարգավորման, Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման ուղղությամբ:

Կառավարության օրակարգում է շարունակելու լինել հումանիտար խնդիրների հասցեագրումը՝ մասնավորապես ռազմագերիների հայրենադարձումը, անհետ կորած անձանց և բռնի անհետացածների ճակատագրի պարզումը, հայկական պատմամշակութային ժառանգության պահպանությունը, հումանիտար կազմակերպությունների՝ Ղարաբաղ մուտքի ապահովումը և այլն:

Հայկական կողմն իր գործընկերներին և միջազգային հանրությանը տարբեր առիթներով ներկայացնում և վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ տարածաշրջանում կայուն և տևական խաղաղության հասնելու ճանապարհին կարևոր է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումը՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից լիազորված միակ միջազգային ձևաչափի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության մանդատի ներքո:

Շարունակվելու են աշխատանքները իրավական դիվանագիտության հարթակում՝ արդեն իսկ իրավական գործընթացների ուղղությամբ:

Կառավարությունը ակտիվ աշխատանքներ է իրականացնելու երկկողմ և բազմակողմ հարթակներում՝ կառավարության 2021-2026թթ. ծրագրով նախանշված ուղենիշների կյանքի կոչման ուղղությամբ:

Սփյուռք

ՀՀ կառավարությունը կարևորում է Հայաստան-սփյուռք գործակցության զարգացումը, որը նպատակաուղղված է լինելու հայ ինքնության պահպանմանը, հայրենադարձությանն ու Հայաստանում սփյուռքահայերի ինտեգրմանը, սփյուռքի մարդկային ներուժի վերհանմանն ու քարտեզագրմանը, աշխարհասփյուռ հայության մարդկային, մտավոր, տնտեսական ներուժի՝ հայրենիքի կայուն զարգացման նպատակի շուրջ համախմբմանը:

Այսօր սփյուռքի հայության առջև ծառացած հիմնական մարտահրավերներից մեկը հայ երիտասարդների մեջ ազգային ինքնության պահպանումն է, նրանց ընդգրկմամբ համահայկական միասնական օրակարգի ձևավորումը:

Հայաստան-Սփյուռք գործակցության համատեքստում անհրաժեշտ է խթանել համայնքային կառույցների գործունեությունը, դրանցում սփյուռքահայ երիտասարդների ներգրավվածությունը:

Համահայկական օրակարգերի ստեղծման հարցում կենսական է համայնքային գործիչների պատրաստումը՝ նրանցում առաջնորդի, համայնքների ղեկավարման կարողությունների և հմտությունների զարգացմումը:

Հայաստան-Սփյուռք գործակցության համատեքստում կարևորվում է սփյուռքի մասնագիտական ներուժի ներգրավումը Հայաստանի ինստիտուցիոնալ զարգացմանն ու հզորացմանը, որը կնպաստի նաև մասնագիտական հայրենադարձությանը:

Հայաստան-Սփյուռք գործակցության մեջ մեծ կարևորություն ունեն նաև հանրային կապերն ու աշխարհասփյուռ հայության իրազեկվածության ապահովումը: Այս համագործակցության հանրայնացումն ունի թիրախային երկու լսարան՝ ներքին կամ ներհայաստանյան և արտաքին կամ նպատակաուղղված Սփյուռքին՝ հայ համայնքներին և միջազգային հանրությանը:

Տեղեկատվությունը լսարանին ճիշտ հասցեագրելու համար կարևոր է լրագրողական հանրույթի հետ գործընկերային կայուն կապերի ստեղծումն ու առողջ աշխատանքը, լրատվադաշտում Հայաստան-Սփյուռք գործակցության ու ամրապնդմանն ուղղված ծրագրերի, սոցիալական մեդիայի բոլոր հարթակների ակտիվ գործածումը, մեդիա արշավների իրականացումը, ներգրավվածությունը սոցիալական նախաձեռնություններում և այլն:

Հայաստան-Սփյուռք գործակցության մեջ կարևոր գործոն է հանդիսանալու աջակցել սփյուռքի ներդրողներին և բարեգործներին՝ Հայաստանում իրենց ծրագրերն իրականացնելիս:

Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության առաջնահերթություններից է հանդիսանում հայրենադարձության խթանումը:

ՀՀ պետական քաղաքականությունը միտված է մշակել և իրականացնել միջոցառումներ, որոնք նպատակաուղղված կլինեն Հայաստանի զարգացման գործընթացում Սփյուռքի ներգրավմանը:

Արդարադատություն

2023 թվականին ոլորտի առաջնային ռազմավարական նպատակներն են լինելու՝

Դատական և իրավական բարեփոխումների ոլորտ

ՀՀ կառավարությունը 2022 թվականի հուլիսի 21-ին ընդունել է «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1133-Լ որոշումը: 2023 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել ռազմավարությունից բխող 2022-2026 թվականների գործողությունների ծրագրով սահմանված միջոցառումները:

Ոլորտային բարեփոխման կարևոր ուղղություններից մեկը դատարանների դատական համակարգի շարունակական բարեփոխումների իրականացումն է, ինչը, ի թիվս այլնի, պետք է նպատակ հետապնդի՝ երաշխավորել արդարադատության արդյունավետության բարձրացման և դատական պրակտիկայի միասնականության ապահովումը, ապահովել դատական գործերի քննության ողջամիտ ժամկետների առավել լիարժեք պահպանման և դատավարական

ժամկետների խնայողության սկզբունքի արդյունավետ իրականացման նպատակի իրացումը, ապահովել դատարանների մասնագիտացումների և դատավորների ենթամասնագիտացումների առկայությունն իրավունքի տարբեր ենթաոլորտներում, բարձրացնել դատավորների թեկնածուների ընտրության գործընթացի օբյեկտիվությունը և հիմնավորվածությունը, ապահովել դատական համակարգում դատավորների վարձատրության շարունակական բարձրացումը՝ սկսած բարձր ատյաններից, ապահովել դատավորների բարեվարքության շարունակական ստուգումը, շարունակել դատարանների շենքային պայմանների բարելավման գործընթացը:

Արդարադատության պատշաճ իրականացնումն ապահովելու համար կարևորվում է դատարանների շենքային պայմանների և տեխնիկական հագեցվածության կատարելագործումը' պայմանավորված հատկապես դատավորների թվի ավելացմամբ: Այս առումով անհրաժեշտ է քայլեր են ձեռնարկվելու դատարանները շենքային նոր պայմաններով և ենթակառուցվածքներով ապահովելու ուղղությամբ:

Արդարադատության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է նաև զարգացնել և կատարելագործել վեճերի լուծման այլընտրանքային եղանակները: Այս համատեքստում նախատեսվող առանցքային գործողություններից են Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի ստեղծումը, Հաշտարարության ոլորտի բարեփոխումների իրականացման ապահովումը, Արբիտրաժային և հաշտարարության օրենսդրության կատարելագործումը:

Հայաստանում ստեղծվող արբիտրաժային կենտրոնը պետք է լինի տարածաշրջանային և միջազգային կշիռ ունեցող ժամանակակից արբիտրաժային հաստատություն: Այն պետք է քննի ինչպես ընդհանուր առևտրային բնույթի վեճեր, այնպես էլ փոքր հայցապահանջներով գործեր (օրինակ՝ ֆինանսական կազմակերպությունների և հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների մասնակցությամբ վեճեր)՝ հատուկ վարույթի կարգով, որը հատկապես կնպաստի դատարանների ծանրաբեռնվածության թոթափմանը՝ գումարի բռնագանձման գործերի որոշ մասի քննության համար դառնալով արդյունավետ հարթակ:

Առկա է անհրաժեշտություն վերանայել նոր հաշտարարների ներգրավման, ուսուցման, ռեեստրի վարման և ընտրության իրավական ու գործնական մեխանիզմները: Իր հերթին, կարևորվում է նաև հաշտարարների որակավորման և վերապատրաստման ընթացակարգերը բարելավելու խնդիրը:

Դատաիրավական բարեփոխումների շրջանակում անհրաժեշտ է իրականացնել հարկադիր կատարման ոլորտի համընդհանուր բարեփոխումներ՝ բարձրացնելու կատարողական գործողությունների արդյունավետությունը, առավելագույնս ապահովելու կատարողական վարույթի մասնակիցների օրինական շահերի պաշտպանությունը, նրանց խնդիրներին ու կարիքներին արագ և արդյունավետ արձագանքելու կառուցակարգերի ներդրմանը: Նշված նպատակներին հասնելու նպատակով իրականացվելիք գործողություններն ուղղված են լինելու կատարողական վարույթի օրենսդրության համապարփակ վերանայմանը, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր մոդելի ներդրմանը, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավմանը, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմանը և գործարկմանը, բանկային հաշիվներում և ավանդներում առկա դրամական միջոցների արգելադրման և բռնագանձման գործընթացի օպտիմալացմանը:

Հակակոռուպցիոն ոլորտ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակելու է իրականացնել հակակոռուպցիոն քաղաքականությունը 2019 թվականի հոկտեմբերի 3-ին ընդունած Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի շրջանակներում:

Վերոնշյալ ռազմավարության պահանջներին համապատասխան նախատեսվում է իրագործել հետևյալ հիմնական միջոցառումները՝

- Հանրային ծառայության ոլորտում բարեվարքության ստուգման կառուցակարգերի կիրառման շրջանակների ընդլայնում:
- Վարչական կոռուպցիայի հաղթահարումը՝ ոլորտային կոռուպցիոն ռիսկերի վերհանման և դրանց հիման վրա հակակոռուպցիոն ոլորտային միջոցառումների մշակման և իրականացման, էլեկտրոնային ժողովրդավարության գործիքների շարունակական կատարելագործման միջոցով.
- Ազդարարման համակարգի գործնական կիրառությունն ապահովելուն ուղղված միջոցառումների իրականացումը.
- Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ստացված նվերների հաշվառման համար ռեեստրի ստեղծումը և գործարկումը.
- Հանրային կրթության և իրազեկման միջոցով կոռուպցիայի նկատմամբ ժխտողական վերաբերմունքի սերմանումը, ներառյալ՝ ազդարարման ինստիտուտի նկատմամբ վերաբերմունքի փոփոխման միջոցով, պահանջատեր քաղաքացու ձևավորումը.
- Հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի կատարման նկատմամբ մշտադիտարկում և համակարգումը, հաշվետվությունների կազմում:

Բացի այդ, ՀՀ Կառավարության՝ 2021թ. նոյեմբերի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին N 1902-Լ որոշման Հավելված 1-ի 16-րդ կետի համաձայն նախատեսվում է 2023 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակում ընդունել «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2023-2027 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը: Նախագծի մշակումը նախատեսվում է իրականացնել ներառական գործընթացի միջոցով՝ շահագրգիռ մարմինների, միջազգային գործընկեր կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ քննարկումների արդյունքում: Նշված գործընթացը հնարավորություն կտա վեր հանել շահագրգիռ բոլոր մարմինների, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից բարձրաձայնվող խնդիրները, առաջարկել արդյունավետ լուծումներ և նշվածները ներառել համապատասխան գործողությունների ծրագրում:

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտ

Կառավարությունը շարունակելու է վճռական մնալ վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորման, ինչպես նաև քրեակատարողական համակարգի կայուն զարգացումն ապահովելու հարցում:

Այս համատեքստում հիմնական թիրախային ուղղությունները լինելու են.

- էապես վերափոխել Պրոբացիայի ծառայությունը՝ զարգացնելով ծառայության կարողությունները, կադրային ներուժը, ընդլայնել պրոբացիայի ծառայողի սոցիալ-իրավական երաշխիքները, ինչպես նաև վերազինել պրոբացիայի ծառայությունն անհրաժեշտ միջոցներով.

- ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ ապահովելու Պրոբացիայի շահառուների զբաղվածությունը, հոգեբանական և իրավական աջակցությունը.

- խթանել պրոբացիայի համակարգում էլեկտրոնային կառավարման գործիքների կիրառումը, արդիականացնել E-probation էլեկտրոնային կառավարման համակարգը՝ ապահովելով դրա պարբերական զարգացումը.

- գործարկել ազատությունից զրկելուն այլընտրանք հանդիսացող նոր պատժատեսակների կատարման և խափանման միջոցների արդյունավետ կիրառման նպատակով ներդրված էլեկտրոնային հսկողության համակարգը, ապահովել էլեկտրոնային հսկողության միջոցների և դրանց ծրագրային համակարգերի՝ ըստ անհրաժեշտության արդիականացումն ու վերազինումը.

- բարելավել քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանները՝ ապահովելով ազատությունից զրկված անձանց համար արժանապատիվ պահման պայմաններ, իսկ քրեակատարողական ծառայողների համար՝ աշխատանքային անհրաժեշտ կենսապայմաններ.

- վերազինել քրեակատարողական հիմնարկներն արդի ինժեներատեխնիկական և նյութակենցաղային սարքավորումներով, արտաքին պարագծային պաշտպանության և ուղեկցման միջոցներով, անվտանգության ապահովման միջոցներով, ինչպես նաև օպերատիվ կառավարման կենտրոնով.

- խթանել քրեակատարողական համակարգում էլեկտրոնային կառավարման գործիքների կիրառումը և արդիականացնել e-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգը՝ բարձրացնելով համակարգի արդյունավետությունը.

- խթանել քրեակատարողական հիմնարկներում պատժի կրման անհատական պլանավորման ինստիտուտի պատշաճ կիրառումը.

- ապահովել քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանության և ինքնավնասման ռիսկի վերհանման և գնահատման, ինչպես նաև հոգեկան առողջության զննության և ռիսկի գնահատման գործիքակազմերի արդյունավետ կիրառումն ու շարունակական կատարելագործումը՝ նպաստելով ինքնասպանության և ինքնավնասման դեպքերի նվազմանն ու կանխարգելմանը.

- երաշխավորել ազատությունից զրկված անձանց՝ ազգային առողջապահական համակարգում առկա ծավալին և որակին համապատասխանող, միջազգայնորեն ճանաչված սկզբունքներին համապատասխան բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը.

- ապահովել ազատությունից զրկված անձանց, այդ թվում՝ անչափահասների և 19 տարեկան և ավելի տարիք ունեցող դատապարտյալների կրթության իրավունքի իրացման գործընթացի շարունակականությունն ու կայունությունը.

- պահանջարկի հիման վրա, ըստ ազատությունից զրկված անձանց թվի ընտրված քրեակատարողական հիմնարկների, իրականացնել մասնագիտական կրթական ծրագրեր:

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտ

ՀՀ Կառավարության կողմից 2021թ. նոյեմբերի 18-ին Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին N 1902-Լ որոշման Հավելված 1-ի Արդարադատության նախարարություն գլխի 13-րդ կետով 2023թ. առաջին կիսամյակի վերջին նախատեսվում է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. Գործողությունների ծրագրի ընդունում: Մինչ այդ նախատեսվում է նաև «Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ.

Գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում շահագրգիռ մարմինների, միջազգային գործընկեր կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ քննարկումների արդյունքում, առնվազն 3 հանրային քննարկումների կազմակերպում: Վերջինիս նպատակն է շահագրգիռ բոլոր մարմիններին, քաղաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից առաջարկությունների հավաքագրում և ներառում վերը նշված Գործողությունների ծրագրում:

Անհրաժեշտ է նաև նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. գործողությունների ծրագրում ներառվելու են նաև այն բոլոր միջոցառումները, որոնք նախատեսված են եղել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. Գործողությունների ծրագրում, սակայն կա՛մ 2022թ. տեղի ունեցած 44-օրյա պատերազմի, ինչպես նաև ամբողջ աշխարհում տիրող COVID-19-ը համավարակի պատճառներով չեն իրականացվել, կա՛մ իրականացվել են մասնակի:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտ

Հիմնական ուղղությունը կշարունակի մնալ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության սպասարկման կենտրոնների՝ «ֆրոնտ օֆիս» և «բեք օֆիս» ձևաչափով աշխատանքների իրակացման շրջանակի ընդլայնումը, որը կընդգրկի հանրապետության բոլոր բնակավայրերը, ինչպես նաև նման ձևաչափով ՔԿԱԳ ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը, այդ նպատակով նախատեսվում են ավելացնել ՔԿԱԳ հաստիքները, ինչպես նաև իրականացնել ՔԿԱԳ գործակալության կառուցվածքային փոփոխություն և ստեղծել «բեք օֆիսի» գործառույթներ իրականացնող նոր՝ հավաստումների իրականացման բաժին:

Իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի ոլորտ

Նախատեսվում է իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված շարունակական աշխատանքների իրականացում, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով մատուցվող ծառայությունների ընդլայնում (առցանց նույնականացման նոր մոտեցումների կիրառում, փաստաթղթերի վրա արագ արձագանքման (QR) կոդերի կիրառում, ինքնաշխատ ծառայությունների իրականացում), օրենսդրական բարեփոխումներ՝ ուղղված իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտում մատուցվող ծառայությունների մատչելիության, ինչպես նաև իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից ՎԻՎ օրենսգրքով սահմանված վարույթների իրականացման արդյունավետության ապահովմանը: Նախատեսվում է նաև իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության մարզային սպասարկման գրասենյակների տեղակայումը մարզկենտրոններում, ինչպես նաև իրավաբանական անձանց պետական ռեգիստրի արխիվների թվայնացմանն ուղղված աշխատանքների իրականացում: Նախատեսվում է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տեղեկատվական համակարգի արդիականացում, որի շրջանակներում իրականացվում են նոր տեղեկատվական համակարգի տեխնիկական առաջադրանքի մշակման աշխատանքներ:

Անձնական տվյալների պաշտպանության ոլորտ

Նախատեսվում է ապահովել անձնական տվյալների պաշտպանության ավելի բարձր մակարդակ, մասնավորապես՝ համապատասխանեցնել անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի կարգավիճակն օրենքով սահմանված և միջազգային չափանիշներին՝ ապահովելով նաև մարդկային ռեսուրսների, մասնագիտական, նյութական և

տեխնիկական կարողությունների զարգացում, ներդաշնակեցնել անձնական տվյալների մշակում նախատեսող օրենսդրական դաշտը, ավելացնել անձնական տվյալների պաշտպանության իրավունքի վերաբերյալ ինչպես անձնական տվյալներ մշակողների, այնպես էլ լայն հասարակության իրազեկվածությունը:

Իրավական փոխօգնության ոլորտ

Նախատեսվում է Իրավական փոխօգնության վարչության աշխատակիցների կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերի ապահովման աշխատանքների իրականացում: Մասնավորապես, ներկայումս, մշակման և շրջանառման փուլում է գտնվում «Քրեական վարույթներով իրավական փոխօգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը: Այս փուլում հատկապես կարևոր է ոլորտը կարգավորող լավագույն միջազգային փորձի ուսումնասիրումը, դրանում առկա լավագույն փորձի վերհանումն ու ներմուծումը ՀՀ իրավական համակարգ: Նախատեսվում է ոլորտը համակարգող մասնագետների կարողությունների զարգացման ծրագրերում ընդգրկել միջազգային կամ տարածաշրջանային մակարդակով փորձագետների փորձի փոխանակում՝ դասընթացների, սեմինարների տեսքով, ինչը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում ոլորտը կարգավորով իրավական կարգավորումների՝ միջազգային իրավական պարտավորություններին հնարավորինս համահունչ դարձնելուն և Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների ու միջազգային, տարածաշրջանային կազմակերպությունների միջև իրավական փոխօգնության բնագավառում համագործակցության ամրապնդմանը: Բացի այդ, իրավական փոխօգնության շրջանակներում նախատեսվում է ապահովել օտարերկրյա պետություններում պատիժը կրող ՀՀ քաղաքացի դատապարտյալների փոխանցման և նրանց վերասոցիալականացման, վերաինտեգրման գործընթացի ակտիվ իրականացում:

Կրթություն

Կրթությունը մարդու հիմնարար իրավունք է, և պետության պարտավորությունն է ապահովել համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն: Կրթության ոլորտը կարևոր դերակատարություն ունի ինչպես անհատի կայացման, այնպես էլ հասարակության սոցիալական և տնտեսական զարգացման բոլոր ոլորտներում: Դրանով է պայմանավորված, որ այն դասվում է կառավարության ծրագրի գերակայությունների շարքում:

Կրթության ոլորտի գլխավոր հիմնախնդիրն է միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխան որակի ապահովումը: Այս տեսանկյունից ոլորտային քաղաքականության գերակայություններն են.

- դասավանդող անձնակազմի, մասնավորապես՝ ուսուցիչների, մասնագիտական որակական բարելավումը: Նախատեսվում է, որ 2023թ. ընթացքում ուսուցիչների շուրջ 10%-ը կանցնի ատեստավորում՝ մասնագիտական նոր չափանիշներին համապատասխան,
- կրթական ծրագրերի բովանդակային արդիականացումն ու համապատասխանեցումը աշխատաշուկայի և տնտեսության զարգացող պահանջներին: Հանրակրթության ոլորտում կներդրվեն նոր առարկայական չափորոշիչները, ուսումնական պլանը և առարկայական ծրագրերը՝ նպատակ ունենալով խթանել սովորողների քննական մտածողությունը, նորարարությունը, վերլուծական և ստեղծագործական հմտությունները: Առանձնակի ուշադրություն կհատկացվի ԲՏՃՄ առարկաների և օտար լեզուների դասավանդմանը, քաղաքացիական, ֆինանսական և ձեռնարկատիրական կրթությանը: Մասնագիտական

կրթության ոլորտում կմշակվեն և կներդրվեն տնտեսության ժամանակակից պահանջներից բխող նոր մասնագիտություններ, կրթական ծրագրեր՝ մեծացնելով աշխատաշուկայում շրջանավարտների մրցունակությունը, բարձրագույն կրթության ծրագրերում կխթանվի գիտահետազոտական աշխատանքների իրականացումը,

- ուսումնական հաստատությունների արդիական նյութատեխնիկական հենքի ապահովումը և սովորողակենտրոն միջավայրի ստեղծումը: Կշարունակվեն նախադպրոցական, դպրոցական և մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքերի վերանորոգումն ու կառուցումը՝ ներառելով նաև գյուղական փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցները: Միաժամանակ, հաստատությունները կապահովվեն ժամանակակից ուսումնական գույքով և սարքավորումներով:

Կրթության ոլորտի հաջորդ կարևոր խնդիրն է մատչելիության ապահովումը, որի ուղղությամբ նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

- կընդլայնվի նախադպրոցական ծառայությունների մատուցման շրջանակը, համայնքներին ցուցաբերվող նպատակային օժանդակության շնորհիվ կմեծանա երեխաների ընդգրկվածությունը, պետությունը կապահովի սոցիալապես խոցելի խավերի երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում, կիրականացվեն միջոցառումներ՝ միտված հանրակրթության սովորողներին մատուցվող ծառայությունների որակի և մատչելիության ապահովմանը

- համընդհանուր ներառական կրթությունը կներդրվի նախադպրոցական կրթության ոլորտում, կիրականացվեն ոլորտի աշխատակազմի վերապատրաստումներ,

- մասնագիտական կրթության գծով հատկացվող միջոցները կուղղվեն խոցելի խմբերի երիտասարդների ընդգրկվածության մեծացմանը: Կընդլայնվի մասնագիտական կրթության՝ պետական բյուջեից ֆինանսավորվող տեղերի թիվը, կընդլայնվեն ուսման վարձի զեղչային համակարգից օգտվող շահառուների խմբերը: Ոլորտում կշարունակվեն եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ամբողջական ինտեգրմանն ուղղված բարեփոխումները: Բուհերի մրցունակությունը բարձրացնելու նպատակով աշխատանքներ են տարվելու արդյունքային ցուցանիշների հիմքով բուհերի ֆինանսավորմանն անցնելու համար:

Գիտություն

Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտը պետք է լինի Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման անկյունաքարային ոլորտներից մեկը, որի զարգացումը հնարավորություն է ընձեռելու Հայաստանին դիմակայել ներկայիս և ապագայի մարտահրավերներին, դառնալ Հայաստանի Հանրապետության առաջընթացի կարևոր մաս:

Ոլորտի առաջնահերթ գերակա խնդիրներն են.

- մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների ստեղծում, որը գիտական գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացման կարևորագույն գրավականներից է, ինչը հնարավորություն է տալու իրականացնելու մրցունակ գիտական հետազոտություններ ոչ միայն ժամանակակից գիտական սարքավորումների և նյութերի միջոցով, այլ նաև ընձեռելու է գիտական գործունեության համար բարենպաստ ֆիզիկական միջավայր,

- գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացում և երիտասարդ կադրերի ներգրավում, որը ոլորտի ծերացման հիմնահարցի լուծման և մրցունակության բարձրացման հիմնական գործիքներն են,

- գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում, որը հնարավորություն է ընձեռելու ներդնել առավել բարձր կատարողականով գիտական կազմակերպություններում բազային ֆինանսավորման հնգամյա մեխանիզմներ, ինչպես նաև իրականացնել գիտական կադրերի պատրաստման բոնուսային ծրագրեր՝ բազային ֆինանսավորման շրջանակներում:

Վերոնշյալ գերակա խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներն են.

- գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինում ու համատեղ օգտագործման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծում, գիտական կենտրոնների վերանորոգում,
- գիտական կադրերի համապետական ատեստավորման իրականացման արդյունքում բարձր պահանջներին համապատասխանող գիտական աշխատողների աշխատավարձի բարձրացմանն ուղղված պետական աջակցություն,
- հետազոտության բնագավառով մոտ փոքր գիտական կազմակերպությունները խոշոր գիտական կենտրոններում միավորմանն ուղղված պետական ծրագրերի իրականացում,
- արտերկրի գիտնականների ինտեգրման դրամաշնորհային ծրագրերի իրականացում,
- հեռավար լաբորատորիաների հիմնադրում,
- արտերկրի լավագույն գիտական կենտրոններում գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման միջին և երկարաժամկետ ծրագրերի իրականացում:

Մշակույթ

ՀՀ կառավարության մշակութային քաղաքականությանը համապատասխան ոլորտում իրականացվում են մշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) պահպանության, պաշտպանության, ուսումնասիրության, ազգային արվեստների հենքի և ավանդույթների հիմքի վրա ժամանակակից մարդու ընկալումներին ու ձգտումներին համահունչ ժամանակակից արվեստի ստեղծման և տարածման, ազգաբնակչության ստեղծագործական ներուժի խթանման, նոր մտահղացումների ու գաղափարների ներդրման անհրաժեշտ պայմանների ապահովման, ժամանակակից մշակութային մրցունակ արտադրանքի ստեղծման, մշակութային միջոցառումների իրականացման և այլ ծառայություններ:

Մշակույթի ոլորտի քաղաքականության հիմնական թիրախներն են.

- աջակցություն կինոարվեստի, կինոարտադրության զարգացմանը, հայկական ավանդույթների շարունակականության ապահովում, միջազգային համագործակցության ընդլայնում, կինոարվեստի հանրահռչակում,
- մշակութային ժառանգության պահպանում, օգտագործում, համալրում և հանրահռչակում,
- գրական դաշտի բոլոր օղակների հավասարաչափ զարգացում, գրական արտադրանքի միջոցով գրական-մշակութային ժառանգության պահպանում, զարգացում, տարածում և հանրահռչակում, քաղաքացիական հասարակության ձևավորում, ստեղծագործական ներուժի վերարտադրում և զարգացման համար պայմանների ստեղծում,
- ազգային հենքի վրա ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, կերպարվեստի և պարավեստի զարգացում և տարածում,
- մարզերում մշակութային կյանքի և մշակութաստեղծ գործունեության ակտիվացում,
- երեխաների հոգևոր և գեղագիտական ընդունակությունների բացահայտում և զարգացում:

Սպորտ

Սպորտի ոլորտում պետական քաղաքականությունն ուղղված է առողջ ապրելակերպի խթանմանը՝ մասսայական սպորտային միջոցառումներում բնակչության տարիքային և սոցիալական տարբեր խմբեր ներգրավելու միջոցով, ինչպես նաև սպորտում ՀՀ միջազգային հեղինակության բարձրացմանը՝ միջազգային և տեղական մրցումներին հայ մարզիկների մասնակցության և բարձր նվաճումների միջոցով:

ՀՀ կառավարության քաղաքականությունն է՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.

- բնակչության առողջության ամրապնդումը,
- անհատի ներդաշնակ զարգացումը,
- հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովումը,
- բարձրակարգ մարզիկների պատրաստումը և միջազգային մրցասպարեզներում Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի և մարզիկների մասնակցության ապահովումը:

Ոլորտային քաղաքականության հիմնական նպատակներն են.

- մարզաձևերի ազգային ֆեդերացիաների և հաշմանդամային մարզական հասարակական կազմակերպությունների կողմից մարզիկների պատրաստումը, ՀՀ առաջնությունների անցկացումը, օլիմպիական, պարալիմպիկ խաղերին, աշխարհի, Եվրոպայի և այլ միջազգային առաջնություններին մասնակցությունը:
- բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորումը և բնակչության առողջության ամրապնդումը, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը և բնակչության շրջանում հայկական ժողովրդական ավանդական խաղերի վերածնունդն ու տարածումը:

Երիտասարդություն

Երիտասարդական պետական քաղաքականությունն առաջնահերթությունների, ծրագրերի, միջոցառումների և մեխանիզմների համակարգ է, որն ուղղված է երիտասարդության մասնակցության, սոցիալականացման և ինքնաիրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, երիտասարդության ներուժի ներգրավմանն ու դրա զարգացմանը:

Երիտասարդության ծրագրի նպատակն է՝ երիտասարդության ներուժի իրացման և զարգացման, երիտասարդական մասնակցության խթանման համար սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային պայմանների ստեղծումը՝ ուղղված Հայաստանի Հանրապետության զարգացմանը և հզորացմանը:

Ոլորտային քաղաքականության հիմնական թիրախներն են.

- Հայաստանի մարզային համայնքներում «Երիտասարդական կենտրոնների» ստեղծում,
- Հանրային միջոցառումներին երիտասարդների մասնակցություն,
- «Բնակարան երիտասարդ ընտանիքներին» ծրագրի շահառուների աճ,
- Երիտասարդության՝ միջազգային միջոցառումներին մասնակցություն:

Առողջապահություն

Առողջապահության ոլորտը՝ որպես սոցիալական կարևոր ոլորտ հանդիսանում է ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից և Կառավարության հիմնական առաջնահերթություններից մեկը:

Բնակչության առողջության պահպանման նպատակով որպես գերակա խնդիր շարունակելու է դիտարկվել վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման ու վաղ հայտնաբերման ուղղությունների զարգացումը, որոնց շրջանակներում առողջապահության ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման համար իրականացվող բարեփոխումներն ուղղված են լինելու առողջության առաջնային պահպանման օղակի արդիականացմանը, շարունակական զարգացմանը և արդյունավետության բարձրացմանը՝ պայմանավորված բնակչությանը հասանելի որակյալ բժշկական ծառայություններ մատուցելու անհրաժեշտությամբ:

Մոր և մանկան առողջության պահպանման ծառայությունների բարելավման ոլորտում շարունակվելու են մայրական (վերարտադրողական), մանկական, այդ թվում՝ նորածնային առողջության բարելավմանն ուղղված միջոցառումներ, որոնք միտված են հնարավորինս խթանել ծնելիությունը՝ բարելավելով բնակչության վերարտադրողական առողջությունը, նվազեցնելով պերինատալ կորուստները, հաղթահարելով անպտղությունը:

Դեղերի անվտանգության, արդյունավետության և որակի ապահովման ոլորտում աշխատանքներ կիրականացվեն հանրապետությունում անվտանգ, արդյունավետ, որակյալ և մատչելի դեղեր ունենալու ուղղությամբ՝ դեղային ազգային քաղաքականության մշակման, դեղերի շրջանառության բոլոր փուլերի կանոնակարգման, այս ոլորտի պետական վերահսկողության բարելավման, հայրենական արտադրության դեղերի մրցունակության ապահովման և տեղական դեղարտադրության խրախուսման միջոցով:

Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը ռազմավարական մեկ այլ կարևոր նպատակ է, որի շրջանակներում ապահովվելու է առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման, ախտորոշման ու կանխարգելման ճանապարհով բնակչության առողջության հիմնական ցուցանիշների բարելավում և այդ հիվանդությունների բարդությունների, հաշմանդամության և մահացության ցուցանիշների կրճատում, ինչպես նաև վարակիչ հիվանդություններով հիվանդացության նվազեցում, կառավարելի վարակիչ հիվանդություններից մահվան դեպքերի կանխում և վարակիչ հիվանդությունների նկատմամբ բնակչության անընկալության ապահովում:

Ոլորտի հիմնական խնդիրներից է հանրապետությունում ուռուցքաբանական ծառայությունների շարունակական բարելավումը: Ուռուցքաբանական վիրահատությունների գների վերանայման, ճառագայթային բուժման դեպքերի, քիմիաթերապիայի դեղերի ցանկի ընդլայնման և պետության կողմից երաշխավորված անվճար պալիատիվ ծառայության ներդրման միջոցով ուռուցքաբանական հիվանդություններով հիվանդ քաղաքացիներին մատուցվելու են որակյալ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ, միաժամանակ վերջիններիս «փրկելով» հիվանդության բուժման հետ կապված կործանարար ծախսեր կատարելու վտանգներից: Նախատեսվում է նոր տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացնել մարդու օրգանների (երիկամ/լյարդ), և ոսկրածուծի/ցողունային բջիջների փոխպատվաստման ծառայություններ, որոնք կբարելավեն քրոնիկ երիկամային անբավարությամբ և արյան չարորակ հիվանդություններով տառապող անձանց կյանքի որակը և ապրելիության ցուցանիշը:

Նախատեսվում է նաև կատարելագործել վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական դիտարկման համակարգը՝ մասնավորապես դասեր քաղելով կորոնավիրուսային հիվանդության համավարակից, հնարավորինս ապահովելով երկրի տարածք վարակիչ հիվանդությունների ներմուծման ու տարածման կանխարգելումը, իմունականխարգելումը և ապահովելով իրական ժամանակում հիվանդությունների մասին տեղեկատվության հաղորդումը: Քաղաքականությունն ուղղված է լինելու հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակներին, մասնավորապես միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ ներկայացնող երևույթներին պատրաստվածության և արագ արձագանքման, միջգերատեսչական և միջոլորտային համագործակցության ապահովմանը:

Առողջապահական կադրային ներուժի ապահովման ոլորտում իրականացվելու են աշխատանքներ բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական բարելավման ուղղությամբ: Ներդրվելու են մեխանիզմներ առողջապահական կադրային ներուժի տարածքային օպտիմալ բաշխման, մարզային առողջապահական կազմակերպությունները որակյալ կադրերով ապահովելու և բժշկի աշխատանքը մարզում հնարավորինս խրախուսելու համար:

Աշխատանքի և սոցիալական պաշտպանություն

Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնական խնդիրներն ուղղակիորեն առնչվում և համընկում են ՀՀ կառավարության ծրագրի նպատակներին:

Սոցիալական պաշտպանությունը շարունակում է հանդես գալ որպես ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը: Վերոնշյալ նպատակին հասնելու համար սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվում է լայնածավալ պետական միջամտություն:

Կառավարության 5-ամյա (2021-2026թթ.) ծրագրով նախատեսվել է մինչև 2026 թվականը՝ նվազագույն աշխատավարձը բարձրացնել մինչև 85,000 դրամ, որին նպատակադրվել է հասնել աստիճանական բարձրացումների միջոցով (Կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշման հավելվածի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6-րդ «Աշխատանք և սոցիալական պաշտպանություն» ենթաբաժին):

Հետևաբար, նվազագույն ամսական աշխատավարձի չափը կվերանայվի. 2023 թվականին 68,000 դրամից կբարձրանա մինչև 75,000 դրամ, իսկ ՀՀ բյուջեի հնարավորությունների առկայության պարագայում՝ 2024 թվականին 75,000 դրամից կբարձրանա մինչև 79,000 դրամ, 2025 թվականին 79,000 դրամից՝ մինչև 85,000 դրամ (ներառված չեն աշխատավարձից վճարվող հարկերը, նպատակային սոցիալական վճարները, հավելումները, հավելավճարները, պարգևատրումները և խրախուսման այլ վճարները):

Ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների բնագավառում 2023 թվականին նախատեսվում է պետական նպաստների քաղաքականության մեջ շարունակել ընտանիքների անապահովության (սոցիալական) գնահատման համակարգի հասցեականության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, մասնավորապես, առցանց եղանակով ստացվող անհրաժեշտ տվյալների շրջանակի հնարավոր

ընդլայնում, համադրումներ տարբեր տեղեկատվական բազաների տվյալների հետ՝ նպաստառության ոչ ենթակա ընտանիքների հայտնաբերման նպատակով: Ներդրվելու է ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգ՝ ուղղված ծայրահեղ աղքատության վերացմանը: Վերանայվելու է սոցիալական աջակցության քաղաքականությունը, որի շնորհիվ սոցիալական աջակցության ծրագրերը կլինեն ավելի հասցեական, խրախուսվելու է անձի սոցիալ-տնտեսական ակտիվացումը՝ հիմք ընդունելով սոցիալական կարիքի գնահատումը և դրան համաչափ սոցիալական ծառայությունների տրամադրումը: Օրենսդրական փոփոխությունների միջոցով հիմքեր կդրվեն սոցիալական աջակցության ոլորտում հիմնական սոցիալական ծառայությունների տեսակների ընդայնման, հրատապ արձագանքին պատրաստ և առավել ճկուն սոցիալական աջակցության մեխանիզմների ներդրման, սոցիալական աջակցության հասցեականության և արդյունավետության բարձրացման, սոցիալական ծառայությունների որակի չափորոշիչների և տրամադրող անձնակազմի մասնագիտական կարողությունների նշաձողերի սահմանման և սոցիալական աջակցության ոլորտում մինչ օրս արձանագրված այլ խնդիրների լուծման համար:

Մինչ համակարգի վերանայումը՝ 2023 թվականին ԸԿԲՆ կտրամադրվի շուրջ 89629 ընտանիքների, իսկ նպաստի միջին ամսական չափը կկազմի 33,350 դրամ: Հաշվի առնելով երեխաներին սոցիալական աջակցություն տրամադրելու առաջնահերթության սկզբունքը՝ հաշվարկներում կանխատեսվել է, որ 89629 ընտանիքների մոտ 71%-ը կկազմեն երեխա ունեցող ընտանիքները:

Սկզբնավորված է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի կատարելագործումը: Շարունակվելու են աշխատանքները Միասնական սոցիալական ծառայության աշխատողների պրոֆեսիոնալիզմի բարձրացման և ծառայության տեխնիկապես հագեցվածության, ինչպես նաև ընդհանուր կարողությունների հզորացման ուղղությամբ:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում կարևորվում է աշխատանքների իրականացումը՝ հիմնականում միջգերատեսչական սոցիալական կողմերի և ոչ պետական կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Իրականացվելու են միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների և համագործակցող կողմերի ներկայացուցիչների վերապատրաստման, անհրաժեշտ հմտությունների և ունակությունների ուսուցման ծրագրեր:

Շարունակվելու են սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց կացարանի խնդրի լուծման նպատակով սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման, կացարանի և այլ սոցիալական ծառայությունների տրամադրման հասցեական ծրագրերի իրականացման աշխատանքները: Մշակվելու է բնակարանով ապահովման միասնական քաղաքականություն՝ ռազմավարություն և գործողությունների ծրագիր:

2023 թվականին շարունակվելու է «Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության 2020-2023 թթ. պետական աջակցության ծրագրերի» իրականացումը, որի հիմնական նպատակն է աջակցել երեխա ունեցող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանը՝ համապատասխան պայմաններ ապահովելով ընտանիքների կայուն զարգացման համար, ինչպես նաև խթանել երեխա ունեցող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման գործընթացը մարզային բնակավայրերում:

Աշխատանքի և զբաղվածության բնագավառում պետական քաղաքականության մեջ կարևորվում են.

- զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության ու արդյունավետության բարձրացումը,
- աշխատաշուկայում անմրցունակ, հատկապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև երիտասարդների կայուն զբաղվածության ապահովմանն և ինքնազբաղվածության խթանմանն ուղղված զբաղվածության ակտիվ ծրագրերի իրականացումը, աշխատաշուկայի լարվածության մեղմումը,
- գործատուների շահագրգիռ ներգրավվածության խթանումը, գործատուների կողմից ներկայացված թափուր աշխատատեղերը որակյալ մասնագետներով համալրումը,
- արժանապատիվ աշխատանքի իրավունքի իրացման նպատակով՝ աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմների պարզեցումը և բարելավումը՝ համապատասխանեցվելով նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին,
- նվազագույն աշխատավարձի բարձրացումը,
- աշխատանքային իրավունքների պաշտպանության արտադատական մեխանիզմների ներդրումը,
- պետական հատվածի աշխատողների սոցիալական երաշխիքների ընդլայնումը:

Երեխաների հիմնահարցերի բնագավառում 2023 թվականին աշխատանքներն ուղղված են լինելու կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանությանը, հաստատություններում նրանց խնամքի, դաստիարակության, ուսման և ֆիզիկական զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

Վերջին տարիներին երեխաների պաշտպանության համակարգի բարեփոխումների արդյունքում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի ընտանիքում ապրելու իրավունքը ապահովելու նպատակով ակտիվացել է «Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում» միջոցառումը, որի շրջանակներում 2023 թվականին նախատեսվում է 115 խնամատար ընտանիքներում կազմակերպել 150 խնամատարության ենթակա երեխաների խնամքը:

2023 թվականին կշարունակվի 615 երեխայի շուրջօրյա խնամքի ծառայությունների տրամադրումը սոցիալական պաշտպանության ընդհանուր և հատուկ/մասնագիտացված տիպի 5 հաստատություններում:

Կշարունակվեն երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին տրամադրվել մեկ տարի շարունակ՝ ամսական հաճախությամբ նվազագույն սպառողական զամբյուղին համարժեք դրամական օգնություն և հաստատությունների 18-23 տարեկան շրջանավարտների համար բնակարանների վարձակալությունը:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի ընտանիքում ապրելու իրավունքը ապահովելու, նրանց խնամքի, այլընտրանքային ծառայություններ տրամադրելու նպատակով կշարունակվի «Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ» միջոցառման շրջանակում վեց աջակցության կենտրոնում տրամադրվել սոցիալ-հոգեբանական ծառայություններ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 600 երեխայի և նրանց ընտանիքներին: Միաժամանակ, կարճաժամկետ խնամք իրականացնելու նպատակով երեք ճգնաժամային կենտրոններում շարունակվելու է 0-18 տարեկան 150 երեխայի կարճաժամկետ շուրջօրյա խնամքի ծառայությունների իրականացումը:

Պատվիրակված հասարակական կազմակերպությունների կողմից հանրապետության բոլոր մարզերում «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակում նվազագույնը 20 կենտրոններում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3500 երեխայի և նրանց ծնողներին կտրամադրվեն սոցիալական սպասարկման ծառայություններ, ինչպես նաև սոցիալական, հոգեբանական, իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն՝ ՀՀ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին կենսաբանական ընտանիք վերադարձնելու, ինչպես նաև նրանց մուտքը սահմանափակելու նպատակով:

Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող 7-18 տարեկան դպրոցահասակ երեխաների համար ընտանեկան միջավայրին մոտ միջավայր ապահովելու և կենցաղային որոշակի հմտությունների ձեռքբերման նպատակով կշարունակվի դրամական աջակցության տրամադրումը:

Մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բնագավառում մարդկանց շահագործման երևույթի կանխարգելմանն ուղղված քաղաքականության շարունակականության ապահովման նպատակով 2023 թվականին թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված 8 անձի շարունակվելու են սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների մատուցումը, ինչպես նաև միանվագ դրամական փոխհատուցման տրամադրումը 7 շահառուի:

2023 թվականին կշարունակվի ընտանիքում բռնության ենթարկված անձանց օրենսդրությամբ սահմանված աջակցության տրամադրումը՝ 60 շահառուի կտրամադրվի ապաստարանի, 1500 անձի աջակցության կենտրոններում կմատուցվեն համապատասխան ծառայություններ, շուրջ 100 անձի կտրամադրվի ֆինանսական աջակցություն:

Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բնագավառում 2023 թվականին շարունակվելու են աշխատանքներն ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և հավասար հնարավորությունների ապահովմանը՝ բնագավառի օրենսդրության կատարելագործման և հաշմանդամություն ունեցող անձի գնահատված կարիքին համարժեք ծառայությունների մատուցման միջոցով:

2023 թվականի փետրվարից նեդրվելու է անձի ֆունկցիոնալության գնահատման և բազմակողմանի գնահատման արդյունքներով ծառայությունների որոշարկման նոր մոդելը՝ հիմնված Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների հիման վրա:

Պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց պետական հավաստագրերի հիման վրա տրամադրվելու են աջակցող միջոցներ (այդ թվում՝ պրոթեզներ, օրթեզներ, քայլակներ, անվասայլակներ, լսողական սարքեր և այլն, շուրջ տարեկան 19000 աջակցող միջոց)՝ հասարակական կյանքում նրանց մասնակցությունը խթանելու նպատակով:

2023 թվականին շարունակվելու է պետական աջակցություն ցուցաբերվել հասարակական կազմակերպություններին՝ ցերեկային կենտրոններում և խմբային փոքր տներում հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու նպատակով:

Տարեցների հիմնահարցերի բնագավառում կշարունակվեն իրականացվել «Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավման և համայնքահեն ծառայությունների ներդրման ու զարգացման ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների

2021-2023 թվականների պլան-ժամանակացույցով» 2023 թվականի համար նախատեսված միջոցառումները:

Շարունակվելու է պետական միջոցների շրջանակում շահառուներին մատուցվող խնամքի ծառայությունների տրամադրումը՝ խրախուսելով ծառայությունների պատվիրակումը հասարակական կազմակերպություններին մրցութային եղանակով, բարելավվելու է շահառուներին մատուցվող ծառայությունների որակը, ընդլայնվելու են տարեցներին մատուցվող համայնքահեն ծառայությունները՝ ներգրավելով համայնքի ներուժը, և այս ամենն իրականացվելու է զուգորդված իրավական դաշտի կատարելագործման հետ:

Ըստ ծառայությունների տեսակների՝ 2023 թվականին շուրջօրյա խնամքի ծառայություններ են տրամադրվելու 1260, տնային պայմաններում խնամքի ծառայություններ (այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ևս)՝ 1250, ցերեկային կենտրոններում՝ 1200, անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանում՝ 100, և կոմունալ ծառայությունների փոխհատուցում՝ սոցիալական տներում բնակվող 110 շահառուի: Դրան ի լրումն, Հայրենական մեծ պատերազմի վետերաններին աջակցելու նպատակով կշարունակվեն ավիափոխադրումների համար փոխհատուցման ծառայությունները և «Հայաստանի վետերանների միավորում» միության ֆինանսավորումը:

Ընդլայնվելու է շուրջօրյա խնամքի ծառայությունների մատուցումը, սննդի տրամադրման ծառայությունը հասանելի կլինի բոլոր անապահով անձանց, տնային պայմաններում և ցերեկային կենտրոններում խնամքի տրամադրման բնագավառներում բարելավվելու է մատուցվող ծառայությունների որակն ու մեծանալու է հասցեականությունը, ներդրվող համայնքահեն ծառայություններում կարևորություն է տրվելու համայնքի մասնակցությանը և ավելի մեծ թվով հասարակական կազմակերպությունների ընդգրկվածությանը:

2023 թվականին **նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների փոխհատուցում** կտրամադրվի շուրջ 5900 շահառուի: Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ստանալու իրավունք կտրվի նաև մինչև 1940 թվականի հուլիսի 1-ը ծնված ավանդատուներին:

Շրջակա միջավայր

ՀՀ շրջակա միջավայրի ոլորտի նպատակները և ծախսային գերակայությունները բխում են ՀՀ կառավարության՝ 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի առաջնահերթություններից:

Հիմնական ռազմավարության նպատակները և գերակա վերջնական արդյունքներն են՝

- Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում,
- Ազդակիր համայնքներում բարելավված շրջակա միջավայր,
- Բնական պաշարների և կենսաբազմազանության վերարտադրության աճի ապահովում
- Կայուն կառավարվող անտառային տարածքների աճ,
- Մշտական և ժամանակավոր ցուցահանդեսների միջոցով հավաքածուները ներկայացում հանրությանը և բնապահպանական քարոզչության իրականացում:

Շրջակա միջավայրի ոլորտի զարգացման կարևորագույն նպատակների իրագործման շրջանակներում 2023 թվականին կիրականացվեն հետևյալ ծրագրերն և միջոցառումները.

ա/ «Բնապահպանական ծրագրերի իրականացում համայնքներում» ծրագրի շրջանակներում իրականացվելու է «Բնապահպանական սուբվենցիաներ համայնքներին» միջոցառումը,

բ/ «Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում» ծրագրի շրջանակներում իրականացվելու է Սևանա լճի համալիր ծրագրով նախատեսված համապատասխան միջոցառումների կատարումը,

գ/ 2023 թվականին բյուջետային հատկացումները նպատակաուղղվելու են հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների («Սևան», «Դիլիջան», «Արևիկ» և «Արփի լիճ» ազգային պարկեր, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետարգելոցներ, «Սոսիների պուրակ», «Խուստուփ», «Զանգեզուր» և «Զիկատար» պետական արգելավայրեր, դենդրոպարկեր և բնության հատուկ պահպանվող այլ տարածքներ) պահպանությանը, անտառային տարածքների խնամքի և բնապահպանական այլ աշխատանքների և գիտական ուսումնասիրությունների իրականացմանը, ինչպես նաև Կովկասյան տարածաշրջանային կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի գրասենյակի վարձակալության ծառայությունների ֆինանսավորմանը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում իրականացվելու են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն», «Հիդրոօդերևութաբանության, շրջակա միջավայրի մոնիտորինգ և տեղեկատվության ապահովում», «Շենքերի ոլորտում չափողականություն, հաշվետվողականություն և հավաստագրում (ՉՀՀ)» համակարգի ստեղծում և գիտելիքների կառավարում» և «Անցում էլեկտրական շարժունակությանը Հայաստանում» միջոցառումները:

դ/ «Անտառների կառավարում» ծրագրի շրջանակներում իրականացվելու են ներքոհիշյալ միջոցառումները՝

- «Անտառպահպանական ծառայություններ»,
- «Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ»,
- «Անտառկառավարման պլանների կազմում»,
- «Անտառների վնասակար օրգանիզմների դեմ պայքար»:

ե/ «Բնագիտական նմուշների պահպանություն և ցուցադրություն» ծրագրի շրջանակներում իրականացվելու է «Բնագիտական նմուշների պահպանություն և ցուցադրություն» միջոցառումը:

Բյուջեների կազմման բնագավառ

Պետական կառավարման համակարգում պատասխանատվության համախմբման և ռեսուրսների դիմաց առավելագույն արդյունքի ստացման նպատակով պետական բյուջեի կազմման բնագավառում իրականացվում են մի շարք քայլեր, որոնց իրագործումը թույլ կտա ապահովել հանրային կառավարման թափանցիկության, հաշվետվողականության և հսկողության բարձրացումը, ինչպես նաև պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավումը՝ հանրային բարիքի արդյունավետ, օգտավետ և խնայողաբար հասցեական օգտագործման հաշվին: Մասնավորապես՝

- Ծախսերի նպատակայնության բարձացման առումով անցում է կատարվելու ռազմավարական պլանավորման, այդ թվում՝ վերանայվելու են առկա ռազմավարությունները, վերջիններս և մշակվելիք բոլոր ռազմավարական փաստաթղթերը համակցվելու են Կառավարության հնգամյա ծրագրերի, ՄԺԾԾ և ամենամյա ծրագրային բյուջեի հետ:

- Ծրագրի արդյունավետության և օգտավետության բարձրացման նպատակով կներդրվի բյուջետային ծրագրերի գնահատման կանոնավոր գործընթաց, որի առաջին քայլի իրականացման նպատակով հաստատվել է ծրագրերի գնահատման հայեցակարգը:

- 2024-2026թթ. ՄԺԾԾ և 2024թ. բյուջետային հայտերի կազմման և ներկայացման մեթոդական ցուցումներում ներառելու նպատակով կմշակվի պետության պարտադիր պարտավորություններից բխող ծրագրերի/ միջոցառումների նույնականացման և հաշվառման ռացիոնալացման նոր մեթոդաբանություն:

Հաշվապահական հաշվառում և աուդիտորական գործունեություն

Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնած հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում իրականացվող բարեփոխումների շրջանակում՝ 2023 թվականի ընթացքում շարունակվելու են «Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին», «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքներով նախատեսված կառուցակարգերի ներդրման աշխատանքները, մասնավորապես նախատեսվում է ներդնել աուդիտի որակի հանրային վերահսկողության մեխանիզմները, որոնք թույլ կտան բարձրացնել մատուցվող աուդիտորական ծառայությունների որակը և հանրային վստահությունը:

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտում՝ 2023 թվականի ընթացքում շարունակվելու է հանրային հատվածի հաշվապահների որակավորման գործընթացը՝ հաշվապահի որակավորման քննությունների կազմակերպման միջոցով: Միաժամանակ, շարունակվելու են հանրային հատվածի կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվապահական հաշվառման գրանցամատյանների և ֆինանսական հաշվետվությունների փաթեթների մշտադիտարկման աշխատանքները, որոնց արդյունքում վեր հանված անճշտությունների և սխալների ուղղման ուղղությամբ մասնագիտական տեղեկատու պարբերականների միջոցով գործնական առաջարկներ են ներկայացվելու հանրային հատվածի կազմակերպություններին:

Եկամուտների քաղաքականության ոլորտ

Եկամուտների քաղաքականության ոլորտում իրականացվելիք միջոցառումները բխելու են ՀՀ կառավարության ծրագրից, Վարչապետի 2022 թվականի օգոստոսի 14-ի թիվ 919-Լ որոշմամբ հաստատված՝ 2022-2025 թվականների հարկային եկամուտների կառավարման ծրագրից, ինչպես նաև Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությունից:

Հարկային քաղաքականության ոլորտում Կառավարության կողմից առաջիկայում կատարվելիք աշխատանքներն ուղղված են լինելու՝

- հարկման այլընտրանքային համակարգերի ընդհանուր բարեփոխմանը ՝ նպատակ ունենալով ապահովել հարկման տարբեր համակարգերի միջև հարկային բեռի արդարացի և հավասար բաշխում, ինչպես նաև նվազեցնել ստորին մակարդակում գտնվող հարկման համակարգերում արհեստականորեն տեղավորվելու և այդ կերպ հարկերի վճարումից խուսափելու, հարկման տարբեր համակարգերի միջև արհեստական գործարքների իրականացմամբ հարկային պլանավորման և գործարքների փաստաթղթավորման շղթայի ամբողջականության խաթարման ռիսկերը,

- գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործարքների փաստաթղթավորման հետ կապված խնդիրների կարգավորմանը՝ նպատակ ունենալով ստեղծել գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործարքների փաստաթղթավորման համար նոր՝ գործնականում կիրառելի փաստաթղթավորման համակարգ, վերացնելով գյուղատնտեսության ոլորտի ապրանքային արտադրության զարգացմանը խոչընդոտող հարկային կարգավորումները,

- ֆիզիկական անձանց եկամուտների համատարած հայտարարագրման համակարգի ներդրմանը,

- միկրոձեռնարկատիրության սուբյեկտների կողմից վճարվող աշխատավարձերի հարկումը եկամտային հարկի միասնական դրույքաչափի ներքո տեղափոխելուն, ինչպես նաև միկրոձեռ-նարկատիրության սուբյեկտների կողմից դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի հիման վրա շահութահարկով հարկման բազայի նվազեցման հնարավորությունների սահմանա-փակմանը՝ նպատակ ունենալով, մասնավորապես, նվազեցնել հարկման տարբեր համակարգերի միջև արհեստական գործարքների իրականացմամբ հարկումից խուսափելու ռիսկերը,

- կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի աշխարհագրության ընդլայնմանը՝ նպա-տակ ունենալով նաև գործող համաձայնագրերը համապատասխանեցնել կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերին վերաբերող՝ միջազգայնորեն ընդունված արդի ստանդարտներին և մոտեցումներին:

Պետական եկամուտների վարչարարություն

Պետական եկամուտների վարչարարության ոլորտում իրականացվելիք միջոցառումները բխելու են ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Ա որոշմամբ հաստատ-ված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագրից, ինչպես նաև ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 1830-Լ որոշմամբ հաստատված ՊԵԿ զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագրից:

2023 թվականի ընթացքում ՊԵԿ վարչարարությունն ուղղված է լինելու տնտեսական աճից առաջանցիկ տեմպերով ՀՀ պետական բյուջեով նախատեսված հարկային եկամուտների և պետական տուրքի հավաքագրմանը, որի շրջանակներում իրականացվող միջոցառումները միտված են լինելու հարկային և մաքսային ոլորտներին առնչվող հետևյալ հիմնական նպատակների իրագործմանը.

1. հարկ վճարողների սպասարկում, որակյալ ծառայությունների մատուցում և ենթակառուցվածքների արդիականացում: Այս նպատակի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- կրճատել փոխհատուցվող գումարների միասնական հաշվին մուտքագրման ժամկետները, ինչպես նաև պարզեցնել մի քանի աղբյուրից ստացման ենթակա (ստացված) եկամտից հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարները մասնակիցներին վերադարձնելու գործընթացը,
- հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ իրականացվող հարցումների հիման վրա բարելավել մատուցվող ծառայությունների որակը,
- մեկնարկել ՊԵԿ Երևան քաղաքի արտաքին տնտեսական գործունեության կենտրոնի կառուցման, ՊԵԿ Արևելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժնի ենթակառուցվածքների վերակառուցման, ՊԵԿ Հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի

մաքսային կետ-բաժնի արդիականացման և վերակառուցման, ինչպես նաև ՊԵԿ Հարավային արտաքին տնտեսական գործունեության կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները,

2. տեղեկատվության փոխանակման անվտանգության և մշակման արդյունավետության բարձրացման նպատակով էլեկտրոնային համակարգերի կատարելագործում: Այս նպատակի իրագործումն ընդգրկելու է հետևյալ աշխատանքները.

- ներդնել ֆիզիկական անձանց համար էլեկտրոնային ծառայությունների (e-services) նոր հարթակ,
- տնտեսավարող սուբյեկտների կողմից մաքսային մարմին այցելությունների և մաքսային մարմին-տնտեսավարող սուբյեկտ շփման նվազեցման նպատակով ներդնել ծանուցումների կառավարման նոր ենթահամակարգ և կատարելագործել մաքսային հայտարարագրման համակարգը,
- ներդնել անձնական գրասենյակի միջոցով հարկային ստուգումներին և ուսումնասիրություններին վերաբերող բոլոր փաստաթղթերի՝ էլեկտրոնային եղանակով փոխանակման համակարգ,
- ներդնել նպաստների գծով համապատասխան գերատեսչությունների միջև տեղեկատվության փոխանակման էլեկտրոնային հարթակ,
- ներդնել ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությանը տեղեկությունների տրամադրման էլեկտրոնային կառավարման համակարգ,
- ներդնել և ընդլայնել տվյալների մշակման էլեկտրոնային համակարգերում մեծ տվյալների վերլուծության, մեքենայական ուսուցման և արհեստական բանականության գործիքները,
- վերանայել հարկ վճարողների անձնական հաշվի քարտերում առկա պարտավորությունների և դեբետային գումարների մարման հաջորդականության կարգը,

3. վարչարարության արդյունավետության բարձրացում և հարկային կարգապահական ճեղքի կրճատում, որի շրջանակներում նախատեսվում է.

- ընդլայնել և ներդնել ստանդարտ վերլուծություններն ավտոմատացված եղանակով իրականացմանն ուղղված գործիքներ,
- կատարելագործել տրանսֆերային գնագոյացման կարգավորումները,
- գնահատել ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ), շահութահարկի և եկամտային հարկի կարգապահական ճեղքը և խստացնել հսկողությունը կարգապահական ճեղքի առավել մեծ աճ արձանագրած ոլորտներում,
- կատարելագործել մաքսային և հարկային ռիսկերի կառավարման համակարգերը՝ հսկողության ենթակա տնտեսավարող սուբյեկտների առավել թիրախային ընտրության նպատակով,
- ներդնել «Սպասվող բեռների մասին նախնական տեղեկատվության» (advance Cargo info.) համակարգը և ինտեգրել այն ռիսկերի կառավարման համակարգին,
- ՀՀ պետական սահմանի անցման կետերում գործող այլ համակարգերն ինտեգրել «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգին,
- շարունակել «Հարկվող բազայի քայքայումը և շահույթի տեղաշարժ» ծրագրի՝ հարկային մարմնի գործառույթներին առնչվող ստանդարտների կիրառումն ապահովող աշխատանքների իրականացումը,
- ոլորտային կարգապահության բարելավման ծրագրերի մշակման, իրականացման և մոնիթորինգի միջոցով բարելավել ընտրված ոլորտների կարգապահության մակարդակը,

- հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման և ռիսկերի կառավարման նպատակով բարելավել և ընդլայնել երրորդ անձանցից ստացվող տեղեկատվության շրջանակը,

4. ներկայիս փոփոխվող միջավայրում ՊԵԿ-ի՝ ժամանակի փոփոխություններին արագ արձագանքելու կարողության ընդլայնում: Այդ նպատակով համակարգում անհրաժեշտ կառուցվածքային փոփոխությունների իրականացումը, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի կատարելագործումը, ՊԵԿ աշխատակիցների մասնագիտական կարողությունների ընդլայնումը, սոցիալական, մոտիվացիոն երաշխիքների համակարգերի ներդրումը հանդիսանալու են ՊԵԿ կարողությունների զարգացման առանցքային ուղղությունը: Աշխատանքներն ուղղված են լինելու միջազգային լավագույն փորձին համահունչ՝ ՊԵԿ-ում հարկային և մաքսային ծառայողների մասով մարդկային ռեսուրսների կառավարման մրցունակ համակարգի ներդրմանը, ինչի արդյունքում ծառայության շարքերը համալրվելու են մասնագիտական բարձր կարողություններով և բարեվարքության հատուկ նորմերով առաջնորդվող պատասխանատու աշխատակիցներով,

5. հասարակության հետ երկխոսության (փոխշահավետ համագործակցության) և վստահության ամրապնդում, որի շրջանակներում ՊԵԿ-ն ապահովելու է իր գործունեության բավարար թափանցիկությունը՝ ԶԼՄ-ներով և տեղեկատվական այլ հարթակներով լայնորեն լուսաբանելով և ներկայացնելով կոմիտեի գործունեության արդյունքները և առաջիկա ծրագրերը:

Անշարժ գույքի կադաստր

Հայաստանի Հանրապետությունում արդեն ներդրվել է անշարժ գույքի միասնական գնահատման և հարկման համակարգ, որը հնարավորություն է տալիս անշարժ գույքի հարկով արդարացի հարկման մեխանիզմներ իրականացնել, ապահովել անշարժ գույքի շուկայի գնային իրավիճակի վերաբերյալ վերլուծական տեղեկատվական բազայի ստեղծումը:

Բարեփոխումներ են իրականացվել նաև գույքի շուկայական գնահատման ոլորտում, մասնավորապես օրենսդրական փոփոխություններով կկարգավորվեն նաև ոչ միայն անշարժ գույքի, այլ նաև գույքի մյուս տեսակների՝ շարժական, բիզնեսի, ոչ նյութական ակտիվների և այլն շուկայական գնահատումները:

Նշված ռազմավարության պահանջների խթանումը գեոդեզիական, քարտեզագրական և երկրատեղեկատվական համակարգի հիման վրա Հայաստանի Հանրապետության ինտեգրված, միասնական կադաստրի ստեղծումն է: Ստեղծված քարտեզագեոդեզիական հիմքով երկրատեղեկատվական համակարգը հանդիսանալու է գերատեսչական տարբեր ոլորտների և առանձին տարածքների զարգացման ու արդյունավետ պլանավորման համար՝ որպես բազա:

Հասարակական կարգի պահպանություն

ՀՀ կառավարության գործունեության հիմնարար ուղենիշներին համահունչ ոստիկանության կարևորագույն հայեցակարգային խնդիրը, ոստիկանությունում մեկնարկած բարեփոխումների նպատակը ժամանակակից մարտահրավերներին դիմակայող, մասնագիտացված ու տեխնիկապես հագեցած, բարեվարք և հարգանքի արժանի ոստիկանության վերափոխումն ու ժողովրդավարական իրավակարգին բնորոշ նոր ոստիկանի կերպարի ստեղծումն է:

Նշված նպատակադրումների իրականացմանն ուղղված միջոցառումները, որոնք ներառվել են 2020 թվականի ապրիլի 23-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված

«Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» (այսուհետ՝ Ռազմավարություն) թիվ 638-Լ որոշման մեջ, հանդիսանում են ոստիկանության գործունեության ոլորտում առաջիկա տարիներին նախատեսվող բարեփոխումների հիմքը:

Ռազմավարությամբ նախատեսված առաջնահերթ ուղղություններն են.

Կառուցվածքային փոփոխություններ և գործառույթների հստակեցում.

Ժողովրդավարական խորհրդարանական պետությանը բնորոշ կառուցվածքով և գործառույթներով օժտված Ներքին գործերի նախարարության ստեղծումն է, որը կապահովի իր համակարգման ոլորտների /ոստիկանություն, միգրացիա և քաղաքացիություն, մյուս ծառայություններ/ քաղաքականության մշակումը և կկրի պատասխանատվություն ոլորտի քաղաքականության համար: Նախարարության ձևավորումը թույլ կտա ապահովել ոլորտի թե խորհրդարանական և թե քաղաքացիական վերահսկողությունը, ինչպես նաև հաշվետվողական գործելակերպը:

Պարեկային ծառայության և Օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծում.

2021 թվականի հուլիսի 7-ին Պարեկային ծառայության, Պարեկային ծառայության Երևան քաղաքի ստորաբաժանման և Օպերատիվ կառավարման կենտրոնի գործարկումից հետո՝ ծառայությունների ներդրման շարունակականությունն ապահովելու նպատակով, 2022 թվականի ընթացքում կգործարկվեն 6 մարզերում, իսկ 2023 թվականի ընթացքում՝ մյուս 4 մարզերում:

Պարեկային ծառայությունը, հագեցված լինելով նորագույն տեխնոլոգիաներով, քաղաքացիներին մատուցում է նոր որակի ծառայություն, ինչը կդրսևորվի քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի առավել արդյունավետ պաշտպանությամբ, իրավախախտումներին և հանրորեն վտանգավոր դեպքերին արագ (օպերատիվ) արձագանքմամբ, երթևեկության կազմակերպմամբ, հանցագործությունների և պատահարների վերաբերյալ հաղորդումների հավաքագրման ժամանակակից համակարգի ստեղծմամբ, ոստիկանական ուժերի ու միջոցների առավել օպերատիվ կառավարմամբ, իրավախախտումների արդյունավետ կանխարգելմամբ: Պարեկային ծառայության հիմնական խնդիրներից է լինելու ցանկացած դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացուն գործնական աջակցության ցուցաբերումը:

Պարեկային ծառայությանը զուգահեռ, հանրապետության ողջ տարածքում գործարկվելու է նաև օպերատիվ կառավարման կենտրոնը, որը հանդիսանալու է քաղաքացիներից ահազանգերի ընդունման կենտրոն և բոպեների ընթացքում տալու է անհրաժեշտ խորհրդատվություն, իսկ անհրաժեշտության դեպքում մոտեցնելու է պարեկային կարգախումբը:

Նախաքննության արդյունավետություն.

- քրեադատավարական նոր օրենսդրության կարգավորումների լույսի ներքո քրեական դատավարության կարգով իրականացվող նախաքննության առումով ոստիկանության գործառույթների հստակեցում՝ հաշվի առնելով, որ քննչական մարմինների գործող մոդելի պարագայում ոստիկանության համակարգի ողջ ռեսուրսը դուրս է մնում քրեական գործերի նախաքննության գործառույթներից, ինչը բացի հանցավորության դեմ արդյունավետ պայքարի խնդրից, խնդրահարույց է նաև պետության տրամադրության տակ եղած ռեսուրսների արդյունավետ տնօրինման տեսանկյունից,

- երկարաժամկետ հեռանկարում քրեական ոստիկանությունում քննչական ու օպերատիվ ֆունկցիաների միավորմամբ դետեկտիվների ինստիտուտի ներդրում, որի ծառայողները

լիազորված կլինեն ամբողջական քննություն իրականացնել առանձին հանցագործությունների դեպքերով:

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի դրույթներից է բխում, որ քրեական դատավարությանը մասնակցող կամ հանցագործության մասին հաղորդում տվող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք: Նշված անձանց պաշտպանության իրականացումն ապահովելու նպատակով, արդեն իսկ ընդունված օրենսդրական համապատասխան ակտերի հիման վրա ոստիկանությունում նախատեսվում է ստեղծել քրեական դատավարությանը մասնակցող կամ հանցագործության մասին հաղորդում տվող անձի, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի (այսուհետ՝ պաշտպանության ենթակա անձ) պաշտպանություն իրականացնող մասնագիտացված ստորաբաժանում, ինչը կբարձրացնի օրենքով պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մակարդակը:

Հասարակական կարգի պահպանություն.

Ոստիկանության հասարակական կարգը պահպանող ծառայությունների հատուկ կարողությունների զարգացում ու տակտիկական արդյունավետ լուծումների ներդրում, բանակցային ու հաղորդակցության կարողությունների զարգացում, իրավապահ համակարգում մարդու իրավունքների ստանդարտների վերաբերյալ վերապատրաստում, ինչպես նաև տեխնիկական հագեցվածության և սպառազինության բարելավում:

Զանգվածային միջոցառումների ընթացքում ոստիկանական գործունեության արդյունավետության բարձրացման և ոստիկանություն-հասարակություն համագործակցության ու վստահության մթնոլորտի ամրապնդման, ինչպես նաև հասարակական անվտանգության արդյունավետ կառավարման նպատակով, «Հայաստանում ոստիկանություն-հասարակության համագործակցության ամրապնդում» ծրագրի շրջանակներում ԵԱՀԿ կողմից աջակցություն կցուցաբերվի Ոստիկանությանը՝ բանակցային ոստիկանության ներդրման գործում:

Համայնքային ոստիկանության վերաիմաստավորում.

Ոստիկանության առաջնահերթություններից է նաև Համայնքային ոստիկանության գործառույթների վերանայումը (օրենսդրական և կառուցվածքային առումներով), որոնք հաճախ կրկնվում են որոշ դեպքերում՝ պրոբացիայի ծառայության, մյուս դեպքերում սոցիալական ծառայությունների գործառույթների հետ:

Այս ուղղությամբ տարվող աշխատանքները դիտարկում ենք նաև Ոստիկանության և պետական այլ մարմինների հետ իրականացվող համագործակցության շրջանակներում գործառույթների անհստակության ու կրկնակիության վերացման, ինչպես նաև որոշակիության ապահովման համատեքստում:

Ոստիկանության զորքերի վերակազմավորում.

Ոստիկանության զորքերի կարգավիճակի վերանայման, խնդիրների և գործառույթների վերաիմաստավորման, ֆունկցիոնալ և ռազմավարական խնդիրները սպասարկելու ունակ և ՀՀ-ին համապատասխանող մոդելների վերհանման նպատակով՝ Ոստիկանության զորքերի ծառայության կազմակերպաիրավական նոր ձևի սահմանման շրջանակներում կուսումնասիրվի միջազգային առաջավոր փորձը, որի արդյունքներով կազմված առաջարկությունների փաթեթը և դրանից բխող օրենսդրական փաթեթը կներկայացվի կառավարության քննարկմանը:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելման համակարգի վերակազմակերպում: Տվյալ դեպքում առաջնահերթ է համարվում հետևյալ միջոցառումները.

Ոստիկանությունն իր մասնագիտացված ստորաբաժանումների միջոցով իրականացնելու է ռազմավարական և հատուկ կարևորության օբյեկտների պահպանությունը՝ բացառապես պետական բյուջեից հատկացումների հաշվին.

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելումը խթանելու նպատակով նշված ստորաբաժանումները մասնավոր օբյեկտների պաշտպանությունը պետք է իրականացնեն բացառապես տեխնիկական միջոցներով՝ ոստիկանության ստորաբաժանումներին միացված ահազանգման համակարգերով:

Ըստ այդմ, օբյեկտների պահակային պահպանությունը նախատեսվում է թողնել մասնավոր պահնորդական կազմակերպություններին, այն համոզմամբ, որ ոստիկանական արագ արձագանքման ուժերի պրոֆեսիոնալիզմը մասնավոր սեփականատերերի համար առավել նախընտրելի է դարձնելու համագործակցությունը հենց ոստիկանության հետ՝ տեխնիկական միջոցներով պահպանման համակարգերի օգտագործման և «տաք հետքերով» սեփականության դեմ ոտնձգող անձանց հետապնդելու եղանակներով:

Ոստիկանությունում ծառայության գրավչություն, կադրերի պատրաստում և մասնագիտական զարգացում.

-Կարևորելով ոստիկանության համակարգում իրականացվող բարեփոխումների, այդ թվում հակակոռուպցիոն ռազմավարության երկարաժամկետ հեռանկարում հաջող իրագործման անհրաժեշտությունը ՀՀ կառավարության 2021–2026 թվականների ծրագրով հստակ ամրագրվել է, որ.

«Ոստիկանությունում ծառայության գրավչությունը բարձրացնելու նպատակով համակողմանիորեն վերանայվելու է ոստիկանության ծառայողների վարձատրության հարցը, սահմանվելու է արժանապատիվ վարձատրության չափ, որը մի կողմից գրավիչ կդարձնի ոստիկանությունում ծառայությունը, մյուս կողմից երաշխիք կհանդիսանա ծառայողներին կոռուպցիոն դրսևորումներից հնարավորինս զերծ պահելու հարցում: Ոստիկանության ծառայողների աշխատանքի վարձատրության բարելավման ուղենիշ է հանդիսանալու պարեկային ոստիկանության և ոստիկանության մյուս ստորաբաժանումների ծառայողների ամսական աշխատավարձերի չափերի աստիճանաբար համապատասխանության ապահովումը, համահարթեցումը՝ ելնելով ոլորտային զարգացման որոշակի առաջնահերթություններից:

-Ոստիկանության կադրերի պատրաստման, կարողությունների շարունակական զարգացման ու բարոյահոգեբանական պատրաստման, ոստիկանության ծառայողի բարեվարքության ու հակակոռուպցիոն կրթություն ստանալու գործող կառուցակարգերի վերանայում՝ նպատակ ունենալով ոստիկանությունում ներգրավել հանցագործությունների նկատմամբ անհանդուրժողական, իրավունքների պաշտպանությանը զգայուն և հասարակության անվտանգության հարցերով մտահոգ, բարեվարք ու հարգարժան հանրային ծառայող ոստիկաններ: Միևնույն ժամանակ, նոր կերպարի կերտման համար առանձնահատուկ կարևոր է լինելու ոստիկանության գործի պրոֆեսիոնալների պատրաստման, ինչպես նաև փորձառու ծառայողների արժևորումն ու նրանց կողմից նորեկների համար մենթորության ու առաջնորդության ինստիտուցիոնալ ընթացակարգի ներդրումը: Այս առումով կարևոր է լինելու ոստիկանության կրթահամալիրի կրթական ծրագրերի կազմակերպման ու բովանդակային

վերանայման հարցերին լրջագույն անդրադարձը՝ ապահովելով մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցում ու միջազգային չափանիշներ:

Մարդու իրավունքների պաշտպանության հարցեր.

Որպես իրավախախտների հետ շփման պետության առաջին օղակ՝ ոստիկանությունում պետք է բարելավվեն քրեաիրավական ու վարչաիրավական կարգով ներգրավվող անձանց իրավունքների պաշտպանության մեխանիզմները՝ մասնավորապես, բերման ենթարկվող անձանց իրենց հասկանալի լեզվով իրավունքների մասին գրավոր ծանուցումների, ձերբակալվածների պահման վայրերում բժշկական ծառայությունների ապահովման, ինչպես նաև ոստիկանության տարբեր ծառայությունների կողմից անձանց տվյալների պաշտպանության հարցերը:

Թափանցիկություն և հանրային հաշվետվողականություն.

Ոստիկանության աշխատանքի թափանցիկության բարելավում՝ առավել հաճախակի ու մատչելի տեղեկությունների, հաշվետվությունների և ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում, պարբերական մեդիա բրիֆինգների և հասարակայնության հետ կապերի առավել նոր ու ժամանակակից միջոցների արդյունավետ օգտագործում, ինչն առաջնային նշանակություն կունենա ոստիկանության հանդեպ հանրային դրական կարծիքի ձևավորման հարցում:

ՄԱՍ I - Բ. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

1.1 ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ԵՎ ՇՐՋԱՆԱԿ

- Համավարակի հետևանքները դեռևս ամբողջությամբ չհաղթահարած ներկայումս աշխարհը բախվել է ռուս-ուկրաինական հակամարտության շուրջ առաջացրած աշխարհաքաղաքական և տնտեսական մարտահրավերներին, ինչի բացասական հետևանքներն արդեն տեսանելի են ոչ միայն տարածաշրջանում, այլ նաև ամբողջ աշխարհում: ՀՀ հիմնական գործընկեր երկրների տնտեսություններում տեղի են ունեցել տնտեսական աճի էական դանդաղումներ՝ պայմանավորված համաշխարհային արժեշղթաների խաթարումներով, պարենային և հումքային ապրանքների միջազգային գների բարձրացմամբ, դրանց հետևանքով առաջացած բարձր գնաճերին հակազդող աննախադեպ զսպող դրամավարկային քաղաքականություններով ու համաշխարհային ֆինանսական պայմանների խստացմամբ: Այս պայմաններում գործընկեր երկրներից ՌԴ-ում 2022-2023թթ. կանխատեսվում է տնտեսական անկում, իսկ մյուսներում՝ աճի էական դանդաղում:
- Համավարակի և Ղարաբաղյան պատերազմի շոկերից հետո՝ տնտեսության 2021 թվականի վերականգնման տեմպերը 2022 թվականի տարեսկզբին արագացան: Չնայած փետրվարի վերջերից սկիզբ առած ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների բացասական ազդեցությունների հետևանքով տնտեսական ակտիվության մարտ ամսի որոշակի դանդաղմանը, ապրիլ ամսից տնտեսության աճի տեմպը կտրուկ արագացավ պայմանավորված՝ ՌԴ-ից դեպի Հայաստան մարդկանց և կապիտալի աննախադեպ ներհոսքերով, ինչպես նաև ՏՏ տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների և աշխատակիցների ՀՀ տեղափոխմամբ: Մյուս կողմից՝ պատժամիջոցների հետևանքով որոշ երկրներից ՌԴ ներմուծման շուկայի սահմանափակումները նպաստեցին ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացմանը: Վերոնշյալ զարգացումների պայմաններում ՀՀ-ում 2022թ. համար սպասվում է 11% տնտեսական աճ:
- Վերոնշյալ դրական զարգացումների որոշակի պահպանման և ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով նախատեսված տնտեսության և տնտեսական աճի ներուժի բարձրացմանն ուղղված քաղաքականությունների և դրանցից բխող միջոցառումների պայմաններում, 2023թ. կանխատեսվում է 7% տնտեսական աճ: Կանխատեսված տնտեսական աճի հիմքում ընկած են ՀՀ կառավարության կողմից թիրախավորված տնտեսական աճի ներուժի բարձրացման ուղղված այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են մեծածավալ պետական ներդրումների իրականացումը ենթակառուցվածքներում և մարդկային կապիտալի զարգացմանը միտված ոլորտներում, տնտեսության արդիականացման և գործարար միջավայրի բարելավման, տեխնոլոգիական առաջընթացի ապահովման, տնտեսության արտահանելի հատվածի և արտահանման խթանմանն ուղղված քաղաքականությունները, որոնք կխթանեն ինչպես ներքին, այնպես էլ օտարերկրյա միջոցներով ֆինանսավորվող մասնավոր ներդրումների իրականացումը, կնպաստեն արտահանման ծավալների մեծացմանը, ինչպես նաև ընդհանուր արտադրողականության բարձրացմանը:

- Որոշ շուկաներում արտաքին պահանջարկի աճով, ՌԴ-ում ՀՀ-ից արտահանվող ապրանքների շուկաների ընդլայնմամբ, զբոսաշրջության ու ներքին պահանջարկի աճի պայմաններում 2022թ. տեղի կունենա և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալների աճ: Առևտրային հաշվեկշռի և ոչ առևտրային բնույթի (աշխատավարձ և տրանսֆերտներ) դրամական փոխանցումների ՀՆԱ-ում դերի վատթարացմամբ պայմանավորված 2022թ. ընթացիկ հաշվի պակասուրդը փոքր-ինչ կվատթարանա՝ մոտենալով ՀՆԱ-ի 4.2%-ին: 2023 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը կշարունակի խորանալ:
- Իրականացվող զսպող դրամավարկային քաղաքականության և աստիճանաբար մեղմվող ամբողջական պահանջարկի պարագայում գնաճը, կարճաժամկետ հատվածում մնալով թիրախից բարձր մակարդակում, կսկսի աստիճանաբար նվազել՝ 2023թ. ընթացքում մոտենալով իր նպատակային ցուցանիշին: Գնաճի նպատակային ցուցանիշից շեղման ռիսկերի դրսևորման պարագայում ՀՀ ԿԲ-ն համապատասխանորեն կարձագանքի:
- 2021թ. ՀՀ Կառավարությունը իրականացրել է սահուն հարկաբյուջետային կոնսոլիդացիա՝ նպատակ ունենալով չխաթարել տնտեսության վերականգնումը և ապահովել պարտքի բեռի աճի տեմպի դանդաղում, իսկ 2022 թվականի առաջին կիսամյակում բարձր տնտեսական աճի պայմաններում հարկաբյուջետային քաղաքականությունն ամբողջական պահանջարկի վրա ունեցել է էական զսպող ազդեցություն:
- 2023 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունը ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրին համահունչ ուղղված կլինի թիրախավորված 7% տնտեսական աճի թիրախի ապահովմանը՝ շեշտադրելով պետական ներդրումների մասնաբաժնի էական մեծացումը (կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում հասցնելով 5.9%-ի) և ծախսերի իրականացման արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև՝ պարտքի կայունության պահպանմանը: Արդյունքում հարկաբյուջետային քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա 2023թ. կունենա չեզոք ազդեցություն և կխթանի տնտեսության ներուժը:
- Ռուս-ուկրաինական հակամարտությունը և Ռուսաստանի դեմ կիրառված աննախադեպ պատժամիջոցները աշխարհում ստեղծել են նոր իրականություն, որի պայմաններում ինչպես աշխարհի և ՀՀ գործընկեր երկրների, այնպես էլ ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները իրենց մեջ կրում են մեծ անորոշություն: Այս պայմաններում, ինչպես աշխարհի և ՀՀ գործընկերների, այնպես էլ պետական բյուջեի շրջանակում ՀՀ տնտեսական աճի կանխատեսումների համար առկա են երկկողմանի ռիսկեր, սակայն դեպի ներքև ռիսկերը համեմատաբար մեծ են:

Աղյուսակ 1.1. *2023թ. պետական բյուջեի մակրոտնտեսական շրջանակ*

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ	2019 փաստ	2020 փաստ	2021 Փաստ	2022 սպասում	2023 ծրագիր
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	6,543.3	6,181.9	6,983.0	8,293.7	9,317.9
Տնտեսական աճ, %	7.6	-7.2	5.7	11.0	7.0
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	1.0	1.8	6.9	7.0	5.0
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), %	1.8	0.7	3.7	8.5	3.6
Գնաճ (միջին), %	2.5	1.4	1.2	8.1	5.6
<u>ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների, %</u>					
Արդյունաբերություն	11.9	-1.4	3.5	5.0	5.1
Գյուղատնտեսություն	-5.8	-3.7	-0.6	2.2	3.0
Շինարարություն	6.5	-5.9	3.1	16.9	9.6
Ծառայություններ	10.0	-9.6	7.9	15.6	8.2
Զուտ հարկեր	7.1	-9.9	7.4	6.2	7.2
<u>ՀՆԱ ծախսային բաղադրիչների իրական աճերը, %</u>					
Վերջնական սպառում	11.7	-10.9	4.4	7.8	4.0
Պետական	12.9	9.2	8.4	-5.3	-2.2
Մասնավոր	11.5	-14.0	3.7	10.7	5.2
Հիմնական միջոցներում ներդրումներ[1]	4.4	-1.5	6.3	18.3	18.4
Պետական	13.7	6.1	26.0	19.4	38.1
Մասնավոր	2.6	-3.1	1.7	18.0	12.7
Արտահանում	16.0	-33.5	16.6	33.9	9.3
Ներմուծում	11.6	-31.5	12.9	21.4	5.8
<u>Արտաքին հատված (մլն ԱՄՆ դոլար)</u>					
Ընթացիկ հաշիվ	-997.0	-477.8	-515.1	-768.9	-1,213.7
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-1,809.0	-1,264.1	-1,107.9	-1,113.0	-1,272.5
Արտահանում	5,794.4	3,818.2	5,011.9	7,682.8	8,784.1
Փոփոխություն, %	17.6	-34.1	31.3	53.3	14.3
Ներմուծում	7,603.4	5,082.3	6,119.7	8,795.8	10,056.6
Փոփոխություն, %	13.8	-33.2	20.4	43.7	14.3
Դրամական փոխանցումներ	1,162.5	1,046.2	1,243.1	1,324.1	1,371.2
<u>ՀՆԱ-ի նկատմամբ %</u>					
Ընթացիկ հաշիվ	-7.3	-3.8	-3.7	-4.2	-5.7
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-13.3	-10.0	-8.0	-6.0	-6.0
Արտահանում	42.5	30.2	36.2	41.7	41.1
Ներմուծում	55.8	40.2	44.1	47.8	47.1

[1]Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումները, քանի որ 2019թ.-ից ՀՀ ՎԿ կողմից պաշարների փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվեկշռող գործոն կամ այլ կերպ՝ վիճակագրական սխալները ներառվում են դրա մեջ:

Դրամական փոխանցումներ	8.5	8.3	9.0	7.2	6.4

1.2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համաշխարհային տնտեսությունը կորոնավիրուսի համավարակի (COVID-19) հետևանքով առաջացած խորը անկումից հետո 2021թ. սկսել էր արագ վերականգնվել: Կիրառված հարկաբյուջետային և դրամավարկային աննախադեպ խթանող միջոցառումների, ինչպես նաև պատվաստումների ակտիվ քաղաքականության հետևանքով 2021թ. ինչպես համաշխարհային տնտեսությունը, այնպես էլ հիմնական գործընկեր երկրների տնտեսությունները զգալի աճեր են գրանցել: Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) գնահատականներով 2021թ. համաշխարհային տնտեսական աճը կազմել է 6.1%, իսկ ՀՀ հիմնական գործընկեր երկրներից ՌԴ-ում գրանցվել է 4.7% աճ, Եվրոգոտում 5.4%, ԱՄՆ-ում 5.7% և Չինաստանում՝ 8.1% աճ:

Չնայած 2022թ. առաջին եռամսյակում ՀՀ բոլոր հիմնական գործընկեր երկրներում գրանցվել է տնտեսական աճ, սակայն փետրվարի վերջին մեկնարկած ռուս-ուկրաինական հակամարտության և ՌԴ նկատմամբ կիրառվող աննախադեպ պատժամիջոցների կիրառման հետևանքով տնտեսական աճի տեմպերը սկսել են դանդաղել: 2022 թվականի առաջին կիսամյակում նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ ԱՄՆ տնտեսությունը գրանցել է 2.6% աճ, ընդ որում՝ երկրորդ եռամսյակում արձանագրվել է 1.6% աճ, Եվրոգոտու տնտեսությունն աճել է 4.7%-ով (երկրորդ եռամսյակում՝ 4%), իսկ Չինաստանում գրանցվել է 2.6% տնտեսական աճ (երկրորդ եռամսյակում՝ 0.4%): Ռուսաստանի տնտեսությունը 2022 թվականի առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 0.5% նվազում է գրանցել, ընդ որում՝ երկրորդ եռամսյակում տնտեսական անկումներ են գրանցվել: Այսպես՝ Ռուսաստանի տնտեսական ակտիվությունը մինչև մարտ գրանցած աճի տեմպերի դանդաղումից հետո ապրիլին նախորդ տարվա ապրիլի նկատմամբ նվազել է 2. 8%-ով, մայիսին՝ 4.3%-ով, իսկ հունիսին՝ 4.9%-ով:

Կանխատեսում: ԱՄՀ հուլիս ամսվա կանխատեսումների համաձայն 2022թ. համաշխարհային տնտեսական աճը կդանդաղի՝ կազմելով 3.2%: 2022թ. ՀՀ հիմնական գործընկեր երկրների տնտեսություններում տեղի կունենան տնտեսական աճի էական դանդաղումներ՝ պայմանավորված ռուս-ուկրաինական հակամարտությամբ, համաշխարհային արժեշղթաների խաթարումներով, պարենային և հումքային ապրանքների միջազգային գների բարձրացմամբ, դրանց հետևանքով առաջացած բարձր գնաճերին հակազդող աննախադեպ զսպող դրամավարկային քաղաքականություններով ու համաշխարհային ֆինանսական պայմանների խստացմամբ, ինչպես նաև Չինաստանում համավարակի տարածման դեմ կիրառվող սահմանափակող միջոցառումներով: ՀՀ ամենամեծ առևտրատնտեսական գործընկեր ՌԴ-ում 2022թ. կանխատեսվում է 6% անկում, որը պայմանավորված է հակամարտության արդյունքում հիմնականում արևմյան երկրների կողմից կիրառվող աննախադեպ լայնածավալ պատժամիջոցների կիրառմամբ: 2022թ. Եվրոգոտում կանխատեսվում է տնտեսական աճի դանդաղում (2.6%), որը հիմնականում պայմանավորված է ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով ՌԴ նկատմամբ կիրառվող պատժամիջոցների արդյունքում Եվրոգոտում առևտրային պայմանների (հիմնականում նավթի և գազի գների աճի հետևանքով) կտրուկ վատացմամբ: ԱՄՆ-ում և Չինաստանում 2022թ. տնտեսական աճերը կկազմեն համապատասխանաբար 2.3% և 3.3%,

որոնցից առաջինի դանդաղումը նախորդ կանխատեսումների համեմատ հիմնականում կպայմանավորվի բարձր գնաճով և դրան հակազդող զսպող դրամավարկային քաղաքականությանբ, իսկ երկրորդինը՝ համավարակի տարածման դեմ կիրառվող սահմանափակումներով: Այս զարգացումների հետևանքով բոլոր գործընկեր երկրներում 2023թ. կանխատեսվում է տնտեսական աճերի դանդաղում, իսկ ՌԴ-ում շարունակելու է տնտեսական անկման միտումը:

Աղյուսակ 1.2. *ԱՄՀ կանխատեսումներ*

	2021	2022թ. -ի կանխատեսում			2023 թ.-ի կանխատեսում		
	Փաստ	2022 Հունվար	2022 Ապրիլ	2022 Հուլիս	2023 Հունվար	2023 Ապրիլ	2023 Հուլիս
Աշխարհի տնտեսական աճ, %	6.1	4.4	3.6	3.2	3.8	3.6	2.9
ՌԴ	4.7	2.8	-8.5	-6.0	2.1	-2.3	-3.5
Եվրոգոտի	5.4	3.9	2.8	2.6	2.5	2.3	1.2
Չինաստան	8.1	4.8	4.4	3.3	5.2	5.1	4.6
ԱՄՆ	5.7	4.0	3.7	2.3	2.6	2.3	1.0
Համաշխարհային առևտրի աճ, %	10.1	6.0	5.0	4.1	4.9	4.4	3.2

Աղբյուրը՝ ԱՄՀ «World Economic Outlook»

Ռուս-ուկրաինական հակամարտության և ՌԴ նկատմամբ կիրառվող պատժամիջոցների հետևանքով առաջացած գլոբալ արժեշղթաների խաթարումների պայմաններում նավթի միջազգային գների աճի դանդաղում է նկատվում, իսկ պղնձի միջազգային գների աճի դանդաղումը դրսևորվում է էլ ավելի արագ տեմպերով: Հուլիս ամսից սկսած՝ և՛ պղնձի, և՛ նավթի միջազգային գները էապես անկում են ապրել: Կանխատեսվող հորիզոնում կպահպանվի գնանկումային միջավայրը: Ամբողջ աշխարհում պայմանավորված հետկորոնավիրուսային պահանջարկի վերականգնմամբ՝ 2021թ. հումքային ապրանքների գներն աճել են. նավթի միջազգային գները աճել են շուրջ 66.5%-ով, պղնձի միջազգային գները՝ 50.9%-ով, իսկ մոլիբդենի միջազգային գները՝ 82.7%-ով:

2022թ. առաջին ութ ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ պղնձի միջազգային շուկայում գներն աճել են 0.9%-ով, իսկ մոլիբդենի գները՝ 43.7%-ով պայմանավորված համավարակից հետո համաշխարհային շուկայում մետաղների նկատմամբ պահանջարկի ավելացմամբ, իսկ նավթի միջազգային գները՝ 58.4%-ով, որը հիմնականում պայմանավորված է ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով ՌԴ-ից մատակարարման շղթաների խափանումներով:

Ըստ «Բլումբերգ» միջազգային հեղինակավոր կազմակերպության՝ օգոստոսի դրությամբ 2022թ. համար նավթի գների կանխատեսումները վերանայավել են աճի ուղղությամբ, իսկ պղնձի գների կանխատեսումը վերանայվել է նվազման ուղղությամբ մայիս ամսվա կանխատեսումների համեմատ:

Միջազգային ապրանքային, արժութային և ֆինանսական շուկաները էական ցնցումների են ենթարկվում: Համաշխարհային առևտրի տեմպերը էապես դանդաղում են, իսկ ֆինանսական շուկաներում նկատվում են բաժնետոմսերի գների էական անկումներ: Չնայած

զարգացող երկրներում ազգային արժույթները որոշակիորեն թուլացել են, սակայն ռուս-ուկրաինական հակամարտության և ՌԴ դեմ կիրառված պատժամիջոցների պայմաններում ռուսական ռուբլին մարտ ամսվա ԱՄՆ դոլարի նկատմամբ կարճաժամկետ արժեզրկումից հետո սկսել է կտրուկ արժևորվել: Զարգացող երկրներում և հատկապես տարածաշրջանում երկրների ռիսկի հավելավճարները բարձրացել են և կայունացել բարձր մակարդակներում:

Միջազգային տնտեսական և ֆինանսական զարգացումները և կանխատեսումները

Գծապատկեր 1.1 Համաշխարհային և գործընկեր երկրներիտնտեսական աճեր (%)



Աղբյուրը՝ ԱՄՀ

Գծապատկեր 1.2 Հումքային ապրանքների գներ (ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ կանխատեսումները ըստ Բլումբերգի

Գծապատկեր 1.3. Համաշխարհային առևտրի դոլարային աճերը(%)



Աղբյուրը՝ ԱՄՀ

Գծապատկեր 1.4. Զարգացող երկրների ազգային արժույթների դոլարի նկատմամբ փոփոխությունները [2]



Աղբյուրը՝ Բլումբերգ, ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

[2] *Դոլարի ինդեքսը հաշվարկվում է որպես կշռված երկրաչափական միջին՝ հետևյալ արժույթների նկատմամբ. Եվրո, Ճապոնական յեն, Բրիտանական ֆունտ, Կանադական դոլար, Շվեդական կրոն, Շվեյցարական ֆրանկ.*

Գծապատկեր 1.5. Գործընկեր երկրների բաժնետոմսերի շուկաների ինդեքսներ վերականգնվել է



Աղբյուրը՝ Բլումբերգ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.6. Զարգացող երկրների ռիսկի հավելավճարներ[3]



Առողջապահական և տնտեսական ճգնաժամին «ագրեսիվ» հակազդելուց հետո երկրները սկսել են իրականացնել հարկաբյուջետային կոնսոլիդացիա, սակայն ռուս-ուկրաինական հակամարտության և ՌԴ նկատմամբ կիրառվող պատժամիջոցների հետևանքով ստեղծված գլոբալ մարտահրավերները էական հարկաբյուջետային ճնշումներ են առաջացրել: Խթանող հարկաբյուջետային քաղաքականության պայմաններում 2020թ. աշխարհում գրանցվել է պետական բյուջեի պակասուրդի և պարտքի բեռի էական աճ՝ ինչը գրանցվել էր նաև 2009թ.-ի ճգնաժամի ժամանակ: Սակայն, ի տարբերություն 2009թ.-ի ճգնաժամին հաջորդող երկու տարիներին, երբ հնարավոր չեղավ պետական պարտքի բեռի նվազում ապահովել՝ չնայած բյուջեի պակասուրդի որոշակի նվազմանը, 2021 թվականի փաստացի և 2022թ.-ի կանխատեսվող ցուցանիշներով համաշխարհային մակարդակով պարտքի բեռի նվազում է գրանցվում՝ պայմանավորված ինչպես տնտեսական աճի ավելի արագ վերականգնմամբ, այնպես էլ պետական բյուջեի պակասուրդի ավելի արագ կրճատմամբ: Այս փաստը վկայում է, որ 2021թ.-ին գրանցված տնտեսական վերականգնման պայմաններում կառավարությունները սկսել են իրականացնել հարկաբյուջետային կոնսոլիդացիա՝ պետական պարտքի բեռի աճը մեղմելու և հետագայում կայունացնելու նպատակադրմամբ, ինչը շարունակվում է նաև 2022թ.-ին:

Միաժամանակ, 2022թ.-ի փետրվարից սկսված ռուս-ուկրաինական պատերազմը բարձր անորոշություն է ստեղծում հարկաբյուջետային կոնսոլիդացիայի ապահովման համար՝ հանգեցնելով ցածր տնտեսական աճի, բարձր գնաճի և դրանից բխող՝ սոցիալական ծախսերի վրա ավելացող ճնշման ռիսկերի: Այդ ռիսկերի հաշվի առնելով, աշխարհի մակարդակով արդեն իսկ տնտեսական աճի կանխատեսումները ճշգրտվել են դեպի ներքև, իսկ բյուջեի պակասուրդի կանխատեսումները՝ դեպի վեր, ինչի արդյունքում սպասվում է նաև պետական պարտքի առավել մեծ ավելացում (գծապատկեր 1.7):

---

[3] *Երկրի ռիսկի հավելավճարները հաշվարկված են որպես տվյալ երկրի եվրոպարտպատոմսերի (դոլարային արժույթով) և ԱՄՆ համապատասխան ժամկետայնությամբ գանձապետական պարտպատոմսերի եկամտաբերությունների տարբերություն (պարտպատոմսերի մարման ժամկետները նշված են երկրների անվանումների կողքը՝ փակագծերում):*

Գծապատկեր 1.7. Համաշխարհային տնտեսության և հարկաբյուջետային քաղաքականության արձագանքը (% ՀՆԱ-ում) ճգնաժամերին և հաջորդող տարիներին



Աղբյուրը՝ ԱՄՀ, 2022թ. կանխատեսում:

1.3. ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

1.3.1. ՀՆԱ և տնտեսական աճ

2020թ. Համավարակի և Ղարաբաղյան պատերազմի բացասական ազդեցություններով պայմանավորված տնտեսական անկումից հետո՝ ՀՀ կառավարության կողմից իրականացված տնտեսական անկմանը հակազդող, ինչպես նաև հետագա վերականգնումը խթանող հարկաբյուջետային քաղաքականության պայմաններում 2021թ. տնտեսությունը թևակոխեց վերականգնման փուլ՝ գրանցելով 5.7% իրական աճ: Տնտեսական աճին հիմնականում նպաստեց ծառայությունների ճյուղը: Պահանջարկի տեսանկյունից տնտեսական աճը պայմանավորեցին ներքին պահանջարկի և արտահանման աճերը:

Տնտեսության վերականգնման տեմպերը շարունակվեցին նաև 2022թ. տարեսկզբին, իսկ ապրիլ ամսից հակամարտող երկրներից դեպի Հայաստան մարդկանց և կապիտալի ներհոսքերի, ինչպես նաև զբոսաշրջության զգալի ավելացման և ՏՏ ոլորտի ընկերությունների և աշխատակիցների՝ ՀՀ տեղափոխման արդյունքում տնտեսական ակտիվության աճի տեմպերը կտրուկ արագացան: Արդյունքում առաջին կիսամյակում գրանցվեց 11% տնտեսական աճ: Տնտեսության բոլոր ճյուղերը (բացառությամբ՝ գյուղատնտեսության) աճեցին, սակայն տնտեսական աճը պայմանավորվեց հիմնականում ծառայությունների աճով (նպաստումը՝ 9.0 տոկոսային կետ): Ընդ որում՝ նոր տնտեսական իրողություններով պայմանավորված բարձր աճեր գրանցվեցին ֆինանսական և ապահովագրական գործունեության[4], փոխադրումների և պահեստային տնտեսության, կացության և հանրային սննդի կազմակերպման, առևտրի, ինչպես նաև տեղեկատվություն և կապ ենթաճյուղերում:

Գծապատկեր 1.8. ՀՆԱ աճ (%) և ճյուղերի նպաստումները ՀՆԱ աճին (տ.կ.)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.9. ՀՆԱ աճ (%) և պահանջարկի բաղադրիչների նպաստումները ՀՆԱ աճին (տ.կ.)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Հուլիս-օգոստոս ամիսներին տնտեսական ակտիվության աճը շարունակվեց և արդյունքում 2022թ. հունվար-օգոստոսին արձանագրվեց տնտեսական ակտիվության (ՏԱՑ) 14.0% աճ, ինչը պայմանավորված էր հիմնականում ծառայությունների աճով (12.4 տոկոսային

---

[4] *Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ենթաճյուղի դրական զարգացումները զուգորդվել են բանկային համակարգում 2022 թվականի առաջին կիսամյակում (հիմնականում երկրորդ եռամսյակում) շահութաբերության աննախադեպ բարձր ցուցանիշներով, ինչին նպաստել են արտարժութային գործառնություններից լրացուցիչ եկամուտները (այդ թվում՝ փոխարժեքի տատանումներից և միջնորդավճարներից գոյացած հասույթը), ոչ ռեզիդենտների կողմից նոր բանկային հաշիվների ստեղծումը:*

կետ[5]): Մյուս ճյուղերի համախառն թողարկումների իրական աճերը ևս նպաստեցին տնտեսական ակտիվությանը:

Գծապատկեր 1.10. ՏԱՑ և տնտեսության ճյուղերի իրական աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Գծապատկեր 1.11. ՏԱՑ և տնտեսության ճյուղերի իրական աճերը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Գծապատկեր 1.12. Տնտեսության ճյուղերի նպաստումները ՏԱՑ-ին (տ.կ.)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.13. Տնտեսության ճյուղերի նպաստումները ՏԱՑ-ին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (տ.կ.)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Ներքին պահանջարկի վերականգնման տեմպերը շարունակվեցին նաև 2022թ. առաջին կիսամյակում: Ներքին պահանջարկի աճը պայմանավորվեց մասնավոր սպառման աճով: Կապիտալ ներդրումները ևս աճեցին՝ պայմանավորված հիմնականում մասնավոր ներդրումների աճով: Արտահանումը և ներմուծումը նույնպես աճեցին: Ընդ որում արտահանման աճը ներմուծման նկատմամբ առաջանցիկ էր, որի արդյունքում զուտ արտահանումը դրական նպաստեց ՀՆԱ-ի իրական աճին: Տնտեսության ներքին պահանջարկի աճի միտումները շարունակվեցին նաև հուլիս-օգոստոս ամիսներին, մասնավորապես՝ սպառման աճի մասին են վկայում առևտրի և ծառայությունների աճերը, իսկ կապիտալ ներդրումների աճի մասին՝ շինարարության աճը:

[5] *ՏԱՑ-ի աճին ճյուղերի նպաստումները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են: Գյուղատնտեսության ցուցանիշը ոչ բոլոր տեղերում է ներառված հաշվարկներում, քանի որ հրապարակվում է եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության հարթեցման անհրաժեշտությամբ:*

<u>Կանխատեսում</u>: Ձևավորված և սպասվող արտաքին զարգացումների, ՌԴ-ից դեպի Հայաստան ՏՏ ոլորտի ընկերությունների, մարդկանց և կապիտալի աննախադեպ ներհոսքերի, ինչպես նաև պատժամիջոցների հետևանքով որոշ երկրներից ՌԴ ներմուծման շուկայի սահմանափակումների արդյունքում ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացման և ՀՀ կառավարության կողմից իրականացվող հարկաբյուջետային միջոցառումների պայմաններում 2022թ. սպասվում է 11% տնտեսական աճը, որը բարձր է վերջին 14 տարիների ընթացքում գրանցված տնտեսական աճերից:

Սպասվող արտաքին տնտեսական միջավայրի, ռուս-ուկրաինական հակամարտության արդյունքում դեպի ՀՀ մարդկանց և կապիտալի ներհոսքերի, ՏՏ ոլորտի ընկերությունների տեղափոխման արդյունքում առաջացած դրական զարգացումների որոշակի պահպանման և ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով նախատեսված տնտեսության և տնտեսական աճի ներուժի բարձրացմանն ուղղված քաղաքականության միջոցառումների պայմաններում 2023թ. կանխատեսվում է 7. 0% տնտեսական աճ:

2022թ. տնտեսական աճի արագացմանը կնպաստեն ծառայությունների և շինարարության ճյուղերի առաջանցիկ աճերը, 2023թ. նույնպես տնտեսական աճից առաջանցիկ կլինեն շինարարության և ծառայությունների ճյուղերի աճերը: Տնտեսության մյուս ճյուղերը նույնպես դրական ազդեցություն կունենան տնտեսական աճի վրա: Ամբողջական պահանջարկը ևս կաճի՝ պայմանավորված ինչպես ներքին պահանջարկի, այնպես արտահանման (հատկապես՝ ծառայությունների արտահանման մասով) աճով:

2022թ. դեֆլյատորը կաճի՝ պայմանավորված ՍԳԻ-ի և ապրանքների միջազգային գների զարգացումներով, իսկ 2023թ.՝ ՍԳԻ-ին համահունչ կդանդաղի:

Վերոնշյալ զարգացումների պայմաններում անվանական ՀՆԱ-ն 2022թ. կկազմի 8,293.7 մլրդ դրամ՝ 224.2 մլրդ դրամով ավելին լինելով 2023-2025թթ. ՄԺԾԾ ցուցանիշից, և 424.2 մլրդ դրամով՝ 2022թ. բյուջեով ծրագրած ցուցանիշից: Իսկ 2023թ. անվանական ՀՆԱ-ն կկազմի 9,317.9 մլրդ դրամ՝ 251.8 մլրդ դրամով ավելին լինելով 2023-2025թթ. ՄԺԾԾ ցուցանիշից:

Գծապատկեր 1.14. Անվանական ՀՆԱ և տնտեսական աճ



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Գծապատկեր 1.15. Իրական ՀՆԱ անկումը/աճը տնտեսական ճգնաժամերի և հաջորդող տարիներին



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ կանխատեսում

Գծապատկեր 1.16. Տնտեսության առանձին ճյուղերի նպաստումները տնտեսական աճին



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Գծապատկեր 1.17. Տնտեսական աճին պահանջարկի բաղադրիչների նպաստումները



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

<u>Համախառն առաջարկի կանխատեսում</u>. 2022թ. սպասվող 11% տնտեսական աճը հիմնականում պայմանավորված կլինի ծառայությունների (ներառյալ առևտուրը) և շինարարության, համապատասխանաբար, 15.6% և 16.9% առաջանցիկ աճերով: Արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերը նույնպես կաճեն (համապատասխանաբար՝ 5.0% և 2.2%)՝ դրական նպաստելով տնտեսական աճին:

2023թ. ՀՀ տեղափոխված SS ոլորտի ընկերությունների և աշխատակիցների, ինչպես նաև կապիտալի և մարդկանց ներհոսքերի թողած դրական ազդեցությունների որոշակիորեն պահպանման, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից նախատեսված մասնավոր ներդրումների խթանման, տնտեսության արդիականացման և գործարար միջավայրի բարելավման, տեխնոլոգիական առաջընթացի ապահովման, տնտեսության արտահանելի հատվածի և արտահանման խթանմանն ուղղված քաղաքականությունների, ինչպես նաև մեծածավալ պետական ներդրումների իրականացման պայմաններում՝ շինարարության ճյուղը կաճի 9.6%-ով, ծառայությունները՝ 8.2%-ով, իսկ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը՝ համապատասխանաբար 5.1%-ով և 3%-ով:

Գծապատկեր 1.18. Ճյուղերի տեսակարար կշիռները ՀՆԱ-ի կազմում



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Գծապատկեր 1.19. Ծախսային բաղադրիչների տեսակարար կշիռները ՀՆԱ-ի կազմում



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

<u>Համախառն պահանջարկի կանխատեսում.</u> Ընթացիկ զարգացումների պայմաններում 2022թ. վերջնական սպառումը իրական արտահայտությամբ կաճի 7.8%-ով, իսկ ներդրումները՝ 18.3%-ով: Սպառման և ներդրումների աճին կնպաստեն տնօրինվող եկամտի աճը (այդ թվում՝ դրամական փոխանցումների բարձր աճը), դեռևս Համավարակի շրջանում մասնավոր հատվածում կուտակված նախազգուշական խնայողությունների օգտագործումը,

օտարերկրացիների ներհոսքը, բնակարանային շինարարության շարունակվող աճը, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից շարունակվող Համավարակի և Ղարաբաղյան պատերազմի հետևանքների մեղմանն ու ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքա-կանությունները:

2023թ. սպառումը կաճի 4%-ով, իսկ ներդրումները՝ 18.4%-ով: Ներդրումների աճը կպայմանավորվի ինչպես պետական (38.1% աճ), այնպես էլ ՀՀ կառավարության կողմից մասնավոր ներդրումների խթանման քաղաքականության իրականացման արդյունքում ներքին և օտարերկրյա միջոցներով ֆինանսավորվող մասնավոր ներդրումներով (12.7% աճ):

2022թ. արտահանումը և ներմուծումը կաճեն համապատասխանաբար 33.9%-ով և 21.4%-ով՝ պայմանավորված ներքին և արտաքին պահանջարկի (հատկապես՝ ծառայությունների արտահանման մասով), ինչպես նաև տնտեսական ակտիվության աճով: ՀՀ և համաշխարհային տնտեսական աճերի, ՀՀ տնտեսության արտահանելի հատվածի զարգացումների, տնօրինվող եկամտի աճի, զբոսաշրջության վերականգման, ինչպես նաև արտահանմանը և ներդրումների խրախուսմանն ուղղված ՀՀ կառավարության քաղաքականության պայմաններում 2023թ. արտահանումն ու ներմուծումը կաճեն համապատասխանաբար՝ 9.3%-ով և 5.8%-ով:

1.3.2. Աշխատանքի շուկա

Տնտեսության վերականգնման պայմաններում 2021թ. գործազրկության մակարդակը նվազել է, իսկ աշխատուժի մասնակցության մակարդակն աճել: Աճել է նաև միջին ամսական աշխատավարձը: 2021թ. գործազրկության մակարդակը 18.1%-ից նվազել է 15.3%-ի, իսկ աշխատուժի մասնակցության մակարդակը 58%-ից բարձրացել է 58.5%-ի: Նույն ժամանակաշրջանում զբաղվածների թիվն աճել է 0.3%-ով, իսկ գործազուրկների թիվը՝ նվազել 17.5%-ով: Միջին ամսական աշխատավարձը 2022թ. աճել է 7.6%-ով, միաժամանակ իրական աշխատավարձը՝ 7.2% միջին գնաճի պայմաններում ավելացել է 0.4%-ով:

Բարձր տնտեսական աճի պայմաններում 2022թ. առաջին եռամսյակում գործազրկության մակարդակի նվազումը և աշխատուժի մասնակցության մակարդակի աճը շարունակվել է: 2022թ. առաջին եռամսյակում գործազրկության մակարդակը նվազել է՝ 16.7%-ից հասնելով 14.8%-ի, իսկ աշխատուժի մասնակցության մակարդակն աճել՝ 56.2%-ից հասնելով 56.8%-ի: Նույն ժամանակաշրջանում զբաղվածների թիվն աճել է 3.3%-ով՝ կազմելով 1070.5 հազ, մարդ, իսկ գործազուրկների թիվը նվազել է 10.2%-ով և կազմել՝ 186.4 հազ. մարդ: 2022թ. հունվար-հուլիսին պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թիվը նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ նվազել է 10.8%-ով՝ կազմելով 55,432 մարդ: Նշենք, նաև, որ նշված ժամանակահատվածում 5.6%-ով աճել է վարձու աշխատողների թիվը, որին հիմնականում նպաստել են մեծածախ և մանրածախ առևտուր, տեղեկատվություն և կապ, ինչպես նաև կացություն և հանրային սննդի կազմակերպում ոլորտներում գրանցված աճերը:

2022թ. տնտեսական աճի պայմաններում աշխատանքի շուկայում կդրսևորվեն դրական զարգացումներ: Այս պայմաններում ակնկալվում է զբաղվածության շարունակական աճ և գործազրկության նվազում:

Գծապատկեր 1.20. Գործազրկություն և զբաղվածություն



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Գծապատկեր 1.21. Միջին ամսական անվանական աշխատավարձի կուտակային աճ, 2022թ., %



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

2022թ. տարեսկզբից տնտեսական աճի պայմաններում միջին ամսական անվանական աշխատավարձի աճի տեմպը (հիմնականում մասնավոր հատվածում) սկսեց արագանալ: 2022թ. հունվար-հուլիսին միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 12%-ով՝ կազմելով 221,683 դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է եղել տեղեկատվություն և կապ, ֆինանսական և ապահովագրական գործունեություն, ինչպես նաև մեծածախ և մանրածախ առևտուր ճյուղերում գրանցված աշխատավարձերի աճով: Միաժամանակ, ՍԳԻ 8.3% աճի պայմաններում իրական աշխատավարձն աճել է շուրջ 3.5%-ով: Պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 4.3%-ով՝ կազմելով 179,175 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 14.3%-ով՝ կազմելով 240,502 դրամ:

1.3.3. ՀՀ վճարային հաշվեկշիռ, արտահանում և ներմուծում

2021թ. ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատ վատթարացել է՝ կազմելով ՀՆԱ-ի 3.7%-ը: Ընթացիկ հաշվի վատթարացումը հիմնականում պայմանավորված է եղել ներքին պահանջարկի վերականգման հետևանքով ապրանքների ներմուծման ծավալների աճով և սկզբնական եկամուտների կրճատմամբ:

2022թ. ութ ամիսներին ապրանքների արտահանման նկատմամբ ներմուծման առաջանցիկ աճի արդյունքում առևտրային հաշվեկշիռը վատթարացել է,ծառայությունների հաշվեկշիռը բարելավվել է և էապես մեծացել է դրամական փոխանցումների ներհոսքը: Ծառայությունների հաշվեկշռի բարելավումը պայմանավորվել է համավարակի դեմ պայքարի սահմանափակումների վերացման և ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով ՀՀ այցելած զբոսաշրջիկների 2.4 անգամ աճով: Բացի այդ, ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված առևտրային և ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումներն բարձր տեմպերով աճել են, սակայն գնահատվում է, որ ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումները ավելի դանդաղ են աճում: Մասնավորապես՝ ընթացիկ տարվա

հունվար-հուլիս ամիսներին տեղի է ունեցել արտերկրից ստացված դրամական փոխանցումների զգալի աճ (2.1 անգամ[6]):

<u>Կանխատեսում:</u> Առևտրային հաշվեկշռի և ոչ առևտրային բնույթի (աշխատավարձ և տրանսֆերտներ) դրամական փոխանցումների ՀՆԱ-ում դերի վատթարացմամբ պայմանավորված ընթացիկ հաշվի պակասուրդը կխորանա և 2022թ. կկազմի ՀՆԱ-ի 4.2%-ը: Դրամական փոխանցումների դերի շարունակվող նվազման պայմաններում 2023թ. ընթացիկ հաշվի պակասուրդը կշարունակի խորանալ:

Գծապատկեր 1.22. *Ընթացիկ հաշվի պակասուրդը և բաղադրատարրերը (ՀՆԱ-ում %)*





Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

<u>Արտահանում:</u> 2021թ. արձանագրվել է ապրանքների և ծառայությունների դոլարային արտահանման 31.3% աճ: Այդ աճը հիմնականում պայմանավորվել է համավարակի դեմ պայքարի սահմանափակումների թուլացմամբ և արտաքին պահանջարկի վերականգմամբ: ՀՀ ապրանքների արտահանումը 2021թ. աճել է 20.5%-ով: 2021թ. հիմնականում ճանապարհորդության նպատակով ՀՀ այցելությունների աճի արդյունքում ծառայությունների արտահանումն աճել է 57.8%-ով:

2022թ. ծառայությունների աճի նախորդ տարվա միտումները շարունակվում են, որը հիմնականում պայմանավորվել է 2022թ. զբոսաշրջիկների թվի աճով: Ընդ որում զբոսաշրջության աճին մեծ նպաստում է ունեցել ՌԴ-ի և Ուկրիանիայի միջև հակամարտության և ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների հետևանքով ՀՀ այցելող ռուս զբոսաշրջիկների թվի կտրուկ աճը: 2022թ. առաջին կիսամյակում ծառայությունների արտահանումը աճին նպաստել է նաև SS ոլորտի արտահանումը :

ՀՀ ապրանքների արտահանումը գրանցել է կտրուկ աճ. 2022թ. հունվար-օգոստոս ամիսներին աճը կազմել է 53.1%: Վերջինս հիմնականում պայմանավորվել է արտահանման որոշ շուկաներում արտաքին պահանջարկի աճով, ՀՀ դրամի՝ ռուբլու նկատմամբ իրական փոխարժեքի արժեզրկված դիրքով և ՌԴ-ում ՀՀ-ից արտահանվող ապրանքների շուկաների ընդլայնմամբ:

[6] Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, «ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումներ», զուտ ներհոսք (https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx):

Գծապատկեր 1.23. *2022թ. ապրանքների արտահանման միտումները, %*





Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հաշվարկներ:

<u>Կանխատեսում</u>: Վերոնշյալ զարգացումների պայմաններում 2022թ. սպասվում է մոտ 53.3% արտահանման աճ: Այդուհանդերձ՝ Թեղուտի հանքավայրի շահագործման ժամանակավոր դադարեցումն ապրանքների արտահանման զսպող գործոն կհանդիսանան, իսկ տուրիզմի հաշվին ծառայությունների արտահանման վերականգնումը կլինի համեմատաբար արագ: Համաշխարհային և ՀՀ տնտեսական ակտիվության, զբոսաշրջության աստիճանական վերականգնմամբ և արտահանելի հատվածի ներդրումների խթանմանն ուղղված ՀՀ կառավարության քաղաքականության ջանքերի, ՌԴ-ում ՀՀ-ից արտահանվող ապրանքների շուկաների ընդլայնման, ՏՏ ոլորտի ծառայությունների արտահանման ընդլայնմանը համահունչ 2023թ. ակնկալվում է ապրանքների և ծառայությունների արտահանման 14.3% աճ:

<u>Ներմուծում:</u> 2021թ. ապրանքների և ծառայությունների ներմուծման աճերը սկսել են վերականգնվել: Արձանագրվել է ապրանքների ներմուծման 16.6% աճ՝ հիմնականում պայմանավորված տնտեսական ակտիվությամբ և ներքին պահանջարկի վերականգնմամբ: Ծառայությունների ներմուծման աճը 2021թ. կազմել է 36.4% և հիմնականում պայմանավորվել է համավարկի հետ կապված տուրիզմի հոսքերի սահմանափակումների թուլացմամբ:

2022թ. հունվար-օգոստոս ամիսներին արձանագրվել է ապրանքների ներմուծման 58.3% աճ՝ հիմնականում պայմանավորված տնտեսական բարձր ակտիվությամբ և ներքին պահանջարկի բարձր աճով, մեքենաների և սարքավորումների ներմուծման բարձր աճի տեմպերով և ներմուծման բարձր գներով (8.7)%::

2022թ. առաջին կիսամյակի տվյալներով ծառայությունների ներմուծումը շարունակել է աճել՝ հիմնականում արտագնա զբոսաշրջության հաշվին:

Գծապատկեր 1.24. *2022թ. ապրանքների ներմուծման միտումները, %*





Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հաշվարկներ:

<u>Կանխատեսում</u>: Վերոնշյալ զարգացումների պայմաններում 2022թ. սպասվում է շուրջ 44% ներմուծման աճ: Բարձր տնտեսական աճի, երկրների միջև սահմանափակումների վերացմանը զուգընթաց զբոսաշրջության վերականգման, ինչպես նաև ներդրուների խթանմանն ուղղված ՀՀ կառավարության քաղաքականության ջանքերին համահունչ ներդրումային բնույթի ապրանքների աճի հաշվին՝ 2023թ. ներմուծման աճը կկազմի մոտ 14.3%:

Գծապարկեր 1.25. *ՀՀ ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման միտումները տնտեսական ցնցումների տարիներին և 2021-2023թթ., %*



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ:

1.3.4. Փոխարժեքներ

2021թ. ՀՀ դրամը շարունակել է արժեզրկվել՝ հիմնականում պայմանավորված առաջին կիսամյակում համավարակի և Ղարաբաղյան պատերազմի հետևանքով ձևավորված անորոշություններով: Նախորդ տարվա միջինի համեմատ դրամն արժեզրկվել է երեք հիմնական արժույթների նկատմամբ: ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ 2.9%, եվրոյի նկատմամբ՝ 6.4% և ռուբլու նկատմամբ՝ 0.7%-ով:

2022թ. հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ դրամը արժևորվել է երեք հիմնական արժույթների նկատմամբ՝ հիմնականում պայմանավորված զբոսարջության և դրամական փոխանցումների ներհոսքի բարձր աճերով: 2022թ. հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել է մոտ 453.3 ՀՀ դրամ ԱՄՆ դոլարի դիմաց՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի միջինի նկատմամբ արժևորվելով 13.5%-ով: 2022թ. հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ դրամը եվրոյի նկատմամբ արժևորվել է շուրջ 26.3%-ով՝ կազմելով 488.5 դրամ մեկ եվրոյի նկատմամբ, իսկ ռուսական ռուբլու նկատմամբ՝ 7.1%-ով՝ կազմելով 6.5 դրամ մեկ ռուբլու նկատմամբ, ինչը հիմնականում պայմանավորված է մարտ ամսին ռուբլու կտրուկ արժեզրկմամբ:

Անվանական և իրական արդյունավետ փոխարժեքի՝ տարեզկզբից նկատվող արժևորման միտումը շարունակում է պահպանվել: Այսպես, ՀՀ արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր արժույթներից բաղկացած զամբյուղի նկատմամբ ՀՀ ազգային արժույթն իրական արտահայտությամբ 2021թ. արժևորվել է 1.2%-ով, իսկ անվանական արտահայտությամբ՝ 1.4%-ով: 2022թ. հունվար-հուլիս ամիսներին ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքի արժևորումը կազմել է 19.1%, իսկ անվանականի արժևորումը՝ 23.2%՝ իր բացասական ազդեցությունը թողնելով տեղական ապրանքների արտաքին մրցունակության վրա:

Գծապատկեր 1.26. *ՀՀ դրամի անվանական փոխարժեքի օրական դինամիկան հիմնական արժույթների նկատմամբ (աճ՝ դրամի արժևորում)*
Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ



Գծապատկեր 1.27. *ՀՀ իրական և անվանական արդյունավետ փոխարժեքների կուտակային տ/տ աճերի դինամիկան (աճ՝ արժևորում)*
Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ



1.3.5. Գնաճ և դրամավարկային քաղաքականություն

2021թ.-ին գրանցվել է գնաճի զգալի արագացում, ինչի արդյունքում այն բարձր է գտնվել 4 տոկոս (±1.5) թիրախային միջակայքից: Գնաճի արագացմանը նպաստել են ինչպես առաջարկի (միջազգային ապրանքահումքային շուկաներում դրսևորված գների աճ, բեռնափոխադրումների սակագների աճ, տարվա առաջին կեսին նախորդ համադրելի ժամանակահատվածի համեմատ ՀՀ դրամի արժեզրկված դիրք), այնպես էլ՝ պահանջարկի (մասնավոր սպառման աճ, գնաճային սպասումների ավելացում) գործոնները, հանգեցնելով միջին գնաճի արագացմանը մինչև 7.2%՝ նախորդող տարվա 1.2% ցուցանիշի դիմաց: Իսկ 12-ամսյա գնաճը 2021թ.-ի դեկտեմբերին կազմել է 7.7%՝ 2020թ.-ի դեկտեմբերին գրանցված 3.7% ցուցանիշի դիմաց:

2022թ. գնաճի տեմպերը շարունակել են արագանալ: 2022թ. սկզբին գնաճը 2021թ.-ի տարեվերջի համեմատությամբ որոշակիորեն դանդաղել է, ապա՝ մարտ ամսից սկսած արագացել՝ պայմանավորված ռուս-ուկրաինական հակամարտության սրման արդյունքում միջազգային ապրանքահումքային շուկաներում դիտված գների կտրուկ աճով, ՀՀ դրամի փոփարժեքի տատանողականությամբ, գնաճային սպասումների ավելացմամբ, համախառն պահանջարկի աճով (այդ թվում՝ օտարերկյա այցելուների կտրուկ աճով պայմանավորված), ինչպես նաև կարգավորվող ծառայությունների սակագների աճի շարունակական

ազդեցությամբ: Արդյունքում 2022թ.-ի հունիսին 12 ամսյա գնաճը կազմել է 10. 3%՝ օգոստոսին նվազելով մինչև 9.1%, իսկ միջին գնաճը՝ 8.4%: Նշված ժամանակահատվածում ևս գնաճը հիմնականում պայմանավորված է եղել սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքների ապրանքախմբով (12 ամսյա գնաճին նպաստումը կազմել է 4.7%-ային կետ, իսկ միջին գնաճին՝ 4. 9%-ային կետ), միաժամանակ բարձրացել է ծառայությունների նպաստումը գնաճին:

2021թ. -ի ընթացքում ԿԲ-ն իրականացրել է զսպող քաղաքականություն՝ 2020թ. դեկտեմբերից մինչև 2021թ. դեկտեմբեր վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացնելով 3.5 տոկոսային կետով և հասցնելով 7.75%-ի: Տոկոսադրույքի բարձրացմամբ ԿԲ-ն արձագանքել է մի կողմից ներքին տնտեսությունում, մյուս կողմից՝ միջազգային պարենային շուկաներում գնաճային զարգացումներին և գնաճային սպասումների ավելացմանը:

2022թ. հունվար–օգոստոս ամիսներին ՀՀ ԿԲ-ն շարունակել է բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը ընդհանուր առմամբ 1.5 տոկոսային կետով՝ արձագանքելով ռուս-ուկրաինական ռազմական հակամարտության արդյունքում միջազգային ապրանքահումքային շուկաներում գնաճի նոր ալիքի հետևանքով առաջացած գնաճային սպասումների աճին և ներքին պահանջարկի բարձր աճի հետևանքով ձևավորվող գնաճային ճնշումներին :

<u>Կանխատեսում.</u> 2022թ. 12-ամսա գնաճը կգերազանցի թիրախային միջակայքը՝ կազմելով 8.5%, իսկ միջին գնաճը կկազմի 8.1%: Միջնաժամկետ հատվածում, իրականացվող դրամավարկային քաղաքականության և աստիճանաբար մեղմվող ամբողջական պահանջարկի պարագայում գնաճը, կարճաժամկետ հատվածում մնալով թիրախից բարձր մակարդակում, կսկսի աստիճանաբար նվազել՝ 2023 թ. ընթացքում մոտենալով իր նպատակային ցուցանիշին:

Կանխատեսվող հորիզոնում գնաճի կանխատեսված հետագծից շեղման ռիսկերը հավասարակշռված են, և դրանց ցանկացած դրսևորման դեպքում ԿԲ-ն պատրաստ է համապատասխանորեն արձագանքելու՝ միջնաժամկետ հատվածում գների կայունության նպատակի իրագործումն ապահովելու համար[7]:

Գծապատկեր 1.28. Սպառողական գների աճը, դրամավարկային քաղաքականության հիմնական ցուցանիշները 2019-2022թթ. և գնաճի կանխատեսումները միջնաժամկետ հատվածում

[7] *Տե՛ս Գնաճի հաշվետվություն, 2022/2, ՀՀ ԿԲ, https://www.cba.am/am/SitePages/ainflationreport.aspx:*



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

1.4. ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2023թ. պետական բյուջեի մակրոտնտեսական շրջանակի կանխատեսումներն իրականացվել են ՀՀ ՖՆ կողմից՝ կիրառելով տնտեսաչափական մոդելներ, և առանձին շոկերի և հարկաբյուջետային միջոցառումների ազդեցությունների գնահատման համար՝ ՀՀ ՖՆ Արարատ հարկաբյուջետային ռազմավարության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (Ararat Fiscal Strategy Model) մոդելը[8], որոնց համար տեղեկատվական հիմք են հանդիսացել նեքին և արտաքին ընթացիկ տնտեսական և ֆինանսական զարգացումները, նախատեսվող հարկաբյուջետային միջոցառումների վերաբերյալ առկան տեղեկատվությունը, ինչպես նաև ՀՀ գործընկեր երկրների տնտեսական զարգացումների և հումքային ապրանքների համաշխարհային գների միջազգային կառույցների կողմից արված կանխատեսումները: Բացի այդ հաշվի են առնվել ռուս-ուկրաինական հակամարտության

[8] ՀՀ ֆինանսների նախարարության Արարատ հարկաբյուջետային ռազմավարության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդելը մշակվել է 2018-2020թթ. ընթացքում՝ ԱՄՀ կողմից տրամադրված տեխնիկական աջակցության շրջանակներում: Առավել մանրամասն տե՛ս ՀՀ կառավարության 2021թ. բյուջետային ուղերձ, Երևան 2020, էջ՝ 84, ներդիր 2: Մոդելը և կիրառությունները նկարագրող ամբողջական աշխատանքային փաստաթուղթը տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.imf.org/en/Publications/WP/Issues/2022/06/10/The-Ararat-Fiscal-Strategy-Model-A-Structural-Framework-for-Fiscal-Policy-Analysis-in-519522:

պայմաններում 2022թ. ընթացքում առաջացած ՌԴ-ից փոխանցվող ազդեցությունների և զարգացումների առանձնահատկությունները: Մասնավորապես՝

1. **Արտաքին գործոններ.**

- Համավարակից հետո համաշխարհային տնտեսության վերականգմանը զուգընթաց ընթացիկ տարվա փետրվար ամսից սկիզբ առած ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով ՀՀ գործընկեր երկրներում կարձանագրվի տնտեսական աճի տեմպերի դանդաղում: Այս պայմաններում 2022թ. հուլիս ամսվա ԱՄՀ կանխատեսումների համաձայն 2022թ. ՀՀ հիմնական գործընկեր երկրների արտաքին պահանջարկը (առանց ՌԴ) կաճի 2.8%-ով[9]՝ նախորդ՝ ընթացիկ տարվա ապրիլ ամսվա 3.4% աճի կանխատեսումների փոխարեն: Կանխատեսումների համաձայն 2023թ. ՀՀ հիմնական գործընկեր երկրներում կշարունակվի աճի տեմպերի դանդաղումը ՝ մնալով նախաճգնաժամային պոտենցիալներից ցածր մակարդակում: Ռուսաստանում և՛ 2022թ., և՛ 2023թ. սպասվում է խորը տնտեսական անկում:

- 2022թ. սպասվում է պղնձի միջազգային գների անկում և նավթի գների բարձր աճ: Նավթի գնի աճը պայմանավորված է հիմնականում ռուս-ուկրաիանական հակամարտությամբ ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների հետևանքով ՌԴ-ից մատակարարման շղթաների խափանումներով: Ըստ «Բլումբերգ» միջազգային հեղինակավոր կազմակերպության օգոստոսի դրությամբ ամփոփած կանխատեսումների 2022թ. նավթի միջազգային գները կաճեն շուրջ 45%-ով: Իսկ պղնձի գները կնվազեն 4.5%-ով, պայմանավորված Չինաստանի կողմից պահանջարկի նվազմամբ: 2023թ. նավթի և պղնձի գները կնվազեն համապատասխանաբար՝ 12% և 9%-ով:

- Պատժամիջոցների հետևանքով որոշ երկրներից ՌԴ ներմուծման շուկայի սահմանափակումների արդյունքում տեղի է ունենում ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացում: Ստեղծված պայմաններում 2022թ. սպասվում է, որ դեպի ՌԴ ապրանքների արտահանումը դոլարային արտահայտությամբ կաճի շուրջ 55%, իսկ 2023թ. դրական զարգացումների պահպանման պայմաններում կանխատեսվում է շուրջ 20% աճ:

- Աշխարհում համավարակի սահմանափակումների թուլացման և աստիճանական վերացման արդյունքում տեղի է ունենում տուրիզմի վերականգնում: Ենթադրվում է, որ ՀՀ ծառայությունների արտահանման վերականգնումը կլինի առաջանցիկ ներմուծման համեմատ՝ պայմանավորված լինելով ՌԴ նկատմամբ կիրառվող պատժամիջոցների հետևանքով ռուս զբոսաշրջիկների մեծ ներհոսքով: 2022թ. համար սպասվում է զբոսաշրջիկների շուրջ 1.8 անգամ ավելացում, պայմանավորված հիմնականում ՌԴ զբոսաշրջիկների 2.1 անգամ ավելացմամբ: Կանխատեսումների համաձայն 2023թ. դեպի ՀՀ զբոսաշրջիկների թիվը կաճի 14.6%-ով:

---

[9] ՀՀ գործընկեր երկրների արտաքին պահանաջարկի ցուցանիշը ՀՀ ՖՆ գնահատականն է, որը հաշվարկվել է որպես ԱՄՆ-ի, Չինաստանի և Եվրոգոտու տնտեսական աճերի կշռված միջին՝ ՀՀ արտահանման կառուցվածքին համապատասխան: ՀՀ գործընկեր երկրների տնտեսական աճերի 2022 և 2023 թթ. ԱՄՀ կողմից հրապարակված կանխատեսումները ներկայացված են Աղյուսակ 1.2.-ում

- 2022թ. սպասվում է դրամական փոխանցումների բարձր աճ՝ հիմնականում պայմանավորված ռուս-ուկրաինական հակամարտության արդյունքում ՌԴ-ից դրամական փոխանցումների կտրուկ ավելացմամբ, այլ երկրներից դեպի Հայաստան դրամական փոխանցումները նույնպես կաճեն: Կանխատեսումների համաձայն 2023թ. դրամական փոխանցումները կաճեն շուրջ 4%-ով:
- ՌԴ դեմ կիրառված պատժամիջոցների արդյունքում ՌԴ-ից դեպի Հայաստան տեղափոխված SS ոլորտի ընկերությունների և աշխատակիցների որոշ մասը 2023թ. ընթացքում կմնան Հայաստանում:

2. **COVID-19 համավարակային իրավիճակ:** Ներկայումս համավարակի էական բացասական ազդեցություններ նկատելի չեն, իսկ 2023թ. լրացուցիչ բացասական ազդեցություններ չեն սպասվում:

3. **Կառավարության 2021-2026թթ. ծրագրից բխող թիրախներ և գործողություններ:** ՀՀ կառավարության ծրագրում նպատակարդված թիրախներին համահունչ 2023թ. տնտեսական աճի կանխատեսումների հիմքում դրվել է հետևյալ ենթադրությունները.
    - Գործարար միջավայրի բարելավման արդյունքում մասնավոր ներդրումների, այդ թվում օտարերկրյա ուղղակի ներդրումների մակարդակի բարձրացում,
    - Ենթակառուցվածքներում, տնտեսության արտադրողական ոլորտներում մեծածավալ պետական կապիտալ ներդրումների թիրախավորված իրականացում,
    - Տնտեսության արտահանելի հատվածի և արտահանման խթանմանն ուղղված քաղաքականության արդյունքում արտահանման ծավալների մեծացում,
    - Բարձր տեխնոլոգիական առաջընթացի ապահովմանն ուղղված քաղաքականության իրականացման արդյունքում մրցակցության և արտադրողականության բարձրացում:

4. **Տնտեսության ներուժ և պարբերաշրջաններ:** 2020թ. համավարակի և Ղարաբաղյան պատերազմի հետևանքով առաջացած տնտեսական անկման պայմաններում ՀՀ տնտեսությունը կրել է ոչ միայն ցիկլային բացասական զարգացումներ, այլ նաև նվազել են տնտեսության ներուժը և ներուժային աճը, պայմանավորված ինչպես արտադրողականության անկմամբ, այնպես էլ արտադրական գործոնների՝ աշխատուժի և կապիտալի ներուժային մակարդակների նվազմամբ: 2021թ. ՀՀ տնտեսությունը գտնվել է վերականգման փուլում՝ դեռևս մնալով բացասական ցիկլի տիրույթում:
2022 թ. ընթացիկ դրական զարգացումների պայմաններում ՀՀ տնտեսությունը կգտնվի ներուժային մակարդակից ավելի բարձր դիրքում՝ մտնելով դրական ճեղքի տիրույթ, ՀՀ կառավարության թիրախավորած 7% տնտեսական աճի ապահովման պայմաններում 2023թ. ՀՀ տնտեսությունը կշարունակի մնալ դրական ճեղքի տիրույթում: Միաժամանակ պետական կապիտալ ծախսերի մակարդակի թիրախային բարձրացման և արտահանման առաջանցիկ աճի պայմաններում, ինչպես նաև ՀՀ տեղափոխված SS ոլորտի ընկերությունների և աշխատակիցների գործունեության արդյունքում ներուժային աճը կբարձրանա:

5.Հարկաբյուջետային քաղաքականություն. 2023թ. մակրոտնտեսական կանխատեսումների հիմքում դրվել է հարկաբյուջետային քաղաքականության հետևյալ ենթադրությունները.

- 2023 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունը ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրին համահունչ ուղղված կլինի թիրախավորված 7% տնտեսական աճի ապահովմանը՝ շեշտադրելով պետական ներդրումների մասնաբաժնի էական մեծացումը (կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում հասցնելով 5.9%-ի), ընթացիկ ծախսերի կշռի նվազումը և ծախսերի իրականացման արդյունավետության բարձրացումը: Ընդ որում հարկաբյուջետային քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա 2023թ. կունենա չեզոք ազդեցություն:
- 2023 թվականին բարձր տնտեսական աճի պայմաններում, կառավարությունը նախատեսում է իրականացնել հարկային վարչարարության բարելավմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև հարկային օրենսդրության բարեփոխումներ, որոնց արդյունքում ակնկալվում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության շուրջ 0.5 տոկոսային կետով բարելավում: Հարկային օրենսդրության բարեփոխումները ներառում են ակցիզային հարկի դրույքաչափի բարձրացումը, եկամտային հարկի դրույքաչափի ևս 1 տոկոսային կետով նվազումը, կուտակային կենսաթոշակային համակարգում աշխատողների մասնակցության դրույքաչափի բարձրացումը:
- Տնեսության խթանման և գնաճային ճնշումների պայմաններում սոցիալական իրավիճակի բարելավման նպատակով 2023թ. կառավարությունը նախատեսում է նաև իրականացնել ծախսային միջոցառումներ: Մասնավորապես, նախատեսվում է տնտեսական արդիականացման ծրագրի շրջանակներում խթանել մասնավոր հատվածի ներդրումները (մասնավորապես՝ մեքենա-սարքավորումների ձեռքբերումը), ավելացնել գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող սուբսիդիաների ծավալը, ինչպես նաև բարձրացնել կենսաթոշակները և այլ սոցիալական ծախսերը:

6. Գնաճ և դրամավարկային քաղաքականություն.

- 2022թ. 12-ամսա գնաճը կգերազանցի թիրախային միջակայքը՝ կազմելով 8.5%, իսկ միջին գնաճը կկազմի 8.1%: Միջնաժամկետ հատվածում, իրականացվող դրամավարկային քաղաքականության և աստիճանաբար մեղմվող ամբողջական պահանջարկի պարագայում գնաճը, կարճաժամկետ հատվածում մնալով թիրախից բարձր մակարդակում, կսկսի աստիճանաբար նվազել՝ 2023 թ. ընթացքում մոտենալով իր նպատակային ցուցանիշին:
- Տնտեսական հեռանկարի հետ կապված անորոշության և գնաճային սպասումների ավելացման ռիսկերի դրսևորման պարագայում ԿԲ-ն պատրաստ է համապատասխանորեն արձագանքել՝ նպատակ ունենալով ապահովել գների կայունացումը թիրախի շուրջ:

1.5. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԸ

Կանխատեսման առկա ռիսկերը պայմանավորվում են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին տնտեսական գործոններով, որոնք կարող են հանգեցնել ինչպես տնտեսական աճի տեմպերի ավելացմանը, այնպես էլ նվազմանը՝ ներկայացված կենտրոնական կանխատեսումների համեմատ: Ռիսկերի տեղի ունենալու դեպքում շեղումներ կարձանագրվեն սույն փաստաթղթի 1.4 բաժնում ներկայացված ենթադրություններից՝ հանգեցնելով մակրոտնտեսական կանխատեսումներից շեղումների և դրա հետևանքով էլ հարկաբյուջետային շրջանակի ցուցանիշների շեղման այս պետական բյուջեի շրջանակից:

COVID-19 համավարակի հետևանքները դեռ չհաղթահարած տարածաշրջանը բախվեց ռուս-ուկրաինական հակամարտության առաջացրած աշխարհաքաղաքական և տնտեսական մարտահրավերներին, ինչի բացասական հետևանքներն արդեն տեսանելի են ոչ միայն տարածաշրջանում, այլ նաև ամբողջ աշխարհում, այդ թվում՝ ՀՀ համար Ռուսաստանից հետո երկրորդ ամենամեծ առևտրային գործընկեր՝ Եվրագոտու երկրներում: Ռուս-ուկրաինական հակամարտությունը և Ռուսաստանի դեմ կիրառված աննախադեպ պատժամիջոցները դեռ համավարակից չսթափված աշխարհում ստեղծել են նոր իրականություն, որի պայմաններում ինչպես աշխարհի և ՀՀ գործընկեր երկրների, այնպես էլ ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները իրենց մեջ կրում են մեծ անորոշություն:

Վերոնշյալ իրողությունների պայմաններում 2023թ. համար ՀՀ կառավարության թիրախավորած 7% տնտեսական աճի շուրջ առկա են անորոշություններ:

1.5.1. ՀՀ տնտեսական աճի դեպի ներքև ուղղությամբ ռիսկեր

Արտաքին միջավայրից բխող դեպի ներքև ռիսկերը պայմանվորված են՝

- Ռուս-ուկրաինական հակամարտության պայմաններում համաշխարհային տնտեսության, մասնավորապես ՀՀ գործընկեր երկրների տնտեսական աճերի սպասվածից ավելի վատ դրսևորումներով,
- Համաշխարհային արժեշղթաների խաթարման և պարենային ապրանքների վրա արտահանման սահմանափակումների պայմաններում արտաքին աշխարհից ներթափանցող սպասվածից առավել գնաճային ճնշումներով,
- ՀՀ հիմնական գործընկեր երկրներում գնաճային ճնշումների պայմաններում դրամավարկային պայմանների սպասվածից առավել խստացման արդյունքում տնտեսական աճերի դանդաղմամբ, զարգացած երկրներում տոկոսադրույքների սպասվածից առավել բարձրացման պայմաններում ՀՀ-ից կապիտալի զուտ արտահոսքի և մասնավոր հատվածի և կառավարության արտաքին պարտքով պակասուրդների ֆինանսավորման թանկացմամբ,
- ՀՀ ապրանքների արտահանման մատակարարումների լոգիստիկ խնդիրների խորացմամբ,
- COVID-19 համավարակի տարածման անորոշություններով,

- ՌԴ-ից մարդկանց և կապիտալի սպասվածից ավելի քիչ հոսքերով, ինչպես նաև ՀՀ տեղափոխված ՏՏ ոլորտի ընկերությունների և աշխատակիցների ՀՀ-ում մնալու անորոշություններով,
- Աշխարհաքաղաքական իրավիճակով, այդ թվում՝ տարածաշրջանային ռազմական հակամարտությունների առկայությամբ:

Ներքին միջավայրից բխող դեպի ներքև ռիսկերը պայմանավորված են՝

- ՀՀ դրամի փոխարժեքի սպասվածից առավել արժևորման ռիսկերով պայմանավորված արտահանման հնարավոր դանդաղմամբ, դոլարային դրամական փոխանցումների ցածր գնողունակությամբ,
- Գնաճային սպասումների հնարավոր ավելացման պայմաններում ԿԲ սպասվածից առավել խիստ դրամավարկային քաղաքականության իրականացմամբ,
- Կանխատեսվածից բարձր գնաճային ճնշումների արդյունքում բնակչության իրական եկամուտների նվազմամբ,
- Պետական կապիտալ ծախսերի հնարավոր թերակատարմամբ,
- ՀՀ կառավարության կառուցվածքային բարեփոխումների, ներդրումների խթանման և տնտեսության արդիականացմանն ուղղված քաղաքականությունների ակնկալվող արդյունքների սպասվածից ավելի ուշ արտահայտմամբ,
- Բնակլիմայական անբարենպաստ պայմանների շարունակական դրսևորման հետևանքով գյուղատնտեսության ճյուղում հնարավոր ավելի ցածր աճի արձանագրմամբ:

1.5.2. Տնտեսական աճի դեպի վերև ուղղությամբ ռիսկեր

Արտաքին գործոններից բխող դեպի վերև ռիսկերը պայմանավորված են՝

- Ռուսատանի նկատմամբ արևմուտքի կողմից կիրառվող պատժամիջոցների արդյունքում ՀՀ տնտեսության համար ստեղծված նոր հնարավորությունների մեծացմամբ. մասնավորապես, Ռուսաստանի դեմ կիրառված աննախադեպ տարաբնույթ պատժամիջոցների պայմաններում Հայաստանը՝ որպես առևտրային, լոգիստիկ և ֆինանսական հանգույց ծառայելու առավել մեծ հնարավորությամբ,
- ՌԴ տնտեսության ավելի արագ վերականգնմամբ, քան կանխատեսումներում արված ենթադրություններն են,
- Ռուսաստանից դեպի Հայաստան կապիտալի և ՏՏ ոլորտի ընկերությունների սպասվածից առավել մեծ ներհոսքով,
- COVID-19 համավարակի հաղթահարման պայմաններում համաշխարհային տուրիզմի՝ սպասվածից ավելի շուտ վերականգմամբ,
- ՀՀ գործընկեր երկրների խաթարված մատակարարման շղթաների արագ վերականգնմամբ,
- ՌԴ-ից դեպի Հայաստան դրամական փոխանցումների սպասվածից ավելի բարձր աճով:

Ներքին միջավայրից բխող դեպի վերև ռիսկերը պայմանավորված են՝

- ՀՀ կառավարության Տնտեսական արձագանքման ծրագրով[10] նախատեսված խոշոր մասնավոր ներդրումային ծրագրերի իրականացմամբ,
- Մասնավոր ներդրումների խթանմանն ուղղված ծրագրի (ANIF) իրականացման՝ տնտեսական ակտիվության վրա հնարավոր լրացուցիչ դրական ազդեցությամբ,
- Թեղուտի և Ամուլսարի հանքավայրերի հնարավոր, ոչ տնտեսական ռիսկերով ապահովագրված, շահագործումից բխող տնտեսական ակտիվության արագացմամբ:
- Հիփոթեքային վարկերի տոկոսավճարների եկամտահարկից վերադարձման պետական աջակցության ծրագրի աստիճանական Երևան քաղաքից դուրսբերման արդյունքում բնակարանային շինարարության սպասվածից ավելի բարձ աճերով:

Գծապատկեր 1.29. *Իրական ՀՆԱ աճի կանխատեսման հավանականությունների բաշխումը (Fan Chart)*



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ գնահատումներ և կանխատեսումներ

Աղյուսակ 1.4. *Իրական ՀՆԱ-ի աճի կանխատեսման հավանականությունների բաշխումը, (կուտակային)*[11]

---

[10] *Տե՛ս «Տնտեսական արձագանքման ծրագիրը և գործողությունների պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 4-ի թիվ 142-Լ որոշում, հավելված 1:*

[11] *Աղյուսակի 1-ին սյունը իրենից ներկայացնում է տնտեսական աճի հնարավոր միջակայքերը, իսկ 2-ից 5-րդ սյուները՝ համապատասխան միջակայքերում տնտեսական աճի գտնվելու հավանականությունները: Աղյուսակում*

Տնտեսական աճի միջակայքը, %	Տնտեսական աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը, %			
	2023 I եռ.	2023 II եռ.	2023 III եռ.	2024 IV եռ.
2-4	10.9	12.8	13.7	14.4
4-6	22.8	23.9	24.4	24.7
6-8	**31.4**	**30.4**	**29.7**	**29.2**
8-10	23.6	20.8	19.4	18.5

Ինչպես երևում է Գծապատկեր 1.29-ից, 2023թ. տնտեսական աճի ձևավորման ամենաբարձր հավանականությունը գտնվում է 6-8% միջակայքում (Աղյուսակ 1.4-ում այն հոծ նշումով է), իսկ իրական ՀՆԱ-ի տարեկան աճի կենտրոնական կանխատեսումներից շեղման ռիսկերը ուղղված են դեպի ներքև:

ներկայացվել են տնտեսական աճի ամենահավանական միջակայքերը, որոնք միասին ծածկում են բաշխման ընդհանուր հավանականության շուրջ 88%-ը, այսինքն՝ հավանականությունը, որ տնտեսական աճը կգտնվի 2%-ից 10% միջակայքում, կազմում է մոտ 88%:

1.6. ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ՆԱԽՈՐԴ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

Աղյուսակ 1.5. ՀՆԱ-ի կանխատեսումները 2023-2025 թթ. ՄԺԾԾ-ով և 2022թ. և 2023թ. պետական բյուջեներով

Ցուցանիշներ	Ծրագիր	2021	2022	2023
		փաստ/կանխ.*	*կանխ.*	*կանխ.*
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	*2023 Պետական բյուջե*	6,983.0	8,293.7	9,317.9
	2023-2025 ՄԺԾԾ	6,983.0	8,069.5	9,066.1
	2022 Պետական բյուջե	7,031.2	7,869.4	-
Տնտեսական (իրական ՀՆԱ-ի) աճ, %	*2023 Պետական բյուջե*	5.7	11.0	7.0
	2023-2025 ՄԺԾԾ	5.7	7.0	7.0
	2022 Պետական բյուջե	6.5	7.0	-
ՀՆԱ-ի դեֆլյատորի աճ, %	*2023 Պետական բյուջե*	6.9	7.0	5.0
	2023-2025 ՄԺԾԾ	6.9	8.0	5.0
	2022 Պետական բյուջե	6.8	4.6	-

**** 2023-2025 ՄԺԾԾ և 2023 պետական բյուջեի համար 2021թ. ցուցանիշները փաստացի են***

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ կանխատեսումներ

Աղյուսակ 1.6. Ընթացիկ հաշվի կանխատեսումները 2023-2025թթ. ՄԺԾԾ-ով, 2022թ. և 2023թ. պետական բյուջեներով

Ցուցանիշներ	Ծրագիր	2021	2022	2023
		փաստ/կանխ.*	*կանխ.*	*կանխ.*
Ընթացիկ հաշիվ, մլն ԱՄՆ դոլար	*2023 Պետական բյուջե*	-515.1	-768.9	-1,213.7
	2023-2025 ՄԺԾԾ	-511.3	-741.5	-1,159.5
	2022 Պետական բյուջե	-241.8	-455.6	-
Ընթացիկ հաշիվ, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*2023 պետկան բյուջե*	-3.7	-4.2	-5.7
	2023-2025 ՄԺԾԾ	-3.8	-4.5	-6.4
	2022 Պետական բյուջե	-1.7	-3.0	-

**** 2023-2025 ՄԺԾԾ և 2023 պետական բյուջեի համար 2021թ. ցուցանիշները փաստացի են***

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ կանխատեսումներ

ՄԱՍ Ի-Գ. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

2.1. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

- 2021 թվականին տնտեսության վերականգնման պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության նպատակն է եղել ապահովել հարկաբյուջետային կայունությունը՝ միաժամանակ աջակցելով տնտեսական վերականգնմանը և պայմաններ ստեղծել ՀՀ կառավարության պարտքի նվազման համար: Այդ նպատակով, ՀՀ կառավարությունը, կիրառելով հարկաբյուջետային կանոններով սահմանված «բացառիկ դեպքերի» կարգավորումները, իրականացրել է հակապարբերաշրջանային հարկաբյուջետային քաղաքականություն, ինչի արդյունքում 2021 թվականին բյուջեի պակասուրդը նվազել է՝ մնալով պատմականից բարձր մակարդակում, իսկ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 60.3%՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 3.2 տոկոսային կետով:
- 2022 թվականի առաջին կիսամյակում բարձր տնտեսական աճի պայմաններում հարկաբյուջետային քաղաքականությունն ամբողջական պահանջարկի վրա ունեցել է էական զսպող ազդեցություն: Սպասվում է, որ բարձր տնտեսական աճի տեմպը կպահպանվի մինչև տարեվերջ, իսկ հարկաբյուջետային քաղաքականության զսպող ազդեցությունը կպահպանվի:
- 2022 թվականի առաջին ութ ամիսներին հարկման բազաների բարձր աճի և 2021 թվականի հարկային օրենսդրության փոփոխությունների պայմաններում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներն աճել են բարձր տեմպերով՝ շուրջ 25.2%-ով: Այդ պայմաններում, 2022թ. հարկային եկամուտների սպասվող ցուցաիշը ճշգրտվել է դեպի վեր՝ հասնելով 1,920 մլրդ դրամի, որի պայմաններում հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը նախորդ տարվա համեմատ կբարելավվի 0.5 տոկոսային կետով՝ հասնելով 23.2%-ի:
- 2023 թվականին բարձր տնտեսական աճի պայմաններում, կառավարությունը նախատեսում է իրականացնել հարկային վարչարարության բարելավմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև հարկային օրենսդրության բարեփոխումներ: Վերջիններիս արդյունքում ակնկալվում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության շուրջ 0.5 տոկոսային կետով բարելավում:
- 2023 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունը ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրին համահունչ ուղղված կլինի թիրախավորված 7% տնտեսական աճի ապահովմանը՝ շեշտադրելով պետական ներդրումների մասնաբաժնի էական մեծացումը (կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում հասցնելով 5.9%-ի) և ծախսերի իրականացման արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև՝ պարտքի կայունության պահպանմանը: Ընդ որում հարկաբյուջետային քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա 2023թ. կունենա չեզոք ազդեցություն և միաժամանակ կխթանի ներուժային տնտեսական աճը:

- Տնտեսական աճի բարձր տեմպի ապահովման ռիսկերի առարկայացման, ինչպես նաև մակրոտնտեսական մյուս ցուցանիշների կանխատեսումների շեղումների պարագայում կարող են առաջանալ պետական բյուջեի հարկային եկամուտների՝ կանխատեսված մակարդակից դեպի ներքև շեղման, ինչպես նաև ծախսերի՝ դեպի վերև շեղման ռիսկեր, ինչի պայմաններում կառաջանա լրացուցիչ ֆինանսավորման կարիք, որը կարող է բավարարվել պահուստային ֆոնդի հաշվին: Բացի այդ, առկա են անորոշություններ նաև ՀՀ կառավարության պարտքի բեռի շուրջ, որոնց առարկայացումը պարտքի կայունության էական ռիսկեր չի ստեղծի: :

Աղյուսակ 2.1. *2023թ. պետական բյուջեի հարկաբյուջետային շրջանակ*

	2019	2020	2021	2022	2023
մլրդ դրամ	Փաստացի			Սպասում	Բյուջե
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
Պետական բյուջեի եկամուտներ	**1,565.5**	**1,560.7**	**1,683.8**	**2,042.5**	**2,302.0**
Հարկային եկամուտներ և տուրքեր	1,464.3	1,385.2	1,586.9	1,920.0	2,203.7
Պետական բյուջեի ծախսեր	**1,629.4**	**1,894.6**	**2,004.3**	**2,246.7**	**2,591.0**
Ընթացիկ ծախսեր	1,437.1	1,668.5	1,788.0	1,857.0	2,043.3
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	192.3	226.2	216.3	389.7	547.7
Պետական բյուջեի պակասուրդ(-) / պրոֆիցիտ (+)	**-64.0**	**-334.0**	**-320.5**	**-204.2**	**-288.9**
Կառավարության պարտք	**3,277.3**	**3,923.9**	**4,209.8**	**4,232.0**	**4,625.0**
կշիռը ՀՆԱ-ում, %					
Պետական բյուջեի եկամուտներ	**23.9**	**25.2**	**24.1**	**24.6**	**24.7**
Հարկային եկամուտներ և տուրքեր	22.3	22.4	22.7	23.2	23.7
Պետական բյուջեի ծախսեր	**24.9**	**30.6**	**28.7**	**27.1**	**27.8**
Ընթացիկ ծախսեր	22.0	27.0	25.6	22.4	21.9
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	2.9	3.7	3.1	4.7	5.9
Պետական բյուջեի պակասուրդ(-) / պրոֆիցիտ (+)	**-1.0**	**-5.4**	**-4.6**	**-2.5**	**-3.1**
Կառավարության պարտք	**50.1**	**63.5**	**60.3**	**51.0**	**49.6**

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ կանխատեսումներ

2.2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

2021 թվականի զարգացումները

2021 թվականին հարկաբյուջետային քաղաքականության նպատակներն են եղել հարկաբյուջետային կայունության ապահովումը, նպաստումը տնտեսական վերականգնմանը և COVID-19 համավարակի ու Ղարաբաղյան պատերազմի հետևանքների էական մեղմումը: Մասնավորապես, հարկաբյուջետային դիրքը եղել է խթանող, սակայն այն 2020 թվականի համեմատությամբ նվազել է, ինչի արդյունքում, պլանավորված ուղղությանը համահունչ, հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա (դիրքի փոփոխություն կամ ազդակ) եղել է զսպող:

Պետական բյուջեի եկամուտները: 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի եկամուտներն աճել են՝ պայմանավորված տնտեսության վերականգնման և հարկային օրենսդրության փոփոխությունների արդյունքում հարկային եկամուտների աճով: 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 1,683.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 7.9%-ով և ՀՆԱ-ի նկատմամբ կազմելով 24.1%-ը՝ նախորդ տարվա 25.2%-ի դիմաց (նվազման պատճառը այլ եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների նվազումն է): Հարկեր և տուրքերը նույն ժամանակահատվածում կազմել են 1,586.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 14.6%-ով՝ պայմանավորված հիմնականում հարկման բազաների (հիմնականում սպառման և ներմուծման) վերականգնմամբ, ինչպես նաև դրոշմանիշային վճարի և արտահանման տուրքի ներդրմամբ: Այս պայմաններում հարկեր և տուրքերը կազմել են ՀՆԱ-ի 22.7%, նախորդ տարվա նկատմամբ բարելավվելով 0.3 տոկոսային կետով:

Պետական բյուջեի ծախսերը: 2021 թվականին արձանագրվել է պետական բյուջեի ծախսերի աճ՝ հիմնականում պայմանավորված ընթացիկ ծախսերի աճով: 2021 թվականի արդյունքներով պետական բյուջեի ծախսերը կազմել են 2,004.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 5.8%-ով: Ընդ որում, ընթացիկ ծախսերը կազմել են 1,788.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 7.2%-ով, որն իր մեջ ներառում է Ղարաբաղյան պատերազմի հետևանքների մեղմմանն ուղղված ծախսերը, կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված հակաճգնաժամային ծրագրերի տնտեսական միջոցառումների իրականացումը և առողջապահությանն ուղղված լրացուցիչ ծախսերը[12]: Պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2020 թվականի նկատմամբ նվազել է 1.9 տոկոսային կետով՝ կազմելով 28.7%, որում ընթացիկ ծախսերի կշիռը նվազել է 1.4 տոկոսային կետով՝ կազմելով 25.6%:

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 216.3 մլրդ դրամ, որում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսեր) կազմել են 218.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 4.1%-ով, որի հիմնական պատճառը 2020 թվականին Ղարաբաղյան պատերազմով պայմանավորված ռազմական լրացուցիչ ծախսերի իրականացումն է, առանց որոնց կապիտալ ծախսերի աճը կկազեր շուրջ 26.0%: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների կշիռը ՀՆԱ-ում նվազել է 0.6 տոկոսային

[12] 2021 թվականի հակաճգնաժամային միջոցառումների ծախսերի ուղղությունների և ծավալների մասը տես՝ 2021 թվականի պետական բյուջեի տարեկան հաշվետվության «2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ» բաժնի «ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումները» ենթաբաժնում

կետով՝ կազմելով 3.1%: Միևնույն ժամանակ, կապիտալ ծախսերի թերակատարման խնդիրը որոշակի մեղմվել է, և կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 92.5%՝ նախորդ տարվա 84.9%-ի համեմատ բարելավվելով 7.6 տոկոսային կետով:

Պետական բյուջեի պակասուրդը և կառավարության պարտքը: 2021 թվականի տնտեսական վերականգնումը և հարկաբյուջետային քաղաքականության ջանքերը թույլ են տվել ապահովելու ՀՆԱ համեմատությամբ պետական բյուջեի պակասուրդի և կառավարության պարտքի որոշակի նվազում: 2021 թվականի ընթացքում ձևավորվել է պետական բյուջեի 320.5 մլրդ դրամ դեֆիցիտ՝ նախորդ տարվա 334.0 մլրդ դրամի համեմատ: ՀՆԱ-ի նկատմամբ, պետական բյուջեի պակասուրդը կազմել է 4.6%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.8 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 60.3%՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 3.2 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժևորմամբ, տնտեսական աճով և իրական տոկոսադրույքի նվազմամբ (անվանական տոկոսադրույքի նվազման և գնաճի արագացման պատճառով):

Հարկաբյուջետային դիրքը և ազդակը: Համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը 2021 թվականին նախորդ տարվա նկատմամբ ունեցել է 1.6 զսպող ազդեցություն՝ պայմանավորված և՛ եկամուտների (0.5), և՛ ծախսերի զսպող (1.2) ազդեցություններով:

<u>2022թ. ընթացիկ զարգացումներ</u>

2022 թվականի առաջին ութ ամիսներին տնտեսական բարձր աճի պայմաններում և հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա եղել է սզպող: Միևնույն ժամանակ, կառավարության կողմից նախաձեռվել են միջոցառումներ արտաքին շոկերի արդյունքում տնտեսության առանձին հատվածների խթանման, ինչպես նաև սոցիալական աջակցության ուղղությամբ:

Պետական բյուջեի եկամուտները: **2022 թվականի առաջին ութ ամիսներին ՀՀ պետական բյուջեի եկամուտներն աճել են բարձր տեմպերով՝ պայմանավորված բարձր տնտեսական աճով և գնաճով, ինչպես նաև հարկային օրենսդրության փոփոխություններով:** Ընդ որում, առաջին ութ ամիսներին տնտեսական ակտիվության տեմպերի արագացմանը զուգընթաց, հարկերի հավաքագրման բարձր աճի տեմպերը պահպանվել են ամբողջ ժամանակահատվածի ընթացքում: 2022 թվականի հունվար-օգոստոս ամիսների արդյունքներով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 1,311.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 26.1%-ով, իսկ հարկերը և տուրքերը կազմել են 1,232.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 25.2%-ով: Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է հարկման բազաների (հիմնականում սպառման և ներմուծման, ինչպես նաև շահույթների և աշխատավարձերի) աճի, ինչպես նաև 2021 թվականի հարկային օրենսդրության բարեփոխումներով, մասնավորապես՝ մետաղական հանքանյութերի արտահանման տուրքի ներդրմամբ:

Գծապատկեր 2.1 Պետական բյուջեի հարկային եկամուտները 2021-2022 թվականներին ըստ ամիսների



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

Պետական բյուջեի ծախսերը: **Պետական բյուջեի ծախսերը 2022 թվականի առաջին ութ ամիսներին աճել են՝ պայմանավորված ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի աճերով:** 2022 թվականի ութ ամիսներին պետական բյուջեի ծախսերը կազմել են 1,258.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 6.3%-ով: Նույն ժամանակահատվածում ընթացիկ ծախսերը կազմել են 1,111.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 2.9%-ով:

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 146.6 մլրդ դրամ, որում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսեր) կազմել են 151.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 45.0%-ով, որում էական դեր ունեն պաշտպանական ոլորտին ուղղվող կապիտալ ծախսերի աճը:

Հարկաբյուջետային քաղաքականության արձագանքը մակրոտնտեսական զարգացումներին: Հարկաբյուջետային քաղաքականության արձագանքը ռուս-ուկրաինական հակամարտության սրման հետևանքով ՀՀ տնտեսություն փոխանցված տնտեսական շոկերին ներառում է ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական բաղադրիչ: Մասնավորապես, փոխարժեքի կտրուկ արժևորման արդյունքում ՀՀ տնտեսության արտահանելի հատվածին, աջակցելու նպատակով նախատեսվել է սուբսիդավորել նոր (չօգտագործված) մեքենասարքավորումներ և դրանց բաղկացուցիչ մասեր ձեռք բերելու նպատակով տնտեսվարողներին տրամադրված վարկերի և լիզինգների տոկոսադրույքները: SS ոլորտի աջակցության և խթանման նպատակով նախատեսվել է այդ ոլորտում, որոշակի պայմաններ բավարարելու դեպքում, վերադարձնել նոր ստեղծված աշխատատեղերի համար վճարված եկամտային հարկի 50 տոկոսը: Բարձր գնաճի հետևանքներին հակազդելու նպատակով, նախատեսվել է գյուղատնտեսության ոլորտում ավելացնել տրամադրվող սուբսիդիաների ծավալը, ինչպես նաև իրականացնել սոցիալական աջակցության միջոցառումներ՝ բարձրացնելով կենսաթոշակները և այլ սոցիալական ծախսերը:

Պետական բյուջեի պակասուրդը (հավելուրդը): **Վերոնշյալ զարգացումների արդյունքում պետական բյուջեն եղել է հավելուրդային:** 2022 թվականի առաջին ութ ամիսների ընթացքում ձևավորվել է պետական բյուջեի 53.7 մլրդ դրամի հավելուրդ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 143.5 մլրդ դրամի պակասուրդի դիմաց:

Հարկաբյուջետային ազդակը: 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում տնտեսության վերականգնման պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա գնահատվում է շուրջ 4.0% զսպող:

<u>Կարճաժամկետ կանխատեսումներ</u>

2022թ. բարձր տնտեսական աճի պայմաններում սպասվում է նախապես ծրագրվածի համեմատ հարկային եկամուտների էական գերակատարում, ինչի արդյունքում սպասվում է բյուջեի պակասուրդի նվազում, ինչպես նաև կառավարության պարտքի բեռի սպասվածից ավելի արագ նվազում:

2022թ.-ին օրենսդրական բարեփոխումների և հարկային վարչարարության բարելավմանն ուղղված միջոցառումների արդյունքում ակնկալվում է, որ հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կբարելավվեն շուրջ 0.4 տոկոսային կետով՝ կազմելով 23.2% կամ 1,920 մլրդ դրամ: Միևնույն ժամանակ, պետական բյուջեի ընդհանուր ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կնվազեն շուրջ 1.6 տոկոսային կետով՝ կազմելով 27.1%: Ծախսերի ծավալը, սակայն, կաճի նախորդ տարվա համեմատ շուրջ 12.0%-ով՝ կազմելով 2,246.7 մլրդ դրամ: Արդյունքում, պետական բյուջեի պակասուրդը 2021 թվականի նկատմամբ կնվազի՝ կազմելով շուրջ 204.2 մլրդ դրամ, կամ կկազմի ՀՆԱ-ի շուրջ 2.5%-ը, իսկ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա կլինի 1.3% զսպող (եկամուտների (-0.2%) չեզոք և ծախսերի (-1.2%) զսպող ազդեցություններով):

Նպատակ ունենալով նպաստել տնտեսական աճի ներուժի բարձրացմանը և միաժամանակ ապահովել հարկաբյուջետային կայունություն՝ հարկաբյուջետային քաղաքականությամբ թիրախավորվել է էապես բարձրացնել պետական ներդրումների մակարդակը (այդ թվում պաշտպանության ոլորտին ուղղվող կապիտալ ծախսերի էական աճը) և միաժամանակ ապահովել ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազող միտումը: Բարձր տնտեսական աճի պայմաններում, հարկային վարչարարության լրացուցիչ ջանքի արդյունքում, ակնկալվում է, որ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2023թ.-ին կբարելավվի շուրջ 0.5 տոկոսային կետով՝ կազմելով շուրջ 2203.7 մլրդ դրամ, կամ ՀՆԱ-ի 23.7%-ը: Պետական բյուջեի ընթացիկ ծախսերը կկազմեն 2043.3 մլրդ դրամ, որոնց կազմում ընթացիկ առաջնային ծախսերը սահմանափակված կլինեն նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների փաստացի անվանական միջին աճի չափով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների դերը զգալիորեն կբարելավվի՝ հասնելով ՀՆԱ-ի 5.9%-ին՝ 2022թ. սպասվող 4.7%-ի համեմատ աճելով 1.2 տոկոսային կետով, որում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կհասնեն ՀՆԱ-ի 6.0%-ի:

2023 թվականին, կապիտալ ծախսերի ավելացման հաշվին պետական բյուջեի դեֆիցիտը կավելանա՝ կազմելով ՀՆԱ-ի 3.1%-ը, իսկ հարկաբյուջետային քաղաքականությունը կլինի չեզոք՝ նպաստելով տնտեսական ներուժի բարձրացմանը և ապահովելով պարտքի բեռի նվազմանը:

Գծապատկեր 2.2. *Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը, մլրդ դրամ*





Գծապատկեր 2.3. *Հարկաբյուջետային ազդակը*



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ գնահատականներ

Գծապատկեր 2.4. *2022 թվականին վերադարձը «Ոսկե կանոնների» պահպանմանը*





Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

2022-2023 թվականներին կշարունակվի 2021թ.-ից սկսված հարկաբյուջետային կոնսոլիդացիան, ինչի արդյունքում կառավարության պարտքը զգալիորեն կնվազի: 2022թ.-ին ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կկազմի 50.1%, իսկ 2023թ.-ին՝ 49.8%:

2022թ.-ին ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նվազմանը նպաստող հիմնական գործոնները կլինեն բարձր տնտեսական աճը և դրամի փոխարժեքի արժևորումը, իսկ 2023թ.-ին՝ տնտեսական աճը:

Գծապատկեր 2.5. *ՀՀ կառավարության պարտքի դինամիկան և այն պայմանավորող գործոնները*[13]





Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

2.3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Հարկաբյուջետային կանխատեսումները հիմնված են մի շարք ենթադրությունների և հիմնական դատողությունների վրա, որոնց համար օգտագործվել է տվյալ պահի դրությամբ առկա և հասանելի ամբողջ տեղեկատվությունը[14]: Ինչպես ցանկացած կանխատեսում, հարկաբյուջետային կանխատեսումները նույնպես պարունակում են ռիսկեր առ այն, որ փաստացի իրադարձությունները կարող են տարբերվել սպասումներից: 2021 թվականի պետական բյուջեի հիմքում ընկած հիմնական մակրոտնտեսական հարկաբյուջետային ռիսկերը հետևյալն են՝

- **Ռուս-Ուկրաինական հակամարտության հնարավոր ազդեցությունները:** 2022թ. փետրվարից սրված ռուս-ուկրաինական հակամարտության և դրա հետևանքով ՌԴ-ի նկատմամբ կիրառվող աննախադեպ պատժամիջոցների արդյունքում էապես մեծացել են դեպի ՀՀ ՌԴ քաղաքացիների, ինչպես նաև արտարժույթի ներհոսքը, ինչը էականորեն

[13] Կանխատեսվող տարիների համար կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի փոփոխությանը նպաստող գործոններից փոխարժեքի ենթադրությունների ազդեցությունն արտահայտված է մնացորդի բաղադրիչի մեջ:

[14] Հարկաբյուջետային կանխատեսումների համար հիմք է հանդիսացել 2022թ.-ի օգոստոսի վերջի դրությամբ առկա տեղեկատվությունը՝ ռուս-ուկրաինական հակամարտության, համավարակի և Ղարաբաղյան պատերազմի տնտեսական ազդեցությունների, միջազգային կազմակերպությունների կանխատեսումների, ինչպես նաև հարկաբյուջետային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

արագացրել է ՀՀ տնտեսական ակտիվության աճը: Այդ գործոնները սակայն, կարող են ժամանակավոր լինել և դրանց դադարեցման պայմաններում կառաջանան տնտեսական աճի դանդաղման, հետևաբար նաև հարկային եկամուտների՝ կանխատեսվածից ցածր լինելու ռիսկեր:

- **Կապիտալ ծախսերի թերակատարում:** 2023թ. բյուջեի հիմքում դրված սցենարում նախատեսվել է կապիտալ ծախսերի զգալի բարձր մակարդակ՝ ՀՆԱ-ի 5.9%-ի չափով: Սակայն հաշվի առնելով նախորդ տարիների փաստացի կատարողականները (չնայած այն հանգամանքին, որ առկա է եղել կատարողականների բարելավման միտում), առկա է ծրագրավորված ցուցանիշների թերակատարման ռիսկ, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ տնտեսական աճի վրա, ինչպես նաև ազդել հարկաբյուջետային շրջանակի ցուցանիշների վրա:
- **Ղարաբաղյան պատերազմի և համավարակի հետևանքների մեղմանն ուղղված ՀՀ կառավարության միջոցառումների ընթացքը:** Ղարաբաղյան պատերազմի հետևանքները դեռևս պահպանվում են և դրանց մեղմանն ուղղությամբ հնարավոր է առաջիկայում նախատեսվեն լրացուցիչ միջոցառումներ՝ առաջացնելով պետական բյուջեի լրացուցիչ ֆինանսավորման կարիք: Միևնույն ժամանակ Թեև 2022թ. մարտից COVID-19 համավարակի հետ կապված իրավիճակն էականորեն բարելավվել է, համավարակի նոր ալիքի ի հայտ գալու հավանականությունը դեռևս առկա է, ինչը ստեղծում է ռիսկեր համավարակի բացասական ազդեցություններին հակազդման ուղղված սոցիալ-տնտեսական միջոցառումների իրականացման կարիքի առաջացման ուղղությամբ:

Հարկաբյուջետային շրջանակի հնարավոր փոփոխությունները մակրոտնտեսական կանխատեսումների շեղումների դեպքում և սթրես թեստերի ներքո[15].

- **Հարկային եկամուտներ:** Կարճաժամկետ հորիզոնում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների վրա գնահատված է մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման ռիսկերի շեղման ամփոփ գնահատականը: Հարկային եկամուտների վրա ազդող վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում հարկային եկամուտների ծրագրված մակարդակից շեղումը 2023 թվականին կկազմի շուրջ 22.5 մլրդ ՀՀ դրամ:

  •**Պետական բյուջեի ծախսեր:** Կանխատեսումներում մեծ ուշադրություն է դարձվում նաև պետական բյուջեի ծախսերի պլանավորված մակարդակների ապահովումը խաթարող ռիսկերին, որոնք կարող են հանգեցնել լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման: ՀՀ պետական բյուջեի ծախսերի վրա գնահատված է մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման ռիսկերի շեղման ամփոփ գնահատականը, որոնց միաժամանակյա ի հայտ գալու պարագայում 2023 թվականին ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի լրացուցիչ ֆինանսավորման պահանջը կկազմի շուրջ 40.5 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 0.4%-ը: Ընդ որում՝ ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական

[15] Այս հատվածում նկարագրված ռիսկերի առավել մանրամասն վերլուծությունը ներկայացված է այս փաստաթղթի ՄԱՍ IV-ի «Պետական բյուջեի վրա մակրոտնտեսական կանխատեսված ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատում» և «ՀՀ կառավարության պարտքի կայունության վերլուծություն» բաժիններում:

նպատակադրումը լինելու է սոցիալական բնույթի ծախսերի կրճատման բացառումը, իսկ հնարավորության դեպքում՝ բյուջեի ծախսերի ամբողջական իրականացումը:

- **Կառավարության պարտք:** ՀՀ կառավարության պարտքի կայունության վերլուծությունները վկայում են, որ թեպետ վերջինս կայուն է, կառավարելի և ցածր ռիսկային, զգայուն է տնտեսական աճի և փոխարժեքի շոկերի նկատմամբ (տե՛ս 2023-2025թթ. պետական ՄԺԾԾ, Վերլուծություններ, ՀՀ կառավարության պարտքի կայունության վերլուծություն): Այդ տեսակետից, գնահատված տնտեսական աճի և փոխարժեքի ռիսկերի պայմաններում հաշվարկվել է կանխատեսումներից կառավարության պարտքի հնարավոր շեղման չափը: Հաշվարկները ցույց են տվել, որ տնտեսական աճի ենթադրվող շոկի (3%-ային կետով դանդաղում) պայմաններում ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2023թ.-ին կկազմի 51.2%, փոխարժեքի շոկի դեպքում (վերադարձ դեպի 1 դոլարի դիմաց 480 դրամի մակարդակի)՝ 52.6%, իսկ դրանց համադրման դեպքում՝ 54.6%՝ ցածր մնալով 60% սահմանային շեմից: Միաժամանակ, գնաճի համար ենթադրվող շոկը (2%-ային կետով ավելի բարձր գնաճ) մասամբ կչեզոքացնի տնտեսական աճի շոկից եկող ազդեցությունը:

Ամփոփելով հարկաբյուջետային ռիսկերի նկարագրությունը կարող ենք նշել, որ ինչպես 2020թ. ճգնաժամային իրավիճակով և դրա դրսևորումների շարունակությամբ, այնպես էլ 2022թ. փետրվարից ռուս-ուկրաինական համամարտության սրմամբ պայմանավորված ռիսկերն առավելապես վերաբերում են առկա անորոշություններին: Մասնավորապես, անորոշություններ են առկա ինչպես ՌԴ նկատմամբ կիրառված սանկցիաների՝ ՀՀ տնտեսության վրա հնարավոր ազդեցությունների, այնպես էլ տնտեսության վերականգնման և հետագա աճի տեմպի հետ կապված: Նշված ռիսկերի ի հայտ գալու կամ անորոշությունների վերաբերյալ նոր տեղեկատվության առկայության պայմաններում, առաջիկա տարիների հարկաբյուջետային շրջանակը կարող է վերանայվել:

2.4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ

ՀՀ հարկաբյուջետային կանոնների ներկա համակարգը գործարկվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 20-ին «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարող օրենքների, ինչպես նաև են ՀՀ Կառավարության՝ 2018 թվականի օգոստոսի 23-ի N 942-Ն որոշման ընդունմամբ: Կանոնների համակարգը ներառում է ծախսային կանոններ, որոնք ուժի մեջ են մտնում պարտքի սահմանված շեմերը գերազանցելիս: Մասնավորապես.

- Երբ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցում է 40%-ը, պետական բյուջեի կապիտալ ծախսերը չպետք է փոքր լինեն բյուջեի պակասուրդից:
- Կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության՝ 50-60% միջակայքում գտնվելու դեպքում, ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճով, ինչպես նաև հաջորդ տարում կազմվող պետական ՄԺԾԾ-ում կառավարությունը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ համախառն ներքին արդյունքի նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 50 տոկոսից նվազեցնելու համար:

- Երբ Կառավարության պարտքը գերազանցում է ՀՆԱ 60%-ը, ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճից 0.5 տոկոսային կետով նվազեցված ցուցանիշով, ընթացիկ ծախսերը սահմանափակվում են հարկերի և տուրքերի մեծությամբ, ինչպես նաև Կառավարությունը Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ու տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների քննարկմանը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ ՀՆԱ նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 60 տոկոսից նվազեցնելու համար:
- Ներկայացված սահմանափակումները չեն գործում կառավարության որոշմամբ սահմանված բացառիկ դեպքերում՝ ելնելով խոշորածավալ տարերային և տեխնածին աղետների, պատերազմական գործողությունների, տնտեսությունը խաղաղ ժամանակաշրջանից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տնտեսական ցնցման հանգամանքներով պայմանավորված բացասական տնտեսական զարգացումների պարագայում:

2021 թվականին «բացառիկ դեպքի» կարգավորումների ներքո պետական բյուջեի կատարումը շարունակել է շեղվել հարկաբյուջետային կանոնների բնականոն իրավիճակների տրամաբանությունից՝ համահունչ 2021 թվականի ՀՀ պետական բյուջեի ուղերձում նախանշված քաղաքականությանը: Մասնավորապես, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 2020 թվականին «բացառիկ դեպքի» կարգավորումների հիմք հանդիսացած գործոնների՝ COVID-19 համավարակի և Ղարաբաղյան պատերազմի տնտեսական և հարկաբյուջետային հետևանքները ոչ ամբողջությամբ էին հաղթահարված, 2021 թվականի համար ևս սահմանվել էր այդ կարգավորումների պահպանում և բնականոն իրավիճակներում գործող կանոններին համապատասխանության անցում 2022 թվականից: Արդյունքում բյուջեի պակասուրդը շարունակել է գերազանցել կապիտալ ծախսերին, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի աճը գերազանցել է նախորդ 7 տարիների անվանական ՀՆԱ-ի աճի միջին տեմպը: Այնուամենայնիվ, շեղումների չափը երկու դեպքում էլ որոշակիորեն կրճատվել է՝ հատկապես ընթացիկ ծախսերի համապատասխանության գծով՝ ՀՆԱ 3.3%-ից նվազելով մինչև 2.4%:

2022թ.-ին պլանավորվել էր ՀՀ Կառավարության ամբողջական վերադարձը ՀՀ օրենսդրությամբ բնականոն իրավիճակների համար սահմանված ծախսային կանոնների, այդ թվում՝ պետական ֆինանսների «ոսկե կանոնների» և ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպի՝ երկարաժամկետ տնտեսական աճի միջին տեմպով սահմանափակման կանոնի ամբողջական պահպանմանը՝ միաժամանակ ապահովելով պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազող հետագիծը և ծախսերի կառուցվածքի բարելավում: 2022թ.-ի հարկաբյուջետային զարգացումների կանխատեսումներով պետական ֆինանսների «ոսկե կանոնները», մասնավորապես՝ պետական բյուջեի պակասուրդի մեծությանը կապիտալ ծախսերի գերազանցումը և ընթացիկ ծախսերի մեծությանը հարկային եկամուտների և տուրքերի գերազանցումը ամբողջությամբ ապահովվում են (համապատասխանաբար 185.5 մլրդ դրամով և 63 մլրդ դրամով): Սակայն, հաշվի առնելով տարվա ընթացքում բյուջեի եկամուտների կանխատեսումների դեպի վեր վերանայումը, ընթացիկ առաջնային ծախսերի մեծությունը ևս բարձրացվել է, ինչի արդյունքում ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը գերազանցել է կանոնով հաշվարկվող մեծությունը: Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կկազմի 50.1%՝ ցածր լինելով 2021թ.-ի ցուցանիշից 10.2 տոկոսային կետով:

2023թ.-ի պետական բյուջեի ցուցանիշները պլանավորվել են հարկաբյուջետային կանոններին ամբողջական համապատասխանության ներքո: Պետական ֆինանսների «ոսկե կանոնների» պահպանումը թույլ կտա ապահովելով պարտքի զուտ ներգրավմանն առաջանցիկ պետական ակտիվներ աճը և կառավարելի պահել երկրի իրական պարտքային դիրքը և հետևաբար՝ երկարաժամկետ հարկաբյուջետային ռիսկերը: Իսկ ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպի՝ երկարաժամկետ տնտեսական աճի միջին տեմպով սահմանափակման կանոնի պահպանումը հնարավորություն կտա ապահովել հակապարբերաշրջանային քաղաքականության իրականացումը և զսպել ապագայում եկամուտ գեներացնելու կարողություններին պարտավորությունների (ընթացիկ ծախսերի գծով ստանձնվող օրենսդրական պարտավորությունների և պարտքային պարտավորությունների ձևով) առաջանցիկ ավելացումը: Միաժամանակ, կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կշարունակի նվազել, ինչով հարկաբյուջետային քաղաքականությունը կտեղափոխի կանոններով սահմանափակման առավել մեղմ ռեժիմների՝ թույլ տալով վարել առավել ճկուն հարկաբյուջետային քաղաքականություն (առավել մանրամասն տես՝ «Հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները և կանխատեսումները հատվածում»):

Աղյուսակ 2.4. *Փաստացի և ծրագրավորված հարկաբյուջետային քաղաքականության համապատասխանությունը հարկաբյուջետային կանոններին*

Կանոնի ցուցանիշ	Ուղենիշային ցուցանիշ	2020		2021		2022		2023	
		Սահմ.	Փաստ.	Սահմ.	Փաստ.	Սահմ.	Փաստ.	Սահմ.	Փաստ.
Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	>/= պետական բյուջեի պակասուրդ, մլրդ դրամ	334.0	226.2	320.5	216.3	204.2	389.7	288.9	547.7
Պետական բյուջեի ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպ	</= նախորդ 7 տարիների անվանական ՀՆԱ աճի միջին տեմպ, %*	5.9	14.8	6.3	12.8	4.1	4.6	5.1	5.1
Պետական բյուջեի ընթացիկ ծախսեր	</= հարկային եկամուտների և տուրքերի ծավալ, մլրդ դրամ**	-	1668.5	-	1787.9	1920.0	1857.0	2203.7	2042.5
Կառավարության պարտք/ՀՆԱ, %		63.5		60.3		50.1		49.8	

**Հաշվարկված է որպես երկու տարի առաջ (t-2) արձանագրված ցուցանիշի նկատմամբ համապատասխան տարվա (t) հավելաճի տեմպի կես*

***Պետական պարտքի առկա չափի դեպքում կիրառելի չէ*

2.5. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 2.5.1. *Պետական բյուջեի եկամուտների կանխատեսումների համեմատական աղյուսակը (մլրդ դրամ)*

Ընդունման տարին	Ծրագիր	2021	2022	2023
-	Փաստացի	1,683.8		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*24.10%*		
2020	ՄԺԾԾ 2021-2023	1,669.9	1,885.9	2,082.9
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*23.40%*	*24.00%*	*24.30%*
	2021թ. Պետական բյուջե	1,509.5		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*23.60%*		
2021	ՄԺԾԾ 2022-2024	1,617.3	1,819.2	1,966.7
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*23.50%*	*24.00%*	*24.10%*
	2022թ. Պետական բյուջե	1,656.9	1,947.8	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*23.60%*	*24.80%*	
2022	ՄԺԾԾ 2023-2025		2,020.9	2,253.8
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*25.00%*	*24.90%*
	2023թ. Պետական բյուջե		2,042.5	2,302.0
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*24.63%*	*24.70%*

Աղյուսակ 2.5.2. *Պետական բյուջեի հարկային եկամուտների կանխատեսումների համեմատական աղյուսակը (մլրդ դրամ)*

Ընդունման տարին	Ծրագիր	2021	2022	2023
-	Փաստացի	1,586.9		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*22.70%*		
2020	ՄԺԾԾ 2021-2023	1,600.3	1,819.7	2,027.1
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*22.40%*	*23.20%*	*23.60%*
	2021թ. Պետական բյուջե	1,440.1		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*22.50%*		
2021	ՄԺԾԾ 2022-2024	1,540.5	1,733.5	1,889.9
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*22.40%*	*22.90%*	*23.10%*
	2022թ. Պետական բյուջե	1,581.0	1,843.9	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*22.50%*	*23.40%*	
2022	ՄԺԾԾ 2023-2025		1,900.0	2,176.4
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*23.50%*	*24.00%*
	2023թ. Պետական բյուջե		1,920.0	2,203.7
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*23.15%*	*23.65%*

Աղյուսակ 2.5.3. *Պետական բյուջեի ծախսերի կանխատեսումների համեմատական աղյուսակը (մլրդ դրամ)*

Ընդունման տարին	Ծրագիր	2021	2022	2023
-	Փաստացի	2,004.3		

	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*28.70%*		
2020	ՄԺԾԾ 2021-2023	1,879.0	2,026.1	2,241.4
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*26.30%*	*25.80%*	*26.10%*
	2021թ. Պետական բյուջե	1,850.9		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*28.90%*		
2021	ՄԺԾԾ 2022-2024	1,936.0	2,000.9	2,135.5
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*28.10%*	*26.40%*	*26.10%*
	2022թ. Պետական բյուջե	1,986.0	2,184.0	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*28.20%*	*27.80%*	
2022	ՄԺԾԾ 2023-2025		2,192.2	2,546.0
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*27.20%*	*28.10%*
	2023թ. Պետական բյուջե		2,246.7	2,591.0
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*27.09%*	*27.80%*

Աղյուսակ 2.5.4. *Պետական բյուջեի ընթացիկ ծախսերի կանխատեսումների համեմատական աղյուսակը (մլրդ դրամ)*

Ընդունման տարին	Ծրագիր	2021	2022	2023
-	Փաստացի	1,788.00		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*25.60%*		
2020	ՄԺԾԾ 2021-2023	1,629.0	1,699.9	1,836.7
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*22.80%*	*21.60%*	*21.40%*
	2021թ. Պետական բյուջե	1,634.6		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*25.60%*		
2021	ՄԺԾԾ 2022-2024	1,738.9	1,708.3	1,827.3
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*25.30%*	*22.60%*	*22.40%*
	2022թ. Պետական բյուջե	1,762.2	1,842.2	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*25.10%*	*23.40%*	
2022	ՄԺԾԾ 2023-2025		1,842.2	2,030.7
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*22.80%*	*22.40%*
	2023թ. Պետական բյուջե		1,857.0	2,043.3
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*22.39%*	*21.92%*

Աղյուսակ 2.5.5. *Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերի կանխատեսումների համեմատական աղյուսակը (մլրդ դրամ)*

Ընդունման տարին	Ծրագիր	2021	2022	2023
-	Փաստացի	216.3		

	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*3.10%*		
2020	ՄԺԾԾ 2021-2023	250	326.2	404.8
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*3.50%*	*4.20%*	*4.70%*
	2021թ. Պետական բյուջե	216.3		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*3.40%*		
2021	ՄԺԾԾ 2022-2024	197.2	292.6	308.1
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*2.90%*	*3.90%*	*3.80%*
	2022թ. Պետական բյուջե	223.8	341.9	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*3.20%*	*4.30%*	
2022	ՄԺԾԾ 2023-2025		350	515.3
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*4.30%*	*5.70%*
	2023թ. Պետական բյուջե		389.7	547.7
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*4.70%*	*5.88%*

Աղյուսակ 2.5.6. *Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման կանխատեսումների համեմատական աղյուսակը (մլրդ դրամ)*

Ընդունման տարին	Ծրագիր	2021	2022	2023
-	Փաստացի	320.5		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*4.60%*		
2020	ՄԺԾԾ 2021-2023	209.1	140.2	158.6
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*2.90%*	*1.80%*	*1.80%*
	2021թ. Պետական բյուջե	341.4		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*5.30%*		
2021	ՄԺԾԾ 2022-2024	318.8	181.7	168.8
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*4.60%*	*2.40%*	*2.10%*
	2022թ. Պետական բյուջե	329.1	236.3	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*4.70%*	*3.00%*	
2022	ՄԺԾԾ 2023-2025		171.3	292.2
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*2.10%*	*3.20%*
	2023թ. Պետական բյուջե		204.2	288.9
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*2.46%*	*3.10%*

ՄԱՍ II-Ա ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Հարկաբյուջետային սկզբունքները և ցուցանիշները

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման ընթացքում ՀՀ կառավարությունն առաջնորդվել է ՀՀ 2023-2025թթ. ՄԺԾԾ-ով ամրագրված հիմնական սկզբունքներով: Ստորև բերված Աղյուսակ 1-ում ներկայացված են 2019-2023թթ պետական բյուջեների ցուցանիշներն արտացոլող ամփոփ ցուցանիշները:

Աղյուսակ 1. *2019-2023թթ պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները (մլրդ դրամով)*

Ցուցանիշներ	2019թ փաստ	2020թ փաստ	2021թ փաստ	2022թ սպասում	2023թ կանխատեսում
1. Ընդամենը եկամուտներ	**1,565.5**	**1,560.7**	**1,683.8**	**2,068.1**	**2,302.0**
այդ թվում՝					
- ներքին եկամուտներ	1,553.1	1,507.5	1,671.5	2,033.0	2,284.8
որից՝					
- հարկեր և պետական տուրքեր	1,464.3	1,385.2	1,586.9	1,920.0	2,203.7
2. Ընդամենը ծախսեր	**1,629.4**	**1,894.6**	**2,004.3**	**2,246.7**	**2,591.0**
այդ թվում՝					
- ընթացիկ ծախսեր	1,437.1	1,668.5	1,788.0	1,857.0	2,043.3
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	192.3	226.2	216.3	389.7	547.7
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	**63.9**	**334.0**	**320.5**	**204.2**	**288.9**
Բ. Արտահայտված ՀՆԱ-ի նկատմամբ %-ով					
1. Ընդամենը եկամուտներ	**23.9%**	**25.2%**	**24.1%**	**24.9%**	**24.7%**
որից՝					
- ներքին եկամուտներ	23.7%	24.4%	23.9%	24.5%	24.5%
որից՝					
- հարկեր և պետական տուրքեր	22.4%	22.4%	22.7%	23.2%	23.7%
2. Ընդամենը ծախսեր	**24.9%**	**30.6%**	**28.7%**	**27.1%**	**27.8%**
այդ թվում՝					
- ընթացիկ ծախսեր	22.0%	27.0%	25.6%	22.4%	21.9%
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	2.9%	3.7%	3.1%	4.7%	5.9%
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	**1.0%**	**5.4%**	**4.6%**	**2.5%**	**3.1%**
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	**6,543.3**	**6,181.9**	**6,983.0**	**8,293.7**	**9,317.9**

Հիմք ընդունելով ՀՆԱ-ի 24.7 %-ի չափով կանխատեսված ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի եկամուտների մակարդակը և ելնելով ՀՆԱ-ի 3.1 %-ի չափով դեֆիցիտի ֆինանսավորման հնարավորություններից, ՀՀ կառավարությունը ծրագրում է 2023 թվականին ապահովել ծախսերը ՀՆԱ-ի 27.8 %-ի կամ 2,591.0 մլրդ դրամի չափով:

ՄԱՍ II – Բ. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված բյուջետային եկամուտների կազմում, ինչպես և նախորդ տարիներին, գերակշիռ մաս են կազմում հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով ակնկալվող մուտքերը, ինչը ներկայացված է գծապատկերում:

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված բյուջետային եկամուտների կառուցվածքը (%-ով ընդհանուրի նկատմամբ)



ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 2,302.0 մլրդ դրամ եկամուտներ, որից հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով՝ 2,203.7 մլրդ դրամ: Բյուջետային եկամուտների՝ ըստ առանձին եկամտատեսակների կանխատեսումների մանրամասները ներկայացված են «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի բացատրագրի՝ եկամուտների կանխատեսմանը վերաբերվող մասում (սույն ուղերձի մաս 3):

2023 ԹՎԱԿԱՆԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվի առնելով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի եկամուտների կանխատեսվող մակարդակը և դեֆիցիտի ու պետական պարտքի նպատակային ցուցանիշները, որոնք ներկայացվում են հաջորդ բաժնում, ՀՀ կառավարությունը ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի ծախսերի ծավալը առաջարկում է սահմանել 2,591.0 մլրդ դրամի չափով:

ՀՀ կառավարության 2023 թվականի ծախսային գերակայությունները բխում են ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի առաջնահերթություններից:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ԵՎ ՊԱՐՏՔԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի դեֆիցիտը ծրագրավորվել է ՀՆԱ-ի 3.1 %-ի չափով և կազմում է 288.9 մլրդ դրամ: Դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրների հիմնական մասը ՀՀ 2023 թվականին ձևավորվելու է պետական արժեթղթերի տեղաբաշխումից գոյացող մուտքերից, կայունացման դեպոզիտային հաշվի միջոցներից, ինչպես նաև տնտեսվարող

սուբյեկտներին տրամադրված բյուջետային վարկերի զուտ մուտքերից (տրամադրվածից հանած մարումները): Դեռևս զգալի են արտաքին աղբյուրներից՝ միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից ստացվելիք վարկերի հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորմանն ուղղվող միջոցները:

Համաձայն կանխատեսումների ծրագրային ժամանակահատվածում արտաքին օժանդակության կառուցվածքում գերակշռելու են նպատակային ծրագրերի ֆինանսավորման համար նախատեսված բյուջետային աջակցության պաշտոնական դրամաշնորհներն ու վարկերը (99.2%):

Աղյուսակ 2. ***2023թ ակնկալվող արտաքին օժանդակությունն ըստ բնույթի***

Ցուցանիշներ	Գումարը (մլրդ դրամներով)	Տեսակարար կշիռը արտաքին օժանդակության ընդհանուր գումարում (%)
1. Ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակություն	1.1	0.8
1.1 Պաշտոնական դրամաշնորհներ	1.1	X
2. Ծրագրային (նպատակային) օժանդակություն	137.6	99.8
2.1 Պաշտոնական դրամաշնորհներ	16.2	X
2.2 Վարկեր	121.4	X
Ընդամենը արտաքին օժանդակություն	137.9	

Բյուջետային փաթեթում ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակության թերստացման պայմաններում ծախսերի վերանայման անհրաժեշտության առաջացման դեպքում այդ վերանայումն իրականացվելու է՝ ելնելով ծախսերի գերակայության աստիճանից: Ծրագրային (նպատակային) պաշտոնական դրամաշնորհների և վարկերի թերստացումը հանգեցնելու է այն ծրագրերի գծով ծախսերի կրճատմանը, որոնք անմիջականորեն կապակցված են ֆինանսավորման այդ աղբյուրներին:

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծի հաշվարկներում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.1-րդ մասի պահանջի համաձայն կիրառվել են ս.թ. նոյեմբերի 1-ի դրությամբ ՀՀ արտարժութային շուկայում ձևավորված տարադրամի փոխարժեքները ՀՀ դրամով:

Աղյուսակ 3. ***ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծի հաշվարկներում կիրառված տարադրամների փոխարժեքները ՀՀ դրամով***

Տարադրամի տեսակը	Փոխարժեքը ՀՀ դրամով
1 ԱՄՆ դոլար	395.19
1 եվրո	392.58
1 Մեծ Բրիտանիայի ֆունտ ստեռլինգ	455.97
1 Ռուսաստանյան ռուբլի	6.45
1 Շվեյցարական ֆրանկ	397.70
1 Կանադական դոլար	291.72
10 ճապոնական իեն	26.84
1 Չինական յուան	54.83

Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները

Պետական բյուջեի ձևավորումը 2023 թվականին շարունակելու է ընթանալ բյուջետային եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցմամբ, ընդ որում՝ բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման համար միջոցների ներգրավումն իրականացվելու է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից, համապատասխանաբար՝ 302.8 մլրդ դրամի և -13.9 մլրդ. դրամի չափով:

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներքին աղբյուրներից ներգրավվող փոխառու զուտ միջոցների ընդհանուր գումարը ծրագրավորվում է շուրջ 295.2 մլրդ դրամի չափով, ընդ որում, փոխառու միջոցների մուտքերի ներգրավումը ամբողջությամբ նախատեսվում է ապահովել պետական արժեթղթերի թողարկումից: Ֆինանսական ակտիվներից 2023 թվականի զուտ մուտքերը ծրագրավորվում են շուրջ 7.6 մլրդ դրամ, ընդ որում, վարկերի և փոխատվությունների տրամադրման գծով՝ -35.5 մլրդ դրամ, իսկ տնտեսվարող և այլ սուբյեկտներին տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքերի գծով՝ 27.4 մլրդ դրամ, կայունացման դեպոզիտային հաշվի համալրում՝ 4.0 մլրդ դրամ:

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով արտաքին աղբյուրներից ներգրավվող փոխառու զուտ միջոցների ծրագրված ընդհանուր գումարը՝ 123.4 մլրդ դրամ է, որը հաշվարկվել է որպես միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից Հայաստանի Հանրապետությանը 2023 թվականին տրամադրվելիք վարկերի (որոնց մասն ունի հստակ ծրագրային ուղղվածություն), մինչ այդ արդեն ստացված վարկերի, ըստ վարկային պայմանագրերով նախատեսված ժամկետների, մարման գումարների (նշված զուտ մուտքերի վերաբերյալ մանրամասն համապատասխան տեղեկատվությունը բերված է սույն բացատրագրի N 4 հավելվածում, NN 17-20 աղյուսակներում և «ՀՀ պետական պարտքը» բաժնում) և արտարժութային պետական պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքերի հանրագումար: Ֆինանսական ակտիվներից 2023 թվականի զուտ մուտքերը ծրագրավորվում են շուրջ -137.3 մլրդ դրամ: Նախագծով նախատեսվել է վարկերի և փոխատվությունների ստացում 259.4 մլրդ դրամի չափով, որից -136.0 մլրդ դրամը կուղղվի ստացված վարկերի և փոխատվությունների մարմանը: ԼՂ-ին տրամադրվող միջպետական վարկի գումարը կազմում է 136.0 մլրդ դրամ:

Ստորև ներկայացվում են ՀՀ 2019-2023 թվականների պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (տես Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. ***ՀՀ 2019-2023թթ. պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (մլն դրամ)***

Ցուցանիշներ	2019թ փաստ	2020թ փաստ	2021թ փաստ	2022թ բյուջե	2023թ կանխատեսում
Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներն ու դրանց տարրերի անվանումները՝ ընդամենը	63,947.9	333,991.8	320,469.5	236,255.7	288,947.5
Ա.Ներքին աղբյուրներ- ընդամենը	(13,317.2)	359,379.0	101,218.9	272,217.6	302,835.8
Բ. Արտաքին աղբյուրներ - ընդամենը	77,265.2	(25,387.2)	219,250.6	(35,961.9)	(13,888.2)

Պետական բյուջեի դեֆիցիտի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2023 թվականին կկազմի 3.1%: Ինչպես 2023-2025թթ միջնաժամկետ ծախսային ծրագրում, ՀՀ 2023թ բյուջեում նույնպես պահպանվել է ՀՀ պետական բյուջեի կախվածությունն արտաքին ֆինանսավորման աղբյուրներից (արտասահմանյան վարկերից և պաշտոնական դրամաշնորհներից):

Աղյուսակ 5. ***Ընդհանուր և առաջնային դեֆիցիտները (%-ով ՀՆԱ-ի նկատմամբ) 2023թ.***

Ցուցանիշներ	2023թ կանխատեսում
Ընդհանուր դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների և ծախսերի տարբերությունը	3.1
Առաջնային դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների և ծախսերի (առանց տոկոսավճարների) տարբերությունը	0.2

ՄԱՍ III. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է ՀՀ 2023 թվականի պետական բյուջեն հաստատել՝ եկամուտների գծով՝ 2,302.0 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 2,591.0 մլրդ դրամ, իսկ դեֆիցիտը՝ 288.9 մլրդ դրամ:

2022թ. և 2023 թ. պետական բյուջեի դեֆիցիտը ՀՆԱ-ի նկատմամբ կանխատեսվում է համապատասխանաբար՝ 2.5 % և 3.1 %-ի չափով, ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող դեֆիցիտի ֆինանսավորման համար ծրագրավորված վարկերի զգալի մասը կտրամադրվի Համաշխարհային բանկի կողմից (ներգրավվող վարկերի տրամադրման ժամկետների և տոկոսադրույքների մասին տվյալները ներկայացված են սույն բացատրագրի N 4 հավելվածում):

ՄԱՍ III-Ա. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում (սույն մասում այսուհետ՝ Նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 2,302.0 մլրդ դրամի չափով, 2022 թվականի համար սպասվող 2,068.1 մլրդ դրամի և 2021 թվականին փաստացի ստացված 1,683.8 մլրդ դրամ գումարների դիմաց: Եկամուտների տարեկան ծրագրային ծավալները կապահովվեն հիմնականում ի հաշիվ հարկային եկամուտների:

Աղյուսակ 6. 2019-2023թթ փաստացի/կանխատեսումային բյուջետային եկամուտները (մլրդ դրամներով)

Եկամտատեսակը	2019 փաստ	2020 փաստ	2021 փաստ	2022 սպասում	2023 կանխա-տեսում
Պետական բյուջեի եկամուտներ, որից՝	1,565.5	1,560.7	1,683.8	2,068.1	2,302.0
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	23.9%	25.2%	24.1%	24.9%	24.7%
1. Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,464.3	1,385.2	1,586.9	1,920.0	2,203.7
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	22.4%	22.4%	22.7%	23.2%	23.7%
տոկոսով ընդհանուրի նկատմամբ	93.5%	88.8%	94.2%	92.8%	95.7%
2. Այլ եկամուտներ	88.8	122.2	84.6	113.0	81.1
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	1.4%	2.0%	1.2%	1.4%	0.9%

փոկոսով ընդհանուրի նկատմամբ	5.7%	7.8%	5.0%	5.5%	3.5%
3. Պաշտոնական դրամաշնորհներ	12.4	53.2	12.4	35.1	17.2
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	0.2%	0.9%	0.2%	0.4%	0.2%
փոկոսով ընդհանուրի նկատմամբ	0.8%	3.4%	0.7%	1.7%	0.7%

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի եկամուտները ծրագրելիս օգտագործվել են այն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին եկամտատեսակների բազայի ձևավորման կամ հաշվարկման վրա: Առանձին դեպքերում հաշվի են առնվել նաև պայմանագրային հարաբերություններով կարգավորվող ցուցանիշները:

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր

Հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 2023 թվականի բյուջետային մուտքերի հաշվարկներում ենթադրվել է, որ հարկերի գծով 2023 թվականի համար հարկային եկամուտներ և պետական տուրքեր /ՀՆԱ ցուցանիշի սպասողական մակարդակը ապահովելու համար բավարար հիմքեր կստեղծեն առկա օրենսդրական նախադրյալները, կիրառվելիք վարչարարական միջոցառումները, ինչպես նաև մակրոտնտեսական զարգացումները:

Գծապատկեր 1. ***ՀՀ 2019-2023թթ հարկային եկամուտները և պետական տուրքերը (մլրդ դրամով) և կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ***



2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ի լրումն վերոշարադրյալին հարկ է նշել, որ ՀՀ 2023 թվականի հարկային եկամուտների մուտքերի կանխատեսմամբ հանդերձ միջազգային պրակտիկայում ընդունված մոտեցումների հիման վրա կատարվել է ԱԱՀ-ի, շահութահարկի և եկամտային հարկի գծով 2023 թվականի հարկային ծախսերի մեծության գնահատում, որի արդյունքները ներկայացված են Վերլուծություններ բաժնում:

Պետական տուրքեր

Պետական տուրքերի գծով 2023 թվականի բյուջետային մուտքերը ծրագրվել են 51.4 մլրդ դրամի չափով՝ 2022 թվականի համար հաստատված[16] 90.1 մլրդ դրամի և 2021 թվականին փաստացի ստացված[17] 66.7 մլրդ դրամի դիմաց:

Պետական տուրքերի գծով 2023 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները կատարվել են ըստ դրանց նախորդ տարիների փաստացի հավաքագրումների միտումների, հաշվի առնելով ՀՀ օրենսդրության մեջ կատարված առանձին փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև պետական տուրքի յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները:

Պետական տուրքի գծով փաստացի/կանխատեսումային ցուցանիշների ընդհանուր պատկերն ըստ եկամտի հիմնական աղբյուրների հետևյալն է.

[16] Այս բաժնում որպես ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի պետական տուրքի համար հաստատված ցուցանիշներ դիտարկվել են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման N 6 հավելվածով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի պետական տուրքի գծով հաստատված ցուցանիշները:

[17] Առանց ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից ծախս-եկամուտ գործառույթի եղանակով ստացված 181.5 մլն դրամի չափով այն եկամուտների, որոնք հաշվառվում են պետական տուրքերի կազմում:

Աղյուսակ 6. ***Պետական տուրքի կազմում հաշվառվող եկամտատեսակների գծով ՀՀ 2019-2023թթ փաստացի/կանխատեսումային ցուցանիշները (մլրդ դրամներով)***

Եկամտատեսակը	2019 փաստ	2020 փաստ	2021 փաստ	2022 բյուջե	2023 կանխա-տեսում
Պետական տուրք, ընդամենը այդ թվում՝	**45.7**	**33.2**	**66.7**	**90.1**	**51.4**
1. Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների, ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահան ված կրիչ և դատական նիստի համակարգչային ձայն ագրման կրկնօրինակ տալու համար	2.2	1.1	2.2	2.1	2.4
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար	0.1	0.1	0.1	0.1	0.1
3. Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար	2.2	2.1	3.1	2.4	2.5
4. Պետական գրանցման համար	7.9	4.6	5.1	5.3	5.3
5. Գյուտերի, արդյունաբերական դիզայնների, բույսերի սորտերի, ապրանքային նշանների, աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների, երաշխավորված ավանդական արտադրանքի, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար	0.4	0.3	0.3	0.3	0.3
6. Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար	2.6	1.2	2.2	2.6	2.8
7. Լիցենզավորման ենթակա կամ թույլտվություններով գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար	10.9	13.7	38.3	63.6	19.8
8. Օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար	19.4	10.2	15.4	13.3	17.8

Պետական տուրքի առանձին տեսակների («Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված հիմնական խմբերի) գծով 2023 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները, հաշվարկման մեթոդների համառոտ նկարագրությունը, ծրագրային և փաստացի ցուցանիշների համեմատականները ներկայացվում են ստորև:

Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ), գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչ և դատական նիստի համակարգչային ձայնագրման կրկնօրինակ տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2023 թվականի մուտքերը գնահատվել են 2022 թվականի սպասողական ցուցանիշի՝ 2,440.0 մլն դրամի չափով՝ 2022 թվականի համար հաստատված 2,118.9 մլն դրամ և 2021 թվականի փաստացի ստացված 2,207.0 մլն դրամի դիմաց: 2022 թվականի սպասողական ցուցանիշը գնահատվել է 2022 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի նկատմամբ կիրառելով 2019-2021 թվականների տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների մուտքերի տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոփոխելու համար գանձվող պետական տուրքի գծով 2023 թվականի մուտքերը կանխատեսվել են 2022 թվականի համար հաստատված և փորձագիտական գնահատականով ներկայացված 141.0 մլն դրամի չափով՝ 2021 թվականին փաստացի ստացված 88.7 մլն դրամի դիմաց:

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2023 թվականի մուտքերը կանխատեսվել են 2,455.0 մլն դրամի չափով՝ 2022 թվականի համար հաստատված 2,413.8 մլն դրամի և 2021 թվականին փաստացի ստացված 3,065.5 մլն դրամի դիմաց: Պետական տուրքի այս տեսակի գծով 2023 թվականի ցուցանիշը ծրագրվել է 2022 թվականի սպասողական մուտքերի նկատմամբ կիրառելով փորձագիտական գնահատականով ներկայացված՝ 2022 թվականի սպասողական ցուցանիշի նկատմամբ 2023 թվականի նվազման միտումը՝ պայմանավորված վիզային ռեժիմների դյուրացման կամ վերացման գործընթացների շարունակականությամբ:

Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գծով 2023 թվականի մուտքերը կանխատեսվել են 5,320.2 մլն դրամի չափով՝ 2022 թվականի համար հաստատված 5,321.3 մլն դրամի և 2021 թվականին փաստացի ստացված 5,092.0 մլն դրամի դիմաց:

Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գերակշռող մասը՝ 92.3 %-ը կամ 4,907.9 մլն դրամը 2023 թվականին ապահովվելու է պետական տուրքի հետևյալ 3 խմբերի հաշվին՝

- ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցման, ինչպես նաև պետական համարանիշ տալու և կորցրածը վերականգնելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2023 թվականի մուտքերը ծրագրվել են փորձագիտական գնահատականով ներկայացված 2,265.1 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2023 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 42.6%-ը)՝ 2021 թվականի փաստացի ստացված 2,025.6 մլն դրամի դիմաց:
- ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) տալու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2023 թվականի մուտքերը ծրագրվել են 2022 թվականի սպասողական մուտքերի՝ 1,167.6 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2023 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 21.9 %-ը)՝ 2021 թվականի փաստացի ստացված 1,032.2 մլն դրամի դիմաց: 2022 թվականի սպասողական մուտքերը կանխատեսվել են 2022 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի

նկատմամբ կիրառելով 2021 թվականի տարեկան փաստացի մուտքերում առաջին 7 ամիսների տեսակարար կշռի ցուցանիշը:

• գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2023 թվականի մուտքերը կանխատեսվել են փորձագիտական գնահատականով ներկայացված 1,475.1 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2023 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 27.7%-ը), 2022 թվականի համար հաստատված 1,340.2 մլն դրամի և 2021 թվականին փաստացի ստացված 1,223.2 մլն դրամի դիմաց:

Գյուտերի, արդյունաբերական դիզայնների, բույսերի սորտերի, ապրանքային նշանների, աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների, երաշխավորված ավանդական արտադրանքի, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2023 թվականի մուտքերը կանխատեսվել են 313.3 մլն դրամի չափով՝ 2022 թվականի սպասողական մուտքերի նկատմամբ կիրառելով փորձագիտական գնահատականով ներկայացված՝ 2022 թվականի սպասողական ցուցանիշի նկատմամբ 2023 թվականի աճի տեմպը: 2022 թվականի սպասողական մուտքերը գնահատվել են 2022 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի միջինացված ցուցանիշի հիման վրա:

Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար ՀՀ ոստիկանության կողմից գանձվող պետական տուրքերի գծով 2023 թվականի մուտքերը կանխատեսվել են 2,840.8 մլն դրամի չափով, այդ թվում՝ կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի մասով կանխատեսումը համապատասխանում է փորձագիտական գնահատականներին (400.0 մլն դրամ և 454.5 մլն դրամ), իսկ ՀՀ քաղաքացու անձնագրի և այլ փաստաթղթերի համար գանձվող պետական տուրքերի մասով մուտքերը կանխատեսվել են 2021 թվականի փաստացի և 2022 թվականի սպասողական մուտքերի միջինացված ցուցանիշի՝ 1,986.3 մլն դրամի չափով: 2022 թվականի սպասողական մուտքերը կանխատեսվել են փաստացի ընթացիկ մուտքերի միջինացված ցուցանիշի հիման վրա:

Լիցենզավորման ենթակա կամ թույլտվություններով գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2023 թվականի մուտքերը կանխատեսվել են 19,850.0 մլն դրամի չափով՝ 2022 թվականի համար հաստատված 63,615.6 մլն և 2021 թվականին փաստացի ստացված 38,289.4 մլն դրամի դիմաց: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ, որոնցով սահմանվել են պետական տուրքերի նոր տեսակներ: 2022թ. օգոստոսի 9-ից ուժի մեջ է մտել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» 18.01.2022թ. ՀՕ-10-Ն օրենքը, որով սահմանվում է պետական տուրք անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից օդանավակայանի տաքսի ծառայություն կազմակերպելու համար: 2023 թ. փետրվարի 1-ից ուժի մեջ է մտնելու «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 07.07.2022թ. ՀՕ-321-Ն օրենքը, որով սահմանվել են պետական տուրքեր ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման թույլտվությունների տրամադրման համար:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» 15.07.2021թ. ՀՕ-310-Ն օրենքով սահմանված է պետական տուրք Հայաստանի Հանրապետությունից պղնձի խտահանքի, մոլիբդենի խտահանքի և մոլիբդենի և դրանից պատրաստված արտադրատեսակների (բացառությամբ՝ թափոններ և ջարդոն)՝ դեպի երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր սահմանափակում կիրառելու լիցենզիաներ տրամադրելու համար: 2023 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտնում վերոնշյալ տուրքերը ուժը կորցրած ճանաչելու մասին «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» 15.06.2022թ. ՀՕ-150-Ն օրենքը, որով պայմանավորված դրանց գծով 2023 թվականի համար կանխատեսումներ չեն կատարվել: Ընդ որում, նշված եկամտատեսակի գծով 2022 թվականի հաստատված ցուցանիշը 50 մլրդ դրամ է:

Այս խմբի պետական տուրքերի 2023 թվականի մուտքերի գերակշիռ մասը՝ 18,898.4 մլն դրամը կամ 95.2 %-ը նախատեսվում է գանձել վիճակախաղերի, շահումներով խաղերի, բանկային և ֆինանսավարկային կազմակերպությունների, պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և բնական ռեսուրսների, ինչպես նաև բանկային, մաքսային, տրանսպորտի և քաղաքաշինության բնագավառներում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար վճարվելիք պետական տուրքերի հաշվին: Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար գանձվող պետական տուրքերի գծով կանխատեսումներն իրականացվել են՝ ելնելով օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ առկա քանակական տվյալներից, 2021 թվականի փաստացի և 2022 թվականի սպասողական մուտքերից:

Այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2023 թվականի մուտքերը կանխատեսվել են 17,813.4 մլն դրամի չափով՝ 2022 թվականի համար հաստատված 13,300.2 մլն դրամի և 2021 թվականի փաստացի ստացված 15,412.5 մլն դրամի դիմաց: Նշված պետական տուրքերից 2023 թվականի բյուջետային մուտքերի գերակշռող մասը՝ 74.5 %-ը, ապահովվելու է ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկա-կան անձանց (օդային ուղևորների) ելքի համար գանձվող պետական տուրքի հաշվին:

ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար գանձվող պետական տուրքի գծով 2023 թվականի մուտքերը կանխատեսվել են 13,266.3 մլն դրամի չափով՝ 2022 թվականի սպասողական 8,179.9 մլն դրամ մուտքերի նկատմամբ կիրառելով փորձագիտական գնահատականով ներկայացված աճի տեմպը: 2022 թվականի սպասողական ցուցանիշը կանխատեսվել է փաստացի ընթացիկ մուտքերի միջինացված ցուցանիշի հիման վրա:

Պաշտոնական դրամաշնորհներ

Պաշտոնական դրամաշնորհները 2023 թվականի համար ծրագրվել են՝ հաշվի առնելով առկա պայմանագրերը, դոնորների հետ ձեռքբերված նախնական համաձայնությունները և Եվրամիությունից ակնկալվող դրամաշնորհների դեպքում՝ սպասումները:

Աղյուսակ 7. ***2019-2023թթ փաստացի/կանխատեսումային պաշտոնական դրամաշնորհները (մլրդ դրամներով)***

Պաշտոնական դրամաշնորհներ	2019թ փաստ	2020թ փաստ	2021թ փաստ	2022թ բյուջե	2023թ կանխա-տեսում

Ընդամենը, այդ թվում՝	12.4	53.2	12.4	35.1	17.2
ԵՄ (Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված դրամաշնորհային ծրագրեր)	4.5	47.3	2.8	5.0	1.1
Այլ նպատակային դրամաշնորհներ	7.9	5.9	9.6	30.1	16.2

Եվրոպական հարևանության ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի շրջանակներում Աջակցություն Հայաստանում դատական ոլորտի բարեփոխումների իրականացմանը ծրագրով նախատեսվում է բյուջետային օժանդակություն պաշտոնական դրամաշնորհների (չկապակցված դրամաշնորհներ) ստացում՝ 2.7 մլն եվրո կամ 1.1 մլրդ դրամ:

Նպատակային օժանդակություն պաշտոնական դրամաշնորհային (կապակցված դրամաշնորհներ) ծրագրերից նախատեսվում է 40.9 մլն ԱՄՆ դոլարի կամ 16.2 մլրդ դրամի ստացում: Նպատակային պաշտոնական դրամաշնորհային ծրագրերի գծով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծի ցուցանիշների մանրամասները ներկայացված են նախագծի N 1 հավելվածի N 5 աղյուսակում:

Այլ եկամուտներ

Այլ եկամուտները ներառում են բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարները, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինները, պետական ձեռնարկությունների գույքի օգտագործման վճարները, պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց վճարները (տոկոսավճարները), իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ստացվող մուտքերը, պետական մարմինների կողմից ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից մուտքերը և այլ եկամուտները:

Այլ եկամուտների գծով մուտքերը 2023 թվականի համար համար ծրագրվել են 81.1 մլրդ դրամի չափով, հաշվի առնելով գանձման համար պատասխանատու պետական կառավարման մարմինների կողմից ՀՀ 2023 թվականի բյուջետային գործընթացի շրջանակում համապատասխան հայտերով ներկայացված կանխատեսումները, կատարված օրենսդրական փոփոխությունները, ինչպես նաև առանձին եկամտատեսակների գծով նախորդ տարիներին արձանագրված միտումները:

Այլ եկամուտների գծով կանխատեսումային ցուցանիշների ընդհանուր պատկերն ըստ եկամտի հիմնական աղբյուրների հետևյալն է.

Աղյուսակ 9. ***Այլ եկամուտների կազմում հաշվառվող եկամտատեսակների գծով ՀՀ 2019-2023թթ փաստացի/կանխատեսումային ցուցանիշները (մլրդ դրամներով)***

Այլ եկամուտներ	2019թ փաստ	2020թ փաստ	2021թ փաստ	2022թ բյուջե	2023թ կանխատեսում

Ընդամենը	88.8	122.2	84.6	62.1	81.1
Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ	2.4	0.4	1.2	6.7	4.5
Տոկոսավճարների և շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտներ	24.8	35.2	41.9	26.0	40.7
Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքեր	15.7	11.5	16.4	10.8	14.2
Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտներ, որից՝	34.0	16.4	21.3	17.5	19.7
Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներ	11.9	58.7	3.8	1.2	2.1

Ստորև ներկայացվում են 2023 թվականի այլ եկամուտների գծով կանխատեսվող մուտքերի հաշվարկներում կիրառված մեթոդաբանության համառոտ նկարագրությունը:

Պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի (բացառությամբ հողի) վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները 2023 թվականի համար կանխատեսվում են շուրջ 4,456.8 մլն դրամ, 2022 թվականի համար ծրագրված 6,675.2 մլն դրամի և 2021 թվականին փաստացի ստացված 1,185.8 մլն դրամի դիմաց: Կանխատեսումներում հիմք են ընդունվել պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկությունները վարձակալական պայմանագրերի համաձայն 2023 թվականներին վճարվելիք վարձավճարների վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան բյուջետային փաստացի մուտքերի գծով գանձապետական տվյալները:

Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում գանձապետական միասնական հաշվի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարներից, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2023 թվականին ակնկալվում են 27,341.3 մլն դրամի չափով մուտքեր: Մասնավորապես.

Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների գծով մուտքերը ծրագրվել են 18,300.0 մլն դրամ՝ 2022 թվականի համար ծրագրված 13,100.0 մլն դրամի և 2021 թվականի փաստացի ստացված 29,470.5 մլն դրամի դիմաց: 2023 թվականի մուտքերն ապահովվելու են հիմնականում ի հաշիվ ժամանակավորապես ազատ բյուջետային միջոցները ՀՀ ԿԲ-ում ավանդադնելու դիմաց ՀՀ ԿԲ-ի և ՀՀ ՖՆ միջև կնքված «Հաշվի սպասարկման մասին» պայմանագրի հիման վրա վճարվելիք տոկոսավճարների:

Իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2023 թվականին ակնկալվում են 9,041.3 մլն դրամի չափով մուտքեր՝ 2022 թվականի

համար ծրագրված 1,037.9 մլն դրամի և 2021 թվականին փաստացի ստացված 789.1 մլն դրամի դիմաց: Շահաբաժինների գծով 2023 թվականի կանխատեսվող մուտքերը ծրագրելիս հաշվի է առնվել ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 202-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն պետական մասնակցության դիմաց պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների հաշվարկման բազայի 50%-ի չափով պետական բյուջե կատարվելիք մասհանումների սահմանումը:

Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարները 2023 թվականին կանխատեսվում են 13,312.7 մլն դրամի չափով: Մասնավորապես.

ՀՀ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործումից 2023 թվականին ակնկալվում է ստանալ 13,281.0 մլն դրամ՝ 2022 թվականի համար ծրագրված 11,774.4 մլն դրամի և 2021 թվականին փաստացի ստացված 11,469.6 մլն դրամի դիմաց: Այն ծրագրվել է՝ հաշվի առնելով համապատասխան պայմանագրերով նախատեսված դրույթները: Մասնավորապես, 2023 թվականին տոկոսավճարների գծով մուտքերն ապահովվելու են ի հաշիվ «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր», «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր», «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ներին, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ին և այլ կազմակերպություններին տրամադրված վարկերի դիմաց հաշվարկված տոկոսավճարների:

Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտին տրամադրված վարկերի գծով 2023 թվականի բյուջետային մուտքերը կգոյանան Վրաստանի Հանրապետությանը տրամադրված վարկի սպասարկման տոկոսավճարներից, որոնք կկազմեն 80.2 հազ. ԱՄՆ դոլար կամ մոտ 31.7 մլն դրամ՝ 2022 թվականի համար ծրագրված 50.6 մլն դրամի և 2021 թվականին փաստացի ստացված 77.5 մլն դրամի դիմաց:

Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից 2023 թվականի մուտքերը գնահատվել են 14,198.0 մլն դրամի չափով՝ 2022 թվականի համար ծրագրված 10,798.8 մլն դրամի և 2021 թվականին փաստացի ստացված 16,360.6 մլն դրամի դիմաց: Կանխատեսումները կատարված են ըստ համապատասխան իրավական հիմքով վարչական պատժամիջոց կիրառող պետական կառավարման մարմինների՝ հաշվի առնելով պատժամիջոցների գծով 2019-2021 թվականների մուտքերի հավաքագրման միտումները, ինչպես նաև այս բնագավառում իրականացված օրենսդրական փոփոխությունները:

Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտների գծով 2023 թվականի պետական բյուջեի մուտքերը գնահատվել են 19,683.4 մլն դրամի չափով՝ 2022 թվականի համար ծրագրված 17,455.9 մլն դրամի և 2021 թվականին փաստացի ստացված 21,285.8 մլն դրամի դիմաց: Կանխատեսումները կատարվել են պետական կառավարման մարմիններից ստացված հայտերի և 2019-2021 թվականների մուտքերի հավաքագրման միտումների հիման վրա:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով 2023 թվականի պետական բյուջեի մուտքերը գնահատվել են 2,088.0 մլն դրամի չափով՝ 2022 թվականի համար ծրագրված 1,168.7 մլն դրամի և 2021 թվականին փաս-

տացի ստացված 3,090.4 մլն դրամի դիմաց: Այն կանխատեսվել է՝ ելնելով նախորդ տարիների փաստացի մուտքերի միտումներից:

Մ Ա Ս III – Բ. Ծ Ա Խ Ս Ե Ր Ի Կ Ա Ն Խ Ա Տ Ե Ս Ո Ւ Մ

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրավորվել է շուրջ 2,591.0 մլրդ դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի 78.9%-ը կամ 2,043.3 մլրդ դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, 21.1%-ը կամ 547.7 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին: ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծի ծախսային մասը ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի հաստատված մակարդակի համեմատ ավելացել է շուրջ 407.0 մլրդ դրամով:

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալները, կազմն ու կառուցվածքը ձևավորվել են ելնելով 2023 թվականի մակրոտնտեսական կանխատեսումներից, գների և սակագների կանխատեսվող ցուցանիշներից, հանրապետությունում տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքը խաթարող նոր բյուջետային պարտքերի չառաջացման անհրաժեշտությունից ու առանձին ծախսատեսակների գծով մշակված բյուջետային նորմատիվներից:

«Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը կազմվել է Ծրագրային բյուջետավորման ձևաչափով՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համահունչ, ապահովելով ծրագրային բյուջետավորման սկզբունքների ամբողջական ներդրումը: Ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման հիմնական նպատակն է բարելավել հանրային ծախսերի առաջնահերթությունների սահմանումը և բարձրացնել հանրային ֆինանսների կառավարման թափանցիկությունը, հաշվետվողականությունը, արդյունավետությունը և արդյունքայնությունը, ինչպես նաև բյուջետային տեղեկատվությունը ներկայացնել այնպիսի ձևաչափով, որը հնարավոր կդարձնի վերահսկել, թե ինչպես է բյուջեն օգտագործվում ընդունված քաղաքականություններն իրականացնելու համար: Փոփոխությունները ֆորմալ առումով ուղղված են ծրագրային դասակարգումը՝ որպես բյուջետային հատկացումների հիմնական դասակարգում սահմանելուն, բյուջետային գործընթացի բոլոր փուլերում (բյուջեի պլանավորում, կատարում, հաշվետվողականություն):

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշներն ու ծախսային ծրագրերի գծով վերջնական արդյունքային ցուցանիշները ներկայացված են համապատասխանաբար սույն բացատրագրի NN 3 և 13 հավելվածներում:

ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

2023 թվականի պետական բյուջեի ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է 21.93 %: Նույն ժամանակահատվածում ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերի հարաբերակցությունները ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է 5.88%:

Աղյուսակ 8. ***2019-2023թթ ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի փոփոխության և հարաբերակցության միտումները***

Ցուցանիշներ	2019թ. փաստացի	2020թ. փաստացի	2021թ. փաստացի	2022թ. հաստատված	2023թ. բյուջեի նախագիծ
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, (մլն դրամ)	1,629,437	1,894,647	2,004,301	2,184,040	2,590,973
այդ թվում՝					
- ընթացիկ ծախսեր, (մլն դրամ)	1,436,420	1,666,949	1,791,856	1,842,155	2,043,313
- %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	21.95%	26.97%	25.66%	23.58%	21.93%
- ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնություններ, (մլն դրամ)*	193,017	227,698	212,445	341,885	547,660
%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	2.95%	3.68%	3.04%	4.38%	5.88%

*ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունները հանրագումար են ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի գծով ծախսերի (-10,000.0 մլն դրամ) և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի (557,660.3 մլն դրամ):

Գծապատկեր 2. ***2019-2023թթ. ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունների փոփոխության և հարաբերակցության միտումները***



2023 թվականի ծախսերի ընդհանուր ծավալի միջին տարեկանի շուրջ 78.9%-ը կկազմեն **ընթացիկ ծախսերը**, (2022 թվականին այդ ցուցանիշը ծրագրվել է 84.4):

Դիտարկվող ժամանակահատվածում ընթացիկ ծախսերն ուղղված կլինի ծառայությունների մատուցման, տրանսֆերտների տրամադրման, ֆինանսավորման ծախսերի իրականացման և հանրության կողմից անմիջականորեն օգտագործվող ակտիվների հետ կապված միջոցառումներին:

2023թ. ընթացիկ ծախսերի ֆինանսավորման ըստ տնտեսագիտական դասակարգման կառուցվածքի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ ներկայացված է ստորև:

Գծապատկեր 3. ***2019-2023թթ. ընթացիկ ծախսերի ֆինանսավորման ըստ տնտեսագիտական դասակարգման կառուցվածքի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ***



2023թ. պետական բյուջեից աշխատավարձերին ուղղվող ծախսերը կկազի ավելի քան 211 մլրդ դրամ կամ 2022թ. հաստատված բյուջեից ավել 14.5 տոկոսով կամ 26.8 մլրդ դրամով: 2023թ. տոկոսավճարների գծով ծախսը կազմում է 273 մլրդ դրամ: 2023թ. պետական բյուջեից կազմակերպություններին նախատեսվում է տրամադրել 151.5 մլրդ դրամի սուբսիդիաներ, որը 2022 թվականի հաստատված բյուջեի համեմատ սուբսիդիաների գծով ծախսն ավել է կանխատեսվել 6.8 տոկոսով կամ 9.6 մլրդ դրամով:

2023թ. ընթացիկ ծախսերի աճը մեծապես ապահովվելու է սոցիալական նպաստների և կենսաթոշակների վճարների գծով պետական բյուջեի ծախսերի (660 մլրդ դրամ) ավելացման հաշվին, որոնք 2022 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ ավելացել է 15.3 տոկոսով կամ 88 մլրդ դրամով:

2023թ պետական բյուջեից նախատեսվում է տրամադրել դրամաշնորհներ՝ 268 մլրդ դրամ 2022 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ համապատասխանաբար 17.3 տոկոսով կամ 40 մլրդ դրամով ավել:

2023թ պետական բյուջեից նախատեսվում է տրամադրել ծառայությունների, ապրանքների ձեռքբերման և այլ ծախսերի գծով 479 մլրդ դրամ, որը 2022 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ համապատասխանաբար 4.3 տոկոսով կամ 21.7 մլրդ դրամով պակաս:

Աղյուսակ 9. ***2019-2023թթ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման կառուցվածը ըստ տնտեսագիտական դասակարգման***

մլն դրամ

Ցուցանիշներ	2019թ փաստացի	2020թ փաստացի	2021թ փաստացի	2022թ հաստատված	2023թ. բյուջե
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	**1,437,143**	**1,668,458**	**1,787,966**	**1,842,155**	**2,043,313**
այդ թվում՝					
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ	172,579	176,101	181,411	184,592	211,427
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	192,121	179,162	198,480	172,513	187,478
ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐ	157,553	164,767	180,836	213,845	272,948
ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ	113,376	119,079	136,778	141,852	151,494
ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	150,000	186,854	204,691	228,749	268,313
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ	453,219	559,072	621,158	572,071	659,835
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	198,296	283,422	264,612	328,533	291,817

2023 թվականի պետական բյուջեից նախատեսվում է տրամադրել **հատկացումներ ՀՀ համայնքներին**, որը կազմել է շուրջ 103.3 մլրդ դրամ (2022 թվականին այն կազմել է՝ շուրջ 91.2 մլրդ դրամ) կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 4.0 % և ՀՆԱ-ի 1.1 %:

Աղյուսակ 10. ***ՀՀ պետական բյուջեից համայնքներին տրվող հատկացումների վերաբերյալ***

հազ. դրամ

Ցուցանիշներ	2019 թվական փաստայի	2020 թվական փաստացի	2021 թվական փաստացի	2022 թվական հաստատված	2023 թվական նախագիծ
ԸՆԴԱՄԵՆԸ	**67,606,297.1**	**82,364,940.5**	**86,581,371.0**	**91,158,389.0**	**103,294,144.7**
Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ, որից	**51,071,361.3**	**55,378,535.0**	**64,596,984.0**	**64,349,123.0**	**69,754,656.6**
Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին, որից	**2,242.0**	**3,372,222.2**	**28,219.3**	**265,232.3**	**783,103.0**
«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի կիրարկմամբ պայմանավորված ֆինանսական փոխհատուցում ՏԻՄ-երին		3,321,871.7			
Սուբվենցիաներ համայնքներին, այդ թվում	**15,801,349.6**	**22,860,028.8**	**21,028,722.5**	**25,388,827.9**	**31,782,682.5**
ընթացիկ սուբվենցիաներ	9,268,940.8	8,741,376.7	7,135,964.7	6,940,393.6	7,705,582.7
կապիտալ սուբվենցիաներ	6,532,408.8	14,118,652.1	13,892,757.8	18,448,434.3	24,077,099.8
«Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ պայմանավորված պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին	**731,344.2**	**754,154.5**	**927,445.2**	**1,155,205.8**	**973,672.6**

2023 թվականի ծախսերի ընդհանուր ծավալի 21.5 %-ը կկազմեն ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը, (2022 թվականին այդ ցուցանիշը ծրագրվել է 15.65%):

2023 թվականի ընթացքում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքում արձանագրվում է ներքին աղբյուրների ծավալի ավելացում, իսկ արտաքին աղբյուրների ծավալները նվազում:

Գծապատկեր 4. *2019-2023 թթ. ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքը*



Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի իրականացման գերակայությունները հանդիսանալու են ինչպես ենթակառուցվածքային, այնպես էլ սոցիալական ոլորտներում ներդրումները:

Աղյուսակ 11. *2019-2023թթ. ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածը ըստ արտաքին և ներքին աղբյուրների*

մլն դրամ

Ցուցանիշներ	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.	2023թ.
Ընդամենը	*193,017*	*227,698*	215,936	*351,944*	*557,660*
- *արտաքին աղբյուրներ*	*71,631*	*44,266*	82,926	*130,358*	*121,902*
- ներքին աղբյուրներ	121,387	183,433	133,009	221,586	435,758
Տրանսպորտ, այդ թվում	*34,357*	*42,170*	58,833	99,505	105,874
- *արտաքին աղբյուրներ*	*18,830*	*14,286*	24,692	52,404	50,467
- ներքին աղբյուրներ	15,528	27,884	34,140	47,101	55,406
Էներգետիկա, այդ թվում	*4,489*	*182*	1,207	1,088	2,030
- *արտաքին աղբյուրներ*	*4,489*	182	1,207	1,088	2,030
- ներքին աղբյուրներ	0	0	0	0	0
Շրջակա միջավայր և գյուղատնտեսություն	*3,904*	*1,526*	7,294	5,758	3,754
- *արտաքին աղբյուրներ*	*3,558*	*1,175*	6,754	5,157	2,668
- ներքին աղբյուրներ	346	351	540	602	1,086
Ջրային տնտեսություն	*6,820*	*11,523*	20,151	34,699	38,357
- *արտաքին աղբյուրներ*	*4,662*	*9,513*	18,464	25,542	29,348
- ներքին աղբյուրներ	2,158	2,009	1,687	9,156	9,009
Առողջապահություն	*1,979*	*4,631*	961	7,177	11,645
- *արտաքին աղբյուրներ*	*530*	*2,566*	961	7,177	2,845
- ներքին աղբյուրներ	1,450	2,065	0	0	8,800
Կրթություն, գիտություն մշակույթ և սպորտ	*4,774*	*12,314*	9,977	33,346	52,274
- *արտաքին աղբյուրներ*	*1,672*	*8,786*	8,540	8,963	13,550
- ներքին աղբյուրներ	3,102	3,528	1,437	24,382	38,724
Սոցիալական	*547*	*1,520*	2,500	2,927	7,813
- *արտաքին աղբյուրներ*	*465*	*1,208*	1,210	2,615	7,375
- ներքին աղբյուրներ	82	312	1,291	312	438
Ուժային	*114,347*	*140,390*	88,736	131,313	291,246
- *արտաքին աղբյուրներ*	*31,389*	*0*	0	0	0
- ներքին աղբյուրներ	82,958	140,390	88,736	131,313	291,246
Այլ	*21,800*	*13,444*	26,277	36,132	44,667
- *արտաքին աղբյուրներ*	*6,037.00*	*6,551.00*	21,099.00	27,412.00	13,618.80
- ներքին աղբյուրներ	15,764.00	6,894.00	5,178.00	8,719.00	31,048.60

ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

2019-2023թթ.ժամանակահատվածում նկատելի է նախորդ տարվա համեմատությամբ պետական բյուջեի ընդամենը ծախսերի աճը՝ 2020թ թվականին՝ 2019 թվականի համեմատ 265,6 մլրդ. ՀՀ դրամի, 2021 թվականին՝ 2020-ի համեմատ՝ 109.7 մլրդ. ՀՀ դրամի չափով: Բացառություն չէ նաև 2022թ. պետական բյուջեն, որը նախորդ՝ 2021 թվականի համեմատ հաստատվել է ծախսերի 179.7 մլրդ. ՀՀ դրամ ավել չափով: Ծախսերի աճման միտումը պահպանվելու է 2023 թվականին. ծախսային չափաքանակների հնարավորությունները սահմանվում են ավելի բարձր, քան նախորդ հաստատված՝ 2022 թվականի բյուջետային ծախսերի չափաքանակներն են՝ շուրջ 407.0 մլրդ ՀՀ դրամի չափով:

Գծապատկեր 5. *2018-2023թթ. ծախսերի համեմատականը*



ՀՀ 2019-2023 թվականների պետական բյուջեների ծախսեր՝ ըստ ոլորտների բնութագրվում են ստորև ներկայացված աղյուսակի ցուցանիշներով:

Աղյուսակ 12. ՀՀ 2019-2023թթ. պետական բյուջեների ծախսերը՝ ըստ ոլորտների (մլն. դրամ)

Ցուցանիշներ	2019թ. փաստացի	2020թ. փաստացի	2021թ. փաստացի	2022թ. հաստատված	2023թ. նախագիծ
ԸՆԴԱՄԵՆԸ	**1,629,436.9**	**1,894,647.0**	**2,004,300.9**	**2,184,040.1**	**2,590,973.1**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	24.8%	30.6%	28,7%	27.8%	27.8%
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	**320,072.9**	**344,340.6**	**380,973.3**	**498,427.9**	**549,388.2**

Ցուցանիշներ	2019թ. փաստացի	2020թ. փաստացի	2021թ. փաստացի	2022թ. հաստատված	2023թ. նախագիծ
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	4.9%	5.5%	5,5%	6. 3%	5.9%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	19.6%	18.2%	19.0%	22.8%	21.2%
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	**459,284.1**	**539,185.3**	**495,984.9**	**518,619.0**	**723,242.8**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	7.0%	8.7%	7.1%	6.6%	7.8%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	28.2%	28.5%	24.7%	23.7%	27.9%
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ	**133,980.8**	**138,887.2**	**167,330.0**	**237,390.2**	**267,617.9**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.0%	2.4%	2.4%	3.0%	2.9%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	8.2%	7.3%	8.3%	10.9%	10.3%
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ	**716,099.0**	**872,233.8**	**960,012.6**	**929,603.0**	**1,050,724.2**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	10.9%	14.1%	13.7%	11.8%	11.3%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	43.9%	46.0%	47.9%	42.6%	40.6%

ՀՀ 2019-2023 թվականների պետական բյուջեի ծախսերն ըստ ոլորտների ունեն հետևյալ գրաֆիկական տեսքը.



2019-2023թթ. պետական բյուջեի ընդամենը ծախսերում գերակայել են սոցիալական բնույթի ծախսերը (կրթություն, սոցիալական պաշտպանություն, առողջապահություն և այլն) միջինում 44%, պաշտպանության, հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեությանն՝ միջինում 27%, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների,այդ թվում հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդերի՝ միջինում 20%, տնտեսական ոլորտի՝ միջինում 9% ֆինանսավորումը: Այս միտումը կշանունակվի նաև 2023 թվականին:

2023թ. ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների և պահուստային ֆոնդերի ոլորտին ուղղվելիք միջոցները նախատեսվել են շուրջ 50,960.3 մլն. դրամով ավել՝ համեմատած 2022 թվականի հետ:

2023թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է նաև պաշտպանության, հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության ոլորտին հատկացվելիք միջոցների աճ՝ 2022 թվականի համեմատ շուրջ 204,623.8 մլն դրամի չափով, որը հիմնականում ուղղվելու է ռազմական պաշտպանության, հասարակական կարգի և անվտանգության, ազգային անվտանգության, դատական գործունեություն և իրավական պաշտպանության ապահովմանը:

2023 թվականին, ինչպես և 2022 թվականին, տնտեսության ճյուղերի պետական ֆինանսավորումը նպատակաուղղված է լինելու ենթակառուցվածքների, տնտեսության իրական հատվածի, բարձր տեխնոլոգիական արդյունաբերական, ինչպես նաև բնապահպանական բարձր չափանիշներին համապատասխանող՝ արտահանմանը միտված մրցունակ և ներառական տնտեսության կառուցմանն ուղղված ծրագրերի իրականացմանը: 2023 թվականին տնտեսության ոլորտի հատկացումներն ուղղվելու են ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով սահմանված տնտեսության մրցունակության և արտադրողականության աճի, տնտեսական հնարավորությունների ընդլայնման և դրանց հավասար հասանելիության ապահովմանը:

Աղյուսակ 13. Տնտեսական ոլորտի 2019-2023թթ. բյուջետային ծախսերը (մլն. դրամ)

Ցուցանիշներ	2019թ. փաստացի	2020թ. փաստացի	2021թ. փաստացի	2022թ. հաստատված	2023թ. նախագիծ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ ԸՆԴԱՄԵՆԸ	**133,980.8**	**138,887.2**	**167,330.0**	**237,390. 2**	**267,617.9**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.0%	2.4%	2.4%	3.0%	2.9%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	8.2%	7.3%	8.3%	10.9%	10.3%
այդ թվում՝					
1.ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**111,916.2**	**125,559.4**	**151,763.9**	**211,599.0**	**239,252.5**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.70%	2,03%	2.17%	2.69%	2.6%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	6.9%	6.6%	7.6%	9.7%	9.2%
2.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	**5,816.9**	**4,424.2**	**6,024.3**	**9,766.5**	**9,392.2**

Ցուցանիշներ	2019թ. փաստացի	2020թ. փաստացի	2021թ. փաստացի	2022թ. հաստատված	2023թ. նախագիծ
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.09%	0.07%	0.08%	0.12%	0.1%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	0.36%	0.23%	0.30%	0.45%	0.4%
3. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**16,247.5**	**8,903.6**	**9,541.8**	**16,024.6**	**18,973.2**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.25%	0.01%	0.13%	0.20%	0.20%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.00%	0. 47%	0.47%	0.73%	0.73%

Սոցիալական ոլորտի խմբում 2019-2022 թվականներին առանցքային են եղել և 2023 շարունակվելու են կարևորվել հատկապես սոցիալական ապահովության, կրթության և առողջապահության բնագավառների զարգացման ռազմավարական ծրագրերի իրականացումը:

Աղյուսակ 14. Սոցիալական ոլորտի 2019-2023թթ. բյուջետային ծախսերը (մլն դրամ)

Ցուցանիշներ	2019թ. փաստացի	2020թ. փաստացի	2021թ. փաստացի	2022թ. հաստատված	2023թ. նախագիծ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ ԸՆԴԱՄԵՆԸ	**716,099.00**	**872,233.8**	**960,012.6**	**929,603.0**	**1,050,724.2**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	10.9%	14.1%	11.8%	11.8%	11.3%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	43.9%	46.0%	42.6%	42.6%	40.6%
այդ թվում՝					
1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	**129,336.3**	**143,796.3**	**149,086.3**	**193,026.5**	**211,909.6**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.0%	2.3%	2.3%	2.5%	2.3%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	7.9%	7.6%	7.4%	8.8%	8.2%
2.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	**453,921.2**	**546,575.7**	**620,005.4**	**581,318.0**	**653,458.3**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	6.9%	8.8%	8.9%	7.4%	7%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	27.9%	28,8%	30.9%	26.6%	25.2%
3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	**99,283,0**	**148,236.7**	**160,496.8**	**122,484.1**	**148,979.5**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.5%	2. 3%	2.3%	1.6%	1.6%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	6.1%	7. 8%	8.0%	5.6%	5.7%

Ցուցանիշներ	2019թ. փաստացի	2020թ. փաստացի	2021թ. փաստացի	2022թ. հաստատված	2023թ. նախագիծ
4. ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	**33,558,3**	**33,625.0**	**30,424.0**	**32,774.3**	**36,376.8**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.5%	0.2%	0.4%	0.4%	0.4%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	2.1%	1.8%	1.5%	1.5%	1.4%

2019-2023թթ.ժամանակահատվածում կրթության և առողջապահության ոլորտների ֆինանսավորումը ՀՆԱ նկատմամբ փոփոխական բնույթ է կրել:

2023թ.համար այս ոլորտների բյուջետային ծախսերի չափաքանակները սահմանելիս առաջնային է դիտարկվել նշված ոլորտների համար ծախսեր/ՀՆԱ ցուցանիշի առաջանցիկ մակարդակի ապահովումը:

2019-2023թթ. ընթացքում կրթության ոլորտին ուղղված պետական միջոցները կազմել են համապատասխանաբար 129,336.3, 143,796.3, 149,086.3, 193,026.5 և 211,909.6 մլն. ՀՀ դրամ: 2023թ. ոլորտի ֆինանսավորման համար հատկացվելիք 211,909.6 մլն դրամը նախատեսվում է համամասնորեն ուղղել կրթության առանձին տեսակների՝ նախադպրոցական, տարրական, միջնակարգ, մասնագիտական, բարձրագույն, հետբուհական, ինչպես նաև կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ֆինանսավորմանը:

Առողջապահության ոլորտի ֆինանսավորումը 2019-2023թթ համապատասխանաբար կազմել է 99,283,0, 148,236.7, 160,496.8, 122,484.1 և 148,979.5 մլն դրամ: 2023թ.ոլորտին ուղղվող ծախսերը նախորդ տարվա համեմատ ավելացել են 26,495.4 մլն. դրամով և պլանավորվում են 148,979.5 մլն դրամի չափով, որոնք, հաշվի առնելով 2020-2022թթ. համավարակով պայմանավորված առողջապահության համակարգի համաշխարհային արդի մարտահրավերներն, առաջնահերթ ուղղվելու են վերջինիս դեմ պայքարի միջոցառումների իրականացմանը, հանրությանը պատվաստանյութերով ապահովմանը, առողջապահական համակարգի ռիսկերին արագ և համարժեք արձագանքմանը: Միաժամանակ, համաձայն ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի առաջնահերթությունների, առողջապահության ոլորտի ֆինանսավորումը 2023 թվականին ուղղվելու է նաև մարզային առողջապահական կազմակերպությունների շենքային և նյութատեխնիկական պայմանների բարելավման աշխատանքների իրականացմանը:

2019-2021թթ. սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորումն աճողական բնույթ է կրել՝ համապատասխանաբար կազմելով 453,921.2, 546,575.7 620,005.4 մլն դրամ: Բացառություն է 2022 թվականը, երբ ոլորտին ուղղվող ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են: 2023թ. ոլորտի ֆինանսավորման աճի միտումը վերստին է դրսևորվում՝ կազմելով 653,458.3 մլն.դրամ, որը, ինչպես և դիտարկվող տարիների ընթացքում, առաջնահերթ ուղղվելու է տարեցներին և հաշմանդամներին աջակցության տրամադրմանը, ինչպես նաև գործազրկության, սոցիալական հատուկ արտոնությունների, բնակարային ապահովման, ընտանեկան նպաստների տրամադրման և այլ սոցիալական ծառայությունների ապահովմանը: Բացի այդ, ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով սահմանված առաջնահերթություններից ելնելով, ոլորտի հատկացումները ուղղվելու են ծնելիության խթանմանը և բազմազավակ ընտանիքներին պետական աջակցության ցուցաբերմանը:

2023 թվականի ընթացքում պետական բյուջեների ծախսերի ընդհանուր ծավալը որոշ կախվածության մեջ կլինի նաև արտաքին հոսքերից:

Աղյուսակ 15. Արտաքին աղբյուրներից 2023թ. ստացվելիք միջոցների (վարկերի և պաշտոնական դրամաշնորհներ) հաշվին ֆինանսավորվող ծախսերը

Ցուցանիշներ	2019թ.	2020 թ.	2021թ.	2022թ.	2023թ.
Արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվող ծախսերի ծավալը (մլն դրամ)	76,301.5	161,535.7	86,707.3	129,389.0	110,263.1
- հարաբերությունը ՀՆԱի նկատմամբ (%)	1.2%	2.6%	1.4%	1.6%	1.2%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	4.7%	8.9%	4.7%	6.0%	4.3%

Արտաքին աղբյուրներից վարկերի և պաշտոնական դրամաշնորհների տեսքով ստացվելիք միջոցների հաշվին 2023 թվականին ֆինանսավորվող ծախսերի տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում կազմում է 4.3% և ՀՆԱ-ի նկատմամբ՝ 1.2%:

2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ կառավարության ծրագրին համապատասխան ծախսային քաղաքականության արդյունավետության բարձրացման տեսանկյունից միջնաժամկետ ժամանակահատվածում կարևորվում է հանրային ֆինանսների նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործումը, ինչի արդյունքում ՀՀ պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում աստիճանաբար հնարավորության սահմաններում կմեծանա մարդկային կապիտալին և ենթակառուցվածքներին ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը:

2023թ. բյուջեի 6-րդ հավելվածով ներկայացվել են ծախսային առաջնահերթությունները՝ 13,622 մլրդ դրամի չափով:

ԲԳԿ-ների կողմից ներկայացված առաջնահերթությունները 2023թ. բյուջեում լրացուցիչ ֆինանսական միջոցների առկայության պայմաններում (Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման բարենպաստ միջավայրի և այլ գործոններով պայմանավորված), ինչպես նաև 2023թ ընթացքում բյուջեով նախատեսված ծախսերի կրճատման, ծախսային ուղղությունների գծով հնարավոր գերակայությունների (առաջնահերթությունների) փոփոխման արդյունքում վերաբաշխումների (փոխատեղումների), խնայողությունների առկայության, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի դեֆիցիտի սահմանաչափի ավելացման պարագայում վերջիններիս ֆինանսավորումը պետք է իրականացվեն առաջնահերթ կարգով՝ կապիտալ ծախսերի դեպքում հիմք ընդունելով համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա այդ աշխատանքների արժեքների ճշգրտումները:

Առաջնահերթություններում կարևորվում է նաև կապիտալ ծրագրերի դերը, որոնք իրենց ուրույն տեղն են գտել նաև ՊՖԿՀ բարեփոխումների ռազմավարությունում, որտեղ «Հանրային ներդրումների կառավարման» համակարգի ներդրումը դիտվում է որպես կապիտալ ծրագրերի գնահատման, առաջնահերթությունների որոշման և ֆինանսավորման համար անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկման առանցքային գործիքակազմի բաղադրիչներից մեկը: Այս միջոցառման իրականացումը ապագայում կնպաստի կապիտալ ծախսերի իրականացման արդյունավետության բարձրացմանը՝ խթանելով երկարաժամկետ տնտեսական աճի արագացումը:

ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ

Հանրային իշխանության մարմինների պահպանման ծախսեր

Ոլորտը ներառում է Սահմանադրությամբ և օրենքով ստեղծված պետական մարմինների պահպանմանն ուղղված բյուջետային ծրագրերի ու միջոցառումների շրջանակը, որն ընդգրկում է պետական իշխանության մարմինների (օրենսդիր, գործադիր և դատական), Սահմանադրությամբ և օրենքով ստեղծված ինքնավար և անկախ մարմինների ընթացիկ պահպանումը և տեխնիկական միջոցներով ապահովումը:

Պետական կառավարման համակարգի մարմինների պահպանման ծախսերի ընդհանուր գումարը ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծում ծրագրավորված է 151,332.5 մլն դրամի չափով, որը 2021 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2022 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների նկատմամբ կազմում է համապատասխանաբար 121.1 և 113.2 տոկոս: Նշված ցուցանիշների համեմատությունը արտացոլված է սույն բացատրագրի N 2 աղյուսակում:

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծում ծրագրավորված պետական կառավարման համակարգի մարմինների պահպանման ընթացիկ ծախսերը նախատեսվել են 147,847.1 մլն դրամի չափով, իսկ ոչ ֆինանսական (կապիտալ) ակտիվների գծով ծախսերը նախատեսվել են 3,485.4 մլն դրամի չափով՝ առանձին պետական մարմիններում տեխնիկական կարողությունների զարգացման նպատակով:

Պետական կառավարման համակարգի մարմինների պահպանման ծախսերը ծրագրավորելիս դիտարկվում է Կառավարության ծրագրով նախանշված ուղղություններին և նպատակներին դրանց համապատասխանությունը, ինչպես նաև հաշվի են առնվում պետական կառավարման համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումները՝ համաձայն առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերի:

Հանրային կառավարման համակարգի խորքային բարեփոխումների անհրաժեշտությունն ամրագրված է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026թթ. ինգամյա ծրագրով: Կառավարությունը 2019 թվականից ձեռնամուխ է եղել հանրային կառավարման համակարգում համընդգրկուն բարեփոխումների օրակարգ ձևավորելու ու իրագործելու գործին: Մի շարք կարևոր ռազմավարություններ ու գործողությունների ծրագրեր են ընդունվել և սկսել իրագործվել, որոնցից՝ հակակոռուպցիոն, պետական ֆինանսների կառավարման, թվայնացման, դատական և իրավական բարեփոխումների և այլն:

Հանրային կառավարման համակարգի համալիր բարեփոխման նպատակով ՀՀ կառավարության 13.05.2022թ. N 691-Լ որոշմամբ ընդունվել է «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը, 2022-2024 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքային շրջանակը, ռազմավարության իրականացման հսկողությունն ու համակարգումն ապահովող անձանց ցանկը:

ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշման դրույթներին համապատասխան, 2021 թվականի մարտի 24-ին ընդունվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՕ-147-Ն օրենքը, որից հետո ընդունվել են Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման և

ձևավորման հետ կապված, ինչպես նաև գործունեության ոլորտը կարգավորող մի շարք իրավական ակտեր:

ՀՀ կառավարության 21 հուլիսի 2022 թվականի N 1133-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և այդ ռազմավարությունից բխող գործողությունների ծրագիրը: Մասնավորապես, Ծրագրի 5-րդ նպատակը նախանշված է քրեաիրավական ոլորտի բարեփոխումների ուղղությամբ: Այս բարեփոխումների ուղղությամբ սահմանված են որոշակի արդյունքներ, որոնց իրականացման նպատակով համապատասխան միջոցներ են նախատեսված ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծում: Այսպես, նախատեսվում է ապահովել և վերազինել նախաքննության մարմիններին անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, մասնավորապես համակարգչային սարքավորումներով և տեսախցիկներով (Գործողություն 1), զինել Պրոբացիայի ծառայությանն էլեկտրոնային հսկողության անհրաժեշտ միջոցներով և ենթակառուցվածքներով՝ կալանքին այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների (տնային կալանք, վարչական հսկողություն) և ազատազրկման այլընտրանք հանդիսացող պատիժների (ազատության սահմանափակում) կիրառման նպատակով (Գործողություն 2), ապահովել նախաքննություն իրականացնող մարմինների և դատախազության կադրային համալրվածությունը (Գործողություն 3): Այս բոլոր գործողությունների ուղղությամբ համապատասխան միջոցների հատկացումը նախատաեսված է ինչպես 2022 թվականի ընթացքում, այնպես էլ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծում:

ՀՀ դատական և իրավական բարեփոխումների ռազմավարության համատեքստում ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքն ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքով և ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին: Օրենսգրքով հետաքննությունը դարձել է նախաքննությանն օժանդակող գործունեություն և նախկինում նախատեսված հետաքննության ինստիտուտը այլևս չի գործելու:

Այդ կապակցությամբ, Նախաքննություն իրականացնող մարմինների (Քննչական կոմիտեի) և դատախազության կադրային համալրվածությունը ՀՀ վարչապետի 08.06.2022թ. «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա և 2018 թվականի սեպտեմբերի 18-ի N 1222-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 653-Ա որոշմամբ կրճատվել են հետաքննություն իրականացնող մարմինների քննիչների հաստիքները (ՀՀ ԱԻՆ՝ 39 հաստիք, ՀՀ քրեակատարողական ծառայություն՝ 13 հաստիք, ՀՀ ոստիկանություն՝ 177 հաստիք և ՀՀ ՊՆ՝ 33 հաստիք) և ավելացվել են ՀՀ քննչական կոմիտեի քննիչների թիվը՝ 210 միավորով և ՀՀ դատախազության դատախազների թիվը՝ 20-ով:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգիրքն (այսուհետ՝ Օրենսգիրք) ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքով: Օրենքսգրքի 483-րդ հոդվածով սահմանված անցումային դրույթների 15-րդ, 16-րդ և 17-րդ մասերով սահմանվել են քննչական ենթակայության նոր կանոնները, որոնք պետական եկամուտների կոմիտեի առնչությամբ գործելու են մինչև 2023 թվականի հունվարի 1-ը: Այդ կապակցությամբ նախատեսվում է Պետական եկամուտների կոմիտեի կառուցվածքում գործող Քննչական մարմնի 55 հաստիքները 2023 թվականի հունվարի 1-ից տեղափոխել Քննչական կոմիտե:

Միաժամանակ, ինչպես վերոհիշյալ ռազմավարությամբ, այնպես էլ Կառավարության ծրագրով ամրագրված է հակառուպցիոն համակարգի մարմինների ստեղծման անհրաժեշտությունը, մասնավորապես, կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ

համակարգի կայացման և շարունակական զարգացման տեսանկյունից կարևորվում է նաև հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծումը, որոնք պետք է օգտվեն բավարար մարդկային, վարչական և նյութական ռեսուրսներից, ինչը կհանգեցնի մասնագիտացված դատավորների կողմից գործերի առավել որակյալ, բազմակողմանի և արդյունավետ լուծմանը:

Այս կապակցությամբ 2021 թվականին ստեղծվել է Հակակոռուպցիոն դատարանը, ինչպես նաև Քրեական և Քաղաքացիական վերաքննիչ դատարաններում ավելացվել է հակակոռուպցիոն գործեր քննող դատավորների թվակազմը, իսկ 2022 թվականին Վճռաբեկ դատարանում գործող երկու պալատների փոխարեն ձևավորվել է թվով 4 պալատ, արդ թվում՝ Հակակոռուպցիոն պալատը: Արդյունքում, դատավորների թվակազմը ավելացվել է 13 դատավորով:

Պետական կառավարման համակարգի մարմինների պահպանման ծախսերի ծրագրավորման առանձնահատկությունները

Պետական կառավարման համակարգի մարմինների պահպանման ծախսերը ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծում գլխավորապես ծրագրավորվել են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի N1010-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2023-2025 թվականների պետական ՄԺԾԾ ցուցանիշները, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, կատարվել են փոփոխություններ՝ պայմանավորված ՄԺԾԾ ընդունումից հետո պահպանման ծախսերին առնչվող օրենսդրական և իրավական ակտերում կատարված փոփոխություններով:

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծում պետական կառավարման համակարգի մարմինների պահպանման ծախսերը հաշվարկելիս հաշվի են առնվել կառուցվածքային և գործառութային կարգավորումների արդյունքում ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատված համապատասխան մարմինների աշխատողների առավելագույն թվաքանակի փոփոխությունները:

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծում պետական մարմինների պահպանման ծախսերը հաշվարկվել են հիմք ընդունելով 20544 հաստիքային միավորների քանակը, որը 2022 թվականի համեմատ ավելացել է 359 միավորով: Թվաքանակի փոփոխությունը հիմնականում պայմանավորված է օրենսդրական կարգավորումներով: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքում առկա իրավակարգավորումների համաձայն, որն ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ից, նախկին հետաքննության ինստիտուտը այլևս չի գործելու, և նշված փոփոխությամբ պայմանավորված մի շարք փոփոխություններ են կատարվել հանրային իշխանության առանձին մարմինների հաստիքային միավորների թվաքանակներում: Մասնավորապես, ՀՀ ոստիկանության, ՀՀ քրեակատարողական ծառայության, ՀՀ պաշտպանության նախարարության հետաքննչական գործառույթներ իրականացնող հաստիքների կրճատման հաշվին ավելացվել են ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ դատախազության հաստիքային միավորների թվաքանակը: Այսպիսով, նշված հաստիքային միավորների ավելացումը հետևանք է օրենսդրական փոփոխությունների արդյունքում ուժային մարմինների՝ նախաքննության գործառույթներ իրականացնող հաստիքային միավորները ՀՀ քննչական կոմիտե և ՀՀ դատախազություն տեղափոխելու:

ՀՀ պետական մարմինների աշխատողների թվաքանակի փոփոխությունը արտացոլված է սույն բացատրագրի N 2ա աղյուսակում:

Ծախսերի ծրագրավորման սկզբունքները ըստ առանձին ծախսային ուղղությունների.

Աշխատավարձի ֆոնդ

Պետական կառավարման համակարգի մարմինների պահպանման ծախսերում աշխատավարձի ֆոնդում ներառվում են ինչպես աշխատողներին վճարվող հիմնական աշխատավարձերը, հավելումներն ու հավելավճարները, այնպես էլ պարգևատրման և դրամական խրախուսման համար օրենսդրությամբ նախատեսված միջոցները: Աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի դրույթներին և ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N 737-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Աշխատավարձի ֆոնդը ծրագրավորվել է հաշվի առնելով՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ գործող օրենսդրությամբ նախատեսված հավելավճարները (դասային, դիվանագիտական աստիճանների, կոչման, աշխատանքային ստաժի և այլն), հավելումները (բարձր լեռնային, ծանր, վնասակար աշխատանքների համար և այլն) և պետական ծառայողների հիմնական աշխատավարձի բնականոն աճերը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը չգերազանցող աշխատավարձ ստացողների համար՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարի գումարը և «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի պահանջները:

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է բարձրացնել օրենքով սահմանված բազային աշխատավարձի չափը, միաժամանակ ապահովելով ընդամենը աշխատանքի վարձատրության գծով նախատեսվող ծախսերի աճ՝ միջինը շուրջ 10%-ի չափով:

2023 թվականի համար աշխատավարձի ֆոնդի հաշվարկման հիմքում բազային աշխատավարձի չափ է ընդունվել 83,200.0 դրամը:

Աշխատավարձի բարձրացումն իրականացվել է պարգևատրման գումարի մասնակի նվազեցման հաշվին: Ընդհանուր առմամբ փոփոխվել է պարգևատրման ֆոնդի հաշվարկման մեխանիզմը: Բոլոր մարմինների համար կիրառվել է պարգևատրման ֆոնդի (ներառյալ հանրային ծառայողների պարգևատրման ֆոնդը) հաշվարկման 16% դրույքաչափ՝ ներկայիս 30%-ի փոխարեն: Բացի այդ, ի տարբերություն գործող հաշվարկի, երբ պարգևատրման ֆոնդը հաշվարկվում է աշխատավարձի տարեկան ֆոնդի նկատմամբ, 2023 թվականի համար պարգևատրման ֆոնդը (ներառյալ հանրային ծառայողների պարգևատրման ֆոնդը) հաշվարկվել է միայն հիմնական աշխատավարձի նկատմամբ (առանց հավելումների և հավելավճարների)՝ դրա 16%-ի չափով:

Աշխատավարձի ֆոնդում նախատեսվել է նաև հանրային ծառայողների պարգևատրման ֆոնդ՝ նրանց 2022 թվականի տարեկան աշխատավարձի ֆոնդի 10 տոկոսի չափով:

Բացի այդ, հաշվարկվել է նաև ավելացված հաստիքների վարձատրության ծախսերը:

Էներգետիկ ծառայությունների՝ էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսերը ծրագրավորվել են ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում Հայաստանի Հանրապետության պետական մար-

մինների գծով բյուջետային ծախսերի առանձին տեսակների ջեռուցման, վառելիքի և էլեկտրաէներգիայի ձեռքբերման ծավալների հաշվարկման հիմքում դրվող նորմաները հաստատելու մասին» N 629-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով գործող սակագները: Բնական գազի սակագինը սահմանվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 01.03.2022թ. N 83-Ն որոշմամբ (յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի սակագինը՝ տարեկան մինչև 600 խորանարդ մետր բնական գազի համար՝ 100000 դրամ դրամ է, իսկ 600 խորանարդ մետրը գերազանցող բնական գազի համար՝ 143700 դրամ):

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 478-Ն որոշմամբ էլեկտրաէներգիայի սակագինը սահմանվել է 53.48 դրամ՝ 47.98 դրամի փոխարեն (1-ին կետի 4-րդ ենթակետ): Էլեկտրաէներգիայի ծախսերը ծրագրավորվել են սահմանված նորմաներով հաշվարկվածի 65%-ի չափով:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 30-ի N 405-Ն որոշմամբ ջրի սակագինը սահմանվել է 200.47 դրամ՝ 180.0 դրամի փոխարեն (1-ին կետի 2-րդ ենթակետ):

Պետական մարմինների կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններից օգտվելու վարձի վճարման ծախսերը հաշվարկվել են գործող սակագներով՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր հաստիքային միավորի համար սահմանված նորմատիվը՝ օրական 30 լիտր (հիմք ՀՀ կառավարության 23.09.2004թ. N 1536-Ն որոշում): Բացի այդ, ՀՀ դատարանների համար ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 12-ի N 732-Ա որոշման պահանջներին համապատասխան նախատեսվել է նաև լրացուցիչ ծախս՝ ելնելով դատական նիստերի դահլիճների ընդհանուր մակերեսի մեծությունից:

Կապի ծառայությունների վճարները հաշվարկվել են ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կապի և կոմունալ ծախսերի նորմաներ սահմանելու մասին» N 1536-Ն և ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում կապի ծառայությունների նորմաները և հեռախոսակապից օգտվելու օրինակելի ներքին կանոնները հաստատելու մասին» N 1956-Ն որոշումների պահանջներին համապատասխան: 2023 թվականի համար հեռախոսային խոսակցությունների տարեկան սահմանաչափը ծրագրավորվել է սահմանված նորմայի 30%-ի չափով:

ՀՀ վարչապետի հանձնարարականի համաձայն նախաձեռնվել է գործող որոշումներով սահմանված հեռախոսային կապի նորմաները վերանայելու գործընթաց, որի շրջանակներում նախատեսվում է հանել փոստային կապի համար սահմանված սահմանափակումը՝ հաշվի առնելով, որ նշված ծախսի գծով պետական մարմինների կողմից իրականացվող փաստացի ծախսը մեծամասամբ գերազանցում է նշված սահմանաչափը, պայմանավորված առանձին մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով պաշտոնական ծանուցումներ իրականացնելու և այլ կանոնադրական գործառույթներ իրականացնելու անհրաժեշտությամբ: Միաժամանակ, կապի ծախսերը հաշվարկելիս հաշվի է առնվել փոստային կապի ծառայությունների սակագնի բարձրացումը՝ համաձայն Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022թ. ապրիլի 27-ի N 165-Ն որոշման, որով սահմանվել են «Հայփոստ» ՓԲԸ կողմից ՀՀ ամբողջ տարածքում մատուցվող փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագները:

Ծառայողական գործուղումների գծով ծախսերը նախատեսվում են որոշակի գործառույթների իրականացումն ապահովելու նպատակով, իսկ ծախսերի հատուցումն իրականացվում է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմաներով: Ներքին գործուղման ծախսերը վերահաշվարկվել են հաշվի առնելով 2022 թվականի ապրիլի 7-ի N 439-Ն որոշմամբ կատարված փոփոխությունը, օրապահիկը սահմանվել է 5.0 հազար դրամ՝ նախկին 3.0 հազար դրամի փոխարեն:

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծում պահպանվել է պետական կառավարման համակարգի մարմինների արտասահմանյան պաշտոնական գործուղումների հետ կապված ծախսերի գծով հատկացումները ՀՀ պետական բյուջեում առանձին տողով արտացոլվող կենտրոնացված ֆոնդում ներառելու սկզբունքը:

Ծառայողական ավտոմեքենաների պահպանման ծախսերը ծրագրավորվել են համապատասխան մարմինների կողմից 2023 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերով ներկայացված ծառայողական ավտոմեքենաների քանակին համապատասխան, բայց ոչ ավելի քան ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշմամբ նախատեսված սահմանաքանակը: Ընդ որում, 1 մեքենայի պահպանման տարեկան ծախսը հաշվարկվել է 1,2 մլն դրամի չափով (պահպանվել է նախորդ տարիների մակարդակը):

Մեքենաների պահպանման ծախսերի ծրագրավորման նշված միասնական սկզբունքից շեղումներ են թույլ տրվել մի շարք մարմինների պահպանման ծախսերում՝ ելնելով դրանց գործառութային առանձնահատկություններից կամ կապված օպերատիվ հետախուզական գործունեություն հետ, նախատեսվում է լրացուցիչ տրանսպորտային նյութերի ձեռքբերման ծախս (Հակակոռուպցիոն կոմիտե, Քննչական կոմիտե, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ) կամ պահպանման ծախսերում նախատեսվել են միջոցներ՝ որպես նշված գործունեության հետ կապված տրանսպորտային ծախսերի փոխհատուցում (ՊԵԿ, ՀՀ դատախազություն):

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ նախատեսվում է վերանայել ծառայողական ավտոմեքենաների հատկացման, ինչպես նաև դրանց պահպանման և շահագործման հետ կապված կարգավորումները:

Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման ծախսերը նախատեսելիս կիրառվել է միասնական մոտեցում, նախագծով նախատեսված գումարը հաշվարկվել է տվյալ մարմնի կողմից օգտագործվող (բացառությամբ վարձակալած) տարածքների համար՝ 1քմ-ը 800 դրամ հաշվարկով:

Միաժամանակ, պահպանման մի շարք այլ պայմանագրային ծառայությունների ձեռքբերման ծախսերը նախատեսելիս դրանք դիտարկվել են նախորդ տարիների փաստացի ծախսի մակարդակը հաշվի առնելով:

Վարչական սարքավորումների նախատեսման հարցում կիրառվել է միասնական մոտեցում:

Հայտերով ներկայացված տեղեկատվության վերլուծության արդյունքում գնահատվել է առանձին մարմիններում յուրաքանչյուր աշխատատեղի՝ համակարգչային սարքավորումներով հագեցվածության և գույքով կահավորվածության մակարդակը, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 2016թ. հունվարի 8-ի «Հանրային հատվածի կազմակերպություններում նոր հիմնական միջոցների և սկզբնական արժեքով հաշվառվող կենսաբանական ակտիվների մաշվածության հաշվարկման նորմատիվային օգտակար ծառայության ժամկետները հաստատելու մասին» N 3-Ն հրամանի պահանջները:

ՀՀ 2023թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է միասնական սկզբունքով, ներկայացված հայտերի շրջանակներում, ապահովել օգտակար ծառայության ժամկետներում գտնվող վարչական սարքավորումներով և գույքով առնվազն 70% հագեցվածություն, բայց ոչ ավելի քան ներկայացված հայտը:

Այն դեպքերում, երբ առկա է համակարգչային սարքավորումներով հագեցվածության կամ կահավորանքի թերհամալրում՝ առկա աշխատատեղերի քանակի համեմատ, բյուջետային ֆինանսավորման հայտն ընդունվել է ամբողջությամբ՝ հնարավորություն ստեղծելով ապահովել աշխատատեղերի առավելագույն հագեցվածություն:

ՀՀ առողջապահության նախարարություն

ՀՀ առողջապահության նախարարության գծով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 146,290.5 մլն դրամի ծախսեր (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը), որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

Հանրային առողջության պահպանում ծրագրի գծով 2023թ. նախատեսվել է 11,510.3 մլն դրամ: Ծրագրի նպատակն է մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության բացառումը և նվազեցումը, կառավարելի վարակիչ հիվանդությունների դեմ պայքարը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել թվով 580142 հատ հետազոտություններ վարակիչ օջախների ախտահանման նպատակով, 60% ՀՀ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում վարակի հսկողության առանձին բաղադրիչների գնահատում, 99%-ով ապահովել համաճարակաբանական հետազոտության ենթակա հիվանդությունների օջախների ընդգրկվածությունը, 90%-ով բնական օջախների տարածքների կենդանամակաբուծական հետազոտություններով ընդգրկվածությունը, պատվաստանյութերի արդյունավետ կառավարման նպատակով՝ ապահովել 1045200 դեղաչափ պատվաստանյութերի ստացումը՝ 845000 պատվաստումներ իրականացնելու համար, Հանրապետությունում արյան, արյան բաղադրամասերի և արյան պատրաստուկների անհրաժեշտ քանակության (100%) ապահովումը, իրականացնել 5 տեսակի առողջ ապրելակերպի խթանմանն ու ծխելու դեմ պայքարին ուղղված և 5 առողջ ապրելակերպի հանրային իրազեկման թեմատիկ միջոցառումներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման և այլ համալիր միջոցառումներ:

Առողջության առաջնային պահպանում ծրագրի գծով նախատեսվել է 30,302.8 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է բնակչությանը մատչելի և որակյալ առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը, առողջության վատթարացման ռիսկի գործոնների վերհանումը և դրանց հնարավոր անբարենպաստ ազդեցության կանխարգելումը, որը ներառում է առողջության առաջնային պահպանման գծով կազմակերպություններում գրանցված 3077381 բնակչի՝ ընտանեկան բժշկի, ընդհանուր պրակտիկայի թերապևտի, ընդհանուր պրակտիկայի մանկաբույժի կողմից մատուցվող ծառայություններ՝ հավաքագրված բնակչության շրջանում հիվանդությունների կանխարգելումը, վաղ հայտնաբերումը, ախտորոշումը, բուժումը, քրոնիկ

հիվանդների դինամիկ հսկողությունը (ներառյալ ակտիվ կանչերը), ժամանակավոր անաշխատունակության փորձաքննությունը, տնային կանչերի իրականացումը, ըստ ցուցումների, հիվանդների հոսպիտալացման կազմակերպումը, բնակչության բժշկահիգիենիկ կրթումը, թվով 389666 աշակերտների՝ դպրոցում բժշկական օգնություն և սպասարկումը, անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք ունեցող թվով 864000 անձանց դեղերով ապահովումը, առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների (արյան շրջանառության համակարգի, շաքարային դիաբետի, չարորակ նորագոյացությունների և այլն) վաղ հայտնաբերման և կանխարգելման գործընթացի պարտադիր իրականացումը, վարակիչ հիվանդությունների կանխարգելում ու վաղ հայտնաբերումը, ինչպես նաև ախտորոշման ճշտման նպատակով լաբորատոր-գործիքային 195230 հետազոտությունների իրականացումը:

Դատաբժշկական և ախտաբանաանատոմիական ծառայություններ ծրագրի գծով նախատեսվել է 479.1 մլն դրամ: Ծրագրի նպատակն է Հանրապետության ուժային մարմինների որոշումների հիման վրա դատաբժշկական և գենետիկ փորձաքննությունների ապահովումը՝ մահերի պատճառների վերհանման նպատակով դիակների փորձաքննությունների միջոցով, ինչպես նաև պաթանատոմիական կանխորոշումների հիման վրա ախտորոշման և բուժման արդյունավետության բարձրացումը: Ծրագրի ակնկալվող արդյունքը մահերի պատճառների բացահայտումն է:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել դատաբժշկական և գենետիկ ծառայությունների գծով 48258 փորձաքննություն, վիրահատական և բիոպսիոն նյութերի 3456 հետազոտություններ, ինչպես նաև 576 ախտաբանաանատոմիական դիահերձումներ:

Դեղապահովում ծրագրի գծով նախատեսվել է 4,119.9 մլն դրամ:

Ծրագրի նպատակը դեղերի անվտանգության, արդյունավետության և որակի ապահովումն է, ՀՀ հիմնական դեղերի ցանկում առկա կենսականորեն անհրաժեշտ դեղերի ֆիզիկական և տնտեսական մատչելիության բարձրացումը, որի արդյունքում ակնկալվում է Հանրապետությունում առանձին հիվանդություններով տառապող անձանց առանցքային նշանակության դեղորայքի մատչելիության բարձրացում: Ծրագրի շրջանակներում նախատեսված հատկացումներն ուղղվելու են ՀՀ կառավարության 2019թ.-ի մայիսի 30-ի N 642-Ն որոշմամբ սահմանված թվով 189029 շահառուներին՝ պետության կողմից անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրման համար ապահովելով 12 հիվանդության ծածկույթ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել նաև թվով 150 հատ մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և բժշկական պարագաների բեռների ստացման, մաքսազերծման և պահպանման ծառայություններ:

Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտություններ ծրագրի գծով նախատեսվել է 382.4 մլն դրամ: Ծրագրի նպատակն է բժշկական օգնության կազմակերպման ու որակի բարձրացման կարգավորման մասնագիտական, խորհրդատվական, կազմակերպամեթոդական ապահովումը, համակարգի գործունեության արդյունքների գնահատումը, ինչպես նաև բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման միջոցով ՀՀ մարզային առողջապահական կազմակերպություններում բժշկական ծառայությունների մատուցումը:

Ծրագրի շրջանակներում նախատեվում է իրականացնել 250 հատ շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտային համակարգի ծառայություններ, 25 ուղեցույցերի,

գործելակարգերի, հաշվառման ձևերի և այլ փաստաթղթերի մշակման ծառայություններ, 50 բժիշկ-մասնագետների ուղեգրումն ընդունված 20 մարզային առողջապահական կազմակերպություններ, ինչպես նաև 1200 բուժաշխատողների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներ:

Մոր և մանկան առողջության պահպանում ծրագրի գծով նախատեսվել է 21,017.0 մլն դրամ: Ծրագրի նպատակն է մոր և մանկան առողջության պահպանումը, կանանց և երեխաներին մատուցվող բժշկական ծառայությունների մատչելիության և որակի բարելավումը, որի արդյունքում ակնկալվում է մանկական և մայրական մահացության և հիվանդացության կրճատում, կանանց վերարտադրողական առողջության բարելավում:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններից օգտվելու 51631 դեպք, 36114 հատ ծնունդներ, 13267 կեսարյան հատում, երեխաների բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու 81810 դեպք, մտավոր, հոգեկան (վարքագծային), լսողական, ֆիզիկական (շարժողական) և զարգացման այլ խանգարումներով երեխաների վերականգնողական բուժման գծով ծառայություններից օգտվելու 91780 դեպք, 1206 ամուսնական զույգերի տրամադրել վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ, այդ թվում՝ իրականացնել 22921 հատ հետազոտություններ, ինչպես նաև անցկացնել 135000 հատ բնածին հիպոթիրեոզի, ֆենիլկետոնուրիայի և լսողության խանգարումների վաղ հայտնաբերման նպատակով նորածնային սկրինինգի հետազոտություններ:

Շտապ բժշկական օգնություն ծրագրի գծով նախատեսվել է 5,311.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է մարդու կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող վիճակներում որակյալ շտապ բժշկական օգնության ծառայությունների տրամադրումը, որի արդյունքում նախատեսվում է բարելավել շտապ օգնության համակարգի պատրաստվածությունը, արձագանքման արագությունը, հասանելիության և բժշկական օգնության ծառայությունների որակը:

Ծրագրի շրջանակներում նախատեսված է իրականացնել 571301 հատ շտապ օգնության և 100 հատ օդային ճանապարհով սանիտարական ավիացիայի կանչեր, ինչպես նաև 16900 հատ մարզերից Երևան կամ այլ տարածաշրջանային հիվանդանոցներ հիվանդի տեղափոխման դեպքեր:

Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում ծրագրի գծով նախատեսվել է 20,103.5 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է ոչ վարակիչ հիվանդությունների (մասնավորապես՝ սիրտանոթային, շաքարային դիաբետի և չարորակ նորագոյացությունների) բուժման արդյունավետության բարձրացումը: Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է նվազեցնել ոչ վարակիչ հիվանդություններով պայմանավորված հիվանդացությունը և մահացությունը:

Ծրագրի շրջանակներում նախատեսված հատկացումներն ուղղվելու են 160650 հատ հեմոդիալիզի անցկացման սեանսներին, անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններից օգտվելու՝ 26857 դեպքի, գլխուղեղի սուր կամ ենթասուր իշեմիկ ինսուլտի բուժման՝ 557 դեպքի, աորտայի շերտազատված անևրիզմայի վիրահատական բուժման՝ 100 դեպքի, հիվանդանոցային պայմաններում արտահիվանդանոցային բժշկական օգնության

(emergency)՝ 87456 դեպքի, հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու՝ 8095 դեպքի, ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու՝ 36400 դեպքի և 7450 վիրաբուժական միջամտությունների, ինչպես նաև սրտի անհետաձգելի վիրահատությունների գծով՝ 2183 դեպքի, կորոնարոգրաֆիայով ավարտված՝ 116 դեպքի, սրտի ռիթմը վարող սարքի իմպլանտացիայի՝ 300 դեպքի, անհետաձգելի թրոմբոլիզի՝ 300 դեպքի, սուր ինֆարկտի դեպքում անհետաձգելի ֆիբինոլիզի՝ 200 դեպքի իրականացմանը:

Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն ծրագրի գծով նախատեսվել է 36,203.2 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության հասանելիության և մատչելիության մակարդակի բարձրացումը, հիվանդանոցային որակյալ բժշկական օգնության ապահովումը:

Ծրագիրը հանդիսանում է սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված շահառուների սոցիալական երաշխիքի առողջապահական բաղադրիչը և ապահովում է բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների, զինծառայողների, ինչպես նաև փրկարար ծառայողների և նրանց ընտանիքի անդամների, պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների և թրաֆիքինգի զոհերի գծով բժշկական օգնության ծառայություններից օգտվելու 319743 դեպքի, ինչպես նաև ստոմատոլոգիական բժշկական օգնության գծով 102636 դեպքի, մարդու օրգանների փոխպատվաստման 18 դեպքի և ոսկրածուծի փոխպատվաստման 20 դեպքի իրականացումը:

Վարակիչ հիվանդությունների կանխարգելում ծրագիր գծով նախատեսվել է 2,307.3 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է վարակիչ և բնակչության համար մեծ ռիսկ ներկայացնող հիվանդությունների (մալարիա, տուբերկուլյոզ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ և այլն) վաղ հայտնաբերումը, արդյունավետ հակազդումը և բժշկական օգնության ապահովումը, որի իրականացման արդյունքում նախատեսվում է նվազեցնել վարակի փոխանցումը, վարակիչ հիվանդություններով պայմանավորված հիվանդացությունը և մահացությունը:

Ծրագրի շրջանակներում նախատեսված հատկացումներն ուղղվելու են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայությունների գծով 26290 հետազոտությունների, 30406 ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների դիսպանսերային հսկողության, տուբերկուլյոզի բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու 570 դեպքի, ինչպես նաև աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու 11690 դեպքի իրականացմանը:

Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծրագիր

Ծրագրի նպատակն է Առողջապահության համակարգի արդիականացում և զարգացում վարակիչ և բնակչության համար մեծ ռիսկ ներկայացնող հիվանդությունների (մալարիա, տուբերկուլյոզ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ և այլն) վաղ հայտնաբերումը, արդյունավետ հակազդումը և բժշկական օգնության ապահովումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝ խորհրդատվական ծառայությունների մատուցում,սքրինինգային հետազոտությունների իրականացում, հանրապետության տարբեր

մարզերում ընտրված հիվանդանոցների արդյունավետության և որակի բարելավում, նոր բժշկական կենտրոնների կառուցում, տուբերկուլյոզի բոլոր տեսակների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ախտորոշման հասանելիության բուժման մոնիթորինգի և կանխարգելման ապահովում, տուբերկուլյոզով հիվանդների սոցիալական և հոգեբանական օժանդակություն, հիվանդների ակտիվ հայտնաբերման միջոցառումներ, բուժման մոնիթորինգի, վարակի վերահսկման բարելավում, ներառյալ մեթադոնային փոխարինող բուժման իրականացում, որի արդյունքում նվազեցվում է վարակի փոխանցումը, վարակիչ հիվանդություններով պայմանավորված հիվանդացությունը և մահացությունը, բարելավում առողջապահական ծառայությունները:

Ծրագրի համար ՀՀ 2023թ. պետական բյուջեով նախատեսվել է 4,609.3 մլն դրամ, որից՝ վարկային միջոցների գծով 3,736.3 մլն դրամ, համաֆինանսավորման գծով՝ 873.0 մլն դրամ:

Առողջապահական կազմակերպությունների շինարարական և նախագծային աշխատանքների համար ՀՀ 2023թ. պետական բյուջեով նախատեսվել է 8,799.6 մլն դրամ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Կրթություն

ՀՀ ԿԳՄՍՆ գծով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 250,268.5 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը):

Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 14,807.7 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության որակավորում ունեցող մասնագետների պատրաստումը, կրթության մատչելիության ապահովումը: Ծրագրով ծախսերը նախատեսվել են հանրապետության 21 արհեստագործական ուսումնարաններում արհեստագործական կրթության մեջ ընդգրկվող 7.6 հազար սովորողների, 68 հաստատություններում միջին մասնագիտական կրթության մեջ ընդգրկվող 21.1 հազար սովորողների ուսուցման գծով, ինչպես նաև ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավման և կառուցման նպատակով:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի բարեփոխումներն ամրագրված են ՀՀ կառավարության ծրագրի «4.3 Կրթություն» բաժնում:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 14,044.7 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ ապահովել մատչելի, որակյալ և մրցունակ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն: Ծրագրով ծախսերը նախատեսվել են 12.9 հազար ուսանողի կրթության, մարտական գործողություններին մասնակցած ուսանողների, երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողների ուսման վճարի մասնակի փոխհատուցման, ինչպես նաև «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի շինարարական աշխատանքների գծով:

Բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումներն ամրագրված են ՀՀ կառավարության ծրագրի «4.3 Կրթություն» բաժնում:

Հանրակրթության ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 127,333.7 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ ապահովել անվճար և որակյալ հանրակրթություն: Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել պարտադիր կրթության երեք մակարդակներում սովորողների ուսուցման գծով: Նախագծով ծախսերը հաշվարկվել են 1336 հանրակրթական դպրոցների, միջին տարեկան հաշվարկով, 410.2 հազար աշակերտի ուսուցման գծով, որից 8.1 հազարը՝ նախադպրոցական կրթության մեջ ընդգրկվածների թվաքանակն է:

Հաշվարկներում համապատասխան միջոցներ են նախատեսվել ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում համընդհանուր ներառական կրթության իրականացման, ինչպես նաև «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների և դպրոցին նախապատրաստման խմբերի (նախակրթարանների) 111.8 հազար երեխաների սննդով ապահովման գծով:

Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել հանրակրթական դպրոցների մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցման, սոցիալական որոշ խմբերի 1.5-5 տարեկան 17420 երեխաների նախադպրոցական կրթության ապահովման, «Մոդուլային» տիպի մանկապարտեզների շենքային ապահովման գծով: Ծախսեր են նախատեսվել նաև սովորողների միջազգային գնահատման ծրագրին (PISA) մասնակցության, ՀՀ պետական հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ ոլորտի (բացառությամբ մաթեմատիկայի), գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների, ՀՀ Սյունիքի մարզում բազմահամակազմ դասարաններում դասավանդող ուսուցիչների համար հավելավճարների տրամադրման գծով (2022 թվականին նշված ծախսերը նախատեսված չեն եղել):

Հանրակրթության և նախադպրոցական կրթության վերաբերյալ դրույթներն ամրագրված են ՀՀ կառավարության ծրագրի «4.3 Կրթություն» բաժնում:

Արտադպրոցական դաստիարակության ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 6,032.6 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ նպաստել հանրակրթական ուսուցման համակարգում ընդգրկված երեխաների ֆիզիկական, հոգևոր և գեղագիտական զարգացմանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը:

Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել 3200 դպրոցականների ամառային հանգստի, ՀՀ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանների 15759 աշակերտների ռազմամարզական ճամբարի կազմակերպման գծով:

Արտադպրոցական դաստիարակության վերաբերյալ դրույթներն ամրագրված են ՀՀ կառավարության ծրագրի «4.3 Կրթություն», «4.8 Սպորտ» բաժիններում, «4.9 Մշակույթ» բաժնի մշակութային կրթության վերաբերյալ ենթաբաժնում:

Ապահով դպրոց ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 15,199.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ դպրոցներին սպառնացող աղետների ռիսկի կառավարման կարողությունների հզորացում, դպրոցի անձնակազմի և աշակերտների անվտանգության ապահովման մակարդակի բարձրացում՝ կիրառելով ներառական և երեխայակենտրոն մոտեցում: Ծրագրով ծախսերը նախատեսվել են՝ փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցման, մարզադահլիճների կառուցման, հիմնանորոգման և նախագծային աշխատանքների, ինչպես նաև գույքով ապահովման գծով:

Կրթության որակի ապահովում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 8,649.1 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ ընթացիկ աշխատանքների, բարեփոխումների և նոր նախաձեռնությունների միջոցով կրթության ոլորտում իրականացվող միջոցառումների, մատուցվող ծառայությունների բովանդակության և կազմակերպման որակի շարունակական բարելավում: Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել հանրակրթության պետական կրթական չափորոշչի և առարկայական ծրագրերին համապատասխան տնօրենների և ուսուցիչների վերապատրաստման, կամավոր ատեստավորման արդյունքում ուսուցիչներին հավելավճարների տրամադրման, հանրակրթական հիմնական և նախադպրոցական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների և մանկավարժների վերապատրաստման գծով: Ուսուցիչների մասնագիտական շարունակական զարգացման և վարձատրության փոխկապակցված մեխանիզմի ներդրման վերաբերյալ դրույթն ամրագրված է ՀՀ կառավարության ծրագրի «4.3 Կրթություն» բաժնում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավում» ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է օժանդակել նախադպրոցական ծառայությունների ստեղծմանը և զարգացմանը, կրթության կառավարման և տեղեկատվական համակարգի բարելավմանը, նախատեսվում է նաև բուհերում նորարարական և զարգացման ծրագրերի իրականացման նպատակով դրամաշնորհների մրցակցային հիմունքներով տրամադրում, 4 ավագ դպրոցների վերակառուցում, անհրաժեշտ գույքով համալրում, ինչպես նաև կշարունակվեն հանրակրթական դպրոցների վերազինման, շուրջ 100 ուսումնական հաստատությունների ժամանակակից բնագիտական և ինժեներական լաբորատոր, համակարգչային սարքավորումներով և գույքով հագեցած նոր լաբորատորիաների հիմնման աշխատանքները:

Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 4,278.5 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ յուրաքանչյուր երեխայի համար կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովում՝ զարգացման առանձնահատկություններին համապատասխան և անհրաժեշտ պայմանների ստեղծման միջոցով: Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումների գծով՝ համընդհանուր ներառական կրթության անցմամբ պայմանավորված, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների գործունեության հետ կապված:

Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 342.9 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ երեխաների հոգևոր և գեղագիտական ընդունակությունների բացահայտումը և զարգացումը: Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցներում 3800 աշակերտների և 920 ուսուցիչների համար ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպման, ազգային, փողային և լարային նվագարանների գծով 1181 սովորողների ուսման վարձավճարի փոխհատուցման, շնորհալի պատանի 15 երաժիշտ կատարողների մասնագիտական կարողությունների զարգացման և կատարելագործման նպատակով:

Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության զարգացում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 345.3 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում միջազգային համագործակցության ընդլայնումը, սփյուռքում և օտարերկրյա պետություններում հայկական կրթական կարողությունների հզորացումը: Ծրագրով նախատեսվող միջոցները կուղղվեն Սփյուռքի կրթօջախների ուսուցիչների կարողությունների հզորացմանը, դասագրքերի և այլ ուսումնական նյութերի մշակմանն ու տրամադրմանը, օտարերկրյա պետություններում հայերենի և հայագիտական առարկաների դասավանդմանը:

Սփյուռքի հետ համագործակցության վերաբերյալ դրույթներն ամրագրված են ՀՀ կառավարության ծրագրի «1.4 Սփյուռք», «4.7 Երիտասարդություն» բաժիններում, «4.9 Մշակույթ» բաժնի մշակութային ժառանգության վերաբերյալ ենթաբաժնում:

Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 803.6 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնումը: Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում տվյալների փոխանակման կապի ապահովման և սպասարկման, հեռավար դասընթացների կազմակերպման, կրթության ոլորտում ՏՀՏ բնագավառի ծրագրերի համակարգման գծով:

Գիտություն

Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի նպատակն է՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար, կիրառական և թեմատիկ հետազոտությունների իրականացում, ենթակառուցվածքի և ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում և զարգացում, գիտական ներուժի վերարտադրության ապահովում: Ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 29,811.5 մլն դրամ:

«Գիտական ենթակառուցվածքի արդիականացում» միջոցառման գծով նախատեսվել է գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացման, ծրագրերի իրականացման, գիտական սարքավորումների արդիականացման, միջազգային համագործակցության աջակցության նպատակով: Միջոցառմանը հատկացվող միջոցներում ընդգրկված է գիտաշխատողների աշխատավարձի ավելացումը՝ պայմանավորված 13.05.2021թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 747-Լ որոշմամբ 2022-2025 թվականներին գիտական կադրերի աշխատավարձի աստիճանական ավելացմամբ, ինչպես նաև միջազգային գիտական ծրագրերի, կառույցների անդամակցությունը և գիտատեղեկատվական շտեմարանի ռեսուրսների օգտագործումը («Հորիզոն Եվրոպա» շրջանակային (9-րդ) ծրագրի մասնակցություն, Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ, Բարձր էներգիաների ստերեոսկոպիկ համակարգ, Տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոն, Քլարիվեյթ Անալիտիքս):

Աշխատավարձերի բարձրացման գծով համապատասխան միջոցներ են նախատեսվել նաև «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամին՝ արագացուցչային ֆիզիկայի և տեխնիկայի բնագավառում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների, «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամին՝ ֆիզիկայի բնագավառում գիտական և

գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման նպատակով, «Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն» միջոցառման մեջ ընդգրկված՝ Հին ձեռագրերի ինստիտուտին, Ցեղասպանության թանգարանին, Բյուրականի աստղադիտարանին:

«Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» միջոցառման գծով նախատեսված միջոցներում հաշվի է առնվել նոր մրցութային ծրագրերի իրականացումը: Միջոցառման շրջանակում իրականացվում են դրամաշնորհային մրցույթներ, որոնց համար որպես արդյունքային ցուցանիշներ են սահմանվում միջազգային չափանիշներին համապատասխան գիտական արդյունքները:

Ծրագրում նախատեսվել են ՀՀ ԳԱԱ իսկական (42) և թղթակից (53) անդամների պատվովճարների տրամադրումը, պետական գիտական ծրագրերում ընդգրկված՝ գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին հավելավճարների տրամադրումը (618 գիտության դոկտորների և 1550 գիտության թեկնածուների հաշվով), գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտությունների համար միջոցները:

2023 թվականին նախատեսվում են իրականացնել 2 նոր միջոցառումներ ևս՝ գիտական կենտրոնների վերանորոգումը և գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինումն ու համատեղ օգտագործման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծումը:

Գիտության ոլորտի զարգացման վերաբերյալ դրույթներն ամրագրված են ՀՀ կառավարության ծրագրի «4.4 Գիտությունն» բաժնում:

Մշակույթ

ՀՀ կառավարության վարած մշակութային քաղաքականությանը համապատասխան մշակույթի ոլորտում իրականացվում են մշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) պահպանության, պաշտպանության, ուսումնասիրության, ազգային արվեստների հենքի և ավանդույթների հիմքի վրա ժամանակակից մարդու ընկալումներին ու ձգտումներին համահունչ ժամանակակից արվեստի ստեղծման և տարածման, ազգաբնակչության ստեղծագործական ներուժի խթանման, նոր մտահղացումների ու գաղափարների ներդրման անհրաժեշտ պայմանների ապահովման, ժամանակակից մշակութային մրցունակ արտադրանքի ստեղծման, մշակութային միջոցառումների իրականացման ծառայություններ (հիմք՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժին):

Մշակույթի ոլորտի համար նախատեսված հատկացումներն ուղղվելու են 5 ծրագրերի իրականացմանը:

Ոլորտում հիմնանորոգման և շինարարության համար նախատեսված հատկացումների շրջանակներում իրականացվելու են հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման, թանգարանների և պատկերասրահների հիմնանորոգման և թատրոնների շենքերի կապիտալ վերանորոգման աշխատանքներ:

Կինեմատոգրաֆիայի ծրագրի նպատակն է աջակցել կինոարվեստի և կինոարտադրության զարգացմանը, հայկական ավանդույթների շարունակականության ապահովմանը և կինոարվեստի հանրահռչակմանը:

Կինեմատոգրաֆիայի ծրագրի համար 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 849.7 մլն դրամ:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են ֆիլմերի արտադրությանը, կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանմանը, թվայնացմանը, կինոարվեստի նախագծերի,

միջազգային կինոնախագծերին մասնակցությանը (նոր և շարունակվող կինոնկարների թիվը նախատեսվում է 19, միջազգային կինոնախագծերին մասնակցության թիվը՝ 8, կինոարվեստի նախագծերի թիվը՝ 5):

Մշակութային ժառանգության ծրագրի նպատակն է ապահովել մշակութային ժառանգության պահպանումը, օգտագործումը, համալրումը և հանրահռչակումը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական աշխատանքների, մշակութային արժեքների փորձաքննության, թանգարանային ծառայությունների իրականացմանը, ՀՀ տարածքում և օտարերկրյա պետություններում գտնվող հայ ճարտարապետության, մշակույթին և պատմությանն առնչվող հուշարձանների ուսումնասիրմանը և պահպանմանը, հուշարձանների ամրակայմանը, նորոգմանը, վերականգնմանը (ամրակայված, նորոգված և վերականգնված հուշարձանների տոկոսը ընդամենի նկատմամբ նախատեսվում է 0.07%, ուսումնասիրված, նախագծված հուշարձանների տոկոսը ընդամենի մեջ՝ 0.06%, թանգարանային հավաքածուների և ոչ նյութական մշակութային ժառանգության միջազգայնացման նախագծերի քանակը՝ 9):

Մշակութային ժառանգության ծրագրի համար 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 4,063.5 մլն դրամ:

Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի նպատակն է նպաստել գրականության հրատարակմանը, տարածմանը և հանրահռչակմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են թարգմանական ծրագրերին և ստեղծագործողներին աջակցմանը, գրականության և ոչ պետական մամուլի հրատարակմանը, գրադարանային ծառայությունների իրականացմանը, գրականության հանրահռչակմանը, գրական ծրագրերին և գրքերի միջազգային ցուցահանդեսներին մասնակցությանը (թարգմանական ծրագրերի և աջակցություն ստացած ստեղծագործողների ու հետազոտողների թիվը նախատեսվում է 36, պետական աջակցություն ստացող ազգային փոքրամասնությունների, գրական, մշակութային ոչ պետական լրատվամիջոցների քանակը՝ 26, հանրապետությունում իրականացվող գրական ծրագրերի և միջազգային ցուցահանդեսներին մասնակցության թիվը՝ 3):

Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի համար 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 1,726.3 մլն դրամ:

Արվեստների ծրագրի նպատակն է նպաստել ազգային հենքի վրա ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, կերպարվեստի և պարարվեստի զարգացմանը և հանրահռչակմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են օպերային և բալետային արվեստի, թատերական ներկայացումների, երաժշտարվեստի և պարարվեստի համերգների, մշակութային միջոցառումների իրականացմանը, «Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց պատվովճարի հատկացմանը, թատրոնների շենքերի կապիտալ վերանորոգման համար ներդրումների իրականացմանը (արվեստի տարբեր ոլորտներում ստեղծագործական ծրագրերի, հանրապետական և միջազգային փառատոների, մանկապատանեկան մշակութային միջոցառումների քանակը նախատեսվում է 76, արվեստի միջազգային նախագծերին մասնակցող խմբերի թիվը՝ 11, իսկ մասնակցող արվեստագետների թիվը՝ 29, իրականացվող հոբելյանների թիվը՝ 16):

Արվեստների ծրագրի համար 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 9,948.6 մլն դրամ:

Մարզերի մշակութային զարգացման ծրագրի նպատակն է նպաստել մարզերում մշակութային կյանքի և մշակութաստեղծ գործունեության ակտիվացմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են մարզերում մշակութային միջոցառումների իրականացմանը, համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը (մշակութային միջոցառումներում ընդգրկված համայնքների թիվը կկազմի 160):

Մարզերի մշակութային զարգացման ծրագրի համար 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 87.2 մլն դրամ:

Ֆիզիկական կուլտուրա և սպորտ

Սպորտի ոլորտում պետական քաղաքականությունն ուղղված է առողջ ապրելակերպի խթանմանը՝ մասսայական սպորտային միջոցառումներում բնակչության տարիքային և սոցիալական տարբեր խմբեր ներգրավելու միջոցով, ինչպես նաև սպորտի ոլորտում ՀՀ միջազգային հեղինակության բարձրացմանը՝ միջազգային և տեղական մրցումներին հայ մարզիկների մասնակցության ընդլայնման միջոցով (հիմք՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.8 Սպորտ» բաժին):

Նախագծով սպորտի համար նախատեսված հատկացումներն ուղղվելու են 2 ծրագրերի իրականացմանը:

Մեծ նվաճումների սպորտ ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում մեծ սպորտի շարունակական զարգացմանը և միջազգային հարթակներում ՀՀ դիրքի բարելավմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են օլիմպիական խաղերին, միջազգային տարբեր մակարդակի միջոցառումներին, ուսումնամարզական հավաքներին, հանրապետական առաջնություններին Հայաստանի հավաքական թիմերի մասնակցության ապահովմանը, աշխարհի, Եվրոպայի առաջնություններում հաղթողների և մրցանակակիրների պարգևատրման ծախսերի իրականացմանը, ՀՀ հավաքական թիմերի գլխավոր և ավագ մարզիչների վարձատրությանը և աշխարհի չեմպիոններին, օլիմպիական խաղերի և շախմատի համաշխարհային օլիմպիադայի մրցանակակիրներին պատվովճարի, օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին անվանական թոշակի հատկացմանը, շախմատիստների պատրաստմանը, հաշմանդամային և նավամոդելային սպորտին աջակցմանը, սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության և շախմատի մրցույթների պատրաստման ծառայությունների իրականացմանը (ՀՀ առաջնությունների և միջազգային մարզական միջոցառումների մասնակիցների թիվը նախատեսվում է համապատասխանաբար՝ 9780 և 2063):

«Մեծ նվաճումների սպորտ» ծրագրի համար 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 4,785.3 մլն դրամ:

2023թ. նախատեսվում է Երևանում անցկացնել ծանրամարտի մեծահասկների Եվրոպայի առաջնություն, որի համար նախատեսված է 990.0 մլն դրամ (մասնակիցների թիվը նախատեսվում է 650):

Մասսայական սպորտ ծրագրի նպատակն է ապահովել բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորումը, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են Համաշխարհային ունիվերսիադային Հայաստանի ուսանողական մարզական պատվիրակության մասնակցության

ապահովմանը և մասսայական սպորտի միջոցառումների իրականացմանը (մասսայական սպորտային միջոցառումներին մասնակիցների թիվը կանխատեսվում է՝ 30000) և մարզական օբյեկտների շինարարությանը և հիմնանորոգմանը:

«Մասսայական սպորտ» ծրագրի համար 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 2,903.0 մլն դրամ:

Երիտասարդության ծրագրի նպատակն է նպաստել սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքին երիտասարդների լիարժեք ներգրավմանը և նրանց ստեղծագործական ներուժի ամբողջական դրսևորմանը (հիմք՝ ՀՀ կառավարության «4.7 Երիտասարդություն» բաժին):

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների, «ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք» միջոցառման, երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումների իրականացմանը, երիտասարդ ընտանիքներին աջակցմանը (սուբսիդավորվող ընտանիքների թիվը կկազմի 7935):

Երիտասարդության ծրագրի համար 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 2,230.4 մլն դրամ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գծով նախատեսվում է 653,778.1 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը), որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

Պարգևավճարներ և պատվովճարներ ծրագրի վերջնական արդյունքը զինծառայողների, այդ թվում՝ Հայրենական մեծ պատերազմի վետերանների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացումն է:

2023 թվականի համար նախատեսվում է հատկացվել 11.034.3 մլն դրամ՝ 34499 շահառուի համար:

Անապահով սոցիալական խմբերին աջակցություն ծրագրի վերջնական արդյունքը՝ օժանդակել անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը՝ դրանով մեղմելով աղքատությունը և կրճատելով ծայրահեղ աղքատությունը:

2023 թվականի պետական բյուջեով ծրագրի համար նախատեսվում է 33,408.7 մլն դրամ: Մինչ համակարգի վերանայումը՝ 2023 թվականին ԸԿԲՆ կտրամադրվի շուրջ 89629 ընտանիքների, իսկ նպաստի միջին ամսական չափը կկազմի 33,350 դրամ: Հաշվի առնելով երեխաներին սոցիալական աջակցություն տրամադրելու առաջնահերթության սկզբունքը՝ հաշվարկներում կանխատեսվել է, որ 89629 ընտանիքների մոտ 71%-ը կկազմեն երեխա ունեցող ընտանիքները:

Սոցիալական փաթեթների ապահովում ծրագրի վերջնական արդյունքը պետական մարմինների աշխատակիցների կյանքի որակի բարելավումն է՝ սոցիալական երաշխիքների ապահովման և աշխատանքային մոտիվացիայի բարձրացման նպատակով:

2023 թվականի համար նախատեսվում է 10,619.5 մլն դրամ՝ 147493 շահառուի հաշվարկով:

Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց ծրագրի վերջնական արդյունքը խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց իրենց

գնահատված անհատական սոցիալական կարիքներին համապատասխան խնամքի ծառայությունների տրամադրումն է՝ բնականոն կենսագործունեության ապահովման նպատակով:

Ծրագրի իրականացման համար 2023 թվականին նախատեսվում է 3,763.4 մլն դրամ, որի շրջանակում շուրջօրյա խնամքի տրամադրման ծառայություններ են տրամադրվելու 1260, տնային պայմաններում խնամքի ծառայություններ (այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ևս)՝ 1250, ցերեկային կենտրոններում խնամքի և բարեգործական ճաշարաններում սննդի տրամադրման համար՝ 1200, անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանում՝ 100 շահառուի:

Վերանայվելու են ծառայությունների մատուցման չափորոշիչները, արդյունքում բարելավվելու է մատուցվող ծառայությունների որակն ու մեծանալու է հասցեականությունը, ներդրվող համայնքահեն ծառայություններում կարևորություն է տրվելու համայնքի մասնակցությանը և ավելի մեծ թվով հասարակական կազմակերպությունների ընդգրկվածությանը:

Միաժամանակ, բացի վերը նշված միջոցառումներից նախատեսվում է մեկնարկել տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամք մատուցող ՊՈԱԿ-ների շենքային պայմանների բարելավման աշխատանքներ: Այդ նպատակով նախատեսված 118.2 մլն դրամի շրջանակներում ակնկալվում է ձեռք բերել թվով 4 շենքերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Ժողովրդագրական վիճակի բարելավում ծրագրի վերջնական արդյունքը ժողովրդագրական վիճակի բարելավումը և բազմազավակության աճն է:

Ծրագրի գծով 2023 թվականի համար նախատեսվում է հատկացնել 51,296.0 մլն դրամ:

2023 թվականին էականորեն կավելանան մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի գծով ծախսերը: 2023 թվականի համար այս միջոցառման գծով ծախսերը կանխատեսվել են 20,350.7 մլն դրամի չափով:

Այս դեպքում հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բաժնի 17.2-րդ կետով նախատեսված է, որ 2023թ. հունվարի 1-ից հետո ծնված երեխաների խնամքի համար մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ նշանակել բոլոր մայրերին՝ անկախ նրանց հաշվառման (բնակության) վայրի (ներկայումս վճարվում է խնամքի արձակուրդում գտնվող վարձու աշխատողին և անկախ խնամքի արձակուրդում գտնվելու հանգամանքից՝ գյուղաբնակ ծնողին): Արդյունքում շահառուների թիվը կավելանա ի հաշիվ չաշխատող, քաղաքաբնակ, ինչպես նաև վարձու աշխատող հանդիսացող, բայց խնամքի արձակուրդում չգտնվող մայրերի՝ 2023թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված երեխաների խնամքի կապակցությամբ:

Ընդ որում, նախատեսվում է, որ խնամքի արձակուրդում գտնվող ծնողի դեպքում նպաստի չափը հաշվարկվելու է նվազագույն աշխատավարձի նկատմամբ ՀՀ կառավարության սահմանած տոկոսից, իսկ չաշխատող կամ վարձու աշխատող հանդիսացող, բայց խնամքի արձակուրդում չգտնվող մայրերի դեպքում՝ խնամքի արձակուրդում գտնվող ծնողի համար սահմանված գումարի 85 տոկոսը չգերազանցող չափով: Գյուղաբնակ և միաժամանակ խնամքի արձակուրդում գտնվող ծնողին խնամքի նպաստը կվճարվի նշված 2 գումարների հանրագումարի չափով:

2023 թվականին պահպանվելու են 2022 թվականի համար սահմանված երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափերը՝ 1-ին կամ 2-րդ երեխայի ծննդյան դեպքում՝ 300 հազար դրամ, 3-րդ կամ 4-րդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1 մլն դրամ, 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում 1.5 մլն դրամ:

2023 թվականին նախատեսվում է հատկացնել 19,897.4 մլն դրամ՝ 36024 նորածինների ծննդյան կապակցությամբ երեխայի ծննդյան միանվագ նպաստ տրամադրելու համար:

Բազմազավակ և երիտասարդ ընտանիքների բնակարանային ապահովությանն աջակցելու նպատակով իրականացվող միջոցառման շրջանակներում այդ ընտանիքներին տրամադրվում է պետական աջակցություն է՝ իրենց հիպոթեքային վարկերի մարման համար: Այս նպատակով 2023 թվականի համար ծախսերը կանխատեսվել են 1,290.8 մլն դրամի չափով:

2023 թվականին կշարունակվի իրականացվել ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված՝ ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու կապակցությամբ միջոցառումը, որի շրջանակներում 2022 թվականի հունվարի 1-ից հետո ծնված երեխայի ծնողին՝ մինչև երեխայի 6 տարեկանը լրանալը վճարվելու է 50000 դրամ: 2023 թվականին միջոցառման իրականացմանը կուղղվի 9,730.8 մլն դրամ, ինչի հաշվին հնարավոր կլինի պետական աջակցություն տրամադրել միջին ամսական շուրջ 16218 երեխաների ընտանիքներին: Միջոցառման շարունակականության հարցը կքննարկվի 2026թվականին՝ նախորդ ժամանակահատվածի արդյունավետության գնահատականի հիման վրա:

Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում ծրագրի վերջնական արդյունքը ժամանակավոր անաշխատունակության հետևանքով (այդ թվում՝ հղիության և ծննդաբերության պատճառով) եկամտի կորստի մասնակի կամ ամբողջական փոխհատուցման, ինչպես նաև չաշխատող մայրերին մայրության նպաստի տրամադրման ապահովումն է: 2023 թվականին այս ծրագրի գծով նախատեսվում է հատկացնել 20,571.9 մլն դրամ:

Ժամանակավոր անաշխատունակության նպաստների գծով 2023 թվականի ծախսը կանխատեսվել է 6,289.2 մլն դրամի չափով՝ հաշվի առնելով 2023 թվականին նվազագույն ամսական աշխատավարձի ավելացման հնարավոր ազդեցությունը:

Աշխատող և չաշխատող մայրերին մայրության նպաստ տրամադրելու նպատակով 2023 թվականի համար նախատեսվել է 14,047.2 մլն դրամ:

Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 236-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 1992թ. նոյեմբերի 15-ի «Ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) աշխատողներին աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման կարգի մասին կանոնները հաստատելու մասին» N 579 որոշման, ՀՀ կառավարության 2009թ. հուլիսի 23-ի «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը հաստատելու մասին» N 914-Ն որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով Սահմանադրական դատարանի 2021թ. նոյեմբերի 30-ի ՍԴՈ-1618 որոշման 3-րդ կետի համաձայն՝ ՀՀ կառավարության 1992թ. նոյեմբերի 15-ի N 579 որոշմամբ ամրագրված իրավակարգավորումները համապատասխանում են Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ մինչև ՀՀ կառավարության 2004թ. հուլիսի 22-ի N

1094-Ն որոշմամբ կատարված փոփոխությունն ուժի մեջ մտնելն աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնաս կրած անձինք կազմակերպության գործունեության դադարեցման դեպքում կապիտալացված միջոցների բացակայության կամ անբավարար լինելու պարագայում պահպանում են պետական բյուջեի հաշվին փոխհատուցում ստանալու իրավունքը:

Վերոգրյալով պայմանավորված 2023 թվականի համար վնասի փոխհատուցում է նախատեսվել խեղում, մասնագիտական հիվանդություն և առողջության այլ վնասներ ստացած 450 շահառուի համար շուրջ 222.0 մլն դրամ:

Զբաղվածության ծրագրի վերջնական արդյունքը Կայուն և ժամանակավոր զբաղվածների թվաքանակի աճն է՝ բնակչության կայուն և ժամանակավոր զբաղվածության ապահովմանը միտված պայմանների ստեղծման նպատակով:

2023 թվականին նախատեսվել է զբաղվածության ծրագրին հատկացնել 1,910.6 մլն դրամ, որի շրջանակում կիրականացվի զբաղվածության պետական թվով 8 ծրագիր: Զբաղվածության պետական ծրագրերում նախատեսվում է ընդգրկել 5215 շահառու, ընդ որում 2900–ը՝ ժամանակավոր բնույթ ունեցող՝ սեզոնային և վարձատրվող հասարակական աշխատանքներում:

Բնակարանային ապահովման ծրագրի համար 2023 թվականին նախատեսվում է 4,353.7 մլն դրամ: Ծրագրի նպատակն է հանրապետությունում մշտական բնակության վայր չունեցող անօթևան անձանց բնակարանային ապահովման բարելավման աջակցությունը: Իրականացվելու են թվով 214 ընտանիքների բնակարանային ապահովման և բնակարանային պայմանների բարելավման աջակցությանն ուղղված աշխատանքներ, այդ թվում՝

- ՀՀ ՊՆ համակարգի՝ թվով 60 անօթևան և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող՝ զոհված (մահացած) առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների ընտանիքների և թվով 100 զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամների,

- ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքում վթարային շենքի փոխարեն նոր բազմաբնակարան շենքի կառուցման արդյունքում թվով 36 ընտանիքների,

- երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած՝ ՀՀ Լոռու մարզի թվով 14 և ՀՀ Շիրակի մարզի թվով 4 ընտանիքների:

Բացի այդ 2023 թվականին նախատեսվում է իրականացնել «ԼՂ առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագիրը» նոր միջոցառումը, որը հնարավորություն կտա տեղահանված 1283 ընտանիքների ձեռք բերել բնակելի անշարժ գույք կամ կառուցել անհատական բնակելի տուն: Շահառուներն ԼՂ առանձին շրջաններում 2020թ. սեպտեմբերի 27-ի դրությամբ բնակված կամ ԼՂ -ում հաշվառված, առնվազն վերջին երեք ամիսներին փաստացի բնակված կամ վերջին երեք տարում փաստացի բնակված և Ադրբեջանի կողմից 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված ընտանիքներն են (այդ թվում՝ մեկ անձից բաղկացած), այդ թվում՝ 2020 թ. սեպտեմբերի 27-ից հետո տվյալ ընտանիքում ծնված երեխան՝ բացառությամբ այն ընտանիքների, որոնք որևէ ծրագրի շրջանակում գործուղվել են ԼՂ մինչև 2020 թ. սեպտեմբերի 27-ը և վերջին երեք ամիսներին բնակվել են այնտեղ:

Կենսաթոշակային ապահովություն ծրագրի վերջնական արդյունքը օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական կենսաթոշակների տրամադրման (նշանակման և վճարման), ինչպես նաև պետական բյուջեի միջոցների հաշվին օրենքով սահմանված

դեպքերում պարտադիր կուտակային համակարգի մասնակցի համար (օգտին) մինչև նրա կենսաթոշակային տարիքը լրանալը կուտակային հատկացումների կատարման ապահովումն է: 2023 թվականին այս ծրագրի գծով նախատեսվում է հատկացնել 422,304.8 մլն դրամ, որից 114,100.0 մլն դրամը կուտակային կենսաթոշակն է:

2023 թվականի կանխատեսումներում հաշվի են առնվել կենսաթոշակային ապահովության ոլորտի հիմնական ցուցանիշների՝ 2022 թվականի սեպտեմբերի 1-ից բարձրացված չափերը և դրանց՝ 2023 թվականի ընթացքում նախատեսվող բարձրացումները: Մասնավորապես, կանխատեսումներում հիմք են ընդունվել հետևյալ ցուցանիշները (երկու թվով ներկայացված լինելու դեպքում 1-ը տվյալ ցուցանիշի՝ 2022 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ չափն է, իսկ 2-րդը՝ տարվա ընթացքում բարձրացվելիք նոր չափը):

- նվազագույն կենսաթոշակի չափը՝ 31600 դրամ (մինչև 01.09.2022թ 28600 դրամի փոխարեն),
- աշխատանքային հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը՝ 21000/36000 դրամ (մինչև 01.09.2022թ. 18000 դրամի փոխարեն),
- աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը (նախատեսվում է կենսաթոշակային օրենսդրությամբ վերանայել կենսաթոշակների հաշվարկման բանաձևը՝ ստաժի համար սահմանելով ընդհանուր մեկ արժեք)՝ համապատասխանաբար՝ 500/525 (մինչև 01.09.2022թ 500 դրամի փոխարեն),
- զինվորական կենսաթոշակը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը՝ 20000 դրամ (մինչև 01.09.2022թ. 18000 դրամի փոխարեն),
- զինվորական ծառայության մեկ տարվա արժեքը՝ 1600/1750 դրամ (մինչև 01.09.2022թ 1600 դրամի փոխարեն),
- պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափերը՝

  ա. առաջին խմբի հաշմանդամի համար՝ 46000/50600 դրամ (43000 դրամի փոխարեն)

  բ. երկրորդ խմբի հաշմանդամի համար՝ 36000/41400 դրամ (մինչև 01.09.2022թ 33000 դրամի փոխարեն)

  գ. երրորդ խմբի հաշմանդամի համար՝ 33000/38000 դրամ (մինչև 01.09.2022թ 30000 դրամի փոխարեն)

- պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը՝ 33000/38000 դրամ (մինչև 01.09.2022թ. 30000 դրամի փոխարեն):

Արդյունքում նախատեվում է, որ աշխատանքային կենսաթոշակի միջին ամսական չափը 2023 թվականին կկազմի 50323 դրամ, 2022 թվականի 43512 դրամի դիմաց:

Զինվորական կենսաթոշակի միջին ամսական չափը 2023 թվականին կկազմի 89003 դրամ:

2023 թվականին կշարունակվեն «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի արդիականացման (կատարելագործման) աշխատանքները՝ որոշումների կայացման գործընթացի ավտոմատացման, այլ տեղեկատվական համակարգերից ինքնաշխատ եղանակով ստացվող և կիրառվող տեղեկատվության (տվյալների) շրջանակի ընդլայնման, կենսաթոշակային ապահովության և պետական նպաստների բնագավառի կառավարման համակարգի արդյունավետության բարելավման նպատակով:

Սոցիալական ապահովություն ծրագրի գծով 2023 թվականի համար նախատեսվել է 76,331.1 մլն դրամ:

Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն ծրագրի վերջնական արդյունքը ընտանիքներին՝ կանանց և երեխաներին մատուցվող սոցիալական ծառայությունների և դրանց հասցեականության բարելավումն է՝ նրանց հասարակություն ինտեգրման նպատակով:

2023 թվականի համար նախատեսվում է 4,761.7 մլն դրամ:

Կշարունակվի «Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ» միջոցառումը, որի շրջանակում բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր և հատուկ/մասնագիտացված տիպի 5 հաստատություններում նախատեսվում է իրականացնել 615 երեխայի խնամքն ու դաստիարակությունը:

Ծրագրի շրջանակում մանկատների շրջանավարտներին մեկ տարի շարունակ՝ ամսական հաճախությամբ կտրամադրվի նվազագույն սպառողական զամբյուղին համարժեք դրամական օգնության և շրջանավարտների համար կվարձակալվի բնակարան, որի համար նախատեսվում է 20.4 մլն դրամ :

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի ընտանիքում ապրելու իրավունքը ապահովելու, նրանց խնամքի, այլընտրանքային ծառայություններ տրամադրելու նպատակով շարունակվելու է իրականացվել «Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ» միջոցառումը, որի շրջանակում վեց աջակցության կենտրոնում սոցիալ-հոգեբանական ծառայություններ կտրամադրվեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 600 երեխայի և նրանց ընտանիքներին: Միաժամանակ, կարճաժամկետ խնամք իրականացնելու նպատակով երեք ճգնաժամային կենտրոններում շարունակվելու է 0-18 տարեկան 150 երեխաների կարճաժամկետ շուրջօրյա խնամքի ծառայությունների իրականացումը:

Պատվիրակված հասարակական կազմակերպությունների կողմից հանրապետության բոլոր մարզերում կիրականացվի «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառումը, որի նպատակն է ՀՀ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին կենսաբանական ընտանիք վերադարձնելու, ինչպես նաև նրանց մուտքը սահմանափակելու հետ կապված իրազեկման աշխատանքների իրականացում և ծրագրերի կառավարում, որի շրջանակում նվազագույնը 20 կենտրոններում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3500 երեխաների և նրանց ծնողներին կտարամադրվեն սոցիալական սպասարկման ծառայություններ, ինչպես նաև սոցիալական, հոգեբանական, իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն:

Մանկատներում խնամվող 7-18 տարեկան դպրոցահասակ երեխաների համար ընտանեկան միջավայրին մոտ միջավայր ապահովելու և կենցաղային որոշակի հմտությունների ձեռքբերման նպատակով կշարունակվի «Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում» միջոցառումը:

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման երևույթի կանխարգելմանն ուղղված քաղաքականության շարունակականության ապահովման նպատակով 2023 թվականին շարունակվելու են «Թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» միջոցառումը, որի շրջանակներում նախատեսվում է ծառայությունների մատուցում 8 թրաֆիքինգի և

շահագործման ենթարկված անձի, ինչպես նաև «Մարդկանց թրաֆիքինգի և/կամ շահագործման զոհերին միանվագ դրամական փոխհատուցման տրամադրում» միջոցառումը, որի շրջանակներում նախատեսվում է միանվագ դրամական փոխհատուցման տրամադրում 7 թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձի:

Ընտանիքում բռնության ենթարկված անձանց օրենսդրությամբ սահմանված աջակցության տրամադրման նպատակով՝ «Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության ծրագրի» շրջանակներում շարունակվելու են իրականացվել հետևյալ երեք միջոցառումները՝ «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ», որի շրջանակներում նախատեսվում է համապատասխան ծառայությունների մատուցում 60 ընտանիքում բռնության ենթարկված անձի, «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ», որի շրջանակներում նախատեսվում է համապատասխան ծառայությունների մատուցում 1500 ընտանիքում բռնության ենթարկված անձի և «Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցություն» միջոցառումը, որի շրջանակներում նախատեսվում է ընտանիքում բռնության ենթարկված շուրջ 100 անձի ֆինանսական աջակցության տրամադրում:

Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագրի գծով նախատեսվում է 128.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակում նախատեսվում է մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում, սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում և մասնագիտական կողմնորոշման համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստումներ:

Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն ծրագրի վերջնական արդյունքը հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող սոցիալական ծառայությունների հասցեականության և արդյունավետության բարձրացումն է՝ հասարակություն սոցիալական ներառման նպատակով:

Ծրագրի գծով 2023 թվականի համար նախատեսվում է 2,227.5 մլն դրամ:

Պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց պետական հավաստագրերի հիման վրա տրամադրվելու են աջակցող միջոցներ (այդ թվում՝ պրոթեզներ, օրթեզներ, քայլակներ, անվասայլակներ, լսողական սարքեր և այլն, շուրջ տարեկան 14900 աջակցող միջոց)՝ հասարակական կյանքում նրանց մասնակցությունը խթանելու նպատակով:

Շարունակվելու է պետական աջակցություն ցուցաբերվել հասարակական կազմակերպություններին՝ ցերեկային կենտրոններում հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և սոցիալ-վերականգնողական, սոցիալ-հոգեբանական ծառայություններ մատուցելու նպատակով:

Ավանդների փոխհատուցում ծրագրի շրջանակում «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող և նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների փոխհատուցում ն է:

Ծրագրի գծով 2023 թվականի համար կանխատեսվում է 1,111.0 մլն դրամ: 2023 թվականին փոխհատուցում կտրամադրվի շուրջ 5844 շահառուի: Ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք կտրվի մինչև 1940թ. հունիսի 30-ը ներառյալ ծնված ավանդատուներին:

Սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումներ ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 1,450.3 մլն դրամ: Ծրագրի նպատակն է բարելավել սոցիալական

պաշտպանության ծառայությունների տրամադրումը, աջակցել կենսաթոշակային համակարգի արդիականացմանը և զբաղվածության նոր ռազմավարության իրականացմանը, հզորացնել սոցիալական պաշտպանության նպաստներ վճարող և ծառայություններ տրամադրող մարմինների վերլուծական, մշտադիտարկման և գնահատման գործառույթները: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝ ավարտին հասցնել 13 ՄՍԾՏԿ-ների և Միասնական սոցիալական ծառայության կենտրոնական գրասենյակի վերանորոգման աշխատանքները, ինչպես նաև տարածքային կենտրոնների և գրասենյակի կարիքների համար կահավորման միջոցների և սարքավորումների ձեռքբերում, մեկ միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրում:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գծով 2023 թվականի պետական բյուջեով նախատեսվում է 297,446.9 մլն դրամի ծախսեր (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը), որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

Ոռոգման համակարգի առողջացում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 31,111.7 մլն դրամ.

Ծրագրի նպատակն է ստեղծել ոռոգման ոլորտի զարգացման և բարեփոխումների շարունակականության, ֆինանսական կայունության համար բավարար հիմքեր, ապահովել ենթակառուցվածքների և ոլորտային կազմակերպությունների ինքնաբավ և տնտեսապես անկախ գործունեությունը, որով ակնկալվում է նվազեցնել ոռոգման ջրի կորուստները, ավելացնել փաստացի ոռոգելի հողատարածքների մակերեսը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է սուբսիդավորել «Ջրառ» ՓԲԸ-ի և 15 ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքը, ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերը կահավորել 748 SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումներով, վերականգնել 4 խորքային հոր, ինչպես նաև տեղադրել պոմպակայանի շուրջ 190 մ մղման և 747 գծմ ոռոգման խողովակներ: Բացի այդ, նախատեսվում է ձեռքբերել թվով 6 փոքր և միջին ջրամբարների կառուցման և 1 ջրամբարի վերականգնման և վերազինման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթեր, սկսել 31 օրվա կարգավորիչ ջրավազանների կառուցման և 2 ջրամբարների վերականգնման ու վերազինման աշխատանքներ: Միևնույն ժամանակ, նախատեսվում է իրականացնել հակահեղեղային առաջնահերթ միջոցառումներ՝ մաքրելով գետերի և հեղեղատարների հուները, իրականացնելով ափերի ամրացման աշխատանքներ, ինչպես նաև Արարատյան ջրավազանի ձկնաբուծական տնտեսությունների ելքային ջրերի վերաօգտագործման նպատակով տեխնիկատնտեսական ուսումնասիրման աշխատանքներ:

Արտաքին աղբյուրների ֆինանսավորմամբ իրականացվող շարունակական ծրագրերի ներքո նախատեսվում է ավարտին հասցնել Վեդու ջրամբարի կառուցման (կկառուցվի 15մ բարձրությամբ Վեդու ջրամբարի պատվարը, կվերականգնվի Վեդու ջրամբարի ոռոգման ներտնտեսային ցանցի 80,0 կմ հատվածը), ինչպես նաև Կապսի ջրամբարի 8.0 մ բարձրությամբ պատվարի շինարարական աշխատանքները: ՀՀ մարզերում կիիմնանորոգվի

ոռոգման ցանցերի շուրջ 81,1 կմ հատվածը, որով կբարելավվի ոռոգման համակարգերի ընդանուր վիճակը:

Միաժամանակ Եվրոմիության համատեղ ֆինանսավորմամբ նախատեսվում է իրականացնել՝ ոռոգման համակարգի կառուցում, որի շրջանակներում կիրականացվի 17 բնակավայրերում պոմպակայանների, խողովակաշարերի և ջրագծերի կառուցում:

Որոտան-Արփա-Սևան թունելի ջրային համակարգի կառավարում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 1,025.8 մլն դրամ.

Ծրագրի նպատակն է վերականգնել Արփա-Սևան թունելի վթարային հատվածները և պահպանել այն, որից ակնկալվող վերջնական արդյունքն է առավելագույն քանակի ջուր տեղափոխել դեպի Սևանա լիճ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Որոտան-Արփա-Սևան թունելի 48 կմ երկարությամբ հատվածի պահպանման ու շահագործման և թունելի վթարային առանձին՝ 94.4 գծմ հատվածների հիմնանորոգման աշխատանքներ:

Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 6,258.5 մլն դրամ.

Ծրագրի նպատակն է նպաստել բնակչության նյութական և ոչ նյութական բարեկեցության աճին, որով նախատեսվում է համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքների և որակի հասանելիության բարելավում, ինստիտուցիոնալ և ֆինանասական կարողությունների հզորացում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 2 համայնքներում խմելու ջրի ջրամատակարարման և 2 համայնքներում ոռոգման համակարգերի հիմնանորոգման և կառուցման աշխատանքները, ևս 32 համայնքներում նախատեսվում է համայնքային կենտրոններին, դպրոցներին և մանկապարտեզներին գույքի տրամադրում, 32 համայնքներ կօգտվեն հիմնանորոգված և նոր կառուցված ջրագծերի, առողջապահության, կրթության, մշակույթի, հատուկ խնամքի և ենթակառուցվածքների ոլորտի օբյեկտներից:

Կոլեկտորադրենաժային ծառայություններ ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 290. 8 մլն դրամ.

Ծրագրի նպատակն է բարելավել ՀՀ ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակը, կարգավորել գրունտային ջրերի մակարդակները, կանխել հողատեսքերի աղակալումը, բնակավայրերի ջրակալումը և ապահովել մշակաբույսերի բնականոն աճը, որի վերջնական արդյունքն է ավելացնել մշակելի հողատարածքների մակերեսը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մաքրել և վերանորոգել 222 կմ երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանց:

Տարածքային կառավարման և ՏԻՄ ներկայացուցիչների մասնագիտական վերապատրաստում և հատուկ ուսուցում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 14.6 մլն դրամ.

Ծրագրի նպատակն է տարածքային կառավարման և ՏԻՄ-երի, ինչպես նաև համայնքային ծառայողների աշխատանքի արդյունավետության բարելավումը:

Միջոցառմամբ նախատեսվում է իրականացնել համայնքային ծառայողների, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմիններ 1050 աշխատակիցների վերապատրաստում:

Կոշտ թափոնների կառավարում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 2,433.4 մլն դրամ.

Ծրագրի նպատակն է կենցաղային թափոնների արդյունավետ կառավարումը, սոցիալական և բնապահպանական խնդիրների լուծումը, մասնավորապես բարելավել հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման համակարգը, ինչպես

նաև նպաստել հանրապետությունում ԿԿԹ-ի արդյունավետ կառավարմանը:

Ծրագրով նախատեսվում է բարելավել 2 մարզերի աղբահանության համակարգը և կառուցել ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայր Հրազդան քաղաքում, ինչպես նաև երկու մարզերում ներդնել ԵՄ չափանիշներին համապատասխան աղբահանության համակարգ, այդ թվում կառուցել 2 փոխաբեռնման կայան՝ Ակունք և Մարտունի համայնքներում, ձեռք բերել անհրաժեշտ տեխնիկա, աղբատար մեքենաներ, աղբամաններ:

Միաժամանակ միջազգային կազմակերպությունների կողմից վարկային և դրամաշնորհային միջոցների ֆինանսավորմամբ (քննարկման փուլում է) նախատեսվում է 8 մարզերի աղբահանության և կոշտ թափոնների ինտեգրված համակարգի (4 սանիտարական աղբավայր, 16 փոխբեռնման կայան) ներդրման ծրագիր

Ճանապարհային ցանցի բարելավում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 116,663.5 մլն դրամ.

Ծրագրի նպատակն է ճանապարհային ցանցի բարելավումն ու անվտանգ երթևեկության ապահովումը, որի շրջանակներում 2023 թվականին ակնկալվում է համայնքների տրանսպորտային կապի ցուցանիշի (հիմնական ճանապարհային ցանցի կամ մարզկենտրոնների հետ առնվազն մեկ բավարար կամ ավելի լավ վիճակում գտնվող ճանապարհներ ունեցող բնակավայրերի մասնաբաժինը բնակավայրերի ընդհանուր թվում) մասով բազային 65.9 տոկոսի դիմաց ապահովել 68 տոկոս թիրախային ցուցանիշը, իսկ միջպետական նշանակության ճանապարհների անհարթության IRI գործակցի միջին թվաբանականի համար՝ պահպանել 6.3 մ/կմ ցուցանիշը:

Ծրագրի շրջանակներում ներքին և արտաքին աղբյուրների ֆինանսավորմամբ նախատեսվում է իրականացնել միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ցանցի նորոգում, հիմնանորոգում և որակի շարունակական բարձրացում, որի շնորհիվ կունենանք շուրջ 500 կմ վերանորոգված ավտոճանապարհներ:

Մասնավորապես. 2023 թվականին ներքին աղբյուրների հաշվին նախատեսվում է իրականացնել շուրջ 260.0 կմ երկարությամբ միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների և թվով 8 տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման, 50 կմ միջին նորոգման, 4074.7 կմ ամառային և 5212.7 կմ ձմեռային պահպանման, ինչպես նաև 3 թունելների և 5 կամուրջների պահպանման ու շահագործման աշխատանքներ:

Արտաքին աղբյուրների ֆինանսավորմամբ իրականացվող շարունակական ծրագրերի ներքո կշարունակվեն ռազմավարական նշանակություն ունեցող Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի վերանորոգման աշխատանքները (Տրանշ 2 և 3-ի մասով), ինչպես նաև մեկնարկելու են Քաջարան-Ագարակ, Սիսիան-Քաջարան և Քաջարանի թունել տանող ճանապարհահատվածների հողերի օտարման և վերակառուցման աշխատանքները:

Աջակցություն փախստականների ինտեգրմանը ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 158.9 մլն դրամ.

Ծրագրի նպատակն է ապահովել փախստականների ինտեգրումը հասարակությանը, որի շրջանակներում նախատեսվում է 40-45 ապաստան հայցողի մուտք ժամանակավոր կացարան՝ յուրաքանչյուրին 150 օր կեցության ապահովումով (տարեկան միջինում 588 փախստական), ապաստան հայցողների համար թարգմանչական ծառայությունների տրամադրում, Ժամանակավոր տեղավորման կենտրոնում չտեղավորված ապաստան հայցող 37 ընտանիքների դրամական օգնության տրամադրում, ապաստան ստացած 25 ընտանիքների

բնակարաններ վարձակալելու համար սուբսիդիաների տրամադրում:

Ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 15,772.1 մլն դրամ.

Ծրագրի նպատակն է ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման աշխատանքների արդյունավետության բարձրացումը, համակարգերում ջրամատակարարման շարունակականության և ջրի որակի բարելավման ապահովումը, կառավարման բարեփոխումների խորացումն ու ամրապնդումը, կատարելագործումը, ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավումը և իրականացումը:

Ծրագրի շրջանակներում 2023 թվականին ներքին աղբյուրների ֆինանսավորմամբ մեկնարկելու են թվով 2 քլորակայանի կառուցման աշխատանքները, ինչպես նաև «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից չսպասարկվող բնակավայրերում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտում առկա խնդիրների կարգավորման նպատակով նախատեսվում է 2 բնակավայրերում իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման միջոցառումներ, իսկ 6 բնակավայերի միջոցառումների համար՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ: Բացի այդ, շարունակվելու են 2022թ-ին սկսած՝ թվով 26 բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգման և կառուցման աշխատանքները:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է խմելու ջրի սակագները անփոփոխ թողնելու նպատակով սուբսիդավորել ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող ընկերությանը՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին:

Արտաքին աղբյուրների ֆինանսավորմամբ իրականացվող շարունակական ծրագրերի ներքո նախատեսվում է բարելավել Երևանի ջրամատակարարումը՝ Հաղթանակ, Սիլիկյան և Մալաթիա թաղամասերում, ինչպես նաև իրականացնել ՀՀ մարզերում մեկնարկած ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքները: Երևանում նախատեսվում է նորոգել ընդհանուր առմամբ 51 կմ ջրագիծ, 26,4 կմ մուտքագիծ և 3200 հատ տնային միացումներ: ՀՀ մարզերում ընդհանուր առմամբ նախատեսվում է նորոգել 255,5 կմ ջրագիծ, 10.5 կմ կոյուղագիծ և իրականացնել 8700 հատ տնային միացումներ:

Ընդերքի ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ծառայություններ ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 29.4 մլն դրամ.

Ծրագրի նպատակն է երկրաբանական տեղեկության ընդունումը և պահպանումը, ընդերքօգտագործման ֆոնդի ստեղծումը և վարումը, պաշարների պետական հաշվեկշռի, հանքավայրերի և երևակումների պետական կադաստրի վարումը, իրավունքների պետական հաշվառումը, տեղեկատվության վերլուծումը և տրամադրումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 1570 երկրաբանական նյութերի ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկությունների ընդունում, թվայնացում և կայքում տեղադրում, 965 հանքավայրերի օգտակար հանածոների պաշարների, 150 ընդերքի տեղամասերի ներկայացված կոորդինատների վերաբերյալ տեղեկությունների և տրամադրված 450 ընդերքօգտագործման իրավունքների հաշվառում, 50 ֆոնդային նյութերի ուսումնասիրություն և 100 ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի ջրակետերի (հորատանցք, աղբյուր) գույքագրում:

Երկաթուղային ցանցի զարգացում ծրագրի գծով ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին սուբսիդիայի տրամադրման համար նախատեսվում է 2023 թվականին հատկացնել 370.1 մլն դրամ:

Միջոցառման նպատակն է ՀՀ կառավարության 07.02.2008թ. N 83-Ա որոշմամբ հաստատված Կոնցեսիոն պայմանագրի համաձայն մասնակի (30%) սուբսիդավորել համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումներից «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի նախորդ տարվա արդյունքներով առաջացած տարեկան վնասը (ՀՀ կառավարության 07.02.2008թ N 83-Ա որոշումից բխող՝ կոնցեսիոնների կողմից կանխատեսվող կոնցեսիոն տարեկան վճարի չափով):

Պետական գույքի կառավարում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվում է.

499.4 մլն դրամ՝ պետական գույքի հաշվառման, գույքագրման, գնահատման, անշարժ գույքի պահառության, սպասարկման աշխատանքների և աճուրդների իրականացման ծառայությունների և պետական մարմիններին և կազմակերպություններին ամրացված՝ յուրաքանչյուր միավոր մինչև 10 մլն դրամ գնահատված արժեքով շարժական գույքի օտարման գործընթացում գտնվելու ժամանակահատվածում գույքի պահառության կազմակերպման համար:

Նշվածի շրջանակներում նախատեսվում է ապահովել պետական սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման, գնահատման, հաշվառման, հաշվառված գույքի տվյալների մշակման, փոփոխությունների գրանցման, տեղեկատվության տրամադրման աշխատանքների, թվով 4 անշարժ գույքի պահառության, աճուրդների կազմակերպման և անցկացման ծառայությունների իրականացումը, ինչպես նաև պետական գույքի հաշվառման նոր ավտոմատացված ու ամբողջական համակարգի և էլեկտրոնային աճուրդների կազմակերպման ծրագրերի սպասարկում, բացի այդ Կառավարական N 2 (հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 3, Վ.Սարգսյան 3/8 և Վ. Սարգսյան 3/3), Կառավարական N 3 և Նալբանդյան 28 շենքերի սպասարկման ծառայությունների իրականացումը, որի մեջ ներառվում է նաև վերոնշյալ շենքերի թվով 18 վերելակների, օդորակման և օդափոխության համակարգերի, հաստիքային և վթարային էլեկտրասնուցման համակարգերի, ներքին ու արտաքին լուսավորության համակարգերի, ջրամատակարարման ու կոյուղուհամակարգի, հակահրդեհային անվտանգության ու ծխահեռացման համակարգի, անցակետային, անվտանգության և տեսահսկման համակարգի, հեռախոսային կապի և ինտերնետի ներքին ցանցերի, հետերաշխիքային սպասարկումը:

Բացի այդ պետական մարմինների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների ակտիվների օտարումից նախատեսվում է (10,000.0 մլն դրամի) մուտքեր:

Այլընտրանքային աշխատանքային ծառայություն ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 30.9 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է քաղաքացիական պարտքի կատարման այլընտրանքային տարբերակների ապահովումը, որի շրջանակում թվով 105 այլընտրանքային աշխատանքային ծառայողների կտրամադրվի դրամական բավարարում և փոխհատուցում:

Քաղաքային զարգացում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 15,536.6 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է քաղաքային ենթակառուցվածքների զարգացումը, որի շրջանակներում ներքին և արտաքին աղբյուրների ֆինանսավորմամբ նախատեսվում է իրականացնել Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների և Երևանի տարածքում ճանապարհային երթևեկության կարգավորման գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման, Երևան և Գյումրի քաղաքների փողոցների և արտաքին լուսավորության ցանցի հիմանորոգման, շահագործման ու

պահպանման աշխատանքների իրականացում:

Մասնավորապես 2023 թվականին ներքին աղբյուրների հաշվին նախատեսվում է իրականացնել Երևանի մետրոպոլիտենի նորոգման աշխատանքներ և ապահովել 18.7 մլն ուղևորների անվտանգ ուղևորափոխադրումը:

Արտաքին աղբյուրների ֆինանսավորմամբ իրականացվող շարունակական ծրագրերի ներքո նախատեսվում է՝ Երևան քաղաքում 28 փողոցների արտաքին լուսավորության ցանցի արդիականացում, ավարտել Բաբաջանյան-Աշտարակի խճուղի 9.4 կմ երկարությամբ և Արգավանդ - Բաբաջանյան ճանապարհահատվածի 1 կմ երկարությամբ ճանապարհահատվածների կառուցումը, ձեռք բերել ժամանակակից 12 մ-ոց ցածրահատակ սեղմված բնական գազով ավտոբուսներ, իսկ Գյումրի քաղաքում՝ ընտրված փողոցների վերանորոգում և լուսավորության ցանցի արդիականացում: Ծրագրի շրջանակներում մեկնարկելու են նաև Երևան քաղաքի Իսակով-Արշակունյաց ճանապարհի և Ջրվեժի դեպոյի կառուցմանն ուղղված աշխատանքները:

Էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 947.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է նպաստել էլեկտրաէներգետիկ համակարգի հուսալիության բարձրացմանը և էլեկտրաէներգիայի անխափան մատակարարման ապահովմանը:

Դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կիրականացվեն Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծերի և համապատասխան ենթակայանների կառուցման գլխավոր կապալառուների ընտրության և գլխավոր կապալառուների հետ համապատասխան պայմանագրերի կնքման աշխատանքները, որը կապված է համանուն վարկային ծրագրի հետ:

Արդյունքում՝ հայկական և վրացական էներգահամակարգերի միացման հետևանքով Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 200 մՎտ-ից առաջին փուլում կհասցվի 350 մՎտ-ի, հետագայում՝ ելնելով տարածաշրջանային շուկայի պահանջարկից մինչև 1050 մՎտ-ի:

Ռադիոակտիվ թափոնների կառավարում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 37.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրման, ուսումնասիրման, պահպանման, վնասազերծման և թաղման ապահովումը՝ մարդկանց և շրջակա միջավայրի իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից պաշտպանելու համար: Ծրագրի կատարումից ակնկալվում է հայտնաբերված ռադիոակտիվ թափոնների 100% վնասազերծում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 150 ռադիոակտիվ թափոնների միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ կենտրոնացված փոխադրման, ուսումնասիրման, պահպանման և վնասազերծման աշխատանքներ:

Ավիացիայի բնագավառում վերահսկողության, կանոնակարգման և զարգացման ապահովում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 1,533.6 մլն դրամ (որից 1,454.8 մլն դրամը ապարատի պահպանմանն ուղղվող գումարներն են):

Նշված ծրագրի շրջանակներում կվերապատրաստվեն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության քաղաքացիական ավիացիայի կոմիտեի 180 աշխատակիցներ (78.8 մլն դրամ):

Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 11,047.3 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է նպաստել երկրի սեյսմակայունության ապահովմանը, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը, որի գծով արտաքին աղբյուրների ֆինանսավորմամբ իրականացվող շարունակական ծրագրերի ներքո նախատեսվում է 23 դպրոցներում կշարունակվեն շինարարության և վերակառուցման աշխատանքներ, շահագործման կհանձնվեն 5 դպրոցներ, 2500 աշակերտներ կհաճախեն սեյսմիկ անվտանգության չափանիշներին համապատասխան վերակառուցված կամ նոր կառուցված դպրոցներ:

Տարածքային զարգացում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 99,020.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է տարածքային համաչափ զարգացման խթանումը (մասնավորապես ՀՀ համայնքների կառավարման արդյունավետության բարձրացումն ու տնտեսական գործունեության խթանումը (ներառյալ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն բնակավայրի), սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցությունը, ՀՀ կառավարության կողմից համաֆինանսավորման սկզբունքով համայնքներում սուբվենցիոն ծրագրերի իրականացումը, Երևան քաղաքի փողոցների ճանապարհաշինարարական աշխատանքների, արտաքին լուսավորության և վերգետնյա էլեկտրոտրանսպորտով ուղևորափոխադրումների ծառայությունների մատուցման նպատակով Երևան քաղաքին սուբվենցիաների տրամադրումը, ինչպես նաև համայնքներին ֆինանսական համահարթեցման դոտացիաների տրամադրումը:

Նշված ծրագրերի շրջանակներում նախատեսվում է փոխհատուցել սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների (23 համայնքների 82 բնակավայրեր) կողմից ծախսված բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի, սահմանամերձ համայնքների վարչական տարածքում գտնվող մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքների և (կամ) դրանց բարելավումների անշարժ գույքի հարկի ծախսերը: Կիրականացվեն նաև սուբվենցիոն ծրագրեր՝ ՀՀ համայնքների և Երևան քաղաքի գծով:

Համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով Տարածքային զարգացում ծրագրի շրջանակում նախատեսվում են համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով՝ համայնքների ընթացիկ ծախսերի ծածկման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ՝ ֆինանսական համահարթեցման դոտացիաներ:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքներով սահմանված համապատասխան դրույթները՝ 2023 թվականին համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) չպետք է պակաս լինի ՀՀ 2021 թվականի համախմբված բյուջեի փաստացի եկամուտների ընդհանուր գումարի՝ 1,743.9 մլրդ դրամի 4%-ը կազմող 69,754.7 մլն դրամից: ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է ֆինանսական համահարթեցման սկզբունքով ՀՀ համայնքներին (71 համայնքներին) տրամադրել ընդհանուր գումարով 69,754.7 մլն դրամի դոտացիաներ: ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ֆինանսական համահարթեցման

սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների բաշխումն ըստ առանձին համայնքների իրականացվել է «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան:

Ծրագրի շրջանակներում 2023 թվականին նախատեսվում է «Ազդակիր բնակավայրերի և համայնքների բյուջեներին հատկացվող համայնքային մասհանումներ» միջոցառումը, որի շրջանակներում («Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» 11. 03. . 2022թ. ՀՕ-52-Ն օրենքի 2-րդ հոդվածի պահանջով պայմանավորված) նախատեսվում է յուրաքանչյուր ռոյալթի վճարողի կողմից նախորդող երրորդ տարվա փաստացի բյուջե վճարված ռոյալթիի չափի երկու տոկոսից ՀՀ բնակավայրերին և համայնքներին անվերադարձ կարգով տրամադրել մասհանումներ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման համար՝ 874.7 մլն դրամ ընդհանուր գումարով:

Էներգաարդյունավետության զարգացման ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 1,605.8 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է նպաստել էներգախնայողության բարձրացման և վերականգնվող էներգետիկայի ներուժի առավելագույն իրացմանը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է սուբսիդավորել բնակարանի (բնակելի տան) էներգաարդյունավետ վերանորոգման համար ներգրավված վարկերի տոկոսադրույքը (վարկի գործողության ողջ ընթացքում, բայց ոչ ավելի, քան 7 տարի 1000 շահառուի համար):

Դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում նախատեսվում է հանրային և հասարակական շենքերում (մանկապարտեզներ, պոլիկլինիկաներ, մշակութային օջախներ) իրականացնել էներգաարդյունավետությանը և էներգախնայողությանն ուղղված հիմնանորոգման աշխատանքներ, որի արդյունքում կապահովվեն հանրային շենքերի սեյսմակայունությունը, ջերմամեկուսացման և լուսավորության համակարգերի, վերականգնվող էներգիայի աղբյուրների ինտեգրման, հաշմանդամների համար շենքերի հասանելիությունը, կկրճատվեն էներգետիկ սպասարկման ֆինանսական ծախսերը, ինչպես նաև տեղի կունենա արտանետվող CO_2 գազի նվազեցում:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

2023 թվականի ՀՀ պետական բյուջեով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը նախատեսվում է հատկացնել 19,349.3 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը): Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի, թվայնացման և շուկայի զարգացման ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է հատկացնել 8,736.6 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է բարձր տեխնոլոգիաների ենթակառուցվածքների բարելավում, մասնավորապես.

- Իրականացնել կադրերի թիրախավորված պատրաստում և վերապատրաստում, հաշվի առնելով շուկայի կտրուկ զարգացումն ու կադրերի նկատմամբ շուկայի պահանջարկի կտրուկ աճը,

- Զարգացնել բարձր տեխնոլոգիական ոլորտի համար անհրաժեշտ էկոհամակարգը՝ ներառյալ թիրախավորված գիտահետազոտական աշխատանքների, ստեղծագործական խմբերի, նորաստեղծ ընկերությունների ֆինանսավորումը,

- Հայկական Սփյուռքի ներգրավվածությունն ապահովելու համար հայկական ընկերությունների, կազմակերպությունների և անհատների հետ ստեղծել շարունակական համագործակցության հարթակ,

- Աջակցել ՏՏ ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին, ձեռք բերել թվային ծառայություններ:

Նշվածի շրջանակներում կապահովվի հետևյալ արդյունքային ցուցանիշները՝ ԲՈՒՀ-մասնավոր համագործակցության շրջանակներում կպատրաստվեն 2000 մասնագետներ, դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 30 կազմակերպությունների կտրամադրվեն դրամաշնորհներ, կիրականացվի մեկ աքսելերացիոն ծրագիր՝ 30 շահառու թիմերի և 150 մասնակիցների համար, կիրականացվի տաղանդի ձևավորման և գլոբալ տաղանդի ներգրավման համար 1-ական միջոցառում, բարձր տեխնոլոգիական ոլորտում արտասահմանում կիրականացվեն շուրջ 15 վերապատրաստման միջոցառումներ:

Միաժամանակ պետական աջակցություն կտրամադրվի ՏՏ ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին՝ ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի N 399-Լ որոշմամբ նախատեսված քաղաքականությամբ և շահառուների մասով:

Պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային հետազոտություններ ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է հատկացնել 6,844.2 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է նպաստել ՀՀ պաշտպանության և անվտանգության համակարգերի զարգացմանը, մասնավորապես իրականացնել գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացում պաշտպանության համակարգի ապահովման համար: 2023թ. նախատեսվում է.

- ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում շահագործվող սպառազինության և ռազմական տեխնիկայի ու ռազմատեխնիկական ունեցվածքի նորոգման համար անհրաժեշտ հզորությունների ստեղծումը, պահպանումը և զարգացումը,

- ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում շահագործվող սպառազինության և ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական ունեցվածքի արդիականացման գործընթացի յուրացումը,

- Հրթիռաշինության զարգացումը,

- Ավտոմատացված կառավարման համակարգերի ստեղծումը,

- Ռազմական քիմիայի զարգացում նոր ստեղծվող պայթուցիկ նյութերի արտադրության կազմակերպման համար,

- Նոր սպառազինության և ռազմական տեխնիկայի ու ռազմատեխնիկական ունեցվածքի մշակում և արտադրություն:

Հեռահաղորդակցության ապահովում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է հատկացնել 2,361.8 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է ապահովել ՀՀ հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգումն ու բարելավումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ռադիոհաճախականային տիրույթի 92 տոկոս մաքրության ապահովում, հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի

կանոնակարգում ու բարելավում, ռադիոեթերի մոնիթորինգի և ազդանշանների տեխնիկական պարամետրերի չափումների անցկացում, Հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալում, ՀՀ-ում պետական մարմինների և ուսումնական հաստատությունների տվյալների փոխանակման կապի ապահովում և սպասարկում, ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիտորինգի համակարգի ներդրում:

Ռազմարդյունաբերության համալիրի զարգացում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է հատկացնել 142.0 մլն դրամ՝ ռազմարդյունաբերական համալիրի կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրելու նպատակով:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության գծով Նախագծով նախատեսվում է հատկացնել 8,624.4 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը), որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 2,103.5 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը):

Ծրագրի նպատակն է նպաստել շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների) պահպանությանը՝ վերջինիս վերաբերյալ տեղեկատվության հրապարակմամբ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է երաշտների ռիսկերի նվազեցման և կլիմայական ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով արդիականացնել «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տեխնիկական միջոցները և ձեռք բերել նոր սարքավորումներ, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակով իրականացնել 200 հայտերի գնահատման, փորձաքննության և եզրակացությունների տրամադրման, 85 հայտերի տեխնիկական առաջադրանքների կազմման աշխատանքներ, հիդրոօդերևութաբանական աշխատանքներ՝ մթնոլորտի և ջրոլորտի ուսումնասիրությունների ձևով՝ շուրջ 159,856.0 օդերևութաբանական, հելիոերկրաֆիզիկական, ագրոօդերևութաբանական և 94,220.0 հիդրոլոգիական և ռադիոլոգիական դիտարկումների իրականացում, փաստացի և սպասվող փոփոխությունների, ինչպես նաև դրանց հնարավոր հետևանքների մասին անհրաժեշտ տեղեկատվության ապահովում և մթնոլորտային երևույթների կառավարում:

Բացի այդ կլիմայի փոփոխության բացասական հետևանքներին դիմակայելու նպատակով իրականացվում են մի շարք ծրագրեր՝ Կանաչ Կլիմայի Հիմնադրամի (GCF) աջակցությամբ CO2 ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման, էներգիայի սպառման և ֆինանսական միջոցների խնայողության նպատակով «Շենքերի ոլորտում Չափողականություն, հաշվետվողականություն և հավաստագրում համակարգի ստեղծում և գիտելիքների կառավարում» և Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (GEF) աջակցությամբ CO2 ջերմոցային գազերի կրճատում, էլեկտրական տրանսպորտային միջոցների ներդրում «Անցում էլեկտրական շարժունակությանը Հայաստանում» միջոցառումների շրջանակներում:

Բնապահպանական ծրագրերի իրականացում համայնքներում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 602.4 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է մեղմել հանքարդյունաբերության ոլորտում տնտեսական գործունեության հետևանքով շրջակա միջավայրին և բնակչության առողջությանը պատճառված

վնասները: Նախատեսվում է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ թվով 9 համայնքների տրամադրել սուբվենցիաներ՝ բնապահպանական ծրագրերի իրականացման համար:

Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում և պահպանում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 1,588.5 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է ապահովել բնական պաշարների և կենսաբազմազանության արդյունավետ կառավարումն ու պահպանությունը՝ ակնկալելով ապահովել բնական պաշարների և կենսաբազմազանության վերարտադրության աճը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մաքրել Սևանա լճի շրջակայքի 244 հա ջրածածկ անտառտնկարկներ, ձեռք բերել Սևանա լիճ թափվող գետերի մաքրման աշխատանքների կատարման նախագծանախահաշվային փաստաթղթեր, ընդերքօգտագործման թափոնների լքված, տիրազուրկ տեղամասերի և օբյեկտների ռեկուլտիվացիայի համար մշակել նախագծային փաթեթներ, իրականացնել Սևանա լճի ջրահավաք ավազանի կենդանական ռեսուրսների (ձկան և խեցգետնի) պաշարների հաշվառման, «Սևան», «Դիլիջան», «Արևիկ» և «Արփի լիճ» ազգային պարկերում, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներում, «Սոսու պուրակ», «Զանգեզուր» և «Զիկատար» արգելավայրերում, ինչպես նաև «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող 328.1 հազ. հա տարածքների պահպանման, Սևանա լճի տարածքում գտնվող 3 հանրային լողափերի սպասարկման և պահպանման աշխատանքներ, ինչպես նաև իրականացնել որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների հաշվառում, որը հնարավորություն կնձեռնի սահմանել որսի կենդանիների տարեկան օգտագործման թույլատրելի չափաքանակներն ու որսի ժամկետները:

Անտառների կառավարում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 2,679.8 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է ապահովել անտառային տարածքների կայուն կառավարումը՝ նպաստելով կայուն կառավարվող անտառային տարածքների աճին: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի իրավասության ներքո գտնվող անտառային 342,400.0 հա տարածքների պահպանում, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի անտառածածկ 9000 հա տարածքում վնասատուների դեմ ավիացիոն պայքարի միջոցառումներ, 135.9 հազ. հա-ի մասով թվով 4 հատ անտառկառավարման պլանների կազմման, 130 հա տարածքում անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ:

Բնապահպանական նմուշների պահպանություն և ցուցադրություն ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 350.5 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է մշտական և ժամանակավոր ցուցահանդեսների միջոցով հավաքածուները ներկայացնել հանրությանը և իրականացնել բնապահպանական քարոզչություն՝ նպաստելով բնապահպանական աշխարհայացքի ձևավորմանը, բնակչության էկոլոգիական դաստիարակությանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել «Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ի իրավասության ներքո գտնվող Հայաստանին բնորոշ 6750 բնության օբյեկտների թանգարանային ցուցանմուշների պահպանության և ցուցադրության միջոցառումներ, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի միջոցով 161 տեսակի 780 գլուխ կենդանիների ցուցադրությունների միջոցառումներ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

ՀՀ էկոնոմիկայի նախարարության գծով Նախագծով նախատեսվում է հատկացնել 64,784.8 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը): Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է հատկացնել 93,755.4 հազ. դրամ:

Ծրագրի նպատակն է աջակցել հայրենական արտադրանքի արտանահման ծավալների ավելացմանը, հայրենական արտադրողներին հնարավորություն տալ ապահովել տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջները, արտադրել միջազգային շուկայում մրցունակ արտադրանք: Ինչպես նաև համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրումը, հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ սպառողների վստահության բարձրացումը, ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի համաձայն տրված համապատասխանության սերտիֆիկատների և գրանցված համապատասխանության հայտարարագրերի, հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների ռեեստրների ձևավորումը, վարումը և արդիականացումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է արտադրանքի և ծառայությունների գծով մշակել 30 ազգային ստանդարտներ, հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների ազգային, արտադրանքի սերտիֆիկացման մարմինների, լաբորատորիաների ԵԱՏՄ, համապատասխանության սերտիֆիկատների, հայտարարագրերի ՀՀ և ԵԱՏՄ միասնական ռեեստրների և հավատարմագրման փորձագետների, գնահատողների, տեխնիկական փորձագետների ռեեստրների վարում՝ 5 հատ:

ԵՄ աջակցությամբ իրականացվող որակի ենթակառուցվածքի համակարգի արդիականացում դրամաշնորհային ծրագիրի նպատակն է ՍՉԱՄ ՓԲԸ-ում տրամաչափարկման կարողությունների հիմնում, փորձարկման կարողությունների ընդլայնում՝ նոր լաբորատոր սարքավորումների ձեռքբերում, լաբորատորիաների վերազինում և ստեղծում:

Գիտելիքահենք, նորարարական տնտեսությանը և փոքր ու միջին ձեռնարկատիրությանը աջակցություն ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է հատկացնել 9.967.2 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է արտադրողականության բարձրացման նպատակով տնտեսության թվայնացման, նորարարական էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման, գիտելիքահենք գործարարությանը և փոքր ու միջին ձեռնարկատիրությանը աջակցություն:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին 240 գործարար ուսուցողական, 5000 տեղեկատվական և խորհրդատվական, 35 ֆինանսական և ներդրումային աջակցության տրամադրում, 30 տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում: Տնտեսավարողների կողմից ներգրավված 110 բարձր որակավորում ունեցող մասնագետների ծախսերի մասնակի փոխհատուցում, ինչպես նաև 1600 տնտեսավարող սուբյեկտների սուբսիդավորում և Ծրագրի շրջանակներում ձեռք բերվող 600 սարքավորումների, սարքավորման բաղկացուցիչների վարկերի տոկոսների սուբսիդավորում:

Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է հատկացնել 5,850.0 մլն դրամ:

Ծրագրի հիմնական նպատակն է ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ սահմանված երկարաժամկետ հեռանկարում նպաստել տնտեսական աճի նոր շարժիչ ոլորտների ձևավորմանը, վերամշակող արդյունաբերության ճյուղերի և համալիրների զարգացմանը, արտահանման զարգացման ներուժ ունեցող ոլորտների հավասարակշռված և փուլային միջոցառումների իրականացմանը: Աջակցել ներդրողների սպասարկմանը, օտարերկրյա ներդրողների ներգրավմանը և հետներդրումային սպասարկմանը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է արտադրական գործունեության միջազգային 7 ցուցահանդեսներին մասնակցության ապահովում, գործարար 5 համաժողովների (ֆորումների), 40 ներդրումային ծրագրերի ուղեկցում, ՀՀ-ում գործող օտարերկրյա ներդրողների 50 հետներդրումային շարունակական սպասարկում, ներդրումների ներգրավման ու գործարար կապերի հաստատման նպատակով ՀՀ-ում և արտերկրում 5 միջոցառումների կազմակերպում, 50 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակության տրամադրում, 1 համաժողովի անցկացում և միջոցառման շրջանակներում ուսումնասիրվող հանրային ներդրումային ծրագրեր:

Գյուղատնտեսության խթանման ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է հատկացնել 19,586.1 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է գյուղատնտեսական մթերքի և դրանց վերամշակումից ստացվող սննդամթերքի ծավալների ավելացումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է սուբսիդավորել 40396 տնտեսավարող սուբյեկտի՝ նախորդ տարիներին տրամադրված գյուղատնտեսական վարկերը, 213 տնտեսավարող սուբյեկտի՝ 2023թ. տրամադրվելիք և նախորդ տարիներին տրամադրված գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով վարկերը, սուբսիդավորել 10000 հա հողատարածքի ապահովագրավճարները, ՀՀ տարածքից դուրս իրականացնել հայկական գինեգործության հանրահռչակմանը, հայկական գինիների առաջմղմանն ու արտահանմանն ուղղված 2 միջոցառումներ, կոնյակի սպիրտ իրացնող (հարյուր հազար լիտրից ավելի) տնտեսվարող սուբյեկտների կողմից վճարված լրացուցիչ պետական տուրքի ետ վերադարձի ձևով օժանդակության տրամադրում՝ 10,000.0 հազ. լիտրին համարժեք, հողային բարեփոխումների փորձնական ծրագրի շրջանակներում ձեռքբերված և շրջանառության մեջ ներառված գյուղատնտեսական նշանակության 130 հա հողեր, 65 հա բարելավված հողեր, չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի շրջանառության մեջ ներառում և այլն:

Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է հատկացնել 3,047.2 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է հողագործությունից ստացվող արդյունքի բարելավումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վնասակար օրգանիզմների հայտնաբերման նպատակով հետազոտել 180,000 հեկտար տարածք, 85 համայնքի տրամադրել գյուղատնտեսական նշանակության հողերի կազմված ագրոքիմիական քարտեզներ, գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վնասակար օրգանիզմների դեմ իրականացնել պայքար 40,583.3 հեկտար տարածքում, իրականացնել բույսերի սերմերի որակի լաբորատոր հետազոտություններ և փաստաթղթավորում՝ 12 հազար տոննա, ինչպես նաև բույսերի նոր սորտերի ստուգիչ ցանքեր և դաշտային փորձարկումներ՝ 100 հատ, մասնակի փոխհատուցել 32,500 հա աշնանացան ցորենի ցանքատարածությունների վրա իրականացվելիք մշակության ծախսերը:

Անասնաբուժական ծառայություններ ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է հատկացնել 1,837.1 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է անասնահամաճարակային կայուն ֆոնի ապահովումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 978,837 հատ ախտորոշիչ միջոցառումներ, 3,769,771 հատ կանխարգելիչ (պատվաստումներ) միջոցառումներ և 686,500 խոշոր եղջերավոր կենդանու համարակալում:

Գյուղատնտեսության արդիականացման ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է հատկացնել 12,383.4 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է գյուղատնտեսական տեխնիկական համակարգերի արդիականացումը, ինտենսիվ այգիների ներդրման և տոհմաբուծության մեջ նոր ցեղատեսակների բուծման գծով աջակցությունը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է սուբսիդավորել՝

- նախորդ տարիներին հիմնված՝ 1,972.9 հեկտար նոր ինտենսիվ պտղատու այգիների համար տրամադրված վարկերը,
- 1,520 տնտեսավարող սուբյեկտի՝ 2023 թվականին տրամադրվելիք և նախորդ տարիներին տրամադրված՝ գյուղատնտեսական տեխնիկա ձեռքբերելու նպատակով վարկերը,
- 510 տնտեսավարող սուբյեկտի՝ 2023 թվականին տրամադրվելիք և նախորդ տարիներին տրամադրված ագրոպարենային ոլորտի սարքավորումներ ձեռքբերելու նպատակով վարկերը,
- 1157.3 հեկտար տարածքում ոռոգման արդիական համակարգ ներդնելու նպատակով նախորդ տարիներին տրամադրված վարկերը,
- 450 հեկտար տարածքում ինտենսիվ այգիներ հիմնելու նպատակով 2023թ. տրամադրվելիք վարկերը,
- նախորդ տարիներին 145.5 հեկտար տարածքում տեղակայված կարկտապաշտպան ցանցային համակարգերի համար տրամադրված վարկերը,
- 1890 գլուխ խոշոր եղջերավոր տոհմային կենդանիների ձեռքբերման համար նախորդ տարիներին տրամադրված և 450 խոշոր եղջերավոր տոհմային կենդանիների ձեռքբերման համար 2023 թվականին տրամադրվելիք վարկերը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև մասնակի փոխհատուցել նախորդ տարիներից կառուցվող կամ վերակառուցվող 21 անասնաշենքի գծով և 85 հեկտար ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար կատարված ծախսերը, ինչպես նաև 2023թ. կառուցվող կամ վերակառուցվող 4 անասնաշենքի, ձեռքբերվող 200 գլուխ մանր եղջերավոր տոհմային կենդանիների, հիմնվող 50 հեկտար ինտենսիվ պտղատու այգիների և ներդրվող 100 հա ոռոգման արդիական համակարգերի գծով կատարվող ծախսերը:

Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է հատկացնել 633.9 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է բարձրացնել գյուղատնտեսության ոլորտի արդյունավետությունը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ Արմավիրի և Արարատի մարզերում ներդնել ժամանակակից ոռոգման համակարգեր՝ գյուղացիական տնտեսվարողներին աջակցության նպատակով:

Ենթակառուցվածքների և գյուղական ֆինասավորման աջակցություն ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է հատկացնել 626.2 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է բարելավել գյուղական ազգաբնակչության տնտեսական ու սոցիալական կարգավիճակը և ստեղծել զբաղվածության ապահովման կայուն մեխանիզմներ՝

զարգացնելով արտադրական համակարգերը և կապը ապրանքային մշակաբույսերի արտադրության արժեշղթային օղակների հետ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ 4 համայնքներում իրականացնել ներդրումներ կայուն գյուղատնտեսական համակարգերում և տեխնոլոգիաներում, իրականացնել համայնքային հողերի էրոզիայի կանխարգելում:

Զբոսաշրջության զարգացման ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է հատկացնել 7,505.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է նպաստել ապահովել Հայաստան զբոսաշրջային այցելությունների դինամիկ աճին, Հայաստանի կայուն և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, պատմամշակութային և բնության ժառանգության պահպանությանը, զարգացմանը և պատշաճ ներկայացմանն ու խթանմանը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև զբոսաշրջային վայրերի բարելավված մուտքային 7 կմ ճանապարհահատվածի կառուցման, 1 զբոսայգու բարելավման և փողոցային լուսավորության թվով 160 սյուների ու լամպերի փոխարինման աշխատանքներ: Զբոսաշրջության աջակցության հետ կապված գործողությունների միջոցով կստեղծվեն 350 ժամանակավոր և մշտական աշխատատեղեր, միջազգային 4 ցուցահանդեսների մասնակցություն, միջազգային 8 ճանաչողական այցերի կազմակերպում, պետական աջակցություն ՀՀ մարզերում 8 փառատոների կազմակերպմանը, 2 միջազգային միջոցառման կազմակերպում, աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական 6 կենտրոնների գործունեությանը, 3 թիրախային երկրներում ռոուդ շոուների կազմակերպում, պետական աջակցություն 5 DMO-ների (զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպություններ) գործունեությանը, 2 միջազգային միջոցառման կազմակերպում:

ՀՀ ֆինանսների նախարարություն

ՀՀ ֆինանսների նախարարության գծով Նախագծով նախատեսվում է հատկացնել 276,367.6 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը): Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

Պետական պարտքի կառավարում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է հատկացնել 272,195.2 մլն դրամ: Ծրագրի նպատակն է Կառավարության ֆինանսական կարիքների բավարարման մշտական հնարավորության ապահովումը՝ երկարաժամկետ հատվածում նվազեցնելով պարտքի սպասարկման մեծությունը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է արտարժութային պետական պարտատոմսերի թողարկում, ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի հրապարակայնության ապահովում, պարտքի կառավարմանն առնչվող տեղեկատվական համակարգերի և ծրագրերի սպասարկում և կառավարության պարտքի և մուրհակների սպասարկում:

Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստում ծրագրի գծով նախատեսվել է հատկացնել 23.6 մլն դրամ: Ծրագրի նպատակն է հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների աշխատանքի արդյունավետության բարելավումը, հանրային ֆինանսների կառավարման նոր գիտելիքների և փորձի յուրացումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումը:

Հանրային ֆինանսների կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է հատկացնել 4,029.5 մլն դրամ: Ծրագրի նպատակն է հանրային ֆինանսների կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակումը և դրա կատարման

համակարգումը, պետական ծրագրերի պլանավորումը, մշակումը, մոնիտորինգի (վերահսկման) ծառայությունների իրականացումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև ֆինանսական կառավարման համակարգի վճարահաշվարկային ծառայությունների մատուցում, ՀՀ համապատասխան վարկանիշի միջազգային հարթակում ապահովման նպատակով՝ ՀՀ սուվերեն վարկանիշի ստացում, ՀՀ ՖՆ և ՌԴ ֆինանսների նախարարության միջև՝ ՌԴ կողմից ՀՀ-ին անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգերի ներդրում:

Գնումների գործընթացի կարգավորում և համակարգում ծրագրի գծով նախատեսվել է հատկացնել 119.3 մլն դրամ: Ծրագրի նպատակն է հանրային միջոցների ծախսման արդյունավետության բարձրացումը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է պետական գնումների գործընթացի թափանցիկության՝ հրապարակայնության և մրցակցության աստիճանի բարձրացում՝ էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկում և գնումների պլանավորում, պայմանագրերի կառավարման ու գնումների հաշվետվողականության էլեկտրոնային համակարգի սպասարկում, LSFinance (ԳԳՕ) և «CLIENT-TREASURY» համակարգի անխափան գործունեության ապահովում:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

ՀՀ ազգային անվտանգության ապահովման կարևորագույն ոլորտներից մեկը՝ արտակարգ իրավիճակների համակարգը, իրականացնում է հանրապետությունում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության մշակման, բնական, արհեստական և տեխնածին աղետներ առաջացնող երևույթների ուսումնասիրության, կանխարգելման, հակազդման, հետևանքների վերացման, բնակչության վաղաժամ իրազեկման և ուսուցման գործառույթները:

Ոլորտի հիմնական թիրախներն են՝ արտակարգ իրավիճակների բնագավառի պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում, արտակարգ իրավիճակների արդյունավետ արձագանքում, արտակարգ իրավիճակների կանխում, հնարավոր հետևանքների նվազեցում և վերացում, քաղաքացիական պաշտպանություն, բնակչության և տնտեսության օբյեկտների (տարածքների) պաշտպանություն, փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, հրդեհաշիջման և այլ աշխատանքների իրականացում, սեյսմիկ ռիսկերի գնահատում և նվազեցում, արտադրական վտանգավոր օբյեկտների շահագործմամբ պայմանավորված տեխնածին վթարների և դրանց հետևանքով հասարակությանը և տնտեսությանը պատճառվող վնասների ռիսկերի նվազեցում, ճգնաժամային կառավարման կարողությունների զարգացում, արտակարգ իրավիճակներում ռազմավարական նշանակության պաշարներով ապահովում և այլն, որոնք ներառված են աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրում:

ՀՀ ԱԻՆության գծով նախագծով նախատեսվում է հատկացնել 16,451.7 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը):

Ոլորտային քաղաքականության թիրախների (վերջնական արդյունքների) ապահովման նպատակով ՀՀ ԱԻՆության կողմից իրականցվող հիմնական ծրագրերն են.

Փրկարարական ծառայություններ ծրագրի նպատակն է արտակարգ իրավիճակների հնարավոր դեպքերի կանխումը, դրանց ժամանակին արձագանքումը, հետևանքների

նվազեցումը և բնակչության պաշտպանությունը, Փրկարար ծառայությունում փրկարարական համակարգի կատարելագործումը և զարգացումը՝ աստիճանաբար համապատասխանեցնելով ժամանակակից ընդունված պահանջներին, զուգահեռաբար պետական փրկարարական կառույցի շուրջ ձևավորելով կամավորական փրկարարական ուժեր, փրկարար ծառայողների մասնագիտական, արագ արձագանքման փրկարար ուժերի պատրաստականության բարձրացումը, քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի քաղաքացիական պաշտպանության ուժերի ու ստորաբաժանումների խնդիրների առավել արդյունավետ դերաբաշխման և կառավարելիության բարձրացումը, սահմանամերձ բնակավայրերում փրկարարական և արագ արձագանքման այլ ուժերի ստեղծումը և զարգացումը, ՀՀ-ում և տարածաշրջանում՝ հնարավոր աղետների դեպքում մարդասիրական օգնության ցուցաբերումը, ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում մարդուն հրատապ օգնության համապետական համակարգի «911» դիսպետչերական ծառայության զարգացումը՝ ծառայության մատուցումը հնարավորինս մոտեցնելով միջազգային չափանիշներին:

2023թ. նախատեսվում է ծրագրին հատկացնել 13,540.2 մլն դրամ կամ 1.931.7 մլն դրամով (16.6%) ավել 2022 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ:

Սեյսմիկ պաշտպանություն ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 752.9 մլն դրամ: Ծրագրի նպատակն է Սեյսմիկ ռիսկերի գնահատումը և նվազեցումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է երկրաֆիզիկական, երկրադինամիկական և այլ դաշտերի մոնիտորինգի, սեյսմիկ վտանգի, այդ թվում ընթացիկ սեյսմիկ վտանգի, գնահատման 515 հազար դիտարկումներ, ընդհանուր նշանակության 90 օբյեկտների վերաբերյալ տվյալների հավաքման, թվային բազաների ստեղծման և դրանց սեյսմիկ խոցելիության գնահատման աշխատանքներ:

Տեխնիկական անվտանգության կանոնակարգում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է 431.6 մլն դրամ: Ծրագրի նպատակն է ՀՀ տարածքում տեխնածին վթարների կանխարգելումը, դրանց հետևանքների վերացումը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցումը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Արտակարգ իրավիճակների արձագանքման կարողությունների զարգացում ծրագրի նպատակն է արտակարգ իրավիճակների և ճգնաժամային կառավարման կարողությունների զարգացումը պետական կառավարման, ՏԻՄ-երի և կազմակերպությունների ղեկավարների, մասնագետների համար ուսուցման կազմակերպումը: Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի հիմնական խնդիրն է զարգացնել ակադեմիայի հնարավորությունները՝ դարձնելով այն արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մասնագետների պատրաստման ու վերապատրաստման կենտրոն: 2023թ. նախատեսվում է հատկացնել 121.0 մլն դրամ: 2022թ հաստատված բյուջեն կազմել է 114.8 մլն դրամ:

Ռազմավարական նշանակության պաշարների կառավարում ծրագրի նպատակն է արտակարգ իրավիճակներում ռազմավարական նշանակության պաշարներով ապահովումը: Վերջինիս արդյունավետ իրագործման նպատակով անհրաժեշտ է ներդնել կառավարման ճկուն մեխանիզմներ և ապահովել դրանց պարբերական կատարելագործումը՝ արդի մարտահրավերներին համահունչ: 2023թ. նախատեսվում է հատկացնել 29.9 մլն դրամ:

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ արդարադատության ոլորտի քաղաքականության իրականացման նպատակով 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 26,035.6 մլն դրամ, այդ թվում՝ կապիտալ ծախսերի գծով՝ 3,576.6 մլն դրամ:

Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման, խորհրդատվության և մոնիտորինգի ծրագրի գծով 2023 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող 2022-2026 թվականների գործողությունների ծրագրով և ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների սահմանված միջոցառումները: Մասնավորապես, նախատեսվում է ապահովել ռազմավարություններից բխող 400 իրավական ակտերի նախագծերի մշակում, 5000 պետական փորձագիտական եզրակացությունների, կարծիքների, դիրքորոշումների տրամադրում: Արդյունքում 2023 թվականին նախատեսվում է իրականացնել դատահիրավական բարեփոխումներին ուղղված միջոցառումների շուրջ 50 և կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարությունից բխող միջոցառումների 75 տոկոսը:

Նախատեսվում է իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված շարունակական աշխատանքների իրականացում և պետական ռեգիստրում գրանցման ենթակա 45,500 սուբյեկտների և նրանց առանձնացված ստորաբաժանումների պետական գրանցում և հաշվառում:

Նախատեսվում է ապահովել անձնական տվյալների պաշտպանության ավելի բարձր մակարդակ, մասնավորապես՝ համապատասխանեցնել անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի կարգավիճակն օրենքով սահմանված և միջազգային չափանիշներին՝ ապահովելով նաև մարդկային ռեսուրսների, մասնագիտական, նյութական և տեխնիկական կարողությունների զարգացում: Անձնական տվյալների պաշտպանության նպատակով հասարակության իրազեկվածության նպատակով 2023 թվականին նախատեսվում է տրամադրել 230 խորհրդատվություն:Քաղաքացիական կացության ակտերի գրանցում ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվում է շարունակել նվազեցնել ոլորտում առկա վարչարարությունը՝ ապահովելով շուրջ 111,000 գրանցումներ, վկայականների կրկնօրինակների, տեղեկանքների տրամադրում, մատուցվող ծառայությունների ավտոմատացման 100 տոկոս, մատուցվող ծառայությունների դիմաց ներկայացված բողոքների կրճատում՝ մինչև 5 տոկոս:

Դատական և հանրային պաշտպանություն ծրագրի գծով միջոցներն, ինչպես և նախկինում, ուղղվելու են իրավունքի պաշտպանության հասանելիության և օբյեկտիվության ապահովմանը: Ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել են լրացուցիչ միջոցներ՝ փորձաքննությունների ծառայությունների ձեռքբերման նպատակով, միաժամանակ ապահովելով առաջադրված հարցերի ընդհանուր քանակի մեջ փորձաքննությամբ լուծված հարցերի 90.5 տոկոս տեսակարար կշիռ և նույն հարցի վերաբերյալ կրկնակի փորձաքննությունների կրճատում՝ մինչև 4 տոկոս: Բացի դրանից, լրացուցիչ գումար է նախատեսվել հանրային պաշտպանի ծառայությունների և սնանկության գործերով կառավարչական ծառայությունների ձեռքբերման գծով, քանի որ սնանկության գործերի քանակը տարեկան 1000-ից ավելի է:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ապահովել օրենսդրությամբ սահմանված դեպքերում քաղաքացիներին անվճար իրավաբանական ծառայությունների տրամադրումը վարույթ ընդունած 17,334 գործերի գծով, հանրային պաշտպանների դեմ բողոքների քանակի հարաբերակցությունը վարած գործերի նկատմամբ սահմանելով 5 տոկոս:

«Քրեակատարողական ծառայություններ» ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 14,661.2 մլն դրամ, որը կուղղվի քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման և արդիականացման ռազմավարական պլանները կյանքի կոչելուն, ազատությունից զրկված անձանց պահման պայմանների բարելավմանը, վերասոցիալականացման միջոցառումների իրականացմանը, տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարձրացմանը, պրոբացիայի ինստիտուտի զարգացմանն ու արձանագրված ոլորտային խնդիրների լուծմանը:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է դատապարտյալների 15 տոկոսին ապահովել աշխատանքով, աստիճանաբար ավելացնել ՔԿՀ-ում միջին մասնագիտական/տեխնիկական կրթություն ստացող, սոցիալական /սոցիալական վերականգնում և խորհրդատվություն/ աջակցություն ստացած դատապարտյալների և կալանավորվածների թիվը, ՔԿՀ-ում մշակութային կամ մարզական միջոցառումներին մասնակցած դատապարտյալների տեսակարար կշիռը ընդհանուր դատապարտյալների մեջ:

2023 թվականին շարունակվելու են քրեակատարողական հիմնարկներում բժշկական օգնության և սպասարկման ոլորտի կատարելագործմանն ուղղված աշխատանքները: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է առաջնային և մասնագիտացված բնույթի մոտ 85,000 բուժօգնություն ցույց տալ դատապարտյալներին և կալանավորված անձանց՝ ապահովելով բուժօգնության կազմակերպման ձգձգումների բացառումը

Շարունակվելու է քրեակատարողական հիմնարկներում գտնվող, իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթության ծրագրերի իրականացումը: Տարեկան հաստատված ծրագրերին մասնակցած և հավաստագրեր ստացած ունկնդիրների տեսակարար կշիռը մասնակիցների ընդհանուր թվաքանակի մեջ նախատեսվում է 80 տոկոս: ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 112-րդ հոդված 3-րդ մասի և «Կրթության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» 2022 թվականի մայիսի 25-ի ՀՕ-130-Ն օրենքով նախատեսված դրույթների համաձայն 2023 թվականին «Քրեակատարողական ծառայություններ» ծրագրի շրջանակներում կապահովվի անկախ տարիքից՝ ազատությունից զրկված անձանց համար հանրակրթության իրականացումը:

Կառավարությունը շարունակելու է վճռական մնալ վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորման հարցում: Այս համատեքստում հիմնական թիրախային ուղղությունները լինելու են զարգացնել Պրոբացիայի ծառայության կարողությունները և հզորացնել կադրային ներուժը: Պրոբացիայի ծառայությունում հաշվառված շահառուների համար նախատեսվում է իրականացնել 35 մշակութային միջոցառումներ, ավելացնել վերասոցիալականացման ծրագրերին մասնակցած շահառուների թիվը, հանրային աշխատանքներ պատժատեսակում ներգրավված շահառուների թիվը, արդյունքում ապահովելով կրկնահանցագործություն կատարած շահառուների թվի կրճատում:

Ազատությունից զրկելուն այլընտրանք հանդիսացող նոր պատժատեսակների և խափանման միջոցների արդյունավետ կիրառման նպատակով Պրոբացիայի ծառայությանը 2023 թվականին շարունակվելու է էլեկտրոնային հսկողության համար անհրաժեշտ միջոցներով ու ենթակառուցվածքներով վերազինումը և, ըստ այդմ, իրավակիրառ պրակտիկայում էլեկտրոնային հսկողության փաստացի և պատշաճ կիրառումը:

«Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում» ծրագրի գծով նախատեսվել է 1,233.0 մլն դրամ: Ծրագրի մեջ ընդգրկվել է նոր միջոցառում՝ արխիվային ծառայությունները, որը նախկինում ներառված է եղել ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող ծրագրերում,

ինչով էլ պայմանավորված է ծրագրի գումարի մեծությունը: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է ապահովել Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգում՝ «ԱՐԼԻՍ» կայքում լրացուցիչ մոտ 9,000 իրավական ակտի հրատարակում, տեղեկատվական համակարգի ամենշաբաթյա թարմացում, իրավական ակտերի էլեկտրոնային ժողովածուի պարբերական համալրում և ՀՀ, ԵՏՄ, ԵՄ իրավական ակտերի, ՀՀ ազգային զեկույցների, ՀՀ պետական մարմինների կողմից միջազգային կառույցներ ներկայացվող և այդ կառույցների կողմից ՀՀ մարմիններ ներկայացվող փաստաթղթերի և հանձնարարվող այլ առանցքային փաստաթղթերի թարգմանությունների կատարումը: Ծրագրի նպատակն է ապահովել մոտ 3 տոկոս հանրային իրազեկվածության բարձրացում:

«Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում» ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվում է հատկացնել 501.9 մլն դրամ՝ դատավորների թեկնածուների հավակնորդների և դատախազների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց Արդարադատության ակադեմիայում մասնագիտական պատրաստման ընթացքում կրթաթոշակի վճարման, ինչպես նաև հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման, դատավորների և դատախազների, դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում ծառայողների, դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման կազմակերպման նպատակով: Այս ծրագրով նախատեսվում է ապահովել 2,250 հատուկ ծառայողների, 320 դատավորների, 175 դատախազների, 150 դատական կարգադրիչների վերապատրաստումն ու հատուկ ուսուցումը, ապահովելով վերապատրաստման հավաստագիր ստացած ունկնդիրների 99 տոկոս տեսակար կշիռ:

Հարկադիր կատարման ծառայությունում ներդրվել է «Հիբրիդփոստ» նամակների էլեկտրոնային համակարգը:

2023 թվականին Դատաիրավական բարեփոխումների շրջանակում իրականացվելու է հարկադիր կատարման ոլորտի համընդհանուր բարեփոխումներ՝ բարձրացնելու կատարողական գործողությունների արդյունավետությունը, առավելագույնս ապահովելու կատարողական վարույթի մասնակիցների օրինական շահերի պաշտպանությունը, նրանց խնդիրներին ու կարիքներին արագ և արդյունավետ արձագանքելու կառուցակարգերի ներդրմանը: 2023 թվականին նախատեսվում է ավարտել ընթացքի մեջ գտնվող կատարողական վարույթների 62 տոկոսը, բռնագանձման ենթակա գումարի նկատմամբ բռնագանձված գումարի և աճուրդով վերականգնված գումարի տեսակարար կշիռը նախատեսվել է յուրաքանչյուրը մոտ 13 տոկոս:

Հարկադիր կատարման վարույթի ամբողջական թվայնացման, ըստ այդմ՝ քաղաքացի-հարկադիր կատարող արդյունավետ հաղորդակցության ապահովման նպատակով հարկադիր կատարման ծառայության գծով 2023 թվականին նախատեսվել են միջոցներ տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով:

Հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգի իրականացում ծրագրի գծով միջոցներն ուղղվել են հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների իրականացմանը, մասնավորապես՝ Հակակոռուպցիոն կոմիտեի և դատարանների շենքերի կառուցմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ապահովել նաև Հակակոռուպցիոն կոմիտեի և Հակակոռուպցիոն դատարանների շենքային պայմանները:

ՀՀ արտաքին գործերի նախարարություն

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ՀՀ Կառավարության ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է ՀՀ արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև կազմակերպում և ղեկավարում է դիվանագիտական ծառայությունն օտարերկրյա պետություններում և միջազգային կառույցներում:

ՀՀ-ն դիվանագիտական հարաբերություններ է հաստատել աշխարհի 178 երկրի հետ, անդամակցում է 106 միջազգային կազմակերպության, այդ թվում՝ մասնագիտացված մարմինների, ծրագրերի, կոնվենցիաների և համաշխարհային հանրության կողմից ընկալվում է որպես կանխատեսելի ու հուսալի գործընկեր: Արտերկրում ՀՀ-ն ունի 43 ռեզիդենտ դեսպան, ովքեր հավատարմագրված են ընդհանուր առմամբ 79 երկրում: ՀՀ մշտական ներկայացուցիչներ են նշանակված 11 միջազգային կազմակերպություններում, արտերկրում գործում է 10 ՀՀ գլխավոր հյուպատոսություն, 2 հյուպատոսական գրասենյակ:

ՀՀ արտաքին գործերի նախարարության գծով 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել շուրջ 16.4 մլրդ դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը): Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

Արտաքին գործերի ոլորտում Կառավարության քաղաքականության մշակում և իրականացում.

Ծրագրի նպատակն է ՀՀ ինքնիշխանության պաշտպանությունը, Հայաստանի և Ղարաբաղի անվտանգության ապահովումը, ՀՀ միջազգային հեղինակության բարձրացումը, ՀՀ կայուն զարգացմանն ուղղված միջազգային և տարածաշրջանային համագործակցության ապահովումը, ինչպես նաև միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատումն ու զարգացումը, միջազգային հարաբերություններում ՀՀ շահերի և իրավունքների ներկայացումը:

Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ.

Ծրագրի նպատակն է միջազգային համագործակցության բազմակողմ ձևաչափերում ՀՀ ակտիվ ներգրավվածության միջոցով ՀՀ արտաքին քաղաքականության գերակայությունների իրագործումը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ և դրանց շրջանակներում բնականոն փոխհարաբերությունների ու արդյունավետ համագործակցության ապահովումն ու ընդլայնումը:

Օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության կազմակերպում և իրականացում.

Ծրագրի նպատակն է ապահովել ՀՀ պաշտոնական ներկայությունն արտերկրում՝ նպաստելով ՀՀ ինքնիշխանության և շահերի պաշտպանությանը, Հայաստանի և Ղարաբաղի անվտանգության ապահովմանը, հակահայկական քարոզչության հակազդմանը, միջազգային և տարածաշրջանային գործընթացներին ՀՀ ներգրավվածության ավելացմանը, ՀՀ կայուն զարգացման և տնտեսական արդիականացման համար նպաստավոր պայմանների ձևավորմանը, արտերկրում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց շահերի պաշտպանությանը:

Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում.

Ծրագրի նպատակն է դիվանագիտական և պետական ծառայության արդյունավետության բարձրացումը, դիվանագիտական ծառայության համալրումը նոր և որակյալ մասնագետներով, պետական ծառայողների, այդ թվում՝ դիվանագիտական ծառայողների վերապատրաստումը:

ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում.

Ծրագրի նպատակն է ՀՀ-ում և ՀՀ միջազգային հարաբերություններում պետական արարողակարգային կանոնների միասնական կիրառումն ու ապահովումը, ինչպես նաև միջազգային արարողակարգային չափանիշներին համապատասխան միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը:

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ կողմից 2023 թվականին ծախսերը նախատեսվում է իրականացնել հինգ ծրագրերի շրջանակներում, որոնց գծով պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 517,277.3 մլն դրամ, որից ընթացիկ ծախսերի գծով՝ 237,027.4 մլն դրամ կամ 45.8%, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով՝ 280,249.9 մլն դրամ կամ 54.2%-ը: Ծախսերի աճը ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նկատմամբ կկազմի 171,781.8 մլն դրամ, որն ուղղվելու է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը:

ՀՀ պաշտպանության ապահովում ծրագիրը հանդիսանում է ՀՀ ՊՆ համակարգի գործունեությունն ապահովող հիմնական ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում են ՀՀ զինված ուժերի պահպանման, ռազմական, մարտական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, կապի համակարգի սարքավորումների, զորանոցային և տեխնիկական գույքի, պարենի, հանդերձանքի, վառելիքա-քսուքային նյութերի սահմանված պաշարների մակարդակի, զենքի և զինամթերքի հնարավոր ներհանրապետական գնումների, բանակի մարտունակության և կենսապահովման պահանջների բավարարման ծախսերը:

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով վերոնշյալ ծրագրով նախատեսվել է 512,785.9 մլն դրամ՝ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեից 172,216.6 մլն դրամով ավել:

Ռազմաբժշկական սպասարկում և առողջապահական ծառայություններ ծրագրի գծով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 2,512.0 մլն դրամ, որի շրջանակներում թվով 12 ռազմաբժշկական հաստատություններում (որից 2 կենտրոնական հոսպիտալներ, 6 կայազորային հոսպիտալներ և 3 առանձին բժշկական ջոկատներ, 1 կենտրոնական պոլիկլինիկա), 2 մասնագիտացված, 60 գնդային, 31 առանձին գումարտակային և գնդերի շուրջ 75 գումարտակային բուժկետերում կազմակերպվում է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների առաջնային և մասնագիտացված բուժօգության ծառայությունները, զինված ուժերում համաճարակային անվտանգությունը ապահովելու և վարակիչ հիվանդությունների ներթափանցումը կանխելու նպատակով կազմակերպվելու է 16.9 տոննա բժշկական թափոնների ոչնչացման աշխատանքները, նախատեսվում է սպասարկման և ընթացիկ վերանորոգման ենթարկել 55 հատուկ բժշկական սարքերի, սարքավորումներ:

«Հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումներով համալրում» միջոցառման շրջանակներում 1,129.8 մլն դրամ միջոցները կուղղվեն կենտրոնական և կայազորային զինվորական հոսպիտալները ԷՕՊ սարքի, նարկոզի, արհեստական շնչառության, ԷԷԳ, լապարասկոպ, ատամնաբուժության համար նախատեսված արդիական բժշկական սարքավորումներով համալրմանը:

Ռազմական ուսուցում և վերապատրաստում ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ուսուցում արտերկրների ռազմական ուսումնական հաստատություններում և ակադեմիաներում: ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 1,029.1 մլն դրամ:

Միջազգային ռազմական համագործակցություն ծրագրով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 735.1 մլն դրամ, որի շրջանակներում կիրականացվի օտարերկրյա պետություններում ՀՀ ռազմական կցորդների և միջազգային կազմակերպություններում (ՄԱԿ, ԵԱՀԿ, ՀԱՊԿ, ՆԱՏՕ) ռազմաքաղաքական և ռազմական ներկայացուցիչների պահպանման ծախսերի ֆինանսավորումը: Ծախսերը ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել են 209.1 մլն դրամով, պայմանավորված ՀՀ դրամի նկատմամբ արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ:

Հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայություններ ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ականականային գործողությունների ենթակա տարածքի հետազննում, քարտեզագրում, նախատեսվող ծավալի աշխատանքների հստակեցում և իրականացվող միջոցառումների: ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 215.3 մլն դրամ:

ՀՀ Ոստիկանություն

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ ոստիկանության ընդհանուր հատկացումները կազմում են 75,692.0 մլն դրամ, որը 2022 թվականի՝ 66,585.5 մլն.դրամի համեմատությամբ աճել է 9,106.3 մլն դրամով, կամ 13.7 %-ով:

Նախագծով նախատեսվող հատկացումները հիմնականում վերագրվում են ընթացիկ ծախսերին՝ 68,820.7 մլն.դրամ, որը 2022 թվականի՝ 62,099.9 մլն դրամի նկատմամբ աճել է 6,720.8 մլն դրամի չափով, կամ 10,8 %-ով, իսկ կապիտալ ծախսերը կազմել են 6,871.3 մլն դրամ, որը 2022 թվականի՝ 4,485.8 մլն դրամի նկատմամբ աճել է 2,385.5 մլն դրամի չափով:

Ոստիկանության ոլորտների՝ կազմակերպահրավական գործունեության, ծառայությունների մատուցման, հասարակական անվտանգության ապահովման և իրավախախտումների դեմ պայքարի քաղաքականության մշակում, մոնիտորինգ և կառավարում ծրագրի գծով հատկացումները կազմում են 74,120.3 մլն դրամ, որը 2022 թվականի՝ 65,019.8 մլն դրամի համեմատությամբ աճել է 9,100.5 մլն դրամով, կամ 14.0 %-ով: Ընթացիկ ծախսերի գծով հատկացումները կազմում են 67,249.1 մլն դրամ, 2022 թվականի՝ 60,534.0 մլն դրամի նկատմամբ աճել է 6,715.1 մլն դրամի չափով, կամ 11,1 %-ով, իսկ կապիտալ ծախսերը կազմել են 6,871.3 մլն դրամ, որը 2022 թվականի՝ 4,485.8 մլն. դրամի նկատմամբ աճել է 2,385.5 մլն. դրամի չափով: Ծրագրով իրականացվող ոստիկանության գործունեության հիմնական նպատակներ են.

ա) մարդու կյանքի, առողջության, պատվի, արժանապատվության, իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանությունը հանցավոր և այլ ոտնձգություններից,

բ) հասարակության ու պետության անվտանգության ապահովումը,

գ) հանցագործությունների ու վարչական իրավախախտումների հայտնաբերումը, բացահայտումը, նախականխումը, կանխումը և խափանումը,

դ) հանցագործությունների և վարչական իրավախախտումների կանխարգելմանը, հասարակական կարգի պահպանությանը և հասարակական անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը,

ե) անչափահասների նկատմամբ և անչափահասների կողմից կատարվող հանցագործություններին հակազդելու, ոստիկանության տեսադաշտում գտնվող անչափահասների հետ տարվող կանխարգելիչ դաստիարակչական աշխատանքների բարելավումը,

զ) ՀՀ քաղաքացիների, օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց անձը հաստատող և (կամ) կարգավիճակը հավաստող փաստաթղթերի տրամադրման և բնակչության պետական ռեգիստրի վարման աշխատանքների անխափան և արդյունավետ իրականացումը,

է) Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը, ճանապարհատրանսպորտային պատահարների և վթարների նվազեցումը,

ը) ոստիկանական գործունեության ոլորտը կանոնակարգող օրենսդրության բարելավումը,

թ) հանցավորության դեմ պայքարի ոլորտում միջազգային ոստիկանական և այլ կառույցների հետ փոխհամագործակցության ակտիվացումը,

ժ) Ոստիկանությունում Քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման արդյունավետությանն ուղղված իրավական և կազմակերպչական աշխատանքների իրականացում:

Ոստիկանության կրթական ծառայություններ ծրագրի գծով հատկացումները կազմում են 1,571.7 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ ոստիկանության ծառայողների մասնագիտական գիտելիքների և գործնական հմտությունների ձևավորումը: Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել ոստիկանության ծառայողների նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական կրթության գծով:

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

ՀՀ ազգային անվտանգությունը պետության և հասարակության այնպիսի կացություն է, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից:

Պետական պահպանության ծառայությունն իրականացնում է պետական պահպանության ենթակա օբյեկտների անվտանգության ապահովման և պետական օբյեկտների պաշտպանության ոլորտի գործառույթ, իրավական, կազմակերպական, պահպանական, ռեժիմային, օպերատիվ-հետախուզական, տեխնիկական և այլ միջոցառումների համակցմամբ:

ՀՀ արտաքին և ներքին անվտանգության ապահովման կարևորագույն նախապայմանն անվտանգության միջավայրի համակողմանի գնահատման հիման վրա արտաքին, ներքին և պաշտպանական քաղաքականության ճկուն գործիքակազմի ձևավորումն է, ինչը հնարավորություն կտա Կառավարության քաղաքական առաջնահերթությունները կյանքի կոչելու համար ստեղծել կայուն և կանխատեսելի մթնոլորտ, իսկ արտաքին անվտանգության ապահովման երաշխիքների համար՝ բավարար կարողություններ: Կառավարության առաջնահերթությունների թվում են ՀՀ ռազմավարական նշանակության օբյեկտների և

ենթակառուցվածքների անվտանգության ապահովումը, անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված խնդիրների և դրանցից բխող միջոցառումների իրականացումը:

Ազգային անվտանգության ծառայության նպատակներն են հետախուզական գործունեությունը, հակահետախուզական գործունեությունը, ռազմական հակահետախուզական գործունեությունը, պետական սահմանի պահպանությունը և պայքարը հանցագործությունների դեմ: Այս առումով վերջնական արդյունքներն են ՀՀ ազգային անվտանգության սպառնալիքների մասին տեղեկությունների ստացումը և կանխարգելիչ միջոցառումների անցկացումը, օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և այլ կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անձանց հետախուզական գործունեության բացահայտումը, կանխումը և խափանումը, օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հանցագործությունների բացահայտումը, կանխումը և խափանումը, ՀՀ պետական սահմանի անձեռնմխելիության ապահովումը, սահմանափակումների կանխումը և խափանումը:

Պետական պահպանության ծառայության նպատակներն են՝ իր իրավասության սահմաններում կազմակերպել պետական պահպանության ենթակա օբյեկտների անվտանգությունը, կանխատեսել և բացահայտել այդ օբյեկտներին սպառնացող վտանգը և նրանց կանխարգելման համար իրականացնել համալիր միջոցառումներ, պետական պահպանության օբյեկտների անվտանգությունն ապահովել նրանց մշտական կամ ժամանակավոր գտնվելու վայրում, իր իրավասության շրջանակներում մասնակցել ահաբեկչության դեմ պայքարին, պաշտպանել պահպանվող օբյեկտները, կանխել և խափանել պահպանվող օբյեկտներում հանցագործությունները և այլ իրավախախտումները, ապահովել սահմանված անցագրային ռեժիմն ու կարգը:

Ազգային անվտանգության գերակա վերջնական արդյունքն է ազգային անվտանգության ապահովումը, իսկ պետական պահպանության ծառայության գերակա վերջնական արդյունքն է հատուկ պետական պաշտպանության ենթակա օբյեկտների անվտանգության ապահովումը:

Ազգային անվտանգության համակարգի զարգացման հիմնական միտումները նպատակաուղղված են ներքին և արտաքին սպառնալիքներից անձի, հասարակության ու պետության անվտանգության ապահովման բարձրացմանը, տնտեսության ոլորտում կատարվող հանցագործությունների, այդ թվում՝ կոռուպցիայի տարբեր դրսևորումների և տնտեսության զարգացմանը խոչընդոտող այլ երևույթների ժամանակին հայտնաբերման ու բացահայտման աշխատանքների ակտիվացմանը, օպերատիվ գործունեության արդյունավետության բարձրացմանը, պետական սահմանի շուրջօրյա հսկման և պահպանման բարելավմանը, այդ թվում նաև էլեկտրոնային համակարգերով և ծառայողական կենդանիներով (շներ, ձիեր և այլն), հետախուզության, հակահետախուզության ոլորտի ընդլայնմանը, օտարերկրյա հատուկ ծառայությունների կողմից օգտագործվող գործակալական ցանցի բացահայտման հետ կապված աշխատանքների զարգացմանը, գաղտնի տեղեկատվության անվտանգություն մակարդակի բարելավմանը, նոր համակարգի ներդրման ապահովմանը:

Պետական պահպանության ծառայության զարգացման հիմնական միտումները նպատակաուղղված են պետական պահպանության ծառայության հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց, ինչպես նաև մշտական և ժամանակավոր պահպանվող օբյեկտների անվտանգության ապահովման բարձրացմանը, պետական պահպանության ապահովման համար տեխնիկա-տնտեսական բազայի ամրապնդմանը, զենք զինամթերքի արդիականացմանը և ավելացմանը, անհրաժեշտ նյութական ռեսուրսներով ապահովմանը, զինծառայողների և զինվորական կոչում չունեցող աշխատակիցների ֆինանսական և

սոցիալական վիճակի բարելավմանը, սեփական ուսումնական կենտրոնի և նրան կից անհրաժեշտ շինություններով, լրացուցիչ պահեստներով ապահովմանը, ինչպես նաև անձնակազմի մասնագիտական պատրաստականության բարձրացմանը:

Ոլորտային քաղաքականության թիրախների (վերջնական արդյունքների) ապահովման նպատակով ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից իրականացվում են հետևյալ ծրագրերը.

Ազգային անվտանգություն ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով հատկացնել 44,469.6 մլն դրամ կամ 5,838.7 մլն դրամով ավել ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նկատմամբ՝ պայմանավորված ծառայության բնականոն գործունեության ապահովման անհրաժեշտությամբ:

Պետական պահպանության ապահովում ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով հատկացնել 4,464.6 մլն դրամ կամ 426.5 մլն դրամով ավել ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նկատմամբ՝ պայմանավորված թափուր հաստիքների համալրմամբ:

ՀՀ վարչապետի աշխատակազմ

ՀՀ վարչապետի աշխատակազմի գծով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի Նախագծով նախատեսվում է հատկացնել 19,846.1 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը): Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում ծրագրի գծով նախատեսվել է հատկացնել 1,915.7 մլն դրամ (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի):

Ծրագրի նպատակներից է աջակցել օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավմանը, ներդրողներին խորհրդատվության և աջակցության տրամադրմանը, օտարերկրյա ներդրումային ծրագրերին բաժնեմասնակցությանը, ՊՄԳ ոլորտի զարգացման խթանմանը, ՊՄԳ ծրագրերի զարգացման աջակցությանը:

Տեսչական վերահսկողության ծրագրի գծով նախատեսվել է հատկացնել 629.7 մլն դրամ (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի):

Ծրագրի նպատակն է ՀՀ-ում ապրանք արտադրողների և ծառայություն մատուցողների կողմից սպառողներին իրացվող արտադրանքի նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը՝ ստանդարտացման և չափագիտական նորմերի ապահովման միջոցով, ինչպես նաև սննդամթերքի անվտանգության և որակի ապահովման բնագավառներում միջազգային չափորոշիչների պահանջներին համապատասխան իրականացնել լաբորատոր փորձաքննություններ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

փորձանմուշների ձեռքբերման և փորձարկման ծախսեր, շարժական լաբորատորիայի համար անհրաժեշտ ծախսեր, արտադրական կանեփի նկատմամբ վերահսկողության իրականացման ժամանակ փորձարկումների կատարում, ինչպես նաև սննդամթերքի 868 լաբորատոր փորձաքննություններ, գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի 995,000 լաբորատոր փորձաքննություններ, գյուղատնտեսական մշակաբույսերի ու բույսերի պաշտպանության միջոցների 5500 լաբորատոր փորձաքննություններ, մեղրի մեջ մնացորդային

նյութերի լաբորատոր հսկողության նպատակով 863 հետազոտություններ և ձկան մեջ մնացորդային նյութերի լաբորատոր հսկողության նպատակով 792 հետազոտություններ, ինչպես նաև խոշոր և մանր եղջերավոր կենդանիների շճաբանական հետազոտության ենթակա նմուշների քանակը կկազմի 4400 հատ:

Աջակցություն հասարակական և այլ կազմակերպություններին ծրագրի գծով նախատեսվել է հատկացնել 58.9 մլն դրամ (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի):

Ծրագրի նպատակն է նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը: Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը, հասարակական կազմակերպություններին աջակցմանը:

Հանրային իրազեկում ծրագրի գծով նախատեսվել է հատկացնել 1,078.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է ապահովել հանրային կապերի՝ պետական մարմինների թափանցիկությունը, տեղեկատվության մատչելիությունը:

Ծրագրով նախատեսված հատկացումներն ուղղվելու են հանրային իրազեկման ապահովմանը, պետական մամուլի հրատարակմանը, «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության ՀՀ մասնաբաժնի վճարմանը, տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայությունների իրականացմանը:

Տոների և հիշատակի օրերի ծրագրի գծով նախատեսվել է հատկացնել 40.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացումը՝ ի նպաստ Ազգային ինքնության պահպանմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումները կուղղվեն Քաղաքացու օրվան նվիրված միջոցառմանը:

Սփյուռքի գծով իրականացվում է 2 ծրագիր, որից.

Հայաստան-Սփյուռք գործակցության ծրագրի գծով նախատեսվել է հատկացնել 511.6 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը, հայապահպանությանն ու ազգային ինքնության պահպանմանը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Սփյուռքի հայ երիտասարդության և պատանիների ուսումնաճանաչողական այցելություններ, հայերենի ուսուցման դասընթացներ՝ ընդգրկելով շուրջ 400 մասնակցի («Քայլ դեպի տուն»), ՀՀ-ի մասին սփյուռքի երիտասարդ առաջնորդների ճանաչողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպում շուրջ 20 մասնակցի համար, ինչպես նաև 18 այցելություններ սփյուռքի համայնքներ՝ խնդիրներին ծանոթանալու, դրանց լուծման ուղիների քննարկման, համայնքներում կազմակերպված միջոցառումներին մասնակցության և այլ նպատակներով, հնարավորություն է ընձեռնվում սփյուռքահայ լավագույն որակավորում ունեցող 100 մասնագետներին՝ նախորդ տարվա 50-ի դիմաց, իրենց մասնագիտական և փորձագիտական հմտություններով ներգրավվելու ՀՀ պետական կառավարման համակարգում («ԻԳործ»), պատրաստվելու և հեռարձակվելու են հայրենադարձության քարոզչության վերաբերյալ 84 հեռուստահաղորդումներ, տեսահոլովակներ և գովազդային նյութեր՝ ապահովելով սփյուռքահայերի իրազեկվածությունը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև իրականացնել Հայրենադարձության ինտեգրման կենտրոնի ընթացիկ աշխատանքները, որը հնարավորություն է ընձեռում

կարգավորել հայրենադարձության հետ կապված տարատեսակ հարցերը, սպասարկելով շուրջ 2500 անձանց և նպաստում ՀՀ-ում հայրենադարձների արագ և արդյունավետ ինտեգրմանը:

ՀՀ զարգացման գործընթացներում Սփյուռքի ներուժի ներգրավում ծրագրի գծով նախատեսվել է հատկացնել 125.2 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է ապահովել սփյուռքի ներուժի բացահայտումը, տեղեկատվական համակարգերի ստեղծումը, կատարելագործումը և համալրումը, համատեղ ծրագրերի իրականացումը, համահայկական մասնագիտական ցանցերի ստեղծումը, որի արդյունքում հնարավոր կլինի համախմբել Հայաստանի և Սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժը և այն արդյունավետ կիրառել առաջադրված խնդիրների լուծման համար:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 2 Համահայկական համաժողով (երիտասարդական համահայկական և սփյուռքահայ իրավաբանների համաժողովներ), որը ներգրավելու է շուրջ 1250 մասնակից, ինչպես նաև «Սփյուռքի մարդկային ներուժի վերհանում, դրա քարտեզագրում և տեղեկատվական բազայի ստեղծում» միջոցառման գծով հավաքագրել և մոտքագրել սփյուռքի մարդկային ներուժի 25 000 տվյալ:

Քաղաքացիական ծառայողների վերապատրաստում ծրագրի գծով նախատեսվել է հատկացնել 10.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է 1400 քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների հետևողական վերապատրաստում և ուսուցում:

Պետական հատվածի արդիականացման ծրագրի գծով նախատեսվել է 748.3 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է Հանրային ֆինանսական հաշվետվությունների որակի և ընտրված էլեկտրոնային կառավարման կատարելագործված ծառայությունների հասանելիության բարելավում:

Ծրագրի շրջանակներում 2023 թվականին մեկնարկում է **Պետական հատվածի արդիականացման** չորրորդ վարկային ծրագիրը, որի նպատակն է՝ քաղաքացիական ծառայության շարունակական բարեփոխումների, պետության և ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների թվայնացման և ընտրված էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման միջոցով աջակցել պետական կառավարման համակարգի արդիականացմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝ Դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների ինքնաշխատ հաշվառման համակարգի ներդրում, Մաքսային միասնական հաշվի համակարգի, Իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցման e-register համակարգի արդիականացման, Արհեստական բանականության և մեքենայացված ուսուցման տեխնոլոգիաների հիման վրա ժամանակակից վերլուծական համակարգի հարկային և մաքսային էլեկտրոնային համակարգերում ներդրման նպատակով նախագծերի պատրաստում:

Արդյունահանող ճյուղերի զարգացման ծրագրի գծով նախատեսվել է 99.4 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է Հայաստանում տնտեսական աճին հանքարդյունաբերության ոլորտի նպաստի ամրապնդումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն. Լրացուցիչ ֆինանսավորում» դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է

ԱՃԹՆ-ի միջազգային ստանդարտին համապատասխան՝ հանքաարդյունաբերության ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանն աջակցություն, տվյալների համակարգված բացահայտումների համակարգի ներդնում: 2023 թվականին դրամաշնորհի միջոցներով կազմվելու է ՀՀ 5-րդ ազգային զեկույցը 2022 հաշվետու տարվա համար:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային ծառայություններ ծրագրի գծով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով, ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը, նախատեսվել է հատկացնել 35,543.9 մլն դրամ, (այդ թվում՝ վարկային միջոցներ՝ 669.7 մլն դրամ, դրամաշնորհային միջոցներ՝ 1,863.2 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ ընդհանուր 506.6 մլն դրամ):

Ծրագրի նպատակը հարկային և մաքսային միասնական պետական քաղաքականության իրականացումն է, հարկային և մաքսային օրենսդրության ամբողջական և համահավասար կիրառումը ՀՀ տարածքում: Ծրագրի վերջնական արդյունքը՝ արդյունավետ հարկային և մաքսային հսկողության իրականացումն է և պետական բյուջեի եկամուտների ապահովումը:

Նշված ծրագրի շրջանակներում նախատեսվել է թվով 10 միջոցառում, որից 4-ը՝ կապիտալ բնույթի (այդ թվում՝ մեկական վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող): Մասնավորապես. նախատեսվում է ՀՀ-ում արտադրվող և ներմուծվող ալկոհոլային խմիչքների և ծխախոտի ակցիզային դրոշմանիշեր ձեռք բերելու համար հատկացնել 500.0 մլն դրամ, ՀՀ-ում արտադրվող և ներմուծվող որոշակի ապրանքների դրոշմապիտակների համար՝ 5,292.0 մլն դրամ:

Նախատեսվում է շարունակել Կոմիտեի կարիքների համար անհրաժեշտ փորձաքննությունների կատարումը, եզրակացությունների տրամադրումը և անվճարունակ քաղաքացիներին իրավական ծառայությունների տրամադրումը: Միաժամանակ, նախատեսվում է իրականացնել հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման մեթոդիկայի մշակումը, պլանավորումը, ծրագրերի իրականացումը և աջակցության ծառայությունների մատուցումը, 1400 ծառայողների վերապատրաստումը:

Բացի վերը նշվածից, նախատեսվում է նաև ՊԵԿ-ի շենքային ապահովվածության պայմանների բարելավմանն ուղղված միջոցառումներ, որոնց նպատակն է Կոմիտեի կարիքնե-րի համար նոր շենքերի կառուցումը: Մասնավորապես. նախատեսվում է սկսել Երևան քաղաքի արտաքին տնտեսական գործունեության կենտրոնի կառուցման և Արևելյան մաքսատան-վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժնի ենթակառուցվածքների վերակառուցում աշխատանքները:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև ՎԶԵԲ աջակցությամբ իրականացվող «Մեղրիի սահմանային անցակետի ծրագիր» դրամաշնորհային և վարկային ծրագրերով ՊԵԿ-ի նոր շենքային պայմանների ապահովումը, ինչի նպատակն է ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող դրամաշնորհային և վարկային ծրագրերի շրջանակներում Կոմիտեի Մեղրիի սահմանային անցակետում միջազգային չափորոշիչներին համապատասխան նոր մաքսակետի կառուցումը:

ՀՀ կադաստրի կոմիտե

Անշարժ գույքի պետական ռեգիստրի համակարգի գծով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 4,418.0 մլն դրամի ծախսեր (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը): Նշված գումարի շրջանակներում նախատեսվում է

իրականացնել Անշարժ գույքի կադաստրի վարման բնագավառում պետական քաղաքականության իրականացում ծրագիրը: Ծրագրի նպատակն է անշարժ գույքի պետական միասնական կադաստրի համակարգի զարգացումը, պետության կողմից անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը:

Գեոդեզիայի ու քարտեզագրության բնագավառի զարգացման նպատակով նախատեսվում է շարունակել իրականացնել երկրատեղեկատվական համակարգում ՀՀ բնակավայրերի քարտեզագրական հենքի ստեղծման աշխատանքները, ՀՀ օրթոֆոտոհատակագծերով ամբողջությամբ ծածկված համայնքների ճշգրտված կադաստրային թաղամասերի հատակագծերը, ՀՀ համայնքների կադաստրային թաղամասերի ուղղման նպատակով լրացուցիչ կետերի դիտարկման և թաղամասերի արտաքին սահմանների ամբողջական ուղղման աշխատանքները:

ՀՀ վիճակագրական կոմիտե

Վիճակագրական կոմիտեն ՀՀ կառավարությանը ենթակա պետական մարմին է, որն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքով և այլ իրավական ակտերով:

Վիճակագրական կոմիտեն ՀՀ պաշտոնական վիճակագրության գլխավոր արտադրողն է և համակարգում է ազգային վիճակագրական համակարգում պաշտոնական վիճակագրության մշակմանը, արտադրությանը և տարածմանն ուղղված ողջ գործունեությունը, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի:

Վիճակագրական կոմիտեի գծով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով նախատեսվում է հատկացնել 2,185.8 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը), որն ուղղվելու է **Ազգային պաշտոնական վիճակագրության արտադրություն և տարածում ծրագրի** իրականացմանը:

Ծրագրի նպատակն է տնտեսական և հասարակական գործընթացների վերաբերյալ պաշտոնական վիճակագրության մշակումը, արտադրումն ու տարածումը: Որպես վերջնական արդյունք, նախատեսվում է սույն ծրագրով նախատեսված ժամկետներով և պարբերականությամբ ամբողջական, համադրելի, արդիական և օգտատերերին հավասար մատչելիությամբ հասանելի պաշտոնական վիճակագրության ապահովում:

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նկատմամբ ծախսերի նվազումը պայմանավորված է հիմնականում Վիճակագրական համակարգի ամրապնդման ազգային ռազմավարական ծրագրի ավարտով՝ 524.8 մլն դրամ:

ՀՀ քաղաքաշինության կոմիտե

Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառում պետական քաղաքականության իրականացում և կանոնակարգում ծրագրի շրջանակներում 2023 թվականի համար նախատեսվել է շուրջ 2,334.4 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը՝ 685.0 մլն դրամ): Ծրագրի նպատակն է շարունակել քաղաքաշինական գործունեության պետական կարգավորման միջոց հանդիսացող նորմատիվ փաստաթղթերի մշակումն ու շարունակական արդիականացումը, դրանց ներդաշնակեցումը միջազգային նորմերին, տարածքների և բնակավայրերի կայուն քաղաքաշինական զարգացումն ու դրան նպաստող համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը:

Նշված նպատակին հասնելու համար իրականացվելու են միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման թվով 28 փաստաթղթերի մշակման աշխատանքներ, այդ թվում՝ ՀՀ Լոռու (14 փաստաթուղթ) մարզի և ՀՀ Կոտայքի մարզի (10 փաստաթուղթ) փաստաթղթերը, ՀՀ Շիրակի մարզ (մասնակի՝ 4 փաստաթուղթ):

Մշակվելու և տեղայնացվելու են թվով 19 նորմատիվատեխնիկական փաստաթղթեր:

Բացի այդ, կմեկնարկեն ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Աշոտաբերդ թաղամասի կառուցապատման, ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքում նոր բնակելի թաղամասի նախագծման աշխատանքները, ինչպես նաև կիրականացվեն և ավարտին կհասցվեն Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման աշխատանքները: Դրանց հետ մեկտեղ կմեկնարկեն անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի հիմնախնդրի լուծմանն ուղղված ծրագրերի իրականացման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

Միևնույն ժամանակ, ծրագրի շրջանակներում նախատեսվում է ապահովել կարևորագույն նշանակության շենքերի և շինությունների անվտանգ և մատչելի շահագործումը: Այդ նպատակի ապահովումն ակնկալվում է ռազմավարական մի շարք փաստաթղթերով նախանշված ծրագրերի իրագործմամբ, որը կունենա շարունակական բնույթ միջնաժամկետ հատվածում: Նպատակային թիրախներն են Երևան քաղաքում և ՀՀ մարզերում տեղակայված կարևորագույն նշանակության այն օբյեկտները, որոնք առավել օգտագործելի կամ շահագործելի են հանրության կողմից: 2023 թվականի ընթացքում նշված ուղղությամբ նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի թվով 29 կարևորագույն նշանակության շենքերի տեխնիկական վիճակի հետազննության եզրակացությունների և շենքերի անձնագրերի ձեռքբերում:

ՀՀ սահմանադրական դատարան

ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ իրավակարգում ապահովելով Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը, որպես ռազմավարական առաջնահերթ խնդիր ՀՀ իրականացնում սահմանադրական արդարադատություն:

ՀՀ սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով շարունակելու է որոշել օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, ՏԻՄ որոշումների, մինչև միջազգային պայմանագրերի վավերացումը նրանցում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ սահմանադրությանը, ինչպես նաև լուծելու է հանրահավաքների արդյունքների ու պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը:

ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում ծրագրով նախատեսված ՀՀ սահմանադրական դատարանի առաջնահերթ ռազմավարական նպատակներն են.

- Բարձրացնել սահմանադրական արդարադատության արդյունավետությունը, ապահովել ՀՀ-ում սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը,
- իր գործունեությամբ նպաստել սահմանադրության և նրանում ամրագրված իրավունքների ու պարտավորությունների նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը,
- սահմանված կարգով որոշում կայացնել օրենքների, Ազգային ժողովի որոշումների և այլ նորմատիվ ակտերի սահմանադրությանը համապատասխանության մասին,

- շարունակել Հանրապետությունում իրավունքի գերակայության ապահովման ուղղությամբ գործունեությունը:

Սահմանադրական արդարադատություն իրականացնելիս սահմանադրական դատարանն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը: Սահմանադրական դատարանի որոշումներին բնորոշ են պարտադիրությունը, վերջնական լինելը, անմիջական գործողությունը:

Բարձրագույն դատական խորհուրդ

Անկախ, անաչառ, մատչելի, արդյունավետ ու հաշվետու արդարադատություն ունենալու համար Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների **Դատական իշխանության գործունեության ապահովում և իրականացում** ծրագրի համար վերջնական արդյունքի ցուցանիշ է սահմանվել World Economic Forum-ի 2018 թվականի հաշվետվության մեջ ներառված «դատական համակարգի անկախությունը իշխանության այլ ճյուղերի, անհատների կամ ընկերությունների ազդեցությունից» ցուցանիշը: WEF վերոնշյալ ցուցանիշը տատանվում է 1-ից 7 միավորի սանդղակում (1=ընդհանրապես անկախ չէ, 7=լիովին անկախ է): ՀՀ «դատական համակարգի անկախությունը իշխանության այլ ճյուղերի, անհատների կամ ընկերությունների ազդեցությունից» ցուցանիշը 2018 թվականին եղել է 3.3: Որպես վերջնական արդյունքի թիրախի ցուցանիշ սահմանվել է 6.3, ժամկետ՝ 2024թ.:

Ծրագրի միջոցառումների համար սահմանվել են նաև քանակական և որակական ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշներ: Այսպես, ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշներն են՝ ավարտված գործերի թիվը ստացված գործերի թվում (տոկոս), բեկանված դատական ակտերի թիվը կայացված դատական ակտերի թվում (տոկոս):

«Ավարտված գործերի թիվը ստացված գործերի թվում» որակական ցուցանիշի սահմանումը նպատակ է հետապնդում ցույց տալ հանրությանը, որ այն տարեցտարի դրական դինամիկա պետք է ապահովի և տարեվերջյան անավարտ գործերի թիվը պետք է նվազի, իսկ «բեկանված դատական ակտերի թիվը կայացված դատական ակտերի թվում» ցուցանիշն ընդհակառակը՝ տարեցտարի պետք է նվազի:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն կազմակերպում և իրականացնում է ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով նախաքննությունը և իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացվող գործունեության հիմնական նպատակն է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտումն ու քննությունը:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն՝ որպես քննչական մարմին, պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները՝ քրեական օրենսգրքով նախատեսված կոռուպցիոն հանցանք կատարած բոլոր անձանց հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները քրեական վարույթով պատշաճ քննությունն ու դրա արդյունավետությունն ապահովելու նպատակով կատարում են օրենքով իրենց վերապահված բազմաթիվ քննչական գործողություններ՝ հարցաքննություններ, խուզարկություններ, զննումներ, առգրավումներ, ճանաչումներ, փորձարարություններ, նշանակում են տարաբնույթ փորձաքննություններ և այլն:

Կատարվում են նաև բազմաթիվ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Նախաքննության ընթացքում վարույթ իրականացնող մարմինը պարզում է նաև հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները, որից հետո դրանք վերացնելու և կանխելու նպատակով համապատասխան մարմիններին ներկայացնում է միջնորդագրեր: Հակակոռուպցիոն կոմիտեն ուսումնասիրում է նաև կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկան, ձեռնարկում միջոցառումներ՝ քննության դրական փորձը քննչական պրակտիկայում ներդնելու ուղղությամբ: Բացի այդ, քննարկում և լուծում է ստացված դիմումներն ու բողոքները:

ՀՀ դատախազություն

«Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն» ծրագրի նպատակն է՝ ՀՀ-ում հանցավորության դեմ պայքարը, հանցագործության դեպքերի կանխարգելումը և կրճատումը, հանցագործության բոլոր դեպքերի առնչությամբ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության ապահովումը:

ՀՀ դատախազության գործունեության հիմնական ոլորտներն են՝

1) Կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտ

2) Քրեական հետապնդում հարուցելու ոլորտ

3) Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության իրականացման ոլորտ

4) Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության իրականացման ոլորտ

5) Դատարանում մեղադրանքի պաշտպանության և վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկման ոլորտներ

6) Պետական շահերի պաշտպանության ոլորտ

7) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտ:

«Փորձաքննության ծառայությունների տրամադրում» ծրագրի նպատակն է քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների կողմից նշանակվող դատական փորձաքննությունների պատշաճ իրականացմամբ համապատասխան պատշաճ որակի և դատավարական ու մեթոդական ընթացակարգերի պահպանմամբ ապացույցների ձեռք բերման միջոցով օժանդակել մինչդատական և դատական քրեական վարույթի իրականացմանը, ինչպես նաև անձի, հասարակության և պետության պաշտպանությանը հանցագործություններից:

«Մասնագիտական ուսուցման և որակավորման բարձրացման» կազմակերպում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների աշխատողների /նախաքննության, հետաքննության և այլ մարմինների աշխատակիցների/ ուսուցման, վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների առավել որակյալ կազմակերպումը և իրականացումը:

ՀՀ քննչական կոմիտե

ՀՀ քննչական կոմիտեի հիմնական նպատակը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանցագործությունների վերաբերյալ օբյեկտիվ և արդյունավետ նախաքննության իրականացումն է, որի իրագործման համար ակնկալվում է.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր իրավասությանը վերապահված՝ ենթադրյալ հանցագործությունների կապակցությամբ նախաքննության կազմակերպումը և իրականացումը.

2. ապահովել առերևույթ հանցանք կատարած յուրաքանչյուր անձի նկատմամբ օրենքով սահմանված դեպքերում և կարգով քրեական հետապնդման հարուցումը.

3. միջոցներ ձեռնարկել նախաքննության ժամկետների անհարկի ձգձգումները բացառելու ուղղությամբ.

4. միջոցներ ձեռնարկել պետությանը, ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի վերականգնման ուղղությամբ.

ՀՀ քննչական կոմիտեի նպատակների իրականացման շրջանակներում Կիբեռհանցագործությունների դեմ պայքարի ոլորտում ակնկալվում է.

1. իրականացնել քննիչների վերապատրաստումներ կիբեռհանցագործությունների քննության առանձնահատկությունների, բարձր տեխնոլոգիաների ոլորտում հմտությունների զարգացման, տեղեկատվության անվտանգության, համակարգչային համակարգերում առկա տեղեկատվության հետազոտման ուղղությամբ, էլեկտրոնային ապացույցների ձեռքբերման, ոլորտի միջազգային կարգավորումներին, չափանիշներին և առաջատար փորձին ծանոթանալու և հետաքրքրություն ու կարևորություն ներկայացնող այլ թեմաներով.

2. իրականացնել կիբեռհանցագործությունների վերաբերյալ բոլոր քրեական գործերի հաշվառում և համակարգում (կիբեռհանցագործությունների քրեագիտական շտեմարան),որը օգտակար դերակատարում կունենա հանցագործությունների բացահայտման համար և կգործի համապատասխան ծրագրային ապահովման միջոցով՝ բացահայտման ուղղությամբ աշխատանքներն էլ ավելի արդյունավետ ու ինստիտուցիոնալ առումով առավել համակարգված դարձնելու համար:

ՀՀ քննչական կոմիտեն 2023 թվականին իրականացնելու է 1180 դասիչով ՀՀ քննչական ծառայություններ ծրագիրը:

Ծրագրի նպատակն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր իրավասությանը վերապահված՝ ենթադրյալ հանցագործությունների կապակցությամբ նախաքննության կազմակերպումը և իրականացումը, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի կողմից քննչական այլ մարմինների վարույթից ՀՀ քննչական կոմիտեի վարույթ հանձնված քրեական գործերով նախաքննության իրականացում: Քննված քրեական գործերով հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների ու պայմանների պարզումը և դրանք վերացնելու և կանխելու ուղղված միջոցների ձեռնարկելու նպատակով՝ համապատասխան մարմիններին միջնորդագրերի ներկայացնելը, հանցագործությունների քննության մեթոդիկայի ուսումնասիրությունը, քննության դրական փորձի ներդրումը քննչական պրակտիկայում, ստացված դիմումների և բողոքների քննարկումն ու լուծումը, ինչը վերջնական արդյունքում ձգտում է՝ քննության որակի, բազմակողմանիության, լրիվության, օբեկտիվության և արդյունավետության ապահովում, մարդու և քաղաքացու իրավունքների, հիմնարար ազատությունների, անձնական անձեռնմխելիության և մյուս իրավունքների պաշտպանության ապահովում, նախաքնության ժամկետների անհարկի ձգձգումների բացառում, պետությանը և

քաղաքացիներին պատճառված վնասի վերականգնման ապահովում, ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու հարցերի լուծում, կոռուպցիոն երևույթների ծագման, դրանց պատճառների և նպաստող պայմանների բացահայտման ու դրանց կանխմանն ուղղված գործունեությունների իրականացում:

Ծրագրային վերոնշյալ դրույթներն առավել արդյունավետ իրականացնելուն է միտված աշխատանքային պայմանների բարելավումը: Այդ նպատակով նախատեսվում է սկսել և ավարտին հասցնել Կոմիտեի վարչական շենքերի պայմանների բարելավման աշխատանքները:

ՀՀ պետական վերահսկողական ծառայություն

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն), համաձայն «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի, պետական վերահսկողության ոլորտում գործող վարչապետին ենթակա մարմին է, որն իրականացնում է օրենքով իրեն վերապահված վերահսկողական լիազորություններ:

Ծառայության գործունեության նպատակը ՀՀ վարչապետին ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացումն ապահովելն է:

2019թ. ընթացքում իրականացվել է շուրջ 90 վերահսկողություն, վերահսկողության ընթացքում ՀՀ վարչապետին է ներկայացվել խախտումների, խնդիրների, դրանց պատճառների և հետևանքների վերաբերյալ թվով 85 վերլուծություն, դրանց վերաբերյալ տեղեկանքներ և զեկույցներ, մշակվել և ներկայացվել են թվով 12 իրավական ակտերի նախագծեր, իսկ դիմումների և բողոքների հիման վրա կատարվող ուսումնասիրությունների թիվը ստացված տեղեկատվության մեջ կազմել է շուրջ 4 տոկոս:

2020թ. ընթացքում Ծառայությունը կատարված ուսումնասիրությունների և մշտադիտարկումների վերաբերյալ ՀՀ վարչապետին է ներկայացրել շուրջ 80 տեղեկանք, վերջիններիս իրականացման արդյունքում իրավապահ մարմիններին է ուղարկվել 30 տեղեկանք, ուսումնասիրությունների և մշտադիտարկումների արդյունքներով պայմանավորված տվյալ ոլորտի արդյունավետության բարձրացման վերաբերյալ ներկայացվել են թվով 30 առաջարկություններ:

2021թ. ընթացքում Ծառայությունը կատարված ուսումնասիրությունների և մշտադիտարկումների վերաբերյալ ՀՀ վարչապետին է ներկայացրել 45 տեղեկանք, վերջիններիս իրականացման արդյունքում իրավապահ մարմիններին է ուղարկվել 27 տեղեկանք, ուսումնասիրությունների և մշտադիտարկումների արդյունքներով պայմանավորված տվյալ ոլորտի արդյունավետության բարձրացման վերաբերյալ ներկայացվել են թվով 149 առաջարկություններ, ուսումնասիրությունների և մշտադիտարկումների արդյունքում հարուցված քրեական գործերը կազմել են 67 տոկոս:

2022թ. 1-ին ինն ամիսների ընթացքում Ծառայությունը կատարել է 29 ուսումնասիրություն, 257 մշտադիտարկում, կատարված ուսումնասիրությունների և մշտադիտարկումների ընթացքում ՀՀ վարչապետին ներկայացվել է 48 տեղեկանք:

Ծառայությունն իր գործառույթների իրականացման շրջանակներում 2023 թվականի ընթացքում ապահովելու է ՀՀ վարչապետին ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացումը:

Վերջնական արդյունքը, որին ձգտում է Ծառայությունը՝ ՀՀ պետական միջոցների կառավարման, ձևավորման և օգտագործման արդյունավետության և օրինականության բարձրացումն է:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը սահմանադրական կարգավիճակ ունեցող անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների, օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերն ուղղված են Հանձնաժողովի Տեսալսողական մեդիայի ոլորտի կանոնակարգում ծրագրին, որի նպատակն է հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովումը, տեսալսողական ոլորտի վերահսկումը և կարգավորումը, և որն էլ ուղղված է վերջնական արդյունքի՝ հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության բարձր մակարդակի, մրցակցային հավասար պայմանների, տեսալսողական ոլորտում օրինախախտումների նվազեցման, հեղինակային իրավունքի պահպանության, ոլորտի համաչափ զարգացման ապահովմանը:

Հանրային հեռարձակողի խորհուրդ

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով Հանրային հեռարձակողի խորհրդի գծով նախատեսվում է հատկացնել 7,676.2 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը):

Հանրային հեռարձակողի խորհուրդի կողմից իրականացվող **Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում** ծրագրի նպատակն է ապահովել բազմազան տեղեկատվական, ճանաչողական, կրթական, ժամանցային հեռուստատեսային և ռադիո հաղորդումների արտադրությունը և հեռարձակումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ապահովել Հանրային հեռուստաընկերության առաջին ալիքի եթերում՝ 3030 ժամ, Հանրային ռադիոընկերության Առաջին ծրագրերի եթերում՝ 4205 ժամ օրիգինալ (նոր) հաղորդումների հեռարձակում, Հանրային հեռուստաընկերության եթերում 55 բազմազան հաղորդաշարերի պատրաստում և հեռարձակում:

ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողով

ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) գործունեությունն ուղղված է ազատ տնտեսական մրցակցության պաշտպանությանը և խրախուսմանը, ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանությանը նպաստելուն, բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովմանը ՀՀ-ում:

Հանձնաժողովն իր գործառույթների շրջանակներում իրականացնում է ոլորտային ուսումնասիրություններ որևէ ոլորտում կամ ապրանքային շուկայում մրցակցային իրավիճակը, տնտեսական մրցակցության կանխման, սահմանափակման կամ արգելման կամ սպառողների շահերի վնասման դեպքերը պարզելու, մրցակցային իրավիճակի վրա ազդող այլ պայմանները բացահայտելու նպատակով:

Ոլորտային ուսումնասիրության շրջանակում Հանձնաժողովը կարող է սահմանել ապրանքային շուկան, ուսումնասիրել ապրանքային շուկայի կառուցվածքը, կենտրոնացվածության աստիճանը, ոլորտի կամ շուկայի դինամիկան, հայտնաբերել անձանց խումբ հանդիսացող տնտեսվարող սուբյեկտներին, ուսումնասիրել ոլորտի կամ շուկայի իրավակարգավորումները և վեր հանել խնդիրները, այդ թվում՝ օրենսդրական բացերը և սողանցքները, բացահայտել շուկայում ինքնակարգավորման մեխանիզմները, պարզել օրենքի հնարավոր խախտման հատկանիշները, եզրահանգումներ կատարել մրցակցային իրավիճակի վերաբերյալ, կազմել վերլուծական հաշվետվություն:

ՀՀ-ում արդյունավետ մրցակցային միջավայրի ձևավորման և տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության դրույթների պահպանման նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի իրականացնում է լայն սպառում ունեցող պարենային և ոչ պարենային նշանակության ապրանքների և ծառայությունների 5 ոլորտի/շուկայի ուսումնասիրություն, որոնց արդյունքում բացահայտվում են առկա խնդիրները և առաջարկվում լուծումներ շուկայի ուղղակի կամ անուղղակի կարգավորման համար: 5 տարվա ընթացքում ուսումնասիրելով լայն սպառում ունեցող պարենային և ոչ պարենային նշանակության ապրանքների և ծառայությունների 25 ապրանքային շուկա, Հանձնաժողովը հաջորդ տարիներին նույն հերթականությամբ անդրադառնում է նույն ապրանքային շուկաներին՝ տնտեսության մրցակցային վիճակի բարելավման և Հանձնաժողովի գործունեության արդյունավետության գնահատման նպատակով:

Տնտեսական մրցակցության ընթացիկ իրավիճակը գնահատելու նպատակով Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի իրականացնում է 100 հատ ուսումնասիրություններ մրցակցային ընթացիկ խնդիրների բացահայտման և կանխարգելման նպատակով: 2021 թվականին Հանձնաժողովը փաստացի իրականացրել է 104 հատ ուսումնասիրություն:

ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

Կոռուպցիայի կանխարգելումը հանդիսանում է ՀՀ Կառավարության հակակոռուպցիոն քաղաքականության գերակա ոլորտներից մեկը, և իր ամրագրումն է ստացել ներպետական քաղաքականության փաստաթղթերում, ինչպես նաև միջազգային հարաբերություններից ստանձնած մի շարք պարտավորություններում:

2019 թվականի նոյեմբերի 19-ին ձևավորվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, որին վերապահվել են ընդլայնված լիազորություններ: Կոռուպցիայի կանխարգելման մասին ՀՀ օրենքի, Դատական օրենսգիրք ՀՀ Սահմանադրական օրենքի, Դատախազության մասին ՀՀ օրենքի, Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի և մի շարք այլ օրենքների փոփոխություններով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առկա գործառույթներ զգալիորեն ավելացել են, որն իրենից ենթադրում է լրացուցիչ մարդկային և ֆինանսական ռեսուրսների ներգրավում, որի մի մասը նախորդ տարիներին և ներկայումս ստանձնել են միջազգային դոնոր կազմակերպությունները:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը 2023 թվականին իրականացնելու է **Կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացման ապահովում** ծրագիրը իր 3 միջոցառումներով՝ «Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի զարգացում» (պահպանման ընթացիկ ծախսերի գծով), «Հանձնաժողովի կարողությունների զարգացում» (պահպանման կապիտալ ծախսերի գծով) և «Կոռուպցիայի կանխարգելման բնագավառում կրթական և հանրային իրազեկման ծառայություններ» միջոցառումները:

Ծրագրի նպատակն է ապահովել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում կոռուպցիայի կանխարգելման համակարգային և անհատական գործուն մեխանիզմների ներդրումն ու արդյունավետ շահագործումը: Ծրագրի վերջնական արդյունքը հաշվետու ժամանակաշրջանում միտված է՝

1.պետական կառավարման համակարգում բարեվարքության, կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգերի ներդրմանը

2.հայտարարագրերի ռիսկային ցուցիչների վրա հիմնված վերլուծության մեթոդաբանության գործարկմանը

3. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն պետական պաշտոնի նշանակման ենթակա անձանց բարեվարքության ամբողջական ստուգմանը

4.հակակոռուպցիոն երեք կրթական ծրագրերի ներդրմանը

5. կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ հանրային իրազեկման երկու ծրագրերի ներդրմանը

6.միջազգային համագործակցության ծրագրի ներդրմանը:

Ծրագիրը իրենից ներկայացնում է Հանձնաժողովի պահպանման ծախսերը և միտված է Հանձնաժողովի կանոնադրական գործառույթների իրականացմանը: 2022 թվականի համեմատությամբ 2023 թվականի պետական բյուջեով հատկացվող միջոցների ծավալը միջոցառման մասով աճել է՝ գործառույթների ընդլայնմամբ, հաստիքների թվաքանակի և դրանց հետ կապված ծախսերի ավելացմամբ պայմանավորված:

«Հանձնաժողովի կարողությունների զարգացում» միջոցառման գծով նախատեսվել են միջոցներ Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումներով նախատեսված ծրագրային փաթեթների ձեռքբերման համար՝ Նվերների ընդունման արգելքի հայեցակարգի հաստատումից հետո, գործընթացը պրակտիկայում կիրառելու համար անհրաժեշտ է գործարկել հայտարարագրման էլեկտրոնային ռեեստր և Բարեվարքության ուսումնասիրության ինքնաշխատ համակարգի ծրագիր:

«Կոռուպցիայի կանխարգելման բնագավառում կրթական և հանրային իրազեկման ծառայություններ» միջոցառմանը ՀՀ 2023թ. պետական բյուջեով նախատեսվում է հատկացնել 10.2 մլն դրամ՝ որի շրջանակում իրականացվելու է հանրության շրջանում իրավագիտակցության բարելավում, հակակոռուպցիոն կրթական ծրագրերի և ուսումնամեթոդական նյութերի մշակում, ՁԼՄ ներկայացուցիչների և ուսուցիչների վերապատրաստում:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ծախսային ծրագրային գերակայությունները բխում են Հանձնաժողովի գործունեության հիմնական նպատակից, այն է՝ ապահովել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում կոռուպցիայի կանխարգելման համակարգային և անհատական գործուն մեխանիզմների ներդրումն ու արդյունավետ շահագործումը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գործունեությունը բաղկացած է երկու հիմնական ուղղություններից՝ անհատական դեպքերի քննարկում և համակարգային խնդիրների լուծմանն ուղղված քայլեր: Վերջինն իր հերթին հետապնդում է նաև կանխարգելիչ նպատակ՝ բացառելու ապագայում իրավունքների խախտման դեպքերը:

Անհատական դեպքերի վերաբերյալ քննարկումներն իրականացվում են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված երկու ուղղությամբ՝ բողոքի և սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկման ընթացակարգերով:

Պաշտպանի աշխատակազմի գործունեության երկրորդ հիմնարար ուղղությունը համակարգային խնդիրների վերհանումն ու դրանց լուծման համար անհրաժեշտ ուղիների նախանշումն է: Հարկ է ընդգծել, որ անհատական դիմումներից բացի, համակարգային խնդիրների վերհանման աղբյուր են հանդիսանում նաև Պաշտպանի կոնվենցիոն մանդատների շրջանակում իրականացվող գործողությունները[18]: Ոլորտային մշտադիտարկումների շնորհիվ բազմիցս արձանագրվել են խորքային խնդիրներ, որոնք պահանջում են օրենսդրական կամ այլ ինստիտուցիոնալ մոտեցում:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունն իր բնույթով պետք է լինի նաև կանխարգելիչ: Անհատական դիմումների քննարկումից և օրենքով վերապահված այլ գործառույթների իրականացումից վերհանված խնդիրներին հաճախ կարիք է լինում ցուցաբերել ինստիտուցիոնալ մոտեցում: Այդ առումով Պաշտպանի գործառույթները կարելի է դասակարգել հետևյալ հիմնական ուղղությունների՝

1.օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում.

2.օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով Սահմանադրական դատարան դիմումի հասցեագրում.

3.մինչև մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունումը դրանց վերաբերյալ իրավասու մարմին գրավոր կարծիքների տրամադրում.

4.Սահմանադրական դատարանում քննվող՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին հակասությանը վերաբերող դիմումների վերաբերյալ հատուկ կարծիքների ներկայացում:

Այս հիմնական ուղղություններով աշխատանքն իրականացվում է Պաշտպանի՝ նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանն առնչվող սահմանադրական լիազորության շրջանակում: Սա թույլ է տալիս ոչ միայն նպաստել ներպետական օրենսդրության զարգացմանը, այլ նաև անհատական դիմումներից, մշտադիտարկումներից և այլ աղբյուրներից վերհանված խնդիրների լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկել:

1. Օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում

Վերջին տարիներին գործադրվել է նոր պրակտիկա, որը ենթադրում է, որ մարդու իրավունքներին առնչվող համակարգային խնդիրների լուծման ուղղությամբ Պաշտպանի աշխատակազմում մշակվում են օրենսդրական նախագծեր, դրանք շրջանառվում են իրավասու պետական մարմինների, ինչպես նաև համապատասխան հասարակական

[18] Մարդու իրավունքների պաշտպանն ունի բնույթով բացառիկ միջազգային կոնվենցիոն կարգավիճակներ՝ ամրագրված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով: Պաշտպանը հանդիսանում է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունած կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմ: «Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի նոյեմբերի 20-ի ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված մշտադիտարկում իրականացնող անկախ մարմին: «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» 2006 թվականի դեկտեմբերի 13-ի ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված մշտադիտարկում իրականացնող անկախ մարմին:

կազմակերպությունների շրջանակներում և ներկայացվում կառավարության և խորհրդարանի քննարկմանը:

2. Իրավական ակտերի Սահմանադրության համապատասխանության հարցերով Սահմանադրական դատարան դիմումի հասցեագրում

Նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման սահմանադրական գործառույթի իրականացման կարևոր ուղղություններից է նաև Սահմանադրական դատարան դիմումների ներկայացումը: Դրանցով վիճարկվում են օրենսդրական կոնկրետ կարգավորումների հակասությունը Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված դրույթներին:

3. Մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ գրավոր կարծիքի տրամադրում

Պաշտպանն իր՝ նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման գործառույթի շրջանակներում 2023 թվականին շարունակելու է տրամադրել դիրքորոշումներ իրավասու մարմինների ներկայացրած փոփոխություններին ու առաջարկություններին:

4. Սահմանադրական դատարանում քննվող դիմումների վերաբերյալ հատուկ կարծիքների ներկայացում

Պաշտպանը մշտական ներկայացուցիչ ունի նաև ՀՀ սահմանադրական դատարանում: Նշված գործառույթը հատկապես կարևորվում է նրանով, որ Պաշտպանը դատարանին ուղղված՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին վերաբերող դիմումների վերաբերյալ ներկայացնում է հատուկ դիրքորոշում (amicus brief):

Վերոգրյալի հետ մեկտեղ՝ «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագծով նախատեսվում է երաշխավորել ՀՀ-ում յուրաքանչյուր անձի իրավունքների ու ազատությունների իրականացման հավասար հնարավորությունները, կատարելագործել խտրականության դեմ պայքարի բնագավառի օրենսդրությունը, ապահովել խտրականության կանխարգելման, դրանից իրավական և դատական պաշտպանության իրավական հիմքերը: Օրենսդրական փաթեթում ներառված է նաև ««Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծը, որով հստակ կարգավորված են Պաշտպանի՝ իրավահավասարության ապահովման հարցում լիազորությունները, ինչպես նաև այդ լիազորությունների իրականացմանն ուղղված նոր իրավական գործիքները:

ՀՀ հաշվեքննիչ պալատ

Հաշվեքննիչ պալատի գործունեության նպատակն է հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության վերաբերյալ Ազգային ժողովին և հանրությանը ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելը:

Նպատակային թիրախներն ապահովելու համար Հաշվեքննիչ պալատը ձգտում է մինչև 2024 թվականը հասնել վերջնական արդյունքների՝ հետևյալ ուղղություններում.

- Արտաքին պետական հաշվեքննության ոլորտի վերաբերյալ ՀՀ օրենսդրության բարելավում՝ նկատի ունենալով INTOSAI ստանդարտներով սահմանված ֆինանսական, գործառնական և կազմակերպչական անկախության հարցերը,

- Հաշվեքննության գործընթացի որակի բարձրացում՝ նկատի ունենալով նաև Հաշվեքննիչ պալատի SS ենթակառուցվածքների զարգացման հարցերը:

- Հաշվեքննիչ պալատում մասնագիտական կարողությունների շարունակական զարգացում:

- Ազգային ժողովի, կառավարության և այլ շահառուների հետ համագործակցության զարգացում՝ հատկապես նկատի ունենալով հաշվեքննությունից հետո տարվող աշխատանքները՝ follow-up գործընթաց:

Իր նպատակներին հասնելու համար Հաշվեքննիչ պալատը իրականացնում է գործառույթներ, որոնց վերջնական արդյունքի վերբերյալ գնահատական կարող է հանդիսանալ Հաշվեքննիչ պալատի կատարողականի ինքնագնահատումը:

Համաձայն INTOSAI կողմից սահմանված պահանջների, Աուդիտի բարձրագույն մարմինների կատարողականի գնահատումն իրականացվում է 3-5 տարին մեկ:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանադրական կարգավիճակով օժտված անկախ պետական մարմին է, որը կազմակերպում է Ազգային ժողովի և ՏԻՄ ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ: Հանձնաժողովի աշխատանքներն ուղղված են ընտրական գործընթացների պատշաճ կազմակերպմանն ու անցկացմանը, դրանց բարելավմանն ու կատարելագործմանը, ընտրական իրավունքի և ընտրական գործընթացների վերաբերյալ ուսուցումների և դասընթացների կազմակերպմանը, դասավանդման նոր մեթոդաբանության, ուսուցման նոր հարթակների մշակմանն ու ներդրմանը և ընտրական գործընթացների վերաբերյալ հանրային իրազեկման ապահովմանն ու ընդլայնմանը: Հանձմաժողովը իրականցնում է Ընտրական գործընթացների համակարգում, նախապատրաստում, հաշվետվական համակարգի կազմակերպում, վերլուծություն, ընտրական հանձնաժողովների անդամների վերապատրաստում, քաղաքացիների դիմումների և բողոքների քննարկում: Հանձնաժողովը անդամակցում է Եվրոպայի ընտրական իշխանությունների ասոցիացիա (ACEEEO) կազմակերպությանը: Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների ապահովման համար իրականացվում են վերլուծություններ, ուսումնասիրություններ, կազմակերպվում են Հանձնաժողովի անդամների և Հանձնաժողովի աշխատակիցների վերապատրաստումներ, անցկացվում են սեմինարներ, կոնֆերանսներ, ապահովվում են շփումներ շահագրգիռ մասնակիցների հետ (կուսակցությունների ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպություններ, ՋԼՄ-ների ներկայացուցիչներ, տարածքային ընտրական հանձնաժողովներ և այլն):

Ընտրական գործընթացների համակարգում, կանոնակարգում և տեղեկատվության տրամադրում ծրագրի նպատակն է օրինական և թափանցիկ ընտրական գործընթացների կազմակերպումը և ապահովումը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՀՀ 2023թ. պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումների համաձայն՝ 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պետական պարտքը կկազմի 4,414 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 53.2%-ը, իսկ 2023 թվականի տարեվերջին այն կկազմի 4,897 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 52.6%-ը:

	31.12.2021թ.	31.12.2022թ.	31.12.2023թ.
մլրդ դրամ			
ՀՀ պետական պարտք	4,430	4,414	4,897
այդ թվում՝			
արտաքին պետական պարտք	3,192	2,759	2,927
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք	220	*256*	*252*
ներքին պետական պարտք	1,237	1,655	1,970
տոկոսներով ՀՆԱ-ի նկատմամբ			
ՀՀ պետական պարտք	63.4	53.2	52.6
այդ թվում՝			
արտաքին պետական պարտք	45.7	33.3	31.4
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք	3.1	*3.1*	*2.7*
ներքին պետական պարտք	17.7	20.0	21.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԸ

Կառավարության պարտքի 2022 և 2023 թվականների կանխատեսումները կատարվել են հիմք ընդունելով հետևյալը.

- ՀՀ 2022թ. պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը պարտքային գործիքների հաշվին կիրականացվի 326.3 մլրդ դրամի չափով, որից.
  - 250.2 մլրդ դրամը պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին,
  - 76 մլրդ դրամը արտաքին վարկերի հաշվին՝ ի սկզբանե պլանավորված 108.5 մլրդ դրամի դիմաց (177.5 մլրդ դրամի մասհանումներ և 101.5 մլրդ դրամ արտաքին վարկերի գծով մարումներ),
- ՀՀ 2023թ. պետական բյուջեի նախագծի հիմքում դրված պակասուրդի ֆինանսավորման սցենարը, որի համաձայն զուտ ֆինանսավորումը պարտքային գործիքների հաշվին կիրականացվի 418.6 մլրդ դրամի չափով, որից 295.2 մլրդ դրամը պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին, 123.4 մլրդ դրամը՝ արտաքին վարկերի հաշվին (հաշվի առնելով կատարվելիք մասհանումների և մայր գումարի մարումների տարբերությունը), իսկ արտարժութային պետական պարտատոմսերի հաշվին մուտքեր չեն նախատեսվել,
- ներգրաված պարտքի սպասարկման և մարման պայմանները,
- ՀՀ 2023թ. պետական բյուջեի նախագծի հիմքում դրված 2022թ. և 2023թ. ՀՆԱ-ի և այլ մակրոտնտեսական կանխատեսումային ցուցանիշները:

Ըստ կանխատեսումների՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքը կկազմի 4,645 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 49.8 տոկոսը և 2022 թվականի տարեվերջի համեմատությամբ ՀՆԱ-ի նկատմամբ կնվազի 0.3 տոկոսային կետով: Նշենք, որ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նշված կանխատեսումները տարբերվում են կառավարության պարտքի կառավարման 2023-2025 թվականների միջնաժամկետ ռազմավարական ծրագրով սահմանված ցուցանիշներից՝ պայմանավորված հիմնականում կանխատեսումներում կիրառված մակրոտնտեսական ու հարկաբյուջետային շրջանակի, փոխարժեքների տարբերություններով ու կառավարության պարտքի գծով գործառնություններով:

	31.12.2021թ.	31.12.2022թ.	31.12.2023թ.
ՀՀ կառավարության պարտք, մլրդ դրամ	4,210	4,158	4,645
ՀՀ կառավարության պարտք, % ՀՆԱ-ի նկատմամբ	60.3	50.1	49.8

Նախատեսվում է 2022-2023 թվականներին կառավարության պարտքի կառուցվածքում ավելացնել ՀՀ դրամով տեղաբաշխված պետական գանձապետական պարտատոմսերի կշիռը, որն ըստ կանխատեսումների կկազմի համապատասխանաբար 36.0% և 39.3%: Կառավարության պարտքը կունենա հետևյալ կառուցվածքը.

	31.12.2021թ.	31.12.2022թ.	31.12.2023թ.
Կառուցվածքն ըստ ռեզիդենտության, մլրդ դրամ*			
ներքին պարտք	29.4	39.8	42.4
արտաքին պարտք	70.6	60.2	57.6
Կառուցվածքն ըստ գործիքակազմի, մլրդ դրամ			
արտաքին վարկեր և փոխառություններ	51.1	45.5	44.2
պետական գանձապետական պարտատոմսեր	28.7	36.0	39.3
արտարժութային պետական պարտատոմսեր	20.0	18.3	16.4
արտաքին երաշխիքներ	0.1	0.1	0.1
ներքին երաշխիքներ	0.1	0.2	0.1
Արժութային կառուցվածքը, մլրդ դրամ			
ՀՀ դրամով ներգրավված պարտք	28.8	36.2	39.3
արտարժույթով ներգրավված պարտք	71.2	63.8	60.7
Կառուցվածքն ըստ տոկոսադրույքի տեսակի, մլրդ դրամ			
լողացող տոկոսադրույքով	17.1	17.5	18.0
ֆիքսված տոկոսադրույքով	82.9	82.5	82.0

** 2022 և 2023 թվականների համար պետական գանձապետական և արտարժութային պարտատոմսերի գծով պարտքի մնացորդը բաշխվել է ըստ ռեզիդենտության հիմք ընդունելով 2022թ. օգոստոսի 31-ի դրությամբ փաստացի ձևավորված տեսակարար կշիռները:*









Հաշվի առնելով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումները և պարտքի գծով ծրագրավորված գործառնությունները, ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2023-2025 թվականների ռազմավարական ծրագրով ամրագրված ուղենշային ցուցանիշները 2023թ. տարեվերջի դրությամբ կկազմեն.

	Ուղենիշ	2023թ. (կանխ.)
Վերաֆինանսավորման ռիսկ		
Մինչև մարում միջին ժամկետը	7 – 10 տարի	7.4 տարի
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) առավելագույն կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին)	առավելագույնը 20%	10.1%
Տոկոսադրույքի ռիսկ		
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 80%	82.0%
Փոխարժեքի ռիսկ		
Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 30%	42.4%
ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 30%	39.3%

2023 թվականի տարեվերջի դրությամբ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի 35.7%-ը բաժին կընկնի Համաշխարհային Բանկին (Զարգացման Միջազգային Ընկերակցություն ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ): Կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների կլինի հետևյալը.



2023 թվականի տարեվերջի դրությամբ ձևավորվող կառավարության պարտքի մարման ժամանակացույցը սփռված կլինի մինչև 2054 թվականը և կունենա հետևյալ տեսքը.



2023 թվականին կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույքը կկազմի 6.6%: Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարներ) կկազմեն ՀՆԱ-ի 2.9%-ը:

	2021թ.	2022թ.	2023թ.
Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճար),	**180.8**	**202.1**	**272.9**

մլրդ դրամ			
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	**2.6**	**2.4**	**2.9**
Կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույք, %	**4.7**	**4.8**	**6.6**

Պակասուրդի ֆինանսավորման պարտքային գործիքակազմը

2023 թվականին պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին կկազմի 418.6 մլրդ դրամ, ինչը կիրականացվի պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին՝ 295.2 մլրդ դրամի չափով և արտաքին վարկերի հաշվին՝ 123.4 մլրդ դրամի չափով: Արտարժութային պետական պարտատոմսերի հաշվին մուտքեր չեն նախատեսվել:

Պակասուրդի ֆինանսավորումը պետական գանձապետական պարտատոմսերով

Պետական գանձապետական պարտատոմսերով բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումն իրականացվելու է կարճաժամկետ (3, 6, 9 և 12 ամիս), միջնաժամկետ (3 և 5 տարի), երկարաժամկետ (10, 20 և 30 տարի) և խնայողական պարտատոմսերի հաշվին:

Յուրաքանչյուր երկու ամիսն առնվազն մեկ անգամ կկազմակերպվի 52, 39, 26 և 13 շաբաթ մարման ժամկետ ունեցող պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդներ: Կարող են իրականացվել նաև պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի լրացուցիչ թողարկումներ, ընդ որում մինչև 3 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ կարող են իրականացվել կանխիկ հոսքերի կառավարման նպատակով, իսկ 3-12 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ՝ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման շրջանակներում:

Կշարունակվի 6 ամիս մարման ժամկետ ունեցող պետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման ծավալների ավելացումը՝ հետագայում այն ուղենշային պարտատոմսերի ցանկում ընդգրկելու և գնանշելու համար:

2023 թվականի ապրիլի 29-ին կթողարկվեն 3 և 5 տարի մարման ժամկետայնությամբ նոր միջնաժամկետ պետական գանձապետական պարտատոմսեր:

Աճուրդների կողմնորոշիչ ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի եռամսյակային կտրվածքով:

Յուրաքանչյուր աճուրդին տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալների և ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի աճուրդից առաջ՝ գործակալների հետ խորհրդակցելուց հետո:

2023 թվականի ընթացքում կիրականացվեն նաև պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումներ: 2023 թվականի ընթացքում պարտատոմսերի հետգնումների 70-80% կիրականացվեն մարման գրաֆիկի հարթեցման, իսկ 20-30%՝ պարտատոմսերի իրացվելիությունը խթանելու նպատակով: ՀՀ ֆինանսների նախարարությունը յուրաքանչյուր թողարկման պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատվածում այդ պարտատոմսերի հետգնում չի իրականացնի:

ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք էջում եռամսյակային կտրվածքով, յուրաքանչյուր եռամսյակից 10 օր առաջ, կհրապարակի ուղենշային համարվող պարտատոմսերի ցանկը:

2023 թվականին նախատեսվում է գործարկել պետական գանձապետական պարտատոմսերի փոխանակման աճուրդային համակարգը:

Պակասուրդի ֆինանսավորումն արտաքին վարկերով

ՀՀ 2023 թվականին պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորելու համար նախատեսվում է արտաքին վարկերի գծով կատարել 259.4 մլրդ դրամի (656.3 մլն ԱՄՆ դոլար) մասհանումներ: Ընդ որում մասհանումներից 117.5 մլրդ դրամը (297.3 մլն ԱՄՆ դոլար) նախատեսվում է կատարել նպատակային վարկային ծրագրերի գծով, իսկ մնացած 141.9 մլրդ դրամը (359 մլն ԱՄՆ դոլար)՝ բյուջետային աջակցության վարկերի գծով:

2023 թվականի համար ծրագրավորված բյուջետային աջակցության վարկերի ստացումները հետևյալն են. 100 մլն ԱՄՆ դոլար Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկից, 50 մլն եվրո ՝ ՕՊԵԿ հիմնադրամից, 100 մլն եվրո Ֆրանսիայից, 50 մլն ԱՄՆ դոլար Ասիական Զարգացման Բանկից և այլն:

Ըստ վարկատուների մասհանումների կառուցվածքը հետևյալն է.



2023 թվականին մասհանումների 53.4%-ը կկատարվի ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի գծով և 42.6%-ը եվրոյով տրամադրված վարկերի գծով:



Կառավարության պարտքի մարումը և սպասարկումը

2023 թվականին կառավարության պարտքի մարման և սպասարկման համար կպահանջվի 603.2 մլրդ դրամ, որից 330.2 մլրդ դրամը կկազմեն պարտքի գծով մարումները, իսկ 273 մլրդ դրամը՝ տոկոսավճարները:

մլրդ դրամ	*մարում*	*սպասարկում*	*ընդամենը*
Պետական գանձապետական պարտատոմսեր	**190.6**[19]	**164.5**	**355.1**
Արտարժութային պետական պարտատոմսեր	**-**	**35.9**	**35.9**
Արտաքին վարկեր	**139.6**	**72.6**	**212.2**
Ընդամենը	***330.2***	***273.0***	***603.2***



ՀՀ կառավարության արտարժութային պարտքի սպասարկման և մարման համար նախատեսված միջոցները փոխարկվել են ՀՀ դրամի հիմք ընդունելով 2021թ. նոյեմբերի 1-ի

19 Ցուցանիշը ներառում է պետական գանձապետական պարտատոմսերի հետգնման համար նախատեսված 30 մլրդ դրամը:

դրությամբ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքները (կիրառելով համապատասխան ճշգրտման գործակից, քանի որ փաստացի վճարումները կատարվելու են գործարքի օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված վաճառքի փոխարժեքներով) և այն ենթադրությամբ, որ SOFR դրույքաչափը 2023 թվականին միջին հաշվով կկազմի 5.0%, 6-ամսյա EURIBOR-ը՝ 3%, իսկ SDR-ի տոկոսադրույքը՝ 4.0%:

Պետական գանձապետական պարտատոմսերի մարման համար նախատեսված 190.6 մլրդ դրամի մեջ 30 մլրդ դրամը կազմում է պարտատոմսերի հետգնումների համար ծրագրավորված գումարը:

Արտաքին վարկերի մարման և սպասարկման գծով նախատեսվում է վճարել 212.2 մլրդ դրամ (527.8 մլն ԱՄՆ դոլար): Նախատեսվող վճարումների կառուցվածքն ըստ վարկատուների հետևյալն է.

մլն ԱՄՆ դոլար	տոկոսավճար	մարում	ընդամենը
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	60.4	24.6	85.0
Զարգացման Միջազգային Ընկերակցություն	19.9	72.7	92.6
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	2.2	5.3	7.5
Եվրոպական Ներդրումային Բանկ	3.1	6.1	9.2
Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամ	0.5	3.8	4.4
ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամ	4.4	5.4	9.8
Ասիական Զարգացման Բանկ	41.5	54.2	95.7
Եվրամիություն	2.4	-	2.4
Արժույթի Միջազգային Հիմնադրամ	15.6	72.7	88.3
Եվրասիական Զարգացման Բանկ	8.3	1.5	9.9
Գերմանիա (ՎՎԲ)	6.8	29.7	36.5
Ռուսաստանի Դաշնություն	10.2	44.1	54.3
Ֆրանսիա	5.6	9.4	15.0
ԱՄՆ	0.2	1.9	2.1
Ճապոնիա	1.3	8.4	9.7
Աբու-Դաբիի Զարգացման Հիմնադրամ	0.1	0.7	0.8
Չինաստանի Արտահանման-Ներմուծման Բանկ	0.4	1.6	2.0
ԿԲՍ Բանկ (Բելգիա)	0.0	0.5	0.5
Ռայֆայզն Բանկ (Ավստրիա)	0.0	0.9	1.0
Էոստե Բանկ (Ավստրիա)	0.1	0.7	0.8
Ենթակա է հստակեցման	0.5	-	0.5
Ընդամենը	183.7	344.0	527.8

Արտարժութային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերը 2023 թվականին կկազմեն 90.8 մլն ԱՄՆ դոլար՝ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի գծով արժեկտրոնային վճարումների համար:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎՐԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՑ ՇԵՂՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1. 2023 թվականին պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվածից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը

Կարճաժամկետ հատվածում հարկային եկամուտների կանխատեսվող հոսքերի վրա մակրոտնտեսական բնույթի ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը հիմնվել է ստորև նկարագրված կանխատեսումների ռիսկի և ենթադրություններից շեղումների ռիսկի վրա:

1. Կանխատեսումների ռիսկ

Սովորաբար կանխատեսումներ իրականացնելիս ի հայտ են գալիս հանգամանքներ, որոնք կապված են լինում օգտագործվող կանխատեսման մոդելների տեղայնացումից և մասնավորեցումից, տնտեսության կառուցվածքային տեղաշարժերից[20], նոր երևույթներից (որի վերաբերյալ նախկինում տեղեկատվությունը բացակայել է) և այլն: Այս ռիսկերն ընդունված է անվանել կանխատեսման ռիսկեր:

Հատկապես ներկա իրավիճակում՝ ռուս-ուկրաինական հակամարտությունը և Ռուսաստանի դեմ կիրառված աննախադեպ պատժամիջոցները աշխարհում ստեղծել են նոր իրականություն, որի պայմաններում ինչպես աշխարհի և ՀՀ գործընկեր երկրների, այնպես էլ ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները իրենց մեջ կրում են մեծ անորոշություն: Այս պայմաններում, ինչպես աշխարհի և ՀՀ գործընկերների, այնպես էլ պետական բյուջեի շրջանակում ՀՀ տնտեսական աճի կանխատեսումների համար առկա են երկկողմանի ռիսկեր, սակայն դեպի ներքև ռիսկերը համեմատաբար մեծ են:

Բյուջեի ծրագրի կատարման տեսանկյունից կարևորվում է ՀՆԱ-ի կանխատեսման ռիսկի գնահատումը, քանի որ բյուջեի ծրագրված սցենարի հարթ իրականացումը կախված է տնտեսությունում ստեղծված անվանական ՀՆԱ-ի մեծությունից: ՀՆԱ-ի գծով կանխատեսումների ռիսկը գնահատվել է հիմք ընդունելով սույն փաստաթղթի 1.5 «ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԸ» բաժնում ներկայացված իրական ՀՆԱ-ի աճի կանխատեսման հավանականությունների բաշխումները՝ կիրառելով երկրորդ ամենահավանական միջակայքի ստորին կետի և կենտրոնական կանխատեսման միջև տարբերությունը: Այս մոտեցմամբ, որպես ռիսկ է դիտարկվել ՀՆԱ իրական աճի կանխատեսված մակարդակից 3.0 տոկոսային կետով ավելի ցածր մակարդակի ձևավորումը:

Արդյունքում, ՀՆԱ նվազման ռիսկի ազդեցությունը հարկային եկամուտների վրա 2023 թվականի համար գնահատվում է 24.7 մլրդ ՀՀ դրամ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

[20]Սա որոշակիորեն կապված է նաև մոդելների սպեցիֆիկացիաների հետ, քանի որ ժամանակային շարքերի վրա հիմնված մոդելներն իրենց մեջ ներառում են տնտեսության նախորդ ժամանակահատվածի զարգացումների տեղեկատվությունը, իսկ կանխատեսվող տարում ի հայտ եկող տնտեսության կառուցվածքային տեղաշարժը միայն կարող է ներառվել հաջորդ տարվա կանխատեսումների մոդելներում:

2. Ենթադրություններից շեղումների ռիսկ

ՄԺԾԾ հիմքում դրվող կանխատեսումները կառուցվում են որոշակի ենթադրությունների հիման վրա, որոնք էլ իրենց հերթին կախված են արտաքին գործոններից (օրինակ, ներքին տնտեսության գնաճը՝ միջազգային շուկաների գների կանխատեսվող վարքագծից): Սակայն միշտ չէ, որ այդ ենթադրությունները կանխատեսվող հորիզոնում իրականություն են դառնում՝ կապված ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ-ի կառավարման դաշտից դուրս ի հայտ եկող երևույթների հետ (օրինակ՝ նավթի համաշխարհային գների հնարավոր փոփոխությունները):

Ենթադրություններից շեղումների ռիսկ է նաև ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսական զարգացումները: Միաժամանակ, ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներում մաքսատուրքերի մասնաբաժինը կարող է փոփոխվել նոր պետությունների ԵԱՏՄ-ին անդամակցությունից:

2.1. Գնաճի շեղման հնարավոր չափը

Գնաճի ցուցանիշի շեղման հնարավոր չափ է դիտարկվում ՀՀ ԿԲ-ի կողմից դրամավարկային քաղաքականության ծրագրում (գնաճի հաշվետվություններում) ներկայացվող գնաճի կանխատեսման կենտրոնական արժեքից շեղման առավելագույն չափը:

ՀՀ ԿԲ-ի կողմից կանխատեսվում է գնաճի աստիճանաբար նվազում, որի պայմաններում 12-ամսյա գնաճը 2023թ. դեկտեմբերին կկազմի 3.6%: Հաշվի առնելով այն, որ ՀՀ ԿԲ-ի գնաճի թիրախը կազմում է 4±1.5%՝ գնաճի կանխատեսվող արժեքից շեղման ռիսկի չափը ընդունվել է 2 տոկոսային կետ:

Գնաճի շեղման ռիսկը կարող է ազդեցություն ունենալ ՀՀ պետական բյուջեի և՛ եկամտային, և՛ ծախսային կատարողականների վրա՝ անուղղակի հարկերի, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների գծով ծախսերի ուղղությամբ: Գնանկումային պայմաններում հարկերից մուտքերը կկրճատվեն և ընդհակառակը:

Արդյունքում, 2023 թվականի համար դիտարկվել է գնաճային ռիսկի ազդեցությունը հարկային եկամուտների վրա և 2023 թվականի համար գնահատվում է 5.5 մլրդ ՀՀ դրամի լրացուցիչ հարկային եկամուտների մուտքեր:

2.2. Փոխարժեքի շեղման հնարավոր չափը

ՀՀ ԿԲ-ն և ՀՀ ՖՆ-ն փոխարժեքի կանխատեսումներ չեն իրականացնում և մակրոտնտեսական քաղաքականությունն իրականացվում է լողացող փոխարժեքի սկզբունքի հիման վրա, ընդ որում, յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի ցուցանիշների կանխատեսումների հիմքում դրվում է փոխարժեքի անփոփոխ (որոշակի պահի դրությամբ) մակարդակ: Սակայն փոխարժեքի տատանումները կազդեն ներմուծումից ՀՀ պետական բյուջե մուտքագրվող հարկային եկամուտների վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս ռուս-ուկրաինական հակամարտության սրման հետևանքներով պայմանավորված դեպի ՀՀ արտարժույթի ներհոսքի պատճառով ՀՀ դրամը էականորեն արևորվել է, առկա են ռիսկեր, որ արտարժույթիր ներհոսքի դադարման, կամ հակառակ պրոցեսի դեպքում, ՀՀ դրամը նորից կարժեզրկվի՝ վերականգնելով մինչև ռուս-ուկրաինական հակամարտության սկիզբը եղած մակարդակի հեմեմատ արժևորման չափի մոտ կեսը: Դա համապատասխանում է նաև ՀՀ դրամի փոխարժեքի պատմական տատանողականությանը՝ որը կազմում է շուրջ 5.8 տոկոս:

Արդյունքում, փոխարժեքի 5.8 տոկոսով արժեզրկման ռիսկի դրսևորման դեպքում, այլ հավասար պայմաններում, 2023 թվականին կարելի է ապահովել հարկային եկամուտների 20.7 մլրդ ՀՀ դրամ լրացուցիչ մուտք:

2.3. Ներմուծման գծով ռիսկի հնարավոր չափը

Քանի որ մաքսային սահմանին ներմուծումից գանձվող անուղղակի հարկերը էական կշիռ ունեն պետական բյուջեի ընդհանուր հարկային եկամուտներում, անհրաժեշտ է գնահատել նաև ներմուծման հնարավոր նվազման պարագայում հարկային եկամուտների նվազման ռիսկի չափը: Հետճգնաժամային տարիներին պետական բյուջեում ներմուծման գծով կանխատեսումների շեղման միջին բացարձակ չափը սահմանվում է 10.2%-ի միջակայքում, ինչն էլ հաշվի է առնվել այս գործոնի ազդեցությունը գնահատելու համար: 2023 թվականի համար ծրագրվածից 10.2% պակաս ներմուծման ռիսկի դրսևորման պայմաններում հարկային եկամուտների վրա ազդեցությունը գնահատվում է 21.3 մլրդ ՀՀ դրամ՝ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

Ամփոփելով վերը նկարագրված կանխատեսումների ռիսկի և ենթադրություններից շեղումների ռիսկի գնահատականները, միջնաժամկետ հորիզոնում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման ռիսկերի ազդեցության քանակական ամփոփ գնահատականները ներկայացվում են ստորև.

Աղյուսակ 16. Հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական կանխատեսումների և ենթադրությունների ռիսկերի ազդեցություն[21]

Ռիսկի տեսակը	Ազդեցության գնահատականը, մլրդ ՀՀ դրամ
	2023
Ռիսկերի առանձին հանդես գալու պայմաններում	
1. Կանխատեսվածից 3.0 տոկոսային կետով ավելի ցածր իրական ՀՆԱ-ի աճ	-24.7
2. 2.0 տոկոսային կետով ավելի բարձր գնաճի ռիսկ	5.5
3. Փոխարժեքի առավելագույնը 5.8 տոկոսով արժեզրկման ռիսկ	20.7
4. Ներմուծման 10.2 տոկոսով նվազման ռիսկ	-21.3
Վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա հանդես գալու պայմաններում	**-22.5**

Այսպիսով, գնահատվում է, որ հարկային եկամուտների վրա ազդող վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում հարկային եկամուտների ծրագրված մակարդակից շեղումը 2023 թվականին կկազմի շուրջ 22.5 մլրդ ՀՀ դրամ:

[21] ՀՆԱ, ներմուծման, փոխարժեքի և գների գծով հավանական ռիսկերի քանակային գնահատականը ստացվել է՝ հիմք ընդունելով այս գործոնների պատմական շարժի բացարձակ միջին սխալը:

Հարկային եկամուտների վրա առանձին ռիսկերի ազդեցության չափի վերաբերյալ պատկերացում են տալիս նաև ստորև ներկայացվող զգայունության գնահատականները, սակայն այս դեպքում դիտարկվում է հարկային եկամուտների աճի վրա ազդող գործոնների աճերի 1% փոփոխության ազդեցությունը, ինչը ներկայացված է հարկային եկամուտների զգայունության աղյուսակում:

Աղյուսակ 17. Հարկային եկամուտների զգայունությունը հիմնական տնտեսական գործոնների նկատմամբ, տոկոս

	ՀՆԱ	Գնաճ	Փոխարժեք	Ներմուծում
Միջին տարեկան ազդեցություն	0.24	0.11	0.16	0.05

Ինչպես երևում է աղյուսակից, հարկերի հավաքագրման առումով առավել էական գործոններ են հանդիսանում ՀՆԱ-ի և փոխարժեքի փոփոխությունները:

Հարկային եկամուտների կանխատեսումների հետ կապված անորոշությունների և ռիսկերի հաշվեկշռի վերաբերյալ գնահատականներն իրենց արտացոլումն են գտել ստորև ներկայացվող հարկային եկամուտների հավանականային բաշխման գծապատկերում և համապատասխան աղյուսակում (տես՝ Գծապատկեր 2.1 և Աղյուսակ 21)[22]: Հավանականային բաշխման գրաֆիկի կառուցման ժամանակ օգտագործվել է աղյուսակ 19-ում գնահատված ամբողջական ռիսկերի միաժամանակյա հանդես գալու պայմաններում ի հայտ եկող բացասական ռիսկերը:

Գծապատկեր 2.1. Հարկային եկամուտների տարեկան աճի տեմպերի կանխատեսումների հավանականային բաշխումը[23], տոկոս



Կանխատեսումների բաշխման հավանականություններն առավել պարզորոշ երևում են ստորև բերվող աղյուսակում:

Աղյուսակ 18. *Հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը*

---

[22]**Հարկային եկամուտների գծով ռիսկերի ազդեցության գնահատականը կառուցվել է ՀՀ ֆինանսների նախարարության ռիսկերի գնահատման համակարգի ներքո կառուցված մոդելի հիման վրա:**

[23]Հավանականային կանխատեսման գրաֆիկի կառուցման ընդհանուր մեթոդաբանությունը ներկայացված է Ներդիրում:

Հարկային եկամուտների աճի միջակայքը	Հարկային եկամուտների աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը			
	2023			
	1	2	3	4
8-13 տոկոս	0.04	0.16	0.22	0.34
13-18 տոկոս	***0.49***	***0.67***	***0.67***	***0.60***
18-23 տոկոս	0.47	0.16	0.10	0.04

Աղյուսակ 20-ի առաջին սյունը ներկայացնում է հարկային եկամուտների աճի միջակայքերը, իսկ 2-ից 5-րդ սյուները՝ նշված միջակայքերից յուրաքանչյուրում այդ աճի ձևավորվելու հավանականությունները՝ ըստ եռամսյակային կանխատեսումների: Համաձայն գնահատականների, 2023 թվականին 13-18% միջակայքում գտնվելու հավանականություններն ամենաբարձրն են, (Գծապատկեր 2.1-ում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 20-ում՝ հոծ նշումով):

Ներդիր

Իրական ՀՆԱ-ի և հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխման գծապատկերի կառուցումը

Իրական ՀՆԱ-ի և հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը ներկայացնող գծապատկերները ցույց են տալիս տնտեսության զարգացման ապագա ընթացքի վերաբերյալ կառավարության գնահատականները՝ տնտեսական աճի ծրագրային ցուցանիշների վերաբերյալ, ինչպես նաև հարկային եկամուտների հավաքագրման կանխատեսվող ընթացքը:

Կանխատեսումների հավանականային բաշխման գծապատկերի կառուցման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ բոլոր կանխատեսումները ինչ-որ չափով անորոշ են: Կարևոր է հաշվի առնել ոչ միայն կոնկրետ կանխատեսված արժեքները, այլ նաև բոլոր այն վերոնշյալ ռիսկերը, որոնց արդյունքում կարող են շեղումներ առաջանալ իրական ՀՆԱ-ի կանխատեսումների և հարկերի կանխատեսումների կենտրոնական արժեքներից: Հիմնվելով միայն կետային կանխատեսումների վրա հնարավոր չէ բավարար չափով տեղեկատվություն ներկայացնել դրանց հետ կապված անորոշությունների և դրանց աղբյուրների վերաբերյալ: Այդ պատճառով կարևորվում է որոշակի վստահության միջակայքի կառուցման խնդիրը, որը թույլ կտա գնահատել իրադարձությունների զարգացման հավանական ընթացքը: Իրական ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսումների հավանականային բաշխման ներկայացված գծապատկերները հիմնվում են Անգլիայի բանկի կողմից մշակված մեթոդաբանության վրա և հաշվի է առնում կանխատեսումների հավանականային բաշխման ասիմետրիկության առկայությունը:

Հայաստանի համար իրական ՀՆԱ-ի և հարկերի աճի կանխատեսումների բաշխման գծապատկերները կառուցվել են երեք չափորոշիչների հիման վրա.

1. կենտրոնական արժեքները, 2. անորոշության չափը (դիսպերսիան), որը ստանալու համար հիմք են հանդիսացել փաստացի պատմական շարքերի կանխատեսումային սխալները

և 3. ռիսկերի հարաբերական հաշվեկշիռը՝ անհամաչափության գործակցի գնահատման նպատակով:

Ունենալով կանխատեսված կենտրոնական արժեքները, անորոշության չափը (ցրվածքը) և ռիսկերի հաշվեկշիռը՝ կառուցվել են իրական ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսումների հավանականային բաշխման գրաֆիկները 2023թվականի համար (տես՝ Գծապատկեր 2.1):

ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսման գծապատկերներում կենտրոնական մուգ (կարմիր) ավելի նեղ միջակայքը ներառում է նաև կանխատեսման կենտրոնական սցենարը (կանխատեսված արժեքները): Որքան հավանականային կանխատեսումները հեռանում են կենտրոնական սցենարից, այնքան ավելի ցածր է դառնում դրանց իրագործման հավանականությունը, ինչը գծապատկերում արտահայտվում է ավելի թույլ գունավորմամբ: Ներկայացված բաշխումը սիմետրիկ չէ, քանի որ ապագայի համար առկա են տնտեսական աճի և հարկերի կենտրոնական կանխատեսումից ավելի ցածր մակարդակների ձևավորման ռիսկեր:

2.2. Պետական բյուջեի վրա մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվածից շեղման ռիսկերի ազդեցության ընդհանուր գնահատականը և դրանց մեղմման հնարավորությունները

Կանխատեսումներում մեծ ուշադրություն է դարձվում նաև պետական բյուջեի ծախսերի պլանավորված մակարդակների ապահովումը խաթարող ռիսկերին, որոնք կարող են հանգեցնել լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման:

Աղյուսակ 19. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և ծախսերի, ինչպես նաև այլ հոսքերի գծով ռիսկերի ընդհանուր ազդեցությունը[24]. (ֆինանսավորման պահանջ՝ - պահանջի մեծացում, + պահանջի նվազում), մլրդ ՀՀ դրամ

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող ռիսկեր	2023
1. Կանխատեսվածից 3.0 տոկոսային կետով ավելի ցածր իրական ՀՆԱ-ի աճ	-24.7
2. 2.0 տոկոսային կետով ավելի բարձր գնաճի ռիսկ	-9.4
3. Փոխարժեքի առավելագույնը 5.8 տոկոսով արժեզրկման ռիսկ	14.9
4. Ներմուծման 10.2 տոկոսով նվազման ռիսկ	-21.3
Ընդամենը	**-40.5**

Աղյուսակ 21-ում ցույց են տրված գնահատված լրացուցիչ ռիսկերը, որոնք կհանգեցնեն լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման: Ակնհայտորեն երևում է, որ գնաճի տատանումների հետևանքով կնվազի նախատեսված ֆինանսավորման պահանջը և համապատասխանաբար կփոփոխվեն նաև պետական բյուջեի ծախսերը՝ ավելացման ուղղությամբ:

[24] Ընդհանուր ազդեցության գնահատականը հիմնված է մակրոտնտեսական ռիսկերի առանձին հանդես գալու ենթադրության վրա:

Հաշվի առնելով մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող մակարդակից վերոնշյալ հնարավոր շեղումների ռիսկերի գնահատականները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հավաքագրման և ծախսերի կատարման տեսանկյունից 2023 թվականին ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի լրացուցիչ ֆինանսավորման պահանջը կկազմի շուրջ 40.5 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 0.4%-ը:

3. ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

Կանխատեսումներ: Աղյուսակ 22-ում ներկայացված է ՀՀ ՖՆ և այլ կառույցների կողմից ՀՀ տնտեսական աճի 2022-2023թթ. կանխատեսումների համեմատականը: Նշված կառույցներից մի մասի կողմից 2022թ. ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները տարվա ընթացքում վերանայվել են աճի ուղղությամբ: Այսպես՝ Ֆիթչ վարկանիշային կազմակերպությունը 2022թ. ՀՆԱ կանխատեսվող ցուցանիշը սեպտեմբեր ամսին բարձրացրել է 5.1 տոկոսային կետով՝ կանխատեսելով 6.4% տնտեսական աճ: ԱՄՀ-ը հունիսին ևս բարձրացրել է տնտեսական աճի կանխատեսումը 3.5 տոկոսային կետով՝ սահմանելով 5.0%: Սակայն Համաշխարհային բանկը հունիսին վերանայել է իր կանխատեսումները դեպի ներքև՝ կանխատեսելով 3.5% տնտեսական աճ: 2022թ. ՀՀ տնտեսական աճի ավելի բարձր կանխատեսումները պայմանավորված են ՀՀ տնտեսության վերջին զարգացումներով:

Աղյուսակ 20. *ՀՀ ՖՆ և այլ կառույցների կողմից ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները (%)*

	2022	2023
ՀՀ ֆինանսների նախարարություն (2022 սեպտեմբեր)	11.0	7.0
ՀՀ ֆինանսների նախարարություն (2022 հուլիս)	7.0	7.0
ՀՀ կենտրոնական բանկ (2022 հունիս)	4.9	3.1
Արժույթի միջազգային հիմնադրամ (2022 հունիս)	5.0	-
Արժույթի միջազգային հիմնադրամ (2022 ապրիլ)	1.5	4.0
Ֆիթչ (2022 սեպտեմբեր)	6.4	5.1
Ֆիթչ (2022 մարտ)	1.3	4.2
Համաշխարհային բանկ (2022 հունիս)	3.5	4.6
Համաշխարհային բանկ (2022 հունվար)	4.8	5.4
Մուդիս (2022թ. մարտ)	1.8	3.0
S&P (2022թ. ապրիլ)	1.3	5.1

Աղբյուրը՝ համապատասխան կառույցների հրապարակումներ

4. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ադրբեջանի ագրեսիան ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ, մասնավորապես՝ Սյունիքի, Վայոց Ձորի և Գեղարքունիքի մարզերում, հանգեցրել է մարդկային, նյութական և ոչ նյութական կորուստների: Բացի այդ, հասցվել է վնաս մարտական գործողություններին չմասնակցող բազմաթիվ բնակավայրերի. Ադրբեջանը թիրախավորել է քաղաքացիական բնակչությանը, բնակելի տները, քաղաքացիական ենթակառուցվածքները:

Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ ագրեսիայի հետևանով առաջացած հրդեհները մեծ վնաս են հասցրել Վայոց ձորի մարզի «Ջերմուկ» անտառային տնտեսությանը: Տվյալ տարածքում անտառային հրդեհները զգալի վնաս են հասցրել 10 հա անտառածածկ տարածքի կենսաբազմազանությանը՝ ներառյալ էնդեմիկ բուսական և կենդանական աշխարհը՝ հանգեցնելով հողերի դեգրադացմանը: Այս տարածքներում աճող բույսերը (գիհի կազակական, տանձի մի քանի տեսակներ և այլն) և ապրող կենդանիներ (հայկական մուֆլոն, բեզոարյան այծ, գորշ արջ և այլն) գրանցված են Կարմիր գրքում:[25]

Հաշվի առնելով վերջին ժամանակներում ստեղծված իրավիճակը և վերջինիս ազդեցությունը ֆիսկալ ռիսկերի գնահատման համատեքստում՝ դրամական արտահայտությամբ հասցված վնասների գնահատումն այժմ գտնվում է նախնական գործընթացում:

Աղյուսակ 21 ***Բյուջետային վարկեր և երաշխիքներ ունեցող ՊՄԸ ցուցանիշները մլն դրամ***

Ընկերության անվանումը	Բյուջետային վարկեր և երաշխիքներ	Հասույթ		Զուտ շահույթ		Կուտակ-ված շահույթ / վնաս	Պար-տավո-ություն-ներ	Ֆիսկալ ռիկսի կարգա-վիճակ
	2022	2020	2021	2020	2021	2021	2021	
«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ	78,3	84,091	66,628	(11,972)	1,857	(9,007)	128,788	Միջին
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ	106,011	33,121	35,433	(12,797)	(4,085)	13,409	157,490	Էական
«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	51,8	9,541	18,923	(10,575)	10,994	13,677	104,466	Ցածր
«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ	7.3	2,720	3,393	(839)	1,232	2,674	9,173	Ցածր
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	3,2	3,799	5,537	(1,220)	1,307	1,863	9,231	Ցածր

[25] http://www.mnp.am/news/attention_danger_environmental_disasters

«Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ	2,196	89	268	(272)	(325,006)	(2,059)	4,544	Էական
«Երքաղլուս» ՓԲԸ	136	2,177	2,010	230	156	156	997	Էական
Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա» ՓԲԸ	126	13	17	(28)	(2)	(107)	193	Էական
«Ավտոմատիկա» ՓԲԸ	89	-	16	(34)	(163)	(321)	389	Էական

Աղյուսակ 22 ***Խոշոր պարտավորություններ ունեցող պետական և համայնքային մասնակցությամբ ընկերությունների ցուցանիշները***

մլն դրամ

	Պարտավորություններ			Ակտիվներ			Սեփական կապիտալ		
Անվանում	2019	2020	2021	2019	2020	2021	2019	2020	2021
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ	129,767	138,842	157,490	177,642	173,541	190,102	47,875	34,698	32,612
«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ	145,619	154,154	128,788	148,776	143,878	137,083	3,157	(10,276)	8,295
«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	93,894	116,006	104,466	119,756	131,268	128,700	25,862	15,262	24,234
«Երևանի ավտոբուս» ՓԲԸ	1,004	2,518	13,276	4,238	2,097	13,215	395	22	(61)
«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ	2,454	8,265	12,183	11,617	17,378	20,329	9,163	9,113	8,146
«Հայփոստ» ՓԲԸ	10,427	11,248	10,746	24,342	24,621	23,189	13,915	13,373	12,443
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	10,125	10,178	9,231	16,104	14,936	15,296	5,979	4,759	6,066
«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ	9,107	10,346	9,173	13,809	14,190	14,249	4,702	3,844	5,076
«Նաիրիտ-2» ՓԲԸ	6,110	6,117	6,166	15,284	14,609	13,580	9,174	8,492	7,414
«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ	5,741	6,321	5,633	5,822	5,542	5,506	80	(779)	(127)
«Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ	6,150	4,064	4,495	6,150	6,893	10,676	2,968	2,829	6,180
«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ	218	1,697	2,733	5,531	6,149	6,825	5,313	4,452	4,092
«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ	1,169	1,276	2,300	5,138	4,833	6,206	3,970	3,888	3,906
«Սուրբ Աստվածամայր» ԲԿ	980	1,939	1,992	2,528	3,439	3,318	1,548	1,500	1,326
«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ	-	2,173	1,955	-	3,248	3,121	860	1,075	1,166
«Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	1,697	1,785	1,776	3,062	3,153	3,154	1,365	1,368	1,378

«Պրոֆեսոր Ռ.Օ. Յոյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ	2,126	1,927	1,715	6,446	6,158	6,065	4,320	4,231	4,350
«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության» ԳՀԻ	40	1,477	1,505	2,089	2,073	2,152	627	596	647
Ընդամենը	504,149	523,711	510,617	818,641	789,983	701,933	308,777	253,717	191,322
Դիտարկված ընկերությունների քանակ	221	204	176						

2020 ճգնաժամային տարվա ազդեցությամբ պայմանավորված՝ արտարժույթով արտահայտված պարտավորությունների առկայության պարագայում՝ փոխարժեքի տատանումը հանգեցրել է պարտավորությունների վերագնահատման և համապատասխանաբար փոխարժեքային տարբերությունից վնասների, որոնք արտահայտվել են շահութաբերության կտրուկ անկմամբ, 2021 թվականի ավարտին փոխարժեքի մակարդակը վերադարձել է նախաճգնաժամյան մակարդակի՝ արդյունքում չեզոքացնելով փոխարժեքի փոփոխությունից առաջացած կապիտալի անկումը:

Հաջորդիվ ներկայացված են խոշոր կուտակված վնասներ ունեցող պետական բաժնեմասնակցությամբ ընկերությունները:

Աղյուսակ 23 ***Առավելագույն կուտակված վնաս արձանագրված պետական մասնակցությամբ ընկերությունների ցուցանիշները***

մլն դրամ

Ընկերության Անվանում	Կուտակված շահույթ / վնաս		Հասույթ			Զուտ շահույթ			Պարտավորություններ	
	2020	2021	2019	2020	2021	2019	2020	2021	2020	2021
«Երևանի ջերմա-էլեկտրակենտրոն» ՓԲԸ	(28,463)	(9,007)	78,525	84,091	66,628	1,262	(11,972)	1,857	154, 154	128,788
«Լոռի-ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ	-	(4,538)	1,544	-	2,471	1,543	-	(3)	-	86
«Նոր Ակունք» ՓԲԸ	-	(4,269)	56	-	4	56	-	(3)	-	158
«Երևանի ավտոբուս» ՓԲԸ	(2,012)	(2,541)	2,017	1,231	2,843	(260)	(817)	(726)	2,518	13, 276
«Նաիրիտ-2» ՓԲԸ	(1,391)	(2,469)	6	1,689	38	(348)	(682)	(1,078)	6,117	6,166
«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ	(2,303)	(2,307)	409	429	408	(175)	(156)	(4)	1,034	183
«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ	(844)	(1,283)	2,294	2,919	3,547	(176)	(179)	(141)	1,697	2,733
«Գյումրու բժշկա-կան կենտրոն» ՓԲԸ	(559)	(859)	1,865	1,825	2,835	4	(82)	(265)	1,276	2300
«Հայաստանի պետական հետաքրքրություն-ների Ֆոնդ» ՓԲԸ	-	(699)	187	1,149	1,311	1	-	(699)	474	769

«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ	(1,262)	(610)	5,263	5,228	7,276	39	(951)	652	6,321	5,633
«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ	(158)	(407)	7,004	8,839	11,782	5	(50)	(249)	8,265	12,183
«Սուրբ Աստվածամայր ԲԿ» ՓԲԸ	(83)	(300)	2,341	4,151	4,882	2	(57)	(194)	1,939	1,992
«Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ	(1,734)	(2,059)	-	89	268	(386)	(272)	(325)	4,548	4,544
«Երևանի ոսկերչական գործարան» ՓԲԸ	(1737)	-	29	18	-	(141)	(108)	-	165	-

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Էական կուտակված վնաս էին արձանագրել մասնավորապես ջրային ոլորտի ընկերությունները: Այդ ոլորտի մասով արձանագրված վնասի առաջացման պատճառները հիմնականում պայմանավորված են ՀԾԿՀ-ի կողմից դեռևս 2007թ. հաստատված սակագներով, որոնց հաշվարկների մեջ ներառված չեն ամորտիզացիոն մասհանումները: Անհրաժեշտ է նշել նաև, որ ջրային ոլորտի ընկերությունները չեն ունեցել ժամկետանց վարկային պարտավորություններ, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից բյուջետային երաշխիքներ չեն ստացել:

Էներգետիկ ոլորտի մասնավոր ընկերություններ

Հայաստանում մի շարք խոշոր ենթակառուցվածքային էներգետիկ ակտիվներ տիրապետվում և շահագործվում են մասնավոր ընկերությունների կողմից, որոնց ֆինանսական հաշվետվությունները ենթարկվում են մշտադիտարկման: 4 ընկերությունների, որոնցից երկուսը՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն և Հրազդանի էներգետիկ ընկերություն ՓԲԸ-ն, հանդիսանում են ընկերությունների խումբ 2021 թվականի ամփոփ տվյալները ներկայացված են ստորև աղյուսակում:

Աղյուսակ 24 ***Էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերությունների հանրագումարային զուտ շահույթը/վնասն ու պարտավորությունները ըստ տարիների***

մլն. դրամ

Մասնավոր ընկերություններ	2019թ.	2020թ.	2021թ.	2019թ.	2020թ.	2021թ.
	Զուտ շահույթ/վնաս			Պարտավորություններ		
«Հրազդանի էներգետիկ ընկերություն» ՓԲԸ	2,380	1,675	6,659	3,637	40,597	40,855
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	524	(701)	14,975	105,538	112,128	93,598
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ	160	(3,504)	4,625	23,921	27,288	26,980
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	11,764	(4,577)	24,338	126,081	161,889	181,599

Աղյուսկից երևում է, որ բոլոր ընկերությունների ֆինանսական արդյունքները բարելավվել են 2021 թվականի ընթացքում, ինչը պայմանավորված է եղել արտարժույթվ արտահայտված պարտավորությունների վերագնահատումից դրական արդյունքով, ինչպես նաև գործառնական

մարժայի բարելավմամբ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում:

Անհրաժեշտ է նշել, որ ընկերությունները չունեն ժամկետանց վարկային պարտավորություններ: Ընդ որում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ները հանդիսանում են միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների աջակցությամբ իրականացվող նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ենթավարկային պայմանագրերով ոլորտին տրամադրված վարկային միջոցների խոշորագույն ստացողներից:

Ընկերությունները ներգրավված չեն այնպիսի տեղական կամ միջազգային դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ այդ ընկերությունների ֆինանսական վիճակի վրա:

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

ԱՅԼ ՍՊԵՑԻՖԻԿ ՖԻՍԿԱԼ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՇՐՋԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սպեցիֆիկ ֆիսկալ ռիսկերն առաջանում են պայմանական պարտավորությունների կամ այլ անորոշ իրադարձությունների նյութականացման արդյունքում: Այդ իրադարձություններից յուրաքանչյուրը կարող է ենթադրել անհապաղ և/կամ շարունակական ծախսեր՝ պայմանավորված կառավարության բացահայտ պարտավորություններով (պարտավորություններ, որոնք ունեն իրավական կամ պայմանագրային հիմք) կամ թաքնված պարտավորություններով(վերջիններս սահմանված չեն որևէ օրենքով կամ պայմանագրով):

Ստորև կատարված ուսումնասիրությունն արտացոլում է սպեցիֆիկ ֆիսկալ ռիսկերի ընդգրկուն շրջանակը (բացի պետական մանսկակցությամբ ընկերություններից և խոշոր մասնավոր ենթակառուցվածքային ընկերություններից ծագող), որի համար հիմք է հանդիսացել ԱԶԲ-ի հետ համատեղ մշակված ֆիսկալ ռիսկերի կառավարման բարելավման 2022-2023 թվականների ճանապարհային քարտեզը:

Բյուջետային վարկավորման ուսումնասիրություն

ՀՀ պետական բյուջեից, միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից ներգրաված վարկային միջոցների հաշվին 31.07.2022թ. դրությամբ տրամադրված բյուջետային վարկերի և ենթավարկերի չմարված մասի ընդհանուր գումարը կազմել է 333 մլրդ ՀՀ դրամ, որից 84% ուղղվել է ենթակառուցվածքային ոլորտին:

2022թ. հուլիսի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության տրված վարկերի կառուցվածքում միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների աջակցությամբ իրակա-նացվող նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ենթավարկային պայմանագրերով կազմակերպություններին տրամադրված բյուջետային վարկերի չմարված մասը (մնացորդը) կազմել է մոտ 176.5 մլրդ ՀՀ դրամ կամ տրամադրված ընդհանուր վարկային պորտֆելի 53%-ը:

Ընդհանուր վարկային պորտֆելում ՀՀ դրամով տրամադրված վարկերը կազմել են 33% կամ 108 մլրդ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլարով՝ 111 մլրդ ՀՀ դրամ կամ 33%, Եվրոյով՝ 37 մլրդ ՀՀ դրամ կամ 11%, ճապոնական իենով՝ 67 մլրդ ՀՀ դրամ կամ 20%: (տես գծապատկերը):

Պորտֆելը պարունակում է փոխարժեքի էական ռիսկեր, քանի որ տրամադրված վարկերի գերակշիռ մասը՝ 67%-ը ներգրավված է արտարժույթով, իսկ վարկառուների եկամուտները հիմնականում ՀՀ դրամով են: Այնուամենայնիվ նախորդ տարվա համեմատ պորտֆելի փոխարժեքային ռիսկը որոշակի նվազման միտում է ունեցել՝ պայմանավորված

արտարժույթով վարկերի ընդհանուր գումարի նվազմամբ և դրամի կուրսի բարձրացմամբ՝ մյուս արժույթների համեմատ:[26]

Գծապատկեր 4 ***31.07.2022 դրությամբ վարկերի արժութային կազմը***



Ենթակառուցվածքային ոլորտում տրամադրված վարկերի չմարված մասի մեջ զգալի կշիռ ունեն էներգետիկայի ոլորտի վարկերը՝ 273.4 մլրդ ՀՀ դրամ (82%):[27]

Գծապատկեր 5 ***Վարկերի բաշխվածությունն ըստ ոլորտների***



Տրամադրված վարկերից 73% ապահովված են գրավով (հող, շինություն և այլն), իսկ 27%-ը կազմում են գրավով չապահովված վարկերը: Վերջիններս պետական ծրագրերի իրականացմանը կամ պետական մասնակցությամբ ընկերություններին ուղղված միջոցներն են: Վարկային պորտֆելի 5% վերակառուցված վարկեր են:

Բյուջետային վարկերից բացի առկա է բյուջետային երաշխիքների փաթեթ, այդ թվում՝

- Արտարժույթով երաշխիքների մասով՝ 96.8 մլն ԱՄՆ դոլար մնացորդով 31.07.2022 դրությամբ,
- ՀՀ դրամով արտահայտված երաշխիքների մասով՝ 5,311 մլն դրամ 31.07.2022 դրությամբ՝ գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին

[26] Տարբերությունները նախորդ հաշվետվությունների համեմատ պայմանավորված են հաշվառման մեթոդաբանության փոփոխությամբ:

[27] Տարբերությունները նախորդ հաշվետվությունների համեմատ պայմանավորված են հաշվառման մեթոդաբանության փոփոխությամբ:

տրամադրվող աջակցության ծրագրի շրջանակներում, որ տրամադրվել են 2021 թվականին աշնանը: Տվյալ պորտֆելի առավելագույն ժամկետը 2023 թվականի ավարտն է: 13 մլն ՀՀ դրամ տրամադրվել է ՓՄՁ-ներին:

Պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ձևաչափով գործող պայմանագրերից բխող պայմանական պարտավորությունների վերլուծություն

Վերլուծության են ենթարկվել ստորև ներկայացված ՊՄԳ ձևաչափով գործող թվով երեք ընկերությունների պայմանագրերը, ինչպես նաև էլեկտրաէներգիայի գնման երեք խոշոր պայմանագրերը (որոնք նույնպես հանդիսանում են պայմանական պարտավորությունների աղբյուր, քանի որ պարունակում են էլեկտրաէներգիայի երաշխավորած գնման պայմաններ): Ստորև ներկայացվում է նշված 6 ընկերությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

Աղյուսակ 25 ***Գործող ՊՄԳ և ԷԳՊ պայմանագրերը***

Անվանում	Ոլորտ	Սկիզբ	Ավարտ	Պայմանական պարտավորությունների հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակի փոփոխությունները
«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ	Տրանսպորտ	2008թ.	2038թ.	Նշանակալի Անփոփոխ
«Վեոլիա Ջուր» ՓԲԸ	Ջրամատակարարում և կեղտաջրերի հեռացում	2016թ.	2031թ.	Նշանակալի Անփոփոխ
«Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ	Տրանսպորտ	2002թ.	2032թ.	Միջին Անփոփոխ
«Քոնթուր Գլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ (Որոտան ՀԷԿ), ԷԳՊ	Էներգետիկա	2016թ.[28]	2038թ.	Նշանակալի Վատթարացում
«Արմփաուեր» ՓԲԸ, ԷԳՊ	Էներգետիկա	2019թ.[4]	2041թ.	Միջին Անփոփոխ
«Էֆարվի Մասրիկ» ՓԲԸ, Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային էլեկտրակայան, ԷԳՊ	Էներգետիկա	2021թ.[4]	2041թ.	Նշանակալի Անփոփոխ

ՊՄԳ պայմանագրերի վերլուծության արդյունքում նյութականացման ռիսկի աստիճանը հիմնականում նշանակալի է համարվել ՊՄԳ բոլոր պայմանագրերի համար, հաշվի առնելով, որ ճգնաժամը տարբեր բնույթի ազդեցություն է ունենում ընկերությունների դրամական հոսքերի վրա, ինչն իր հերթին մեծացնում է պայմանագրի վերաբանակցման կամ պայմանագրի

[28] գործարքի ֆինանսական պայմանների բավարարման տարի. ԷԳՊ պայմանագրերի փաստացի տևողությունը կազմում է մինչև 25 տարի՝ սկսած ստորագրման տարվանից:

վաղաժամ դադարեցման ռիսկերը: Իսկ շինարարության փուլում գտնվող ծրագրերի պարագայում առկա են էական ուշացումներ, ինչն իր հերթին կարող է բարձրացնել գերածախսերի ռիսկը:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ

ՀՀ կառավարության 07.02.2008թ. N83-Ա որոշման հիման վրա ՀՀ, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի և «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի միջև 13.02.2008թ. կնքվել է «Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ փոխանցելու մասին» կոնցեսիոն պայմանագիրը:

Ծառայությունների ծավալները և երթուղիները համաձայնեցվում են յուրաքանչյուր տարի՝ հաջորդող տարվա համար, հետևաբար պայմանագրի ֆինանսական տարբեր բաղադրիչների ապագա մակարդակները բարդ է կանխատեսել:

Կոնցեսիոն պայմանագիրը ներառում է վնասի սուբսիդավորում ուղևորափոխադրման ոչ շահութաբեր որոշ ուղղությունների համար, ինչն էլ նյութականացել պայմանագրի գործողության բոլոր տարիներին: Սակայն, ըստ պայմանագրի, վճարման ենթակա գումարների առավելագույն չափը սահմանափակվում է կոնցեսիոների կողմից վճարման ենթակա տարեկան կոնցեսիոն վճարի չափով: Համաձայն առկա պատմական տեղեկատվության, կոնցեսիոն պայմանագրի սկզբից ի վեր որևէ այլ պայմանական պարտավորության նյութականացում տեղի չի ունեցել:

Կոնցեսիոն պայմանագիրը նախատեսում է նաև փոխհատուցումներ մի շարք դեպքերում, որոնց նյութականացման ռիսկի հավանականությունն ավելանում է՝ պայմանավորված համավարակի հետ կապված ճգնաժամով: Այդպիսի դեպքերից են՝

- Օրենսդրության անբարենպաստ փոփոխություն,
- Անհաղթահարելի ուժի ազդեցության մեղմման ծախսեր,
- Անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով պայմանագրի վաղաժամ դադարեցման հետ կապված վճարումներ,
- Կոնցեդենտի կողմից պարտավորությունների չկատարման հիմքով պայմանագրի վաղաժամ դադարեցման վճարներ,
- Փոխադարձ համաձայնությամբ պայմանագրի վաղաժամ դադարեցման վճարներ:

Կոնցեսիոն պայմանագրի վաղաժամ դադարեցման մասով պայմանական պարտավորությունները հիմնականում չափելի են և դրանց առավելագույն ազդեցությունը վատագույն սցենարի դեպքում գնահատվում է 103.2 մլրդ ՀՀ դրամ[29], ընդ որում այդ գումարը կոնցեսիոն գործունեության ընթացքում աճում է՝ հաշվի առնելով պայմանագրի պայմանները:

Կոնցեսիոն պայմանագրի ֆիսկալ ռիսկայնության կարգավիճակը մինչև համավարակը գնահատվում էր միջին, իսկ համավարակի և պատերազմի ճգնաժամերով պայմանավորված՝ նշանակալի, և ներկայումս շարունակում է գնահատվել նշանակալի՝ պայմանավորված զարգացող աշխարհաքաղաքական և մակրոտնտեսական ճգնաժամով: Միաժամանակ կարևոր է փաստել, որ ընկերության գործունեությունը 2021 թվականին եղել է շահութաբեր՝ 1.26 մլրդ դրամ շահույթով, սակայն նախորդ տարվա համեմատ նվազումը կազմել է 33%: 2020 թվականի շահույթի ավելի բարձր մակարդակը պայմանավորված էր վնասաբեր ուղևորափոխադրումների ծավալի կրճատմամբ և ակտիվների վաճառքով: Այդպիսով 2021 թվականի շահույթի

---

[5] Կիրառվել է Ֆինանսների նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 15 388Լ հրամանով հաստատված ԱՋԲ-ի աջակցությամբ մշակված մեթոդաբանությունը՝ ինչպես և սույն փաստաթղթում ներկայացվող այլ հաշվարկների դեպքում:

մակարդակը վերադարձել է 2019 թվականի մոտ մակարդակին (1.11 մլրդ դրամ): Ի հավելումն, 2021 թվականի ընթացքում ընկերությունը կատարել է տոկոսագումարների վճարում՝ կապված նոր շարժակազմի ձեռքբերման ֆինանսավորման նպատակով ներգրավված վարկի հետ: Ոլորտում առկա միտումները անհրաժեշտ է սերտորեն մշտադիտարկել ՝ հաշվի առնելով նոր ճգնաժամերով պայմանավորված անորոշությունները: Նշված նվազումը փոխհատուցվել էր 2021 թվականին սակագների բարձրացմամբ, ինչը թույլ էր տվել ընդհանուր հասույթը պահպանել մոտ 21 մլրդ դրամ մակարդակում ինչը մի փոքր ավելի ցածր էր, քան 2020 թվականի ցուցանիշը՝ 22 մլրդ դրամ:

Ֆիսկալ ռիսկի կարգավիճակը նշանակալի է՝ հաշվի առնելով ճգնաժամային ժամանակաշրջանով պայմանավորված անորոշությունները և ընթացող վերաբանակցությունները:

«Վեոլիա ջուր» ՓԲԸ

21.11.2016թ. ՀՀ կառավարության և «Վեոլիա Օ Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքվել է «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագիր՝ 15 տարի ժամկետով (Վարձակալական պայմանագիր):

Վարձակալական պայմանագրի շրջանակներում առկա են մի շարք նշանակալի պայմանական պարտավորություններ, այդ թվում.

- Վարձակալի կողմից պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի շրջանակից դուրս այլ աշխատանքների իրականացման դեպքում Վարձատուի կողմից համապատասխան գումարի փոխհատուցում,
- Բազային սակագնի երաշխիք, որն արդեն առնվազն երկու անգամ կիրառվել է՝ ներառյալ վարձակալական վճարի կրճատում,
- Վարձակալական պայմանագիրը պարունակում է վերաբանակցությունների և վաղաժամկետ դադարեցման բազմաթիվ դեպքեր: Առաջիկայում Վարձակալական պայմանագրի վաղաժամկետ դադարեցման ռիսկը համարվել էր ցածր՝ առնվազն մինչև 2025թ. : Պայմանագրի վաղաժամ դադարեցման գծով պայմանական պարտավորությունը մասնակի չափելի է և գնահատվել է 73.9 մլրդ դրամ՝ միջանկյալ սցենարի դեպքում, որտեղ նման վճարումը չի կարող գերազանցել ապագա վարձակալական վճարների հանրագումարը:

Մինչև համավարակը, Վարձակալական պայմանագրի գծով պայմանական պարտավորությունների ֆիսկալ ռիսկի կարգավիճակը գնահատվել է միջին, սակայն հաշվի առնելով թարմացված տեղեկատվությունը՝ հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը ներկայում նշանակալի է: Դա պայմանավորված է դեբիտորական պարտավորությունների հավաքագրման ցուցանիշների վատթարացմամբ և իրավաբանական անձանցից հասույթների 14% նվազմամբ, ինչը 2020թ. հանգեցրել էգործառնական շահույթի 8% նվազման: 2021թ. ֆինանսական հաշվետվությունները փաստում են 2021 թվականին հասույթի մակարդակի աճի մասին: Գործառնական շահույթի մակարդակը մնացել է նույնը ինչ 2020 թվականին՝ պայմանավորված զուգահեռ ինքնարժեքի բարձրացմամբ: Զուտ շահույթի մակարդակը աճել է՝ պայմանավորված Կառավարության և ընկերության միջև 2021 թվականի նոյեմբերի 10 ին ստորագրված կոնցեսիոն պայմանագրի #24 փոփոխությամբ նախատեսված կոնցեսիոն վճարների վերանայմամբ, որոնց ներկա արժեքի նվազումը ճանաչվել է որպես ֆինանսական եկամուտ:

Սակայն դեռևս պահպանվում են ժամկետանց դեբիտորական պարտավորությունների հավաքագրման հետ կապված դժվարությունները, որոնք արտահայտվել են 2021 թվականի համար դեբիտորական պարտքերի գծով արժեզրկման պահուստի աճով:

Բանակցություններ են ընթանում նաև արդեն իսկ կառուցված ակտիվների շուրջ, որոնք պետք է փոխանցվեն պետությանն, այնուհետև՝ հանձնվեն վարձակալության: Ի հավելումն, առաջիկա տարիների ընթացքում զգալիորեն ավելանալու են պետությանը փոխանցվելիք ոչ պարտադիր աշխատանքները (ընկերության գնահատականներով անհրաժեշտ ներդրումների ծավալը՝ մոտ 75 մլն ԱՄՆ դոլար), որոնք պետք է ֆինանսավորվեն պետական բյուջեի հաշվին:

Համաձայն ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 23 նոյեմբերի 2021թ. N400_Ա որոշման՝ Ընկերության հետ վարձակալության պայմանագրի մեջ իրականացվել են փոփոխություններ, որի արդյունքում մանրածախ ջրամատակարարման համար սահմանվում է բազիսային սակագին, որը ենթակա է ճշգրտման՝ կախված գնաճից և Ընկերությանը մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագներից: Ուստի, սակագնային ճնշումները գնաճային միջավայրում կարող են հանգեցնել կառավարության կողմից սուբսիդավորող գործիքակազմի կիրառման կամ պայմանագրի պայմանների վատթարացման: Այդպիսով, հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը մնում է նշանակալի:

«Արմենիա Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ

Կոնցեսիոն պայմանագիրը գործում է 2002թ-ից՝ Երևանի «Զվարթնոց» օդանավակայանի համար, իսկ 2007թ-ից ներառում է նաև Գյումրու «Շիրակ» օդանավակայանը: Մայր ընկերությունը աշխարհի օդանավակայանների խոշորագույն օպերատորներից է՝ «Կորպորասիոն Ամերիկա Ս.Ա.» ընկերությունն, որը ցուցակված է Նյու Յորքի ֆոնդային բորսայում: Խումբը մինչև 2019 թվականը արձանագրում էր շահութաբերության բարձր ցուցանիշներ, իսկ ՀՀ-ի դուստր ձեռնարկությունը եղել է ամենաշահութաբերներից մեկը և Քովիդի ճգնաժամից վերականգնումից հետո ևս բարձր ցուցանիշներ է արձանագրել

Պայմանագիրը Կոնցեսիոներին հնարավորություն է տալիս միակողմանիորեն երկարացնել կոնցեսիայի տևողությունը:

Հաշվի առնելով ընկերության բարձր շահութաբերությունը՝ պայմանագրի վաղաժամ դադարեցման պայմանական պարտավորությունը և ընկերության բիզնես ռիսկը գնահատվում էին ցածր, սակայն օդանավակայանների ոլորտը համավարակով պայմանավորված ճգնաժամից առավել տուժածներից մեկն է: Ընկերությունը ստիպված եղավ հայցել վարկային պայմանագրի ֆինանսական քովենանթի չեղարկում, որը բավարարվեց ֆինանսավորողի կողմից:

2021 թվականին «Կորպորասիոն Ամերիկա Ս.Ա.» ընկերությունների խմբի ֆինանսական վիճակը զգալիորեն վերականգնվել է՝ պայմանավորված գործառնությունների վերսկսմամբ, ստացված մի շարք փոխհատուցումներով, վերակառուցված և նոր վարկերով: Վերականգնման տեմպերը 2022 թվականին էլ ավելի են արագացել՝ մասնավորապես պայմանավորված Արգենտինայում սահմանափակումների վերացմամբ: Նշված վերականգնումը արտահայտվել է նաև Խմբի համախմբված դրամական մնացորդի ցուցանիշով, հետևաբար, անհրաժեշտության դեպքում Խումբը կրկին կկարողանա աջակցել «ԱՄՕ» ՓԲԸ-ին:

Ինչպես երևում է ՀՀ ուղևորափոխադրումների վիճակագրությունից, ոլորտի վերականգնումը գրանցվել է 2021 թվականի ընթացքում և 2022 թվականի առաջին ամիսներին, ընդ որում 2022թ. առաջին 4 ամիսներին արձանագրված ծավալները մոտ են մինչև կորոնավիրուսային համավարակն արձանագրված մակարդակներին (98%):

Բեռնափոխադրումների ծավալները ևս վերականգնվում են և 2022թ. առաջին 4 ամիսներին դրանք հասել են 2019թ. մակարդակի 97%-ին:

Շարունակվել է շահույթի նախքան հարկումը, տոկոսավճարները և մաշվածությունը (EBITDA) զգալի վերականգնումը՝ 2021 թվականին հասնելով հասույթի նկատմամբ 44%: Մինչ այժմ «ԱՄՕ» ՓԲԸ-ն լավ է դիմակայել Ղարաբաղյան 44-օրյա պատերազմի, կորոնավիրուսի Դելտա և Օմիկրոն տեսակների հետևանքով ստեղծված մարտահրավերներին: Սակայն նոր աշխարհաքաղաքական ճգնաժամը ամենայն հավանականությամբ անդրադարձել է 2022 թվականի երկորրդ եռամսյակի արդյունքների վրա՝ բեռնափոխադրումների ծավալների նվազմամբ, հասցնելով EBITDA/հասույթ ցուցանիշը 32%, որը շարունակում է մնալ բավականին բարձր:

Կանխիկի մնացորդը 2021 թվականի ընթացքում շարունակել է աճել տարեվերջին կազմելով 44.7 մլն ԱՄՆ դոլար, ինչն ավելի բարձր է, քան 2022 թվականին պարտքի սպասարկման գծով նախատեսված վճարումները՝ հաշվի առնելով, որ համաձայն վարկային համաձայնագրի փոփոխության՝ մայր գումարի մարումները վերսկսվել են 2022 թվականի հունիսին: Մարումների իրականացումից հետո կանխիկի մնացորդը բավարար չէ տարվա համար նախատեսված մարումներն իրականացնելու համար, ինչը պետք է գործառնական հոսքերով փոխհատուցվի, սակայն անորոշության որոշ մակարդակ պահպանվում է՝ հաշվի առնելով աշխարհաքաղաքական ճգնաժամը:

Զգալիորեն նվազել է ռիսկն առ այն, որ միջազգային սինդիկացված վարկի շրջանակներում վարկատուները կարող են պահանջել արագացված վարկի հետվճարում և հաշվի առնելով, որ ընկերության բաժնետոմսերը և ակտիվները գրավադրված են ի օգուտ վարկատուների, ինչը, հաշվի առնելով պայմանագրի դրույթները, կարող էՀՀ կառավարության համար լրացուցիչ ֆիսկալ պարտավորություններ առաջացնել: Նվազել է նաև վարկի չմարված գումարը: Պայմանագրի վաղաժամ դադարեցման դեպքում առկա են այլ, ավելի մեծ պարտավորություններ, որոնք ներկայիս դրությամբ չափելի չեն: Վերը նշված հանգամանքներից ելնելով, սույն ՊՄԳ պայմանագրի գծով պայմանական պարտավորությունների ֆիսկալ ռիսկի կարգավիճակը պահպանվում է միջին՝ չնայած նոր աշխարհաքաղաքական և մակրոտնտեսական ճգնաժամից բխող անորոշություններին: Վերջիններս անհրաժեշտ է սերտորեն մշտադիտարկել, հատկապես՝ փոխադրումների ծավալների փոփոխությունների և գործառնական հոսքերի վրա դրանց ազդեցության առումով, հաշվի առնելով վարկի մարման ժամանակացույցը:

«Քոնթուր Գլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ

Ընկերությունը հանդիսանում է հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության առանցքային համալիր, նախկինում պետական մասնակցությամբ ընկերություն էր, որը մասնավորեցման արդյունքում վաճառվել է էլեկտրաէներգիայի արտադրությամբ զբաղվող «Քոնթուր Գլոբալ» խոշոր միջազգային խմբին: Ընկերությունն արտադրված էլեկտրաէներգիան վաճառում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին (ՀԷՑ)՝ ՀԾԿՀ կողմից հաստատված սակագներով: ՀԷՑ ընկերությունը պարտավոր է գնել արտադրված ամբողջ էլեկտրաէներգիան, իսկ չգնելու դեպքում՝ վճարել փոխհատուցում, որը մինչ այժմ չի կիրառվել: Ամենախոշոր պայմանական պարտավորությունը՝ պետության կողմից հիմնական միջոցների հետգնման պարտավորությունն է, որի արժեքը 2021թ. ավարտին կազմում է102.1 մլրդ դրամ:

Նշենք նաև, որ ընկերությունը ներկայում մարում է Վերականգնման վարկերի բանկից (KfW) Եվրոյով ստացված վարկը, ինչպես նաև 3 այլ ՄՖՀ-ներից, այդ թվում՝

Միջազգային ֆինանսական կորպորացիայից, ԱՄՆ դոլարով ստացված վարկեր: Այս առնչության հարկ է նկատել, որ 2020թ. ԱՄՆ դոլարի և Եվրոյի փոխարժեքները դրամի նկատմամբ աճել էին, մինչդեռ 2021թ. և հատկապես 2022թ. առաջին ամիսներին դրամը արժևորվում է:

2019թ. ընկերության գործունեությունը եղել է շահութաբեր, 2020թ. COVID-19 համավարակի հետևանքով տնտեսական ակտիվության կտրուկ նվազման հետ մեկտեղ, ընկերությունն արձանագրել է հասույթի մոտ 25 տոկոս կրճատում, ինչը խիստ ազդեցություն է ունեցել ընկերության գործունեության՝ առանց արտադրված ամբողջ էլեկտրաէներգիան գնելու կամ փոխհատուցում վճարելու պարտավորությունն ակտիվացնելու: Դրան ավելացան նաև արտարժույթի փոխարժեքի հետ կապված վնասները՝ ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ արժեզրկման հետևանքով, ինչը հանգեցրեց պարտքի սպասարկման առավել մեծ ծախսերի: Արդյունքում, 2020թ. ընկերությունն արձանագրել է սեփական կապիտալի բացասական մակարդակ՝ չնայած բաժնետերերի կողմից հավելյալ սեփական կապիտալի ներարկմանը: Ընկերությունը շարունակում է սպասարկել իր վարկերը՝ շնորհիվ բաժնետերերի հավելյալ աջակցության, որոնք տրամադրել են ավելի քան 10 մլրդ դրամ ծավալով արտակարգ աջակցության վարկ (համարժեք է ընկերության 2020թ. հասույթին): 2021 ընթացքում բաժնետերերի կողմից նորից կատարվել է սեփական կապիտալի ավելացում:

Հասույթի գեներացումը բարելավվել է 2021 թվականին, գերազանցելով 2019 մակարդակը և ապահովելով էականորեն ավելի բարձր շահույթ: Ֆիսկալ ռիսկի կարգավիճակը նշանակալի էր՝ հաշվի առնելով ընկերության ֆինանսական վիճակը և այն փաստը, որ ընկերությանը չեն բավարարում հաստատված սակագները: Սակայն շահույթի մակարդակի վերականգնումը և այն փաստը, որ բաժնետերերը հանդիսացել են և շարունակում են հանդիսանալ շահութաբեր ընկերությունների խումբ, որը աջակցել է ընկերությանը առանձնահատուկ դժվար 2020թ. ընթացքում և ներկայում շարունակում է իր աջակցություն, հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը փոխվել է միջինի: Անհրաժեշտ է հասկանալ, թե արդյո՞ք ռուս-ուկրաինական նոր ընթացիկ ճգնաժամը կրկին ճնշում կգործադրի հասույթի և շահութաբերության մասով: Անորոշության մեկ այլ գործոն է մայր ընկերության ձեռքբերման մասով KKR խմբի հետ ձեռք բերված համաձայնությունը, , ինչի արդյունքում կարող է էականորեն փոխվել Խմբի և որոշակի երկրներում դրա ներդրումների մասով քաղաքականությունը: Սա հատկապես պայմանավորված է այս ձեռք բերմամբ պայմանավորված պարտքի ավելացմամբ խմբի համար, որի պատճառով Fitch Ratings ընկերությունը խմբի վարկային վարկանիշը դասեց “Negative watch”: Այս հանգամանքից ելնելով այս պայմանագրի հարկաբյուջետային ռիկսի կարգավիճակը դասվեց «նշանակալի»:

«Արմփաուեր» ՓԲԸ (Երևանի նոր ՋԷԿ)

Ընկերությունը Երևան քաղաքում կառուցել է և հանձնել է շահագործման 254 ՄՎտ համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայան, հանդիսանում է աշխարհում էլեկտրաէներգիայի արտադրության խոշոր գործունեություն իրականացնող իտալական Ռենկո էներգետիկական խմբի և գերմանական Սիմենս խմբի դուստր ընկերություն: Ծրագրի գնահատված արժեքը կազմել է 257.575 մլն ԱՄՆ դոլար: Պայմանագրի ժամկետը կազմում է 20 տարի՝ սկսած առևտրային շահագործման մեկնարկից: Կայանը շահագործման է հանձնվել 2021թ. դեկտեմբերին, և համաձայն Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի

կողմից ներկայացված հաշվետվության՝[30] 2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում առաքել է 608,7 մլն կՎտժ հզորությամբ էլեկտրական էներգիա :

Հիմնական պայմանական պարտավորությունը ՀՀ կառավարության կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով պայմանագրի վաղաժամ դադարեցման դեպքում կայանի հետգնման պարտավորությունն է (նյութականացման դեպքերն են՝ օտարումը, բռնագրավումը, զավթումը, կառավարությանն առնչվող անվճարունակության դեպքի տեղի ունենալը, պայմանագրի շրջանակներում պետության կողմից տրված հավաստիացումների և երաշխիքների էական խախտումը, ծրագրի կառուցման կամ շահագործման՝ Կառուցապատողի կարողության վրա էականորեն և անբարենպաստ կերպով ազդող օրենսդրական փոփոխությունը): Շահագործման առաջին տարվանից հետո, որը դեռևս չի լրացել, պայմանական պարտավորության գումարին կավելանա 15 տոկոս հավելավճար՝ ի հավելումն ներդրման գումարի, իսկ այնուհետև գումարը կնվազի տարեկան 4 տոկոսով:

Առկա է նաև պետության կողմից երաշխավորված՝ ՀԷՑ ընկերության պարտավորություն՝ արտադրված ամբողջ էլեկտրաէներգիան գնելու, իսկ չգնելու դեպքում՝ վճարել փոխհատուցում, սակայն այդ պայմանական պարտավորությունը դեռևս շարունակում է հանդիսանալ քիչ հավանական, քանի որ կայանն աշխատում է սահուն կերպով:

Հաշվի առնելով կայանի հաջող շահագործման հանձնումը՝ չնայած կորոնավիրուսային համավարակի հետևանքով առաջացած ուշացումներին, ծրագրի հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը կարող էր փոփոխվել ցածրի, սակայն ռուս-ուկրաինական նոր ճգնաժամի անորոշություններով պայմանավորված ծրագրի հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը պահպանվում է միջին մակարդակում:

«Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային կայան

Այս նախագծի շրջանակներում կառուցվում է 55 Մվտ դրվածքային հզորությամբ արևային էլեկտրակայանը: Այն պատկանում է La Providencia և FRV իսպանական մասնագիտացված խմբերին և ֆինանսավորվում է IFC-ի, EBRD-ի և Ֆինլանդիայի կառավարության վարկային միջոցներով: Ծրագրի ընդհանուր արժեքը 50.2 մլն ԱՄՆ դոլար է: Պայմանագրի ֆինանսական կայացումը տեղի է ունեցել 2020թ. հուլիսին, իսկ աշխատանքները նախատեսվում էր ավարտել 2022թ-ին, սակայն 2022 թվականի հուլիսին ստորագրված լրացուցիչ համաձայնագրով այն տեղափոխվել է 2023 թվականի սեպտեմբեր:

Նախագծի իրականացման արդյունքում շինարարության ավարտից մեկ տարվա ընթացքում առաջանում են մի շարք պայմանական պարտավորություններ, մասնավորապես արտադրվող էլեկտրաէներգիայի համար գնման երաշխիք ՀՀ կառավարության կողմից, և անբարենպաստ իրադարձությունների դիմաց լրացուցիչ հատուցման իրավունք:

Նախքան դա և գործարքի ֆինանսական կայացումից հետո հիմնական պայմանական պարտավորությունը վաղաժամ դադարեցումն է՝ ՀՀ կառավարության գործողությունների հետևանքով, տարբեր հիմքերով (ա) Կառավարությունը չի կատարում իր կողմից պարտավորություն հանդիսացող որևէ վճար, (բ) որևէ պետական մարմնի կողմից էքսպրոպրիացիայի կամ հարկադիր ձեռքբերման է ենթարկվել ծրագրի տարածքը, կայանը, գ) Կառավարությանը վերաբերող անվճարունակության դեպք, դ) Օրենքի փոփոխություն կամ

30 https://www.psrc.am/uploads/files/%D4%B7%D5%AC%D5%A5%D5%AF%D5%BF%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D4%B7%D5%B6%D5%A5%D6%80%D5%A3%D5%AB%D5%A1/%D5%80%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2022/2-er/Araqum%202022-2.pdf

անբարենպաստ պայմանի դեպք, որը վերացված կամ փոփոխված չէ 180 (մեկ հարյուր ութսուն) օրվա ընթացքում և անհնար է դարձնում կայանի կառուցումը կամ շահագործումը: Կառուցապատողի կողմից. ե) Կառավարության կողմից Համաձայնագրի ցանկացած այլ էական խախտում, եթե այդ խախտումը չի վերացվել 180 օրվա ընթացքում:

Հաշվարկվել է առավելագույնը 25.2 մլրդ ՀՀ դրամի փոխհատուցում, որն շինարարության ավարտից հետո կնվազի՝ պայմանավորված պայմանագրով սահմանված վաղաժամ դադարեցման այլ դրույթի կիրառելիությամբ: Պայմանական պարտավորություններին կարող է ավելացվել ավելի քան 5 մլրդ ՀՀ դրամ՝ անբարենպաստ իրադարձություն հայտարարելու ռիսկի հիմքով, սակայն, հաշվի առնելով դրույթի մեկնաբանությունը, համաձայն որի փոխհատուցումը չի կարող պահանջվել, քանի դեռ շինարարական աշխատանքները չեն ավարտվել, այդ գումարը չի ներառվում: Արտադրված ամբողջ էլեկտրաէներգիան գնելու, կամ փոխհատուցելու հետ կապված պայմանական պարտավորությունը դեռ չի կարող չափվել:

Ստորև ներկայացվում է 2021թ. դեկտեմբերի դրությամբ ՊՄԳ ծրագրերի գծով պայմանական պարտավորությունների ամփոփ աղյուսակը:

Աղյուսակ 26 ***Պայմանական պարտավորությունների ամփոփ հաշվարկ***

մլրդ դրամ

Ծրագրի անվանում	ԱյլՊՊ	Վաղաժամ դադարեցում	Ընդհանուր ՊՊ	ՀՆԱ նկատմամբ %
«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ		103.2	103.2	1.48
«Վեոլիա Ջուր» ՓԲԸ	13.0	73.9	86.9	1.24
«Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ	17.2	Առկա չէ	17.2	0.25
«Քոնթուր Գլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ		102.1	102.1	1.46
«Արմփաուեր» ՓԲԸ		120	120	1.712
«Էֆարվի Մասրիկ» ՓԲԸ		24.2	24.2	0.35
Ընդամենը	48.9	422.93	453.143	6.38

Ծանոթագրություններ. «Վեոլիա Ջուր» ՓԲԸ մասով «Այլ ՊՊ» սյունակում դիտարկվող պահանջը կազմում է 18.2 մլրդ ՀՀ դրամ, սակայն հիմնվելով նախկինում ունեցած տեղեկատվության վրա՝ այն կարելի նվազեցնել մինչև 13 մլրդ ՀՀ դրամ: «Էֆարվի Մասրիկ» ՓԲԸ պարագայում հիմնվում ենք այն ենթադրության վրա, որ նախքան շինարարական աշխատանքների ավարտը հետ գնման դեպքում այլ փոխհատուցում չի կարող պահանջվել: «Արմփաուեր» ՓԲԸ դեպքում, որի շինարարական ծախսերն արդյունքում ավելի ցածր են եղել, 1 տարին լրանալուց հետո 15 տոկոսի չափով հավելավճարի հաշվարկը դեռևս չի իրականացվել, քանի որ կայանը է շահագործման հանձնվելնախորդ տարվա վերջին: ԱՄՆ դոլարով արտահայտված գումարների փոխարկման համար կիրառվել է 480 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց փոխարժեքը: 2021թ. ՀՆԱ-ն՝ 6,982.8 մլրդ ՀՀ դրամ:

2020թ. վերջին պայմանական պարտավորությունների հանրագումարը ՀՆԱ-ի նկատմամբ կազմում էր ՀՆԱ 8.26%, որի նկատմամբ էական նվազումը բխում է «Արմփաուեր» ՓԲԸ ծրագրի գնահատվածից ավելի ցածր արժեքից և 2021թ. արձանագրված ՀՆԱ նշանակալի վերականգնումից: Բացի այդ կրճատվել է ԱՄՕ ընկերության պարտքը սույն թվականի հունիսին (63.1 մլն ԱՄՆ դոլարից մինչև 40.8 մլն ԱՄՆ դոլար): Այսպիսով պայմանական պարտավորությունների մակարդակը ՀՆԱ-ի նկատմամբ շարունակել է նվազել և այժմ կազմում է 6.38% նախորդ 6.9% ցուցանիշի նկատմամբ:

2021 թվականի հունիսի 18-ի ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է Հայաստանում արդյունաբերական մասշտաբի «Այգ-1» արևային ֆոտովոլտային ծրագրի շրջանակում կազմակերպված մրցույթի ընթացակարգի արդյունքները՝ հաղթող ճանաչելով «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոմփանի» ՀԲԸ («Մասդար»): Ծրագրի իրականացման շուրջ կնքվել է կառավարության աջակցության համաձայնագիր, իսկ ֆինանսական կայացման համար նախապես սահմանված վերջնաժամկետը՝ 2022 թվականի դեկտեմբեր ամիսը, երկարաձգվել է մինչև 270 օրով: Ներկայում ծրագրի իրականացման համար նախատեսված հողամասերում իրականացվում են ուսումնասիրություններ, ինչպես նաև ծրագրի ֆինանսավորման շուրջ բանակցություններ են ընթանում: Նախատեսվում է իրականացնել ընդամենը մոտ 174 մլն ԱՄՆ դոլարի չափով ներդրում (ՀՆԱ-ի մոտ 1.25 %): Ծրագրի նախապատրաստման փուլում կնքվել է համատեղ զարգացման համաձայնագիր «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոմփանի» ՀԲԸ և «Հայաստանի Հետաքրքրությունների ֆոնդ» պետական ՓԲԸ ի միջև, որում պարունակվող պարտավորությունների վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն առկա չէ:

Բնական և մարդածին աղետներից առաջացող ֆիսկալ ռիսկեր

Աղետների ռիսկերը կարող են ունենալ հիմնականում բնական պատճառներ, հատկապես՝ հիդրոօդերևութաբանական (ջրհեղեղներ, կարկտահարություն, ցրտահարություն, երաշտ, փոթորիկ), երկրաֆիզիկական (երկրաշարժ, հրաբխի ժայթքում, սողանք), կենսաբանական (համաճարակներ և պանդեմիաներ, սանիտարական այլ ճգնաժամեր), տիեզերական (հեռահաղորդակցության և էլեկտրաէներգետիկ խափանումների հանգեցնող արեգակնային փոթորիկներ): Սակայն, կարող են լինել նաև այլ պատճառներ, հատկապես՝ տեխնոլոգիական, բնատեխնածին: 1994-2014թթ. բնական աղետների, մասնավորապես՝ ջրհեղեղների, երկրաշարժերի, երաշտի, կարկտահարության, գարնանային ցրտահարության և սելավահոսքերի հետևանքով Հայաստանում արձանագրված վնասները կազմել են ավելի քան 1.5 միլիարդ ԱՄՆ դոլար: Նշված պարբերական և ինտենսիվ շոկերը առաջացնում են վնասներ և կորուստներ՝ վատթարացնելով բնակչության կենսամակարդակը և տնտեսական վիճակը: 1990-ականներից ի վեր միջին ջերմաստիճանն արդեն բարձրացել է 1.2 աստիճանով: Ըստ կլիմայական կանխատեսումների, մինչև 2100թ. երկրում միջին ջերմաստիճանը կարող է բարձրանալ 4.7 աստիճանով, իսկ տեղումների միջին տարեկան քանակը՝ կրճատվել 8.3 տոկոսով (համաձայն «2021-2025թթ. Հարմարվողականության ազգային ծրագրի»):

2019թ. բնական աղետների (կարկտահարություն և ցրտահարություն) հետևանքով վնասվել է 15698 հա ցանքատարածություններ, որոնց հասցված ընդհանուր վնասը կազմել է 9,578 մլն դրամ: 2020թ. բնական աղետների հետևանքով հասցված ընդհանուր վնասը կազմել է 3,631 մլն դրամ: 2021թ. օդերևութաբանական պատահարների հետևանքով գյուղատնտեսությանը հասցված վնասը կազմել է 4,412 մլն դրամ: Իրավիճակը կարող է վատթարանալ առավել խիստ և հաճախակի պատահարների, հատկապես՝ երաշտի, հանգեցնող կլիմայական փոփոխությունների, ինչպես նաև վերջին տասնամյակներում տեղումների քանակի կայուն կրճատման հետևանքով (աղբյուր՝ Կլիմայի փոփոխության չորրորդ ազգային հաղորդագրություն ըստ ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի, 2020թ.): 50-100% տուժած հողօգտագործողներին 2019թ. տրամադրվել է 437.0 մլն դրամ գումարի փոխհատուցում: Հետագա տարիներին տեղի ունեցած բնական աղետների հետևանքով կրած վնասի փոխհատուցում չի նախատեսվել, քանի որ պետական աջակցության միջոցով իրականացվում է գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի

ներդրման փորձնական ծրագիր՝ համաձայն ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 24-ի թիվ 1485-Լ որոշման: Ծրագրի շրջանակներում սուբսիդավորվում է ապահովագրավճարի 50-60 տոկոսը: Գարնանային ցրտահարության, երաշտի, կարկտահարության և հրդեհի ռիսկերից ծրագրի շրջանակներում ապահովագրվում են ծիրանի, խաղողի, դեղձի, խնձորի այգիները, հացահատիկային մշակաբույսերը (աշնանացան/գարնանացան ցորեն, գարի և վարսակ), ինչպես նաև գիլասի, բալի, սալորի այգիները, կարտոֆիլի, ձմերուկի և սեխի մշակաբույսերը (վերջին չորս մշակաբույսերը ծրագրում ընդգրկվել են 2021թ.):

2020թ. գյուղատնտեսական տարվա համար կնքվել են 1546 ապահովագրական պայմանագրեր, ապահովագրավճարը կազմել է շուրջ 130.5 մլն դրամ, որից սուբսիդավորված գումարը՝ 69 մլն դրամ: Կնքված պայմանագրերի արդյունքում ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսը կազմել է 2363.3 հա: Ապահովագրական ընկերությունները վճարել են 151.3 մլն դրամ ընդհանուր գումարով 300 ապահովագրական փոխհատուցումներ: Ցուցանիշներն աճել են 2021թ. գյուղատնտեսական տարվա համար. ապահովագրական ընկերությունները կնքել են 4279 ապահովագրական պայմանագիր, ապահովագրավճարը կազմել է շուրջ 474.6 մլն դրամ, որից սուբսիդավորված գումարը՝ շուրջ 275.9 մլն դրամ: Կնքված պայմանագրերի արդյունքում ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսը կազմել է 5832 հա: Ապահովագրական ընկերությունները վճարել են 319.1 մլն դրամ ընդհանուր գումարով 1517 ապահովագրական փոխհատուցումներ: 2021թ. ՀՀ պետական բյուջեով միջոցառման համար տրամադրված գումարի չափը կազմել է 276 մլն դրամ: 2022թ. նախատեսվող գումարի չափը կազմում է 308 մլն դրամ: Սուբսիդավորման ծրագրին մասնակի աջակցություն է ցուցաբերվում ԲլուՕրչարդ Ֆայնենս ՍՊԸ-ի կողմից կառավարվող Ապահովագրությամբ դիմակայման ներդրումային հիմնադրամի միջոցներով ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրով:

Հաշվի առնելով, որ Հայաստանը մեծապես ենթարկվում է կլիմայի փոփոխության և երկրում, ինչպես և ամբողջ Հարավային Կովկասում, տեղի է ունենում տեղումների քանակի նվազում, ինչպես նաև հաշվի առնելով սահմանակից որոշ երկրների կողմից համատեղ օգտագործվող գետերի վրա ջրամբարների կառուցումը՝ բերքի ապահովագրությունը բավարար չէ: Անբարենպաստ եղանակային պատահարների ազդեցությունը նվազեցնելու համար անհրաժեշտ են հավելյալ ֆիզիկական միջոցառումներ, ինչպիսին են՝ միկրո-ոռոգման բարելավված ձևերը և անձրևաջրերի առավել արդյունավետ տեղայնացված հավաքման նպատակով փոքր ջրամբարների կառուցումը: Հայաստանում գյուղատնտեսությունը կլիմայի փոփոխության ամենամեծ ազդեցությունը կրող ոլորտներից մեկն է, ինչը նշված է ՀՀ կառավարության 2021 թ. մայիսի 13-ի թիվ 749-Լ որոշմամբ հաստատված «2021-2025թթ. Հարմարվողականության ազգային ծրագրում» (ՀԱԾ): Որոշ միջոցառումներ արդեն իրականացվել են, օրինակ՝ ՀԱԾ գործընթացի և կլիմայի փոփոխության հարմարվողականության վերաբերյալ հաղորդակցության և իրազեկման ազգային ռազմավարական մոտեցումների մշակումն և իրականացումը:

Հաշվի առնելով, որ կլիմայի փոփոխությունը հանգեցնում է առավել հաճախակի տեղի ունեցող աղետների, նախատեսվում է ապահովել ծրագրի համահունչությունը Աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության հետ: Վերջինս ներկայում փոփոխության է ենթարկվում ՀՀ կառավարության կողմից՝ հիմնվելով տեղական և միջազգային արդի փորձի վրա, որի շրջանակներում քննարկվում է նաև ՀՀ ԱԻՆթյան կողմից մշակվող նոր գործողությունների ծրագիրը:

Եղանակային պայմանների հետ կապված վտանգներից բացի, Հայաստանը ենթարկվում է նաև այլ ռիսկերի: Հայաստանը նաև մեծապես ենթարկվում է երկրաշարժի ռիսկի՝ ինչպես ցույց է տվել 1988թ. Սպիտակի երկրաշարժը: Երևանի տարածաշրջանը սեյսմագետների կողմից համարվում է բարձր ռիսկի գոտի, մասնավորապես՝ Գառնու խզվածքի պատճառով, և այստեղ առկա է խոշոր, ավերիչ երկրաշարժերի պատմություն: 1988թ. տեղի ունեցած վերջին ավերիչ երկրաշարժի հետևանքով երկրի հյուսիսային շրջաններում պատճառված տնտեսական վնասները կազմել են մոտավորապես 15-20 մլրդ ԱՄՆ դոլար: Նշված վնասները գերազանցում էին նախկին Հայկական ԽՍՀ ՀՆԱ-ն:

Համաձայն աղետների ռիսկի կառավարման վերաբերյալ ԱԶԲ 2014թ. զեկույցի, Երևանում 7.0 բալ ուժգնությամբ երկրաշարժի հետևանքով կարող է զոհվել մինչև 300 հազար մարդ, ինչը պայմանավորված է ոչ համարժեք, խորհրդային ժամանակաշրջանի մեծաթիվ շենքերի, հատկապես՝ խոշոր բազմաբնակարան շենքերի առկայությամբ: Նախնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տնտեսական վնասները կարող են կազմել մինչև ՀՆԱ 100 տոկոսը (Համաշխարհային Բանկ և ԱԶԲ):

2017թ. ապրիլի 8-ին ուժի մեջ է մտել «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունը (ՀՀ ԱԺ, ՀՕ-53-Ն)՝ որպես Աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության ներքո 1-ին գործողությունների ծրագրի մաս:

2016թ. մեկնարկել է «Հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիրը», որը նախատեսված է ավարտել 2024 թվականի մայիս ամսին: Ծրագրին աջակցություն է տրամադրում Ասիական Զարգացման Բանկը (ԱԶԲ): Ծրագրի շրջանակներում ընդգրկված են 46 դպրոցներ, որոնցից 26-ը ենթակա են առաջնահերթ ամրացման կամ փոխարինման նոր կառուցվող դպրոցներով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է անվտանգ կրթական պայմաններ ստեղծել 19800 աշակերտների համար, ինչը կազմում է պետական դպրոցներում սովորող աշակերտների 5%: 2021թ. ՀՀ պետական բյուջեով ծրագրի իրականացման համար օգտագործվել է է 5.5 մլրդ դրամ: 2022թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված է 5.8 մլրդ դրամ:

Կարողությունների զարգացման առումով, համապատասխան նախարարների համատեղ հրամանների շրջանակներում ՀՀ ԱԻՆ Փրկարար ծառայության տարածքային ստորաբաժանումները աղետների ռիսկի կառավարման պլանների մշակման ուղղությամբ մեթոդաբանական աջակցություն են ցուցաբերում հանրակրթական, նախադպրոցական ուսումնական հաստատություններին, նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական հաստատություններին և առողջապահական հաստատություններին: ՀՀ մարզերի և Երևան քաղաքի համար մշակվել են աշխարհագրական ոլորտային քարտեզներ, որոնցում ներկայացված է տեղեկատվություն հրշեջ-փրկարարական ջոկատների տեղակայման վայրերի, սպասարկման տարածքների, ճանապարհային ցանցի, ջրագրության, համայնքային բաժանումների և այլնի վերաբերյալ:

Կենսաբանական վտանգների առումով, ինչպես այլ երկրներում, այնպես էլ ՀՀ-ում, Covid-19 համավարակի տարածումը՝ չնայած վաղ ձեռնարկված միջոցառումներին, տարբեր կասկադային ազդեցությունների միջոցով վերածվեց տնտեսական և սոցիալական ճգնաժամի՝ 2020թ. տեղի ունեցած տնտեսական անկմամբ: Կորոնավիրուսային համավարակի տնտեսական ու սոցիալական հետևանքների չեզոքացման համար 2020թ. և 2021թ. տրամադրվել է, համապատասխանաբար՝ 75.4 մլրդ ՀՀ դրամ և 48.9 մլրդ ՀՀ դրամ: Հաշվի առնելով նաև արտոնյալ վարկերը, ապա ընդհանուր տրամադրված գումարի չափը կազմում է 107 մլրդ և 54.5 մլրդ ՀՀ դրամ, համապատասխանաբար՝ 2020 և 2021թթ. համար: 2022թ. նախատեսվում է հատկացնել 7 մլրդ ՀՀ դրամ:

Պետության դեմ իրականացվող դատական վարույթներից առաջացող ֆիսկալ ռիսկեր

ՀՀ ՖՆ մասնակցությամբ պետության դեմ քննվող հայցերի քանակը 2022թ. ապրիլի դրությամբ կազմում է 938, մոտ 3.3 մլրդ ՀՀ դրամի, 6.6 մլն ԱՄՆ դոլարի (3.2 մլրդ ՀՀ դրամ), 606.4 հազ. եվրոյի (325.5 մլն ՀՀ դրամ) և 3.6 մլն չեխական կրոն (78.6 մլն ՀՀ դրամ) հայցագնով:

Բացի վերը նշված հայցերից, առկա են առավել նշանակալի այլ հայցեր՝ ընդդեմ ՊԵԿ-ի: Ներկայացված հայցերով ՀՀ դատարաններում վիճարկվում է 3891 դատական գործ՝ մոտ 135.3 մլրդ ՀՀ դրամ գումարի չափով:

Միջազգային արբիտրաժային դատարաններում ընդդեմ ՀՀ ներկայացված հայցերի թիվը վեցն է՝ մոտ 152.6 մլրդ ՀՀ դրամ հայցագնով (գնահատված լինելու դեպքում գումարը ներառում է արբիտրաժային ծախսեր և տոկոսներ):

2021-2022թթ. կոմունիկացված ՄԻԵԴ գործերով դիմումատուների թիվը կազմում է 41, իսկ պահանջած գումարները՝ մոտ 2 մլրդ ՀՀ դրամ:

Բոլոր կառույցներում ներկայացված հայցերի հանրագումարը կազմում է մոտ 349 մլրդ ՀՀ դրամ: Նախորդ տարի այն կազմել է 300 մլրդ ՀՀ դրամ:

Անհրաժեշտ է նշել, որ ռիսկի իրական մակարդակը շատ ավելի ցածր է, քանի որ հայցվորները ոչ բոլոր գործերն են հաղթում, իսկ հաղթելու պարագայում վճռով հաճախ սահմանվում են ավելի փոքր գումարներ:

Հնարավոր բնապահպանական ռիսկերի կառավարմանն ուղղված միջոցառումներ և պարտավորությունների գնահատման հետ կապված խնդիրներ

Ընդհանուր առմամբ, բնապահպանական ռիսկերի կառավարման նպատակով առկա է վերջիններիս իրականացման դեպքում հնարավոր տնտեսական և ֆիսկալ վնասների հաշվարկման մեթոդաբանություն: Առանց վերջինիս առկայության ֆիսկալ ռիսկերի գնահատման շրջանակներում բնապահմանական ռիսկերինհնարավոր է անդրադառնալ միայն փաստերի (տվյալ դեպքում,ստորև նշված) արձանագրման միջոցով:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ) քարտեզագրման արդյունքում առկա է մոտ 2500 սողանքային տարածքներ և ներկայում խնդրի լուծման ֆինանսավորման աղբյուր դիտարկվում է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդը: Թունավոր թափոնների տեղամասերի հետ կապված ռիսկերից խուսափելու նպատակով նշված տարածքներում հանքարդյունաբերական գործունեության թույլտվություններ չեն տրամադրվում:

ՇՄՆ նույնականացրել է հնարավոր բնապահպանական պարտավորություններ ենթադրող 44 տեղամասեր, որոնք առաջացել են դեռևս խորհրդային ժամանակաշրջանում,

հիմնականում հանքարդյունաբերական ծագումով: Վերականգնման նպատակով ՇՄՆ կողմից առաջնահերթ են համարվել 10 վայրեր, որից 2019թ. վերականգնել է միայն մեկ տեղամաս, իսկ 2020թ.-2021 թվականին նման աշխատանքներ չեն իրականացվել: 2023-2025 Միջնաժամկետ ծախսային ծրագրով առաջարկվել է իրականացնել ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրոզուրկ տեղամասերի և օբյեկտների ռեկուլտիվացիայի նախագծային փաթեթների մշակման աշխատանքները, սակայն միջոցառումը չի հաստատվել: ՇՄՆ նաև իրականացնում է ջրի խորքային հորերի որակի ուսումնասիրություններ՝ հնարավոր ռիսկերը բացահայտելու նպատակով: Այսպիսի տեղամասերից ծագող հնարավոր պարտավորությունները չափազանց բարդ է նախապես հաշվարկել, սակայն կարևորագույն խնդիրը՝ վերականգնման կարիք ունեցող տեղամասերի նույնականացումն ու մանրակրկիտ ուսումնասիրությունն է՝ ծախսերի նախնական հաշվարկներ կատարելու նպատակով:

Ներկայիս դրությամբ բնապահպանական վերականգման ծախսերի ընդհանուր գնահատված գումարը կազմում է մոտ է 7.8 մլրդ դրամ, սակայն ծախսերը կարող են էականորեն ավելի բարձր լինել ՝ կախված մոտակա տարիների համար պլանավորած փաստացի տարեկան հատկացումների համարժեքությունից:

Մասնավորապես՝

- Սևանա լճի ջրածածկ և ճահճապատ անտառտնկարկների մաքրում: Մաքրման աշխատանքներն ընթանում են սկսած 2005թ.: ՇՄՆ հաշվարկների համաձայն 2021-2023թթ. ժամանակահատվածի համար պահանջվում է 706.0 մլն դրամ, որից 264 մլն դրամը՝ 2021թ.:

- Սևանա լճից մինչև 1901.5 մետր բացարձակ նիշում գտնվող շենքեր-շինությունների քանդման (ապամոնտաժման) աշխատանքներ: Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով քանդման ենթակա են դարձել 68520 մ^2 ընդհանուր մակերեսով 1697 շենքեր և շինություններ: 2021 և 2022թթ. նախատեսվող աշխատանքների մոտավոր արժեքը կազմում է 1.464 մլն դրամ:

- Ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրազուրկ տեղամասերի և օբյեկտների ռեկուլտիվացիայի նախագծային փաթեթների մշակման աշխատանքներ: Սա առնչվում է վերը նշված հին, շրջակա միջավայրն աղտոտող հանքարդյունաբերական և հարակից ոլորտների 44 տեղամասերին, որոնք ներառում են պոչամբարները: Վտանգավոր և առաջնահերթ համարվող 10 տեղամասերի ամբողջական մաքրման և ռեկուլտիվացիայի ծրագրի մոտավոր արժեքը գնահատվել է 2.216 մլն դրամ:

- Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ՝ անկախության ձեռքբերմանը հաջորդած ճգնաժամային տարիների ընթացքում անտառների մասշտաբային հատումների փոխհատուցմանն ու սողանքների ռիսկի կրճատմանն օժանդակելու նպատակով: Այս ուղղությամբ աշխատանքները մեկնարկել են դեռևս 2013թ., սակայն մասշտաբային բնույթ են ստացել 2020թ.՝ հաջորդող տարիների համար սահմանված հավակնոտ և աճող թիրախներով: 2021-2024թթ. ծրագրի համար հաշվարկվել է 3.368 մլն դրամ: Սահմանվել է վերջնական թիրախ՝ ՀՀ անտառածածկ տարածքը մինչև 2050թ. հասցնել ավելի քան 20 տոկոսի, (ենթադրելի է, որ անհրաժեշտ կլինի ներգրավել լրացուցիչ միջազգային ֆինանսավորում) :

Ֆինանսական համակարգից առաջացող ֆիսկալ ռիսկեր

Վերջին տարիների ընթացքում, ՀՀ ԿԲ կողմից վերահսկվող առևտրային բանկերն զգալիորեն կապիտալացվել են և ներկայում ունեն հասանելի կապիտալի և լիկվիդայնության բուֆերներ: Ֆինանսական համակարգը բավականին ամուր է խիստ շոկերի դիմակայելու

տեսանկյունից: ՀՀ տնտեսությունը 2020թ. կրել է միմյանց հաջորդած երկու շոկերի՝ համավարակի և ռազմական դրության ազդեցությունները: Վերջիններս մարտահրավերներ են ստեղծել նաև ֆինանսական համակարգի համար, որոնք էականորեն տարբերվում են նախորդ բոլոր ճգնաժամերի մարտահրավերներից:

2021 թվականի ընթացքում բանկային համակարգի վարկային պորտֆելը նվազել է, որն առավելապես պայմանավորվել է ցածր տնտեսական ակտիվությամբ և վարկային ռեսուրսների համեմատաբար թույլ պահանջարկով: Դրան զուգընթաց գրանցվել է վարկային պորտֆելի որակի բարելավում (Չաշխատող վարկերի կշիռը 6.6% ից իջել է մինչև 3.5%):

Բանկային համակարգի կապիտալի համարժեքության և իրացվելիության ցուցանիշները 2021 թվականի և 2022 թվականի առաջին 5 ամիսների ընթացքում բարելավվել են:

Աղյուսակ 27 ***Բանկային համակարգի ցուցանիշների դինամիկան***

	2020	2021	2022/05
Կապիտալի համարժեքություն (12%)	**16.9**	**17.2**	**18**
Ընդհանուր իրացվելիություն (15%)	**25.6**	**32**	**31.6**
Իրացվելիության ծածկույթի գործակից (100%)	**108.8**	**194.3**	**-**

ԿԲ իրականացրած մակրոպրուդենցիալ քաղաքականությունն ուղղված է եղել համակարգի կողմից տնտեսության վարկավորման անընդհատության պահպանմանը և արտարժութային իրացվելիության բուֆերների հետագա բարելավմանը: Հակացիկլիկ կապիտալի բուֆերը տարվա ընթացքում պահպանվել է 0% մակարդակում, որի համար հիմք են հանդիսացել վարկային շուկայի զարգացումները և ֆինանսական ցիկլի վրա ՀՀ տնտեսության դիրքը:

Հիոթեկային վարկերի բարձր աճը 2021 թ. ընթացքում պահպանվել է՝ 33.6% (2020 թ.՝ 31.5%), ինչը շարունակում է գերազանցապես պայմանավորվել վճարված տոկոսագումարների չափով եկամտահարկի վերադարձի պետական ծրագրի գործոնով: 2021 թ. Կառավարության կողմից եկամտահարկի վերադարձի ծրագրի աստիճանական դադարեցման նախագծի շրջանառումը ևս լրացուցիչ ավելացրել է հիպոտեկային վարկերի նկատմամբ պահանջարկը: Այդ մասին է վկայում նաև անշարժ գույքի կառուցապատման հիպոտեկային թույլտվությունների քանակի 39.2%-ով աճը:

Ստորև ներկայացվում են Երևան քաղաքում բնակարանների միջին գների դինամիկան 01/2002-07/2022 թթ. ընթացքում.

Գծապատկեր 6 ***Երևան քաղաքում բնակարանների մեկ ք. մ. միջին արժեքը.***
Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե



Ռուս-ուկրաինական ռազմաքաղաքական հակամարտությունը և ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները աննախադեպ մեծ անորոշություններ են ստեղծել ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածաշրջանի ֆինանսատնտեսական զարգացումների առումով: Համաշխարհային տնտեսության վրա անբարենպաստ ազդեցությունները մեծապես կախված կլինեն ինչպես ռազմական գործողությունների, այնպես էլ կիրառված պատժամիջոցների տևականությունից:

ՀՀ տնտեսական աճի և ֆինանսական համակարգի զարգացումների վրա հնարավոր ազդեցություն ունեցող ռիսկերն ածանցվում են համաշխարհային և տարածաշրջանի մակրոտնտեսական հեռանկարից և դրա հետ կապված անորոշություններից: Ստեղծված իրավիճակում՝ անորոշությունների բարձր մակարդակի և ՀՀ տնտեսական ակտիվության վրա հնարավոր անբարենպաստ ազդեցությունների հետևանքով ֆինանսական համակարգում հնարավոր են վարկային ռիսկի աճի դրսևորումներ: Հարկ է նշել, որ ներկայումս ՀՀ ֆինանսական համակարգը բնութագրվում է իրացվելիության և կապիտալի բարձր մակարդակով և ունակ է ապահովելու ֆինանսական միջնորդության գործառույթի բնականոն ընթացքը:

2021թ. կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերությունը, նախորդ տարիների համեմատությամբ, էապես նվազել է՝ հիմնականում պայմանավորված պետական պարտատոմսերում ներդրումների վերագնահատումներով: 2021 թ. կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը (ԶԱԱ) ավելացել է 31%-ով: ԶԱԱ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 6.9%՝ աճելով 0.9 տոկոսային կետով: Թեև ԶԱԱ տարեկան աճի տեմպն ունի նվազման միտում, այնուամենայնիվ, պայմանավորված ներկայումս միայն հատկացումների իրականացմամբ, ֆոնդերի աճը շարունակելու է բարձր մնալ:

Ֆոնդերի եկամտաբերությունը կազմել է 2.6%, որը 6.9 տոկոսային կետով ցածր է նախորդ 3 տարվա միջին ցուցանիշից: Եկամտաբերության նվազումը հիմնականում պայմանավորված է շուկայական տոկոսադրույքների աճի հետևանքով ֆոնդերի ակտիվներում ներառված պարտատոմսերի վերագնահատված արժեքի նվազմամբ: Եկամտաբերության ցուցանիշի վրա բացասաբար է անդրադարձել նաև տարեսկզբի համեմատությամբ ՀՀ դրամի փոխարժեք արժևորումը, որի արդյունքում արտարժույթով ներդրումների՝ դրամով

արտահայտված համարժեքը նվազել է: 2014 թվականից ֆոնդերի կուտակային աճը կազմել է 91.8%, իսկ միջին տարեկան եկամտաբերությունը՝ 8.5%:[31]
2022 թվականի ընթացքում 2021թ. տարեվերջի նկատմամբ կենսաթոշակային ֆոնդերի ՁԱԱ-ն ավելացել է 5.8%-ով, իսկ եկամտաբերությունը կազմել է -6.9% (հաշվարկված փայի հաշվարկային արժեքով):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կուտակային կենսաթոշակների մասին ՀՀ օրենքի Հոդված 44-ի 1-ին կետով սահմանվում է, որ ՀՀ-ն երաշխավորում է կուտակային հատկացումների վերադարձելիությունը մասնակցին՝ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն կատարված սոցիալական վճարների՝ տարեկան գնաճով ճշգրտված չափով, ֆոնդերի ցուցաբերած եկամտաբերության ցածր մակարդակը, համաշխարհային տնտեսությունում և մասնավորապես՝ ՀՀ-ում գրանցված գնաճային ճնշումների առկայության պարագայում կարող է երկարաժամկետ կտրվածքում ստեղծել կենսաթոշակային հատկացումների՝ վերը նշված կարգով երաշխավորումից բխող ֆիսկալ կայունությանն առչնվող ռիսկեր: Չնայաց նրան, որ ԿԲ-ի կանխատեսումների համաձայն 12-ամսյա գնաճն աստիճանաբար կնվազի և 2023 թ. երկրորդ կեսից կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ[32], օգոստոսի դրությամբ գնաճը կազմել է 9.1%:[33]

[31] ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության 2021 հաշվետվություն
[32] https://www.cba.am/AM/pperiodicals/Monetary%20overview_II_2022.pdf
[33] https://www.cba.am/am/SitePages/Default.aspx

5. 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.

Արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականություն մշակելու և իրականացնելու տեսանկյունից հարկային ծախսերի գնահատականը խիստ կարևոր է, քանի որ հարկային ծախսերի գնահատմամբ ամբողջականացվում է պետության կողմից իրականացվող՝ եկամուտների վերաբաշխման գործառույթի շրջանակներն ու արդյունավետությունը:

Հարկային ծախսերի գնահատականի վերաբերյալ տեղեկատվությունը թափանցիկ և շահառուների տարբեր խմբերի համար հասանելի դարձնելու նպատակով, որոշ երկրներ այդ տեղեկատվությունը ներառում են առաջիկա տարվա համար մշակվող բյուջեի բացատրագրում:

ՀՀ-ում առաջին անգամ հարկային ծախսերի մեծությունը գնահատվել է 2015թ. համար, որը ներառվել է «2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի բացատրագրում՝ որպես առանձին հավելված:

Հարկային ծախսերը.

ՀՀ գործող օրենսդրությամբ «Հարկային ծախս» հասկացությունը սահմանված չէ: Բովանդակային առումով, հարկային ծախսերը գործող հարկային արտոնությունների հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտներն են կամ այդ եկամուտների չափով պետության կրած այլընտրանքային ծախսերն են, քանի որ հարկային ծախսերը հանգեցնում են համապատասխան գումարի չափով բյուջետային ծախսերի կրճատման: Ընդ որում, ի տարբերություն պետական բյուջեի ծախսերի, որոնք ենթակա են խորքային վերլուծության, մոնիտորինգի ու հսկողության, հարկային ծախսերը հաճախ պատշաճ ձևով չեն վերահսկվում: Արդյունքում, նվազում է հանրային ֆինանսների կառավարման արդյունավետությունն ու թափանցիկությունը, սահմանափակվում են պետության վերաբաշխիչ գործառույթի շրջանակները: Այդ իսկ պատճառով հարկային ծախսերի պարբերաբար գնահատումը հանգուցային նշանակություն ունի պետության հարկաբյուջետային քաղաքականության տեսանկյունից:

Հաշվետվությամբ ընդգրկվող ժամանակահատվածը, հարկային ծախսերի գնահատման համար օգտագործված տեղեկատվությունը և ընտրված մեթոդաբանությունը.

Սույն հաշվետվությամբ գնահատված են 2023 թվականի հաշվետու տարվա հարկային ծախսերը:

Գնահատման համար տեղեկատվական հիմք են հանդիսացել 2021 թվականի հաշվետու տարվա համար ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված հիմնական մակրոտնտեսական տվյալները, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված հաշվետվությունների տվյալները, որոնք ենթարկվել են որոշակի ճշգրտումների՝ կապված 2023 թվականի համար կանխատեսվող համապատասխան տվյալների հետ:

Հաշվետվության մեթոդաբանության հիմքում դրված են ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքի (հարկունակ և ոչ հարկունակ մասերի) ուսումնասիրության մակրոտնտեսական մոտեցումները, 2021 թվականին վերաբերող ԱԱՀ-ի, շահութահարկի և շրջանառության հարկի հաշվարկներով՝

ԱԱՀ-ի, շահութահարկի և եկամտային հարկի արտոնությունների, ինչպես նաև ԱԱՀ-ով հարկվող շեմի ուսումնասիրության արդյունքները:

Հաշվետվության կազմման համար ընտրվող մեթոդաբանության տեսանկյունից շատ կարևոր է նաև «Հարկային ծախս» հասկացության հստակ սահմանումը և հարկային ծախսերի շրջանակի ճիշտ որոշումը: Այս առումով, հատկանշական է այն, որ գործող հարկային օրենսդրությամբ նախատեսված՝ հարկման արտոնյալ պայմաններ ենթադրող ոչ բոլոր կարգավորումները կարելի է դիտարկել որպես հարկային ծախսեր (օրինակ՝ եկամտային հարկով հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող եկամուտները)՝ անգամ եթե դրանց կիրառության արդյունքում կրճատվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարվող հարկերը: Հարկային ծախսերի շրջանակի որոշման համար հաշվի է առնվել «Հենանիշային հարկ» հասկացությունը, որն իրենից ներկայացնում է հարկերի այն հանրագումարը, որը կվճարվեր պետական բյուջե տնտեսության մեջ ձևավորվող ողջ հարկման բազան հարկելու պարագայում: Այս համատեքստում հարկային ծախսերը որոշվել են որպես հենանիշային հարկերի և փաստացի պետական բյուջե վճարվող հարկերի տարբերություն: Հարկային ծախսերի գնահատումը՝ որպես հենանիշային հարկերի ու պետական բյուջե փաստացի գանձվող հարկերի տարբերություն, ընդունված մոտեցում է նաև միջազգային պրակտիկայում: Ընդ որում, հատկանշական է այն, որ միջազգային պրակտիկայում հենանիշային հարկերի կամ այլ կերպ ասած՝ հարկային նշաձողի միասնական կամ սպառիչ սահմանում չկա: Երկրների մի մասում, օրինակ, հարկային ծախսերը սահմանվում են որպես օրենսդրությամբ նախատեսված դրույթներ, որոնց կիրառությունը հանգեցնում է պետական եկամուտների կրճատման հարկային նշաձողի կամ նորմի (այսինքն՝ հարկի հաշվարկման հիմնական սկզբունքի) կիրառության համեմատությամբ: Հարկային ծախսերի սահմանման ընդհանուր սկզբունքն այն է, որ դրանք ունեն սահմանափակ կիրառության շրջանակ: Օրենսդրության այնպիսի դրույթներ, որոնցից կարող է օգտվել հարկ վճարողների մեծամասնությունը, դիտվում են որպես ընդհանուր կանոնի՝ հարկային նորմի մաս և չեն որակվում որպես հարկային ծախսեր: Կան երկրներ, որտեղ ընդհանրապես հարկային ծախսերի կամ հենանիշային հարկի կամ հարկային նշաձողի սահմանումներ չկան: Այս երկրներում, օրենսդրության առանձնահատուկ դրույթները (օրինակ, ազատումներ կամ հարկման նվազեցված դրույքաչափեր) դիտվում են որպես բազային հարկային համակարգի մաս, այլ ոչ թե որպես հարկային ծախս: Ընդհանուր առմամբ, ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ազատումները երկրների այս խմբում չեն դիտարկվում որպես հարկային ծախսեր: Երրորդ խումբ երկրներում հարկային ծախսերը սահմանվում են որպես հարկային համակարգի առանձին դրույթներ, որոնք նվազեցնում են տնտեսական միավորի հարկային պարտավորությունները՝ որոշակի քաղաքականության նպատակներին հասնելու և ոչ թե առավել արդյունավետ և տնտեսապես չեզոք եղանակով եկամուտներ ստանալու նպատակով:

Հաշվետվության շրջանակներում գնահատվել են ԱԱՀ-ին, շահութահարկին և եկամտային հարկին վերաբերող հիմնական (ընդգրկուն) հարկային արտոնությունների, ԱԱՀ-ի չհարկվող շեմի և միկրոբիզնեսի կիրառության հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտները: Այսինքն՝ սույն հաշվետվությամբ տրվել է արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ հարկային ծախսերի նվազագույն գնահատականը, որի ընդգրկման շրջանակների սահմանափակ լինելը հիմնականում պայմանավորված է հարկային ծախսերի առանձին տեսակների գնահատման համար անհրաժեշտ տվյալների բացակայությամբ:

Հարկային ծախսերի մասին հաշվետվությունների կազմման ու ներկայացման միջազգային փորձը.

Հարկային ծախսերի մասին հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը ընդունված ու տարածված գործելակերպ է Եվրոպական Միության ու Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ երկրների մեծ մասում:

Հարկային ծախսերի վերաբերյալ առաջին հաշվետվությունները կազմվել են 1960-ական թվականների վերջերին Գերմանիայում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում: 1970-ական թվականների վերջին հարկային ծախսերի մասին հաշվետվություններ սկսեցին կազմվել նաև Ավստրիայում, Կանադայում, Իսպանիայում և Միացյալ Թագավորությունում:

Հարկային ծախսերի տարեկան հաշվետվությունները կազմվում և հրապարակվում են հարկային արտոնությունների կիրառության արդյունքում չգանձվող հարկային եկամուտների մեծությունը ուշադրության կենտրոնում պահելու, հարկային արտոնությունների շրջանակի վերանայման վերաբերյալ քաղաքական որոշումներ կայացնելու, ինչպես նաև հարկաբյուջետային քաղաքականության թափանցիկությունն ու Կառավարության հաշվետվողականությունն ապահովելու նպատակով:

Ավստրիայում, Բելգիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Պորտուգալիայում, Իսպանիայում և Միացյալ Թագավորությունում հարկային ծախսերի մասին հաշվետվությունների կազմումն ու հրապարակումը կարգավորվում է օրենքով: Նշյալ հաշվետվությունները ուղղակիորեն կապված են պետական բյուջեի հետ, իսկ դրանց կազմումը բյուջետային գործընթացի կարևոր բաղկացուցիչներից է:

Հարկային ծախսերի մասին հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը հիմնականում կատարվում է տարեկան պարբերականությամբ, թեև կան երկրներ, որոնք այս հաշվետվությունները կազմում և ներկայացնում են երկու կամ երեք տարին մեկ անգամ:

Հարկային ծախսերի մասին հաշվետվության կազմման ու ներկայացման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում.

Սույն փաստաթուղթը ՀՀ-ում իրականացվող բյուջետային գործընթացի շրջանակներում հարկային ծախսերի գնահատման իններորդ հաշվետվությունն է: Թեև մեր երկրի օրենսդրությամբ հարկային ծախսերի մասին հաշվետվություն կազմելու և ներկայացնելու պահանջ նախատեսված չէ, այդուհանդերձ կարևորելով այսպիսի փաստաթղթերի դերը հանրային ֆինանսների կառավարման թափանցիկության անհրաժեշտ մակարդակի ապահովման գործում՝ Կառավարությունը մտադիր է հարկային ծախսերի մասին ամենամյա հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը դարձնել բյուջետային գործընթացի կարևոր բաղկացուցիչ:

Մյուս կողմից, հարկային ծախսերի մասին այսպիսի փաստաթղթի կազմումը հնարավորություն կընձեռի առավել համապարփակ ձևով գնահատել գործող հարկային արտոնությունների արդյունավետությունը, դրանց հետագա կիրառության նպատակահարմարությունը կամ հարկային արտոնությունները կրճատելու հնարավորություններն ու սահմանափակումները:

Բացի այդ, հարկային ծախսերի գնահատմամբ Կառավարությունը ընդհանրացնում է երկրի ռեսուրսային ներուժի վերաբերյալ պատկերացումները, ինչը շատ կարևոր է՝ գնահատելու համար Կառավարության առջև դրված համակարգային խնդիրների լուծման եղանակները:

Հարկային ծախսերի հաշվետվության ներկայացման կարևորությունը հարկային արտոնությունների շրջանակը վերանայելու տեսանկյունից.

Հայաստանյան հարկային համակարգի ձևավորման ու զարգացման ողջ ընթացքում հարկային օրենսդրությամբ նախատեսված են եղել տարբեր հարկային արտոնություններ, որոնց շրջանակը հարկային քաղաքականության իրականացման տարբեր փուլերում, կախված տնտեսության զարգացման տեմպերից, առաջնահերթություններից ու մարտահրավերներից, մշտապես վերանայվել է: Որոշ հարկային արտոնություններ ժամանակավոր բնույթ են ունեցել (օրինակ՝ օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտ կազմակերպությունների՝ շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունը) և կողմնորոշված են եղել քաղաքականության իրականացման որևէ ժամանակահատվածում կոնկրետ խնդիրների լուծմանը: Որոշ հարկային արտոնություններ, որոնք տրվել են դեռևս հարկային համակարգի ձևավորման ամենավաղ փուլերում, շարունակվում են կիրառվել մինչև այժմ, քանի որ դրանց կիրառության պատճառներն ու հիմնավորումները արդիական են նաև մեր օրերում (օրինակ՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտների համար նախատեսված՝ շահութահարկից ու եկամտային հարկից ազատման արտոնությունները):

Ընդհանուր առմամբ, ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս հարկային օրենսդրությամբ նախատեսված հարկային արտոնությունները կարելի է խմբավորել երեք հիմնական խմբերում՝

1) սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնություններ,

2) ոլորտային հարկային արտոնություններ,

3) գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ու ակտիվության բարձրացմանն ուղղված հարկային արտոնություններ:

Սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնությունների կիրառության հիմնական նպատակը առողջապահական, կրթական ու գիտական նշանակության որոշ ծառայությունների մատուցումն ու ապրանքների մատակարարումը ԱԱՀ-ից ազատելն է, ինչը, այլ հավասար պայմաններում հնարավորություն է ընձեռում նշյալ ապրանքներն ու ծառայությունները ձեռք բերել համեմատաբար ցածր գներով:

Ոլորտային հարկային արտոնությունների կիրառությունը պայմանավորված է հիմնականում ազգային տնտեսության երկարաժամկետ և կայուն զարգացման տեսանկյունից տնտեսության որոշ ոլորտների զարգացման գերակայություն համարելը: Դրանք հիմնականում այն ոլորտներն են, որոնք ավանդաբար ձևավորել են ազգային տնտեսության նկարագիրը (ոսկերչություն, զբոսաշրջություն, գորգագործություն և այլն): Այս առումով, Կառավարությունը տարբեր գործիքներով (այդ թվում՝ հարկային արտոնությունների կիրառությամբ) օժանդակում է այդ ոլորտներում գործող տնտեսավարող սուբյեկտներին,

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ու ակտիվության բարձրացմանն ուղղված հարկային արտոնությունների կիրառության հիմնական նպատակը տնտեսավարող սուբյեկտների համար առավել նպաստավոր հարկային միջավայրի ձևավորումը և ազգային տնտեսության մրցունակության բարձրացումն է:

Վերոնշյալ հարկային արտոնությունների կիրառության հետևանքով առաջացող՝ հարկային եկամուտների կորստի՝ հարկային ծախսերի գնահատման հաշվետվությունների կազմումը, ներկայացումը և գործադիր ու օրենսդիր իշխանության մարմիններում դրանց քննարկումը կարևոր քայլ է հարկային արտոնությունների շրջանակի հնարավոր վերանայման քաղաքականության իրականացման ճանապարհին:

Այս իմաստով, առաջիկա տարիներին հարկային ծախսերի նման գնահատականները հիմք են հանդիսանալու հարկային արտոնությունների շրջանակի վերանայման, հարկման

բազայի ընդլայնման ու ամրապնդման քաղաքականություն իրականացնելու համար, ինչը հնարավորություն կընձեռի աստիճանաբար բարելավել հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը և ամրապնդել հարկման հորիզոնական արդարության սկզբունքը: Հարկային քաղաքականության այս ուղղության նպատակը, ըստ էության, հարկման ոլորտում խտրականությունը նվազագույնի հասցնելը և պետական բյուջեի հարկային եկամուտների արդարացի վերաբաշխում ապահովելն է:

Միաժամանակ, ակնհայտ է, որ գործող արտոնությունների շրջանակի վերանայումը կնշանակի կտրուկ փոփոխել այդ արտոնություններից օգտվողների ձեռնարկատիրական ու տնտեսական գործունեության պայմանները և ազգային տնտեսության ներդրումային միջավայրն ընդհանրապես: Այս առումով, հարկային արտոնությունների շրջանակի վերանայումը պետք է իրականացվի բավարար զգուշավորությամբ՝ խուսափելու համար հնարավոր ցնցումներից ու տնտեսության վրա բացասական հետևանքներից, և հետևողականությամբ, քանի որ հարկային արտոնությունների շրջանակի վերանայումը լրացուցիչ ռեսուրսներ կենտրոնացնելու և դրանք տնտեսության հետագա զարգացմանն ուղղելու հնարավորություն կընձեռի: Մասնավորապես, նախքան հարկային արտոնությունների կրճատումը պետք է մանրամասն ուսումնասիրվեն գործող հարկային արտոնությունների կիրառության բոլոր դրական ու բացասական կողմերը, այդ թվում՝ ինչպես պետության, այնպես էլ այդ արտոնություններից օգտվողների տեսանկյունից, համադրվեն արտոնությունների կիրառության օգուտներն ու վնասները, բացահայտվեն արտոնությունների վերանայման հնարավոր ազդեցությունները պետական բյուջեի հարկային եկամուտների, ազգային տնտեսության տնտեսական ակտիվության, գործարար ու ներդրումային գրավչության, երկրի սոցիալ-տնտեսական վիճակի, տնտեսական մրցակցության, գնաճային ճնշումների և այլ կարևոր ցուցանիշների վրա: Վերոնշյալը նաև նշանակում է, որ առաջիկա տարիներին հարկային քաղաքականության շրջանակներում շեշտադրումը կատարվելու է հատկապես այն արտոնությունների վերանայման վրա, որոնց ազդեցությունն ազգային տնտեսության զարգացման տեսանկյունից գնահատվում է ցածր և որոնց կիրառության նպատակահարմարությունը չի հիմնավորվում «ծախսեր-օգուտներ» վերլուծությունների արդյունքներով: Այսինքն, բոլոր այն հարկային արտոնությունները, որոնց կիրառության արդյունքում սպառողների ու տնտեսավարող սուբյեկտների համար ստեղծվող «օգուտները» համարժեք չեն պետության կրած «ծախսերին» (պետության կորցրած հարկային եկամուտներին), պետք է աստիճանաբար կրճատվեն: Քաղաքականության այսպիսի մոտեցումը հիմնավորվում է ֆինանսական ռեսուրսներ կենտրոնացնելու՝ պետության սահմանափակ ներուժն առավել արդյունավետ և առավել հասցեական ձևով օգտագործելու նպատակադրումով, քանի որ հարկային արտոնությունների տրամադրմամբ, պետությունը, ըստ էության, զրկվում է լրացուցիչ հարկային եկամուտներ հավաքագրելու և զարգացման, սոցիալական, բնապահպանական, առողջապահական կամ այլ հանրօգուտ նպատակներով լրացուցիչ ծրագրեր իրականացնելու հնարավորություններից: Արդյունքում պետության կարևորագույն գործառույթներից մեկը՝ եկամուտների վերաբաշխման գործառույթը, ամբողջությամբ և հասցեական ձևով չի իրականացվում:

Հարկային ծախսերի գնահատականները ըստ հարկատեսակների ու արտոնությունների հիմնական տեսակների.

Սույն հաշվետվությամբ ներկայացված է հարկային արտոնությունների հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտների մակրոտնտեսական

գնահատականը՝ տնտեսության այն ոլորտների մասով, որոնք օգտվում են հարկային արտոնություններից: Միաժամանակ, գնահատվել են մի քանի այլ հարկային արտոնությունների (ոչ ոլորտային նշանակության) կիրառության հետևանքով պետական բյուջեի հարկային եկամուտների կորուստները: 2023 թվականի հարկային ծախսերի գնահատականը ներառում է նաև ԱԱՀ-ի հաշվարկով արտացոլված մի շարք այլ հարկային արտոնությունների գնահատականները:

Գնահատման արդյունքների համաձայն, հարկային ծախսերի տարեկան մեծությունը կազմել է 584,763 մլն. դրամ, ինչը 81,461 մլն. դրամով կամ 16.2 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: ԱԱՀ-ի գծով հարկային ծախսերը գնահատվել են 409,934 մլն. դրամ, ինչը 46,638 մլն. դրամով կամ 12.8 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: Շահութահարկի գծով հարկային ծախսերը գնահատվել են 81,464 մլն. դրամ, ինչը 2,534 մլն. դրամով կամ 3.2 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: Եկամտային հարկի գծով հարկային ծախսերը գնահատվել են 93,365 մլն. դրամ, ինչը 32,289 մլն. դրամով կամ 52.9 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը:

I. ԱԱՀ-ի գծով հարկային ծախսերը.

ԱԱՀ-ի գծով հարկային ծախսերի մեծությունը տնտեսության տարբեր ոլորտների ու առանձին հարկային արտոնությունների միջև բաշխվում է հետևյալ կերպ.

1) գյուղատնտեսություն՝ 17,693 մլն. դրամ,

2) առողջապահություն՝ 86,208 մլն. դրամ,

3) կրթություն՝ 35,308 մլն. դրամ,

4) ֆինանսներ և ապահովագրություն՝ 103,696 մլն. դրամ,

5) խաղատների գործունեություն, շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպում՝ 63,433 մլն. դրամ,

6) ոսկու և թանկարժեք քարերի իրացում՝ 1,701 մլն. դրամ,

7) մարդասիրական օգնություն՝ 6,889 մլն. դրամ,

8) պարարտանյութերի իրացում՝ 5,784 մլն. դրամ,

9) ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի օտարում՝ 1,501 մլն. դրամ,

10) սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարում, աշխատանքի կատարում և (կամ) ծառայության մատուցում՝ 719 մլն. դրամ,

11) ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցում, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարում, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարում՝ 352 մլն. դրամ,

12) օրենսգրքով սահմանված վերը չնշված այլ արտոնություններ՝ 4,436 մլն. դրամ*

13) այլ օրենքներով տրված արտոնություններ՝ 2,961 մլն. դրամ:

* *ԱԱՀ-ի գծով հարկային ծախսերի մեծությունը գնահատելիս՝*

• ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառությունը չի դիտվել որպես հարկային ծախս, քանի որ այն հիմնականում կիրառվում է արտահանվող ապրանքների իրացման գործարքների համար, որոնց մասով ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառությունը միջազգային պրակտիկայում ընդունված մոտեցում է, և հետևաբար, այդ գործարքներից ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունը չի կարող համարվել հենանիշային հարկ,

• հաշվարկներում չեն ներառվել նաև ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքների մասով մաքսային մարմինների կողմից հաշվարկվող ԱԱՀ-ի գումարները, որոնց վճարման ժամկետը հետաձգվում է օրենքով սահմանված համապատասխան ժամկետներով՝ հաշվի առնելով այն, որ ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետի հետաձգումը միայն ժամանակային ազդեցություն է ունենում պետական բյուջեի հարկային եկամուտների մեծության վրա,

• հաշվարկներում չեն ներառվել նաև այն ապրանքների ներմուծման համար ԱԱՀ-ի հաշվարկային գումարները, որոնք ներառված են «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ԱԱՀ-ից» ՀՀ օրենքով հաստատված ցանկում, քանի որ այդ ապրանքների մասով, տնտեսական գործունեության հետագա փուլերում կարող են ձևավորվել ավելացված արժեքով հարկման բազաներ, որոնցից ԱԱՀ-ը հաշվարկվում և վճարվում է օրենքով սահմանված կարգով:

Այսպիսով, 2023 թվականի ԱԱՀ-ի գծով գնահատված հարկային ծախսերը կազմում են 409,934 մլն. դրամ:

Տրված գնահատականում ներառված է նաև ԱԱՀ-ի շեմի կիրառության հետևանքով ԱԱՀ-ի գծով հարկային եկամուտների հաշվարկային կորուստը, որը սույն հաշվետվությունում ներկայացվում է առանձին գնահատմամբ և կազմում է 60,418 մլն. դրամ, ինչպես նաև միկրոբիզնեսին տրված հարկային արտոնությունների մասով ԱԱՀ-ի գծով հարկային եկամուտների հաշվարկային կորուստը, որը սույն հաշվետվությունում ներկայացվում է առանձին գնահատմամբ և կազմում է 18,836 մլն. դրամ:

II. Շահութահարկի գծով հարկային ծախսեր.

Շահութահարկի գծով հարկային ծախսերը գնահատվել են 81,464 մլն. դրամի չափով*: Շահութահարկի գծով հարկային արտոնությունները գնահատվել են հետևյալ հիմնական ուղղություններով.

1) գյուղատնտեսություն՝ 45,684 մլն. դրամ, այդ թվում՝ կազմակերպությունների շահույթից՝ 2,748 մլն. դրամ, և ԱՁ-ների (ֆիզիկական անձանց) շահույթից՝ 42,936 մլն. դրամ,

2) հարկվող շահույթի նվազեցման արտոնություններ, բացառությամբ՝ գյուղատնտեսության՝ 5,431 մլն. դրամ,

3) շահութահարկի նվազեցման արտոնություններ՝ 56 մլն. դրամ,

4) ԱԱՀ-ի շեմ՝ 21,750 մլն. դրամ,

5) միկրոբիզնես՝ 6,781 մլն. դրամ,

6) SS ոլորտի արտոնություններ՝ 1,761 մլն. դրամ:

**Մինչև 2020 թվականը հարկային ծախսերի գնահատականներում ԱՁ-ների (ֆիզիկական անձանց) շահույթի գծով հարկային ծախսերը ներառված էին եկամտային հարկի բաժնում:*

III. Եկամտային հարկի գծով հարկային ծախսեր.

Եկամտային հարկի գծով հարկային ծախսերը գնահատվել են 93,365 մլն. դրամի չափով: Եկամտային հարկի գծով հարկային արտոնությունները գնահատվել են հետևյալ հիմնական ուղղություններով.

1) գյուղատնտեսություն՝ 17,155 մլն. դրամ,

2) միկրոբիզնես՝ 7,651 մլն. դրամ,

3) SS ոլորտի արտոնություններ՝ 4,444 մլն. դրամ,

4) Հիպոտեկային վարկերի տոկոսների սպասարկման համար վերադարձված եկամտային հարկ՝ 64,115 մլն. դրամ:

IV. ԱԱՀ-ի շեմի գծով հարկային ծախսերը.

ԱԱՀ-ի շեմի գծով հարկային ծախսերը գնահատվել են 82,168 մլն. դրամի չափով*, այդ թվում՝

ԱԱՀ՝ 60,418 մլն. դրամ,

Շահութահարկ՝ 21,750 մլն. դրամ:

**ԱԱՀ-ի շեմի գծով հարկային ծախսերի գնահատման համար ԱԱՀ-ի շեմն ընդունվել է 115.0 մլն. դրամ:*

V. Միկրոբիզնեսի գծով հարկային ծախսերը.

Միկրոբիզնեսի գծով հարկային ծախսերը գնահատվել են 33,268 մլն. դրամի չափով, այդ թվում՝

ԱԱՀ՝ 18,836 մլն. դրամ,

Շահութահարկ՝ 6,781 մլն. դրամ,

Եկամտային հարկ՝ 7,651 մլն. դրամ:

Ընդհանուր հարկային ծախսը գնահատվել է 584,763 մլն. դրամի չափով, ինչը 2023-2025 թվականների ՄԺԾԾ-ով 2023 թվականի համար կանխատեսված հարկային եկամուտների և ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է համապատասխանաբար՝ 26,87 և 6.45 տոկոս:

Վերլուծության ամփոփ արդյունքները ներկայացված են ստորև.

մլն. դրամ

Հ/Հ	Հարկային ծախսերի տեսակը	Հարկային ծախսերի չափը	Կշիռը հարկային եկամուտների մեջ	Կշիռը ՀՆԱ-ի մեջ
1	**ԱԱՀ-ի գծով, այդ թվում՝**	**409,934**	***18.60%***	***4.40%***
1.1.	*գյուղատնտեսություն*	17,693	*0.80%*	*0.19%*
1.2.	*առողջապահություն*	86,208	*3.91%*	*0.93%*
1.3.	*կրթություն*	35,308	*1.60%*	*0.38%*
1.4.	*ֆինանսներ և ապահովագրություն*	103,696	*4.71%*	*1.11%*
1.5.	*ԱԱՀ-ի շեմ*	60,418	*2.74%*	*0.65%*
1.6.	*խաղատների գործունեություն, շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպում*	63,433	*2.88%*	*0.68%*
1.7.	*ոսկու և թանկարժեք քարերի իրացում*	1,701	*0.08%*	*0.02%*

1.8.	*մարդասիրական օգնություն*	6,889	*0.31%*	*0.07%*
1.9.	*պարարտանյութերի իրացում*	5,784	*0.26%*	*0.06%*
1.10.	*ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի օտարում*	1,501	*0.07%*	*0.02%*
1.11.	*սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարում, աշխատանքի կատարում և (կամ) ծառայության մատուցում*	719	*0.03%*	*0.01%*
1.12.	*ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցումը, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարումը, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարում*	352	*0.02%*	*0.00%*
1.13.	*Օրենսգրքով սահմանված վերը չնշված այլ արտոնություններ*	4,436	*0.20%*	*0.05%*
1.14.	*այլ օրենքներով տրված արտանություններ*	2,961	*0.13%*	*0.03%*
1.15.	*Միկրոբիզնես*	18,836	*0.85%*	*0.20%*
2	**Շահութահարկի գծով, այդ թվում՝**	**81,464**	***3.70%***	***0.87%***
2.1.	*գյուղատնտեսություն, այդ թվում՝*	45,684	*2.07%*	*0.49%*
2.1.1.	*կազմակերպությունների շահույթից*	2,748	*0.12%*	*0.03%*
2.1.2.	*Ա/Ձ-ների (ֆիզիկական անձանց) շահույթից*	42,936	*1.95%*	*0.46%*
2.2.	*հարկվող շահույթի նվազեցման արտոնություններ, բացառությամբ՝ գյուղատնտեսության*	5,431	*0.25%*	*0.06%*
2.3.	*շահութահարկի նվազեցման արտոնություններ*	56	*0.00%*	*0.00%*
2.4.	*ԱԱՀ-ի շեմ*	21,750	*0.99%*	*0.23%*
2.5.	*Միկրոբիզնես*	6,781	*0.31%*	*0.07%*

2.6.	*ՏՏ ոլորտի արտոնություններ*	1,761	*0.08%*	*0.02%*
3	**Եկամտային հարկի գծով, այդ թվում՝**	**93,365**	***4.24%***	***1.00%***
3.1.	*գյուղատնտեսության ոլորտի աշխատողների աշխատավարձ*	17,155	*0.78%*	*0.18%*
3.2.	*Միկրոբիզնես*	7,651	*0.35%*	*0.08%*
3.3.	*Հիպոտեկային վարկերի տոկոսների սպասարկման համար վերադարձված եկամտային հարկ*	64,115	*2.91%*	*0.69%*
3.4.	*ՏՏ ոլորտի արտոնություններ*	4,444	*0.20%*	*0.05%*
Ընդամենը		**584,763**	***26.54%***	***6.28%***

*2022թ. գնահատված հարկային ծախսերը կազմել են 503,301 մլն. դրամ, ինչը 2022թ. պետական բյուջեի հիմքում դրված հարկային եկամուտների և անվանական ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է համապատասխանաբար՝ 27.30 և 6.40 տոկոս: Վերոգրյալը նշանակում է, որ նախորդ տարվա գնահատականի համեմատ հարկային եկամուտների մեջ հարկային ծախսերի կշիռը նվազել է 0.76 տոկոսային կետով, իսկ անվանական ՀՆԱ-ի մեջ հարկային ծախսերի կշիռը՝ 0.12 տոկոսային կետով:

Մեթոդաբանություն

2023 թվականի հարկային ծախսերի գնահատման

I. ԱԱՀ-ի գծով հարկային ծախսերը.

ԱԱՀ-ի գծով հարկային ծախսերը գնահատվել են հետևյալ հիմնական ուղղություններով.

1) գյուղատնտեսություն,
2) առողջապահություն,
3) կրթություն,
4) ֆինանսներ և ապահովագրություն,
5) խաղատների գործունեություն, շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպում,
6) ոսկու և թանկարժեք քարերի իրացում,
7) մարդասիրական օգնություն,
8) պարարտանյութերի իրացում,
9) ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի օտարում,
10) սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարում, աշխատանքի կատարում և (կամ) ծառայության մատուցում,
11) ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցում, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարում, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարում,
12) օրենսգրքով սահմանված վերը չնշված այլ արտոնություններ,

13) այլ օրենքներով տրված արտոնություններ:

ՀՀ ՎԿ տվյալների բազայից որոշվել են 2021 թվականի համար տնտեսության յուրաքանչյուր ոլորտի ավելացված արժեքները, որոնք նախապես ճշգրտվել են ֆինանսական միջնորդությունների անուղղակի չափվող ծառայությունների արժեքի չափով:

Տնտեսության յուրաքանչյուր ոլորտի ավելացված արժեքները նվազեցվել են չդիտարկվող (չհաշվառվող) տնտեսության ավելացված արժեքների մասնաբաժնի չափով:

Տնտեսության արտահանելի ճյուղերի ավելացված արժեքները նվազեցվել են արտահանման արժեքների չափով՝ արտահանմանն ուղղված ճյուղերի (գյուղատնտեսություն, հանքարդյունաբերություն, մշակող արդյունաբերություն, էլեկտրաէներգետիկա, փոխադրումներ և պահեստային տնտեսություն, տեղեկատվություն և կապ)՝ ընդհանուր ավելացված արժեքի մեջ ունեցած տեսակարար կշիռներին համապատասխան:

Գյուղատնտեսության ոլորտի ստացված արդյունքը ճշգրտվել է գյուղատնտեսության մասնաբաժնում ապրանքայնության մակարդակով (ապրանքայնության մակարդակը ցույց է տալիս գյուղատնտեսական արտադրանքի այն մասը, որը գնացել է իրացման կամ այլ ձևով օտարման կամ ապրանքափոխանակման):

Այնուհետև ստացված բազայի նկատմամբ կիրառվել է ԱԱՀ-ի 20% դրույքաչափը և հաշվարկվել է ԱԱՀ-ի գծով եկամտային ներուժը: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2023 թվականի տնտեսության ճյուղերի կանխատեսվող ծավալների աճով:

Ստացված արդյունքների հիման վրա առանձնացվել են գյուղատնտեսության, կրթության, առողջապահության, ֆինանսական և ապահովագրության ոլորտների համապատասխան ԱԱՀ-ի մասնաբաժինները, որոնք իրենցից ներկայացնում են այդ ոլորտների համար ԱԱՀ-ի գծով հարկային ծախսերը:

Միաժամանակ, ԱԱՀ-ի հաշվարկներից արտածվել են խաղատների, շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման, ոսկու և թանկարժեք քարերի իրացման, մարդասիրական օգնության, պարարտանյութերի իրացման, ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի օտարում, սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարում, աշխատանքի կատարում և (կամ) ծառայության մատուցում, ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցում, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարում, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարում և այլ օրենքներով տրված ԱԱՀ-ից ազատման արտոնությունների մասով շրջանառությունները, որոնց նկատմամբ կիարառելով համապատասխան գործունեության տեսակների ավելացված արժեք/թողարկում հարաբերակցության ցուցանիշը, այնուհետև՝ ԱԱՀ-ի 20% դրույքաչափը, հաշվարկվել է նշված գործունեության տեսակների համար ԱԱՀ-ի գծով եկամտային ներուժը: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2023 թվականի նշված գործունեության տեսակների կանխատեսվող ծավալների աճով:

Բացի այդ, որոշվել են ԱԱՀ-ի գծով վերը չնշված այլ հարկային ծախսերը՝ որպես ԱԱՀ-ի գծով եկամտային ներուժի և ներքին տնտեսությունից փաստացի հավաքագրված ԱԱՀ-ի, վերոնշյալ ոլորտների, գործունեության տեսակների, ԱԱՀ-ի շեմի ու միկրոբիզնեսի գծով գնահատված՝ ԱԱՀ-ի հարկային ծախսերի հանրագումարի տարբերություն:

II. Շահութահարկի գծով հարկային ծախսեր.

Շահութահարկի գծով հարկային ծախսերի գնահատականը ներառում է գյուղատնտեսության արտոնությունները, շահութահարկի նվազեցման արտոնությունները, ՏՏ ոլորտի արտոնությունները, ինչպես նաև շահութահարկի հաշվարկներով արտացոլված հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները, բացառությամբ՝ գյուղատնտեսության արտոնությունների: Միաժամանակ, առանձին գնահատվել են միկրոբիզնեսի և ԱԱՀ-ի շեմի գծով հարկային ծախսերը:

Գյուղատնտեսություն.

Որոշվել են 2021 թվականի համար գյուղատնտեսության ոլորտի զուտ շահույթը և զուտ խառը եկամուտները՝ հիմք ընդունելով եկամուտների ձևավորման եղանակով 2020 թվականի համար հաշվարկված գյուղատնտեսության ոլորտի զուտ շահույթը և զուտ խառը եկամուտները, որոնց նկատմամբ կիրառվել է գյուղատնտեսության ոլորտի 2021 թվականի՝ արտադրական եղանակով որոշված ավելացված արժեքների աճի տեմպը:

Ստացված արդյունքը ճշգրտվել է գյուղատնտեսության մասնաբաժնում չդիտարկվող (չհաշվառվող) տնտեսության և ապրանքայնության մակարդակով:

Այնուհետև որոշվել է ստացված արդյունքի մեջ առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի մասնաբաժինը՝ համաձայն ՀՀ ՎԿ տվյալների: Այնուհետև կիրառվել է շահութահարկի 18% դրույքաչափը և հաշվարկվել է շահութահարկի գծով եկամտային ներուժը: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2023 թվականի գյուղատնտեսության ճյուղի կանխատեսվող ծավալների աճով:

Հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները, բացառությամբ՝ գյուղատնտեսության.

Շահութահարկի հաշվարկներից արտածվել են հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները, բացառությամբ՝ գյուղատնտեսության արտոնությունների, որոնց նկատմամբ կիրառվել է շահութահարկի 18% դրույքաչափը՝ արդյունքում հաշվարկվել է նշված ուղղության համար շահութահարկի գծով եկամտային ներուժը: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2023 թվականի նշված ուղղության կանխատեսվող ծավալների աճով:

Շահութահարկի նվազեցման արտոնությունները.

Շահութահարկի հաշվարկներից արտածվել են շահութահարկի նվազեցման արտոնությունները, որն իրենից ներկայացնում է նշված ուղղության համար շահութահարկի գծով եկամտային ներուժը: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2023 թվականի նշված ուղղության կանխատեսվող ծավալների աճով:

ՏՏ ոլորտի արտոնությունները.

2021թ. ԱԱՀ-ի հաշվարկներից արտածվել են ՏՏ ոլորտի հավաստագրված հարկ վճարողների իրացման շրջանառությունները, որի նկատմամբ կիրառվել է 2021թ. արդյունքներով ՏՏ ոլորտի համախառն եկամտի մեջ հարկվող շահույթի կշիռը և շահութահարկի 18 տոկոս դրույքաչափը, ինչն իրենից ներկայացնում է նշված ոլորտի համար շահութահարկի գծով եկամտային ներուժը: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2023 թվականի նշված ոլորտի կանխատեսվող ծավալների աճով:

III. Եկամտային հարկի գծով հարկային ծախսեր.

Եկամտային հարկի գծով հարկային ծախսերի մասով գնահատվել է գյուղատնտեսության արտոնությունները, ՏՏ ոլորտի արտոնությունները, հիպոտեկային վարկերի տոկոսների սպասարկման համար վարկառուներին և համավարկառուներին վերադարձված եկամտային

հարկի գումարները, ինչպես նաև առանձին գնահատմամբ միկրոբիզնեսի գծով հարկային ծախսերը:

Գյուղատնտեսություն.

Որոշվել են 2021 թվականի համար գյուղատնտեսության ոլորտի վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության գծով եկամուտները՝ հիմք ընդունելով եկամուտների ձևավորման եղանակով 2020 թվականի համար հաշվարկված գյուղատնտեսության ոլորտի վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության գծով եկամուտները, որոնց նկատմամբ կիրառվել է գյուղատնտեսության ոլորտի 2021 թվականի՝ արտադրական եղանակով որոշված ավելացված արժեքների աճի տեմպը:

Ստացված արդյունքը ճշգրտվել է գյուղատնտեսության մասնաբաժնում ապրանքայնության մակարդակով:

Որոշվել է ճշգրտված արդյունքի մեջ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց մասնաբաժինը՝ համաձայն ՀՀ ՎԿ տվյալների: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2023 թվականի գյուղատնտեսության ճյուղի կանխատեսվող ծավալների աճով:

Հաշվարկվել է ստացված արդյունքին համապատասխանող եկամտային հարկի գումարը՝ հաշվի առնելով եկամտային հարկի դրույքաչափի փոփոխության արդյունքները:

Հիպոտեկային վարկերի տոկոսների սպասարկման համար վարկառուներին և համավարկառուներին վերադարձված եկամտային հարկի գումարները.

Հաշվարկվել են 2021 թվականի արդյունքներով հիպոտեկային վարկերի տոկոսների սպասարկման համար վարկառուներին և համավարկառուներին վերադարձված եկամտային հարկի գումարները: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2023 թվականի համար վերադարձվող գումարների կանխատեսվող ծավալների աճով՝ հիմք ընդունելով նախորդ տարվա նկատմամբ վերադարձված գումարների աճի տեմպը:

SS ոլորտի արտոնություններ.

Որոշվել են 2021 թվականի համար SS ոլորտի վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությանն ուղղված գումարները: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2023 թվականի համար կանխատեսվող ծավալների աճով՝ հիմք ընդունելով ՎԿ կողմից հրապարակած տվյալներով նախորդ տարվա նկատմամբ ոլորտի աճի տեմպը: Այնուհետև հաշվարկվել է հարկային ծախսը՝ ստացված արդյունքի նկատմամբ կիրառելով եկամտային հարկի ընդհանուր և արտոնյալ դրույքաչափերի տարբերությունը (10%=20%-10%):

IV. ԱԱՀ-ի շեմի գծով հարկային ծախսերը.

Որոշվել է 2021 թվականի շրջանառության հարկ վճարողների շրջանառությունը՝ համաձայն հարկ վճարողների կողմից ներկայացված շրջանառության հարկի հաշվարկների:

Հաշվարկվել է շահութահարկի բազան՝ հիմք ընդունելով շահութաբերության միջինացված մակարդակները:

Ստացված բազայի նկատմամբ կիրառվել է շահութահարկի 18% դրույքաչափ և հաշվարկվել է շահութահարկի գծով արդյունքը:

Հաշվարկվել է ԱԱՀ-ի բազան՝ հիմք ընդունելով շահութաբերության և աշխատավարձերի միջինացված մակարդակները:

Ստացված բազայի նկատմամբ կիրառվել է ԱԱՀ-ի 20% դրույքաչափ և հաշվարկվել է ԱԱՀ-ի գծով արդյունքը:

Շահութահարկի ու ԱԱՀ-ի գծով ստացված եկամտային ներուժի և փաստացի վճարված շրջանառության հարկի տարբերությունը՝ ճշգրտված 2023 թվականի տնտեսության ճյուղերի կանխատեսվող ծավալների աճով, իրենից ներկայացնում է ԱԱՀ-ի շեմի գծով շահութահարկի ու ԱԱՀ-ի հարկային ծախսը:

V. Միկրոբիզնեսի գծով հարկային ծախսերը.

Որոշվել է 2021 թվականի միկրոբիզնեսի հարկման համակարգում գործող հարկ վճարողների իրացման շրջանառությունը՝ համաձայն միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառությունների վերաբերյալ հաշվետվության տվյալների:

Հաշվարկվել է շահութահարկի բազան՝ հիմք ընդունելով շահութաբերության միջինացված մակարդակները:

Ստացված բազայի նկատմամբ կիրառվել է շահութահարկի 18% դրույքաչափ և հաշվարկվել է շահութահարկի գծով արդյունքը:

Հաշվարկվել է ԱԱՀ-ի բազան՝ հիմք ընդունելով շահութաբերության և աշխատավարձերի միջինացված մակարդակները:

Ստացված բազայի նկատմամբ կիրառվել է ԱԱՀ-ի 20% դրույքաչափ և հաշվարկվել է ԱԱՀ-ի գծով արդյունքը:

Շահութահարկի ու ԱԱՀ-ի գծով ստացված եկամտային ներուժի՝ ճշգրտված 2023 թվականի տնտեսության ճյուղերի կանխատեսվող ծավալների աճով, իրենից ներկայացնում է միկրոձեռնարկատիրության գծով շահութահարկի ու ԱԱՀ-ի հարկային ծախսը:

Այնուհետև գնահատվել է միկրոբիզնեսի շրջանակներում աշխատողների եկամտային հարկի գծով հարկային ծախսը՝ որպես օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր աշխատողի համար հայտարարագրված աշխատավարձի ֆոնդի պայմաններում հաշվարկված հարկի և յուրաքանչյուր աշխատողի համար 5000 դրամով հաշվարկված եկամտային հարկի հանրագումարի տարբերություն՝ ճշգրտված 2023 թվականի տնտեսության ճյուղերի կանխատեսվող ծավալների աճով և եկամտային հարկի դրույքաչափի փոփոխության արդյունքով:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 1. *2019-2023թթ պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները (մլրդ դրամով)*.....91
Աղյուսակ 2. *2023թ ակնկալվող արտաքին օժանդակությունն ըստ բնույթի*.....93
Աղյուսակ 3. *ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծի հաշվարկներում կիրառված տարադրամների փոխարժեքները ՀՀ դրամով*.....93
Աղյուսակ 4. *ՀՀ 2019-2023թթ. պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (մլն դրամ)*.....94
Աղյուսակ 5. *Ընդհանուր և առաջնային դեֆիցիտները (%-ով ՀՆԱ-ի նկատմամբ) 2023թ.*.....95
Աղյուսակ 6. *Պետական տուրքի կազմում հաշվառվող եկամտատեսակների գծով ՀՀ 2019-2023թթ փաստացի/կանխատեսումային ցուցանիշները (մլրդ դրամներով)*.....99
Աղյուսակ 7. *2019-2023թթ փաստացի/կանխատեսումային պաշտոնական դրամաշնորհները (մլրդ դրամներով)*.....102
Աղյուսակ 8. *2019-2023թթ ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի փոփոխության և հարաբերակցության միտումները*.....108
Աղյուսակ 9. *2019-2023թթ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման կառուցվածը ըստ տնտեսագիտական դասակարգման*.....110
Աղյուսակ 10. *ՀՀ պետական բյուջեից համայնքներին տրվող հատկացումների վերաբերյալ* 111
Աղյուսակ 11. *2019-2023թթ. ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածը ըստ արտաքին և ներքին աղբյուրների* 113
Աղյուսակ 12. ՀՀ 2019-2023թթ. պետական բյուջեների ծախսերը՝ ըստ ոլորտների (մլն. դրամ).....114
Աղյուսակ 13. Տնտեսական ոլորտի 2019-2023թթ. բյուջետային ծախսերը (մլն. դրամ).....116
Աղյուսակ 14. Սոցիալական ոլորտի 2019-2023թթ. բյուջետային ծախսերը (մլն դրամ).....117
Աղյուսակ 15. Արտաքին աղբյուրներից 2023թ. ստացվելիք միջոցների (վարկերի և պաշտոնական դրամաշնորհներ) հաշվին ֆինանսավորվող ծախսերը 119
Աղյուսակ 16. Հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական կանխատեսումների և ենթադրությունների ռիսկերի ազդեցություն 196
Աղյուսակ 17. Հարկային եկամուտների զգայունությունը հիմնական տնտեսական գործոնների նկատմամբ, տոկոս 197
Աղյուսակ 18. *Հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը*...197

Աղյուսակ 19. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և ծախսերի, ինչպես նաև այլ հոսքերի գծով ռիսկերի ընդհանուր ազդեցությունը. (ֆինանսավորման պահանջ՝ - պահանջի մեծացում, + պահանջի նվազում), մլրդ ՀՀ դրամ..... 199
Աղյուսակ 20. *ՀՀ ՖՆ և այլ կառույցների կողմից ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները (%)* 201
Աղյուսակ 21 *Բյուջետային վարկեր և երաշխիքներ ունեցող ՊՄԸ ցուցանիշները* 202
Աղյուսակ 22 *Խոշոր պարտավորություններ ունեցող պետական և համայնքային մասնակցությամբ ընկերությունների ցուցանիշները*..... 203
Աղյուսակ 23 *Առավելագույն կուտակված վնաս արձանագրված պետական մասնակցությամբ ընկերությունների ցուցանիշները*..... 204
Աղյուսակ 24 *Էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերությունների հանրագումարային զուտ շահույթը/վնասն ու պարտավորությունները ըստ տարիների* 205
Աղյուսակ 25 *Գործող ՊՄԳ և ԷԳՊ պայմանագրերը* 208
Աղյուսակ 26 *Պայմանական պարտավորությունների ամփոփ հաշվարկ*.....215
Աղյուսակ 27 *Բանկային համակարգի ցուցանիշների դինամիկան*..... 221

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ

Գծապատկեր 1. *ՀՀ 2019-2023թթ հարկային եկամուտները և պետական տուրքերը (մլրդ դրամով) և կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ*.....98
Գծապատկեր 2. *2019-2023թթ. ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունների փոփոխության և հարաբերակցության միտումները*.....108
Գծապատկեր 3. *2019-2023թթ. ընթացիկ ծախսերի ֆինանսավորման ըստ տնտեսագիտական դասակարգման կառուցվածքի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ*.....109
Գծապատկեր 4. *2019-2023 թթ.ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքը*.....112
Գծապատկեր 5. *2018-2023թթ. ծախսերի համեմատականը*.....114